R. GRAFFIN — F. NAU

PATROLOGIA ORIENTALIS

TOMUS DECIMUS NONUS



PARIS
FIRMIN-DIDOT ET Cie, IMPRIMEURS-ÉDITEURS
LIBRAIRIE DE PARIS, 56, RUE JACOB
1926

GRATO · ANIMO

AD · PERPETVAM · REI · MEMORIAM

MAVRITIO · FIRMIN-DIDOT

QVI · TVTIVS · MAIORVM · EXEMPLA · SECUTUS

AB · A · MDCCCLXXXVII · AD · A · MICXXV

TAM · LVBENTER · OPERAM · NAVAVIT

VT · APTIORIBVS · TYPIS · MANDARENTVR

VETERA · ECCLESIAE · ORIENTALIS · MONVMENTA

D · D · D

RENATVS · LEOGARDIVS ; MARIA · GRAFFIN

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE

TER ISRAEL

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE TER ISRAEL

PUBLIÉ ET TRADUIT

PAR

Le D[r] G. BAYAN

VI

MOIS DE ARATZ

A = Paris, Bibliothèque Nationale, Fonds arménien,
N° 180, fol. 155 à fol. 178.

B = Édition officielle du Synaxaire arménien de
Ter Israël de Constantinople, 1834 :
Յայսմաւուրք ըստ՝ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի ։ Կոստանդնուպօլիս, 1834.

L'exemplaire dont nous nous sommes servi est
celui des RR. PP. Bollandistes.

* Արացի Ա եւ Յունվարի Ը ։ Վերստին տօն է Ծննդեան եւ վկայութիւն Թէոփիլոսի սարկաւագի ։ * A fol. 154 r° a.

Սա էր ի Լիբիոյ եւ տարան առաջի բդեշխին, ընդ նմին եւ այր մի աշխարհական, որոյ անունն գրեալ է յերկինս ։ Եւ խոստովանեցան յայտնապէս զՔրիստոս Աստուած. եւ կախեցին զնոսա զփայտէ եւ քերեցին երկաթի քերչօք զմարմինս նոցա եւ կապեցին զձեռս եւ զոտս նոցա եւ եդին հուր ի թիկնամէջս նոցա, եւ սուր խեցեաւ ծակոտէին զգլուխս նոցա, եւ այնպէս խիստ չարչարանօք յերկարեալ ի տանջանս, ի Քրիստոսի հաւատոցն ոչ մեկնեցան, այլ բարի խոստովանութեամբ կատարեցան ի Քրիստոս Յունվարի Ը ։

[B * Վերստին տօն է Ծննդեան եւ Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ընդ նմին եւ տօն Մանկանցն Բեթղեհեմի ։ * B p. 17 b.

Որպէս պատմէ աւետարանիչն ի գալ մոգուցն եւ յերկրպագելն Քրիստոսի, յորժամ դարձան ոչ եկին անդրէն առ Հերովդէս ըստ հրամանի հրեշտակին ։ Բարկացեալ Հերովդէս առաքեաց ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա, կոտորեաց զտղայս մանկունս յերկեմենից եւ ի խոնարհ, թէրեւս ընդ նոսա սպանցէ նորածին թագաւորն

* 1 ARATZ, 8 Janvier. *A fol. 154 r° a.

De nouveau, fête de la Nativité et martyre de Théophile, le diacre.

Il était de la Libye. On le mit en présence du gouverneur, et avec lui, un laïc dont le nom est inscrit au ciel. Ils confessèrent manifestement le Christ Dieu. On les suspendit à un arbre et on leur laboura le corps avec des ongles de fer, ensuite on leur lia les mains et les pieds et on leur appliqua du feu sur le dos et on leur troua la tête avec des tessons pointus. Ayant enduré longuement dans les supplices de si atroces souffrances, ils ne se départirent pas de la foi au Christ; mais moururent, en bonne confession, dans le Christ, le 8 Janvier.

[B* De nouveau, fête de la Nativité et de l'Épiphanie du Christ, notre Dieu. En même temps, fête des enfants de Bethléem. * B p. 17 b.

Ainsi que le raconte l'évangéliste, à propos de la venue des mages et de leur adoration du Christ, lorsqu'ils s'en retournèrent, ils n'allèrent pas trouver Hérode, selon l'ordre de l'ange. Hérode, étant entré dans une grande colère, envoya à Bethléem et dans tous les environs, et fit tuer les enfants à la mamelle, depuis l'âge de deux ans et au-dessous, dans l'espoir que parmi

Քրիստոս. զի լուաւ ի մոգուցն եթէ տիրելոց է աշխարհի, ջանայր սեպհականել ինքեան զթագաւորութիւնն ։ Եւ ի զուր ջանաց անձին, զի սպանեալ մանկունքն որք տղայութեան Տեառն մերոյ առաջին ի բնութենէս ընծայեցան նմա պատարագք անբիծք որպէս Աբէլն նախնի, եւ ծաղիկք մարդկութեանս այգւոյ, կամ նորախայծ վկայական խաղողոյ, եւ որպէս անդրանիկք ամենայն մարտիրոսաց առաքեցան որպէս կողովք ողկուզաց յայգւոյ բնութեանս, ի ձեռն յաշխարհ եկեալ Տեառն
* B p. 18 a. * Որդւոյն Հօր իւրոյ յերկինս, եւ ժառանգեցին զյաւիտենական թագաւորութիւնն ։

Իսկ ինքն Հերովդէս որդի եւ ժառանգ եղեւ յաւիտենական հրոյն, զի ընկալաւ աստէն զառհաւատչեայն. զի յանբուժելի եւ յանտանելի անկեալ ցաւ, ինքնին սպան նախ զկին եւ զորդիս իւր որպէս կատաղի, եւ ապա զանձն եւս ։ Քանզի կարի ողորմելի մահուամբ զմանկունս կոտորեաց ի ծոցս եւ ի ստինս մարցն, եւ խառնեաց զկաթն ընդ արեան նոցա. ոչ պատկառեալ յօրինացն, որ հրամայէր ոչ եփել զգառն ի կաթն մօրն ։

Եւ այսպէս ինքնին յիւր աշխարհն ձի արկեալ՝ լնոյր խռովութեամբ եւ աղաղակաւ ողբոց զերկիրն. որոց դեռ եւս հնչումն ձայնի մարցն աղէխորով ողբոց, եւ տղայոցն լալականչ առ ահաբեկութեան գոչումն հնչէ յականջս եւ ի միտս արթուն սրտից.

eux périrait le roi nouveau-né, le Christ; car il avait appris des mages que celui-ci régnerait sur la terre, et (Hérode) cherchait à s'assurer pour lui-même le royaume. Mais ses efforts furent vains, car les enfants massacrés furent les premiers sacrifices innocents offerts par la nature à l'enfance de Notre-Seigneur, comme le fut Abel dans l'antiquité. Fleurs de la vigne de l'humanité, premières grappes de la treille du martyre, en tant qu'aînés de tous les martyrs, comme des corbeilles de grappes de la vigne de la nature
* B p. 18 a. (humaine), ils furent envoyés en offrande par l'entremise * du Seigneur Fils, venu au monde, à son Père dans les cieux, et ils y héritèrent du royaume éternel.

Quant à Hérode, il devint le fils et l'héritier du feu éternel, dont il reçut dès ici-bas les arrhes; car ayant été frappé d'une infirmité incurable et intenable, il tua lui-même dans sa rage, d'abord sa femme et ses fils, puis aussi se donna la mort. Et ceci, parce que d'une mort trop pitoyable il avait fait tuer les enfants dans les bras et au sein de leurs mères, et qu'il avait mêlé à leur sang le lait de celles-ci, sans égards pour les lois, qui prescrivaient de ne pas cuire l'agneau dans le lait de la mère.

Et lui (Hérode), chevauchant dans son pays, remplit le territoire de troubles et du bruit des sanglots, en sorte que l'écho des voix maternelles aux sanglots déchirants et les clameurs des enfants pleurant de terreur retentissent encore dans les oreilles et dans la pensée des cœurs vigilants. C'est ainsi que leur

մինչ զի դամենաձայն գոյժ նոցա մարգարէական հոգին ի հեռուստ լսէր ։ Քանզի ջանայր բանսարկուն ի ձեռն Հերովդէի ի ծնանելն զՏէր մեր բառնալ ի կենաց. սակայն յամօթ եղեւ, զի անմեղացն մահ դատապարտեալ խայտառակ արար զանիրաւ նորա իշխանութիւնն, եւ տկարացոյց մինչեւ ի կատարածի նորին անպարտին սպանմամբն որ ի խաչին, որով իսկապէս լուծաւ ի թագաւորութենէ եւ ընկեցաւ արտաքս ։

Բայց մանկունքն էին հազար եւ չորս հարիւր եւ վաթսուն երկու. զորս թէպէտ սպան Հերովդէս վասն զՔրիստոս ընդ նմին ըմբռնելոյ, սակայն զխորհուրդն Աստուծոյ ոչ կարաց պարտել. այլ ինքն պարտեալ՝ ժառանգ եղեւ աստուածամարտութեամբն յաւիտենական հրոյն. եւ անմեղքն յանուն Քրիստոսի սրախողխող նահատակեալք, որ ոչ վիճակեցաւ այլոց ումեք ի վկայից, պսակեցան ի նմանէ գերահրաշ փառօք ։

* Ի սմին աւուր յիշատակ առաջին սքանչելեացն Տեառն մերոյ Քրիստոսի, որ զջուրն ի գինի փոխեաց ։ * B p. 18 b.

Տէրն մեր եւ Աստուածն մեր Յիսուս Քրիստոս՝ յետ երեսնամենայ կատարման հասակին, եւ մկրտութեամբն ի Յովհաննէ՝ լուանալոյն զպարտիս մարմնոյն Ադամայ, յորժամ ձեռնադրեցաւ առ ի Կարապետէն, եւ վկայեցաւ ի Հօրէ եւ ի Հոգւոյն սրբոյ, եւ պահեալ զքառասուն աւուրս յաղթեաց փորձողին ։

Ապա եկուորեալ յանապատէն, ի վաղիւն տեսանէր զնա Կարապետն եւ վկայէր թէ. Ահա Քրիստոս գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի ։ Եւ դարձեալ

très bruyante lamentation fut entendue au loin par l'esprit prophétique. Tandis que Satan s'efforçait, par le moyen d'Hérode, de supprimer la vie à Notre-Seigneur dès sa naissance, il fut couvert de honte, car la mort des innocents a condamné ignominieusement son injuste domination et l'a affaiblie jusqu'à la consommation de cet Innocent, qui, par sa mort sur la croix, a dépouillé (Satan) de la royauté et l'a mis dehors.

Or, les enfants (massacrés) étaient au nombre de mille quatre cent soixante-deux, et bien qu'Hérode les fît tuer pour comprendre dans leur nombre le Christ, il ne put vaincre les desseins de Dieu, mais c'est lui-même qui fut vaincu et qui, par sa lutte contre Dieu, hérita du feu éternel, tandis que les innocents martyrisés par le glaive à la place du Christ, sort qui n'échut à aucun autre des martyrs, furent couronnés par Lui d'une gloire ineffable.

* En ce même jour, commémoration du premier miracle opéré par Notre-Seigneur le Christ qui changea l'eau en vin. * B p. 18 b.

Notre-Seigneur et Dieu Jésus-Christ après avoir atteint la trentième année de son âge, et lavé par le baptême de Jean les dettes du corps d'Adam, ayant reçu l'imposition des mains du Précurseur et le témoignage du Père et du Saint-Esprit, enfin ayant jeûné pendant quarante jours, vainquit le tentateur.

Étant sorti du désert, le Précurseur vit (Jésus) le lendemain, et rendit ce témoignage : *Voici* le Christ, *l'Agneau de Dieu, celui qui ôte les péchés du monde*[1].

1. Jean, I, 29.

յերկրորդ վաղիւն՝ նայեցեալ նոյն ինքն Յովհաննէս ընդ Յիսուս զի գնայր, ասէ. Ահա Քրիստոս գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի. զոր լուեալ երկու աշակերտքն՝ գնացին զհետ Յիսուսի ։

Եւ ի միւս վաղիւն կամեցեալ ի Գալիլեա ելանել կոչէ զՓիլիպպոս. յորում անդէն ի յերրորդում աւուրն կրկնակի վկայութեանցն՝ կոչեցեալ ի հարսանիսն Կղէոպայ եղբօրն Յովսեփու, ի գեօղն Կոնայիրէ, ի գաւառն Գալիլեայ, յոր եկն Յիսուս մարբն եւ աշակերտօքն զի յայտ արասցէ թէ նա է որ զամուսնութիւնն Ադամայ եւ զայլոց նահապետացն օրհնեաց եւ աճեցոյց, յամօթ առնելով զայնոսիկ որք պիղծ զօրինաւոր զուգութիւնն համարին ։ Եւ անդէն ի նոյն հարսանիսն առաջին նշանագործեաց զջուրն գինի փոխելով, ի խորհուրդ՝ զի զցրտացոյն սէր աշխարհական ցանկութեանց փոխելոց էր ի ջերմութիւն աստուածային բաղձանաց իւրոց՝ հրովն զոր եկն արկանել յերկիր ։

Այսպէս եւ վասն հնազանդելոյ մօրն եւ ծնողին իւրոյ յերկրի՝ ըստ ասելոյն Ղուկայ թէ. Էր նոցա հնազանդ, իրաւապէս ապա նորին մօրն կամօք փառաւորի եւ ի յերկրի սկսանելով զնշանսն. զի առաջին այս եղեւ սկիզբն ամենայն սքանչելագործութեանցն
B p. 19 a. եւ յայտնութիւն աստուածային փառացն, յոր մայրն * ստիպեաց զնա՝ եւ հրաման ետ ասելով ի պակասել գինոյն եթէ. Գինի ոչ ունին. շարժեալ յայս նոյն ինքն սուրբ կոյսն ի Հոգւոյն սրբոյ ազդմանէ որ նախ եկաւորեաց ի նա ։

De nouveau, le surlendemain, ayant vu Jésus qui venait vers lui, Jean dit : *Voici* le Christ, *l'Agneau de Dieu, celui qui ôte les péchés du monde*. Ce qu'ayant entendu, deux disciples suivirent Jésus.

Le jour suivant, (Jésus), voulant se rendre en Galilée, appela Philippe, et ce même troisième jour, après le double témoignage, étant invité aux noces de Cléopas, frère de Joseph, au village de Cana (*Konayirē*), dans la province de Galilée, Jésus s'y rendit avec sa mère et ses disciples pour faire voir que c'est lui qui avait béni le mariage d'Adam et des autres patriarches et qu'il les avait multipliés, afin de confondre ceux qui considèrent comme impure l'union légale. Et c'est à ces noces qu'il opéra son premier miracle en changeant l'eau en vin, comme symbole de la transformation de l'amour froid des désirs temporels en la chaleur de ses désirs divins par le feu qu'il était venu répandre sur la terre.

En outre, parce qu'il obéit ainsi à sa mère, à celle qui l'avait mis au monde, selon l'expression de Luc : *Il leur était soumis*[1], c'est à juste titre que, par la volonté de Sa mère, Il est ensuite glorifié sur la terre même, en y commençant ses miracles; car ce premier (miracle) fut le commencement de tous ses prodiges et de la révélation de la gloire divine. Sa mère l'y obligea
* B p. 19 a. * et lui en donna l'ordre en disant, lorsque manqua le vin : *Ils n'ont point de vin*[2]. En quoi la sainte Vierge fut inspirée par le Saint-Esprit, qui avait d'abord habité en elle.

1. Luc, II, 50. — 2. Jean, II, 3.

Եւ Տէրն արար զհրամանն ծնողական, եւ փոխեաց ի գինի զվեց թակոյկսն զոր հրամայեաց մայրն լնուլ ջրով մինչեւ ի վեր : Քանզի յայտնապէս ի Հոգւոյն սրբոյ շարժեցաւ յայն Մարիամ, եւ գիտաց զոր լինելոցն էր :

Արդ՝ այսպիսի խորհրդովք սկսանի զնշանն առաջին ի Կանա Գալիլեացւոց, որով հաւատացին ի նա աշակերտք նորա :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Թէոփիլոսի սարկաւագի, եւ Ելլադիոսի ընդ նմա, որ կոչի լէկու :

Սուրբն Թէոփիլոս էր ի Լիբիոյ յաւուրս հալածանաց Մաքսիմիանոսի ամբարիշտ արքային. եւ էր հմուտ աստուածային գրոց, եւ համարձակ քարոզէր զՔրիստոս : Վասն որոյ կալեալ զնա կռապաշտից տարան առաջի բդեշխին, ընդ նմին եւ այր մի աշխարհական որոյ անուն կոչէր Ելլադիոս. եւ խոստովանեցան զՔրիստոս Աստուած ճշմարիտ :

Կախեցին զնոսա զփայտէ եւ քերեցին երկաթի քերչօք զմարմինս նոցա. եւ կապեցին զձեռս եւ զոտս, եւ եդին հուր ի թիկնամէջս նոցա, եւ սուր խեցեաւ ծակոտեցին զգլուխ նոցա եւ զխեփապատական. եւ այնպէս յերկարեալք ի տանջանս՝ ի Քրիստոսի հաւատոյն ոչ մեկնեցան, այլ բարի խոստովանութեամբ կատարեցան ի Քրիստոս Յունվարի Ը :]

Le Seigneur exécuta l'ordre maternel et changea en vin les six urnes que sa mère avait ordonné de remplir d'eau jusqu'en haut, car Marie y fut inspirée manifestement par l'Esprit-Saint, et elle savait ce qui devait arriver.

C'est donc par ce symbole qu'il commence son premier miracle à Cana des Galiléens, (miracle) par lequel ses disciples crurent en lui.

En ce jour, martyre de saint Théophile, le diacre, et avec lui, d'Helladius, le laïque [1].

Saint Théophile était de Libye, aux jours de la persécution de Maximien, l'empereur impie. Il était versé dans les saintes écritures, et hardiment prêchait le Christ. C'est pourquoi les idolâtres, l'ayant saisi, le conduisirent devant le gouverneur, et avec lui, un laïc qui s'appelait Elladios. Ils confessèrent le Christ vrai Dieu.

On les suspendit à un arbre et on leur laboura le corps avec des ongles de fer. On leur lia les mains et les pieds, et on leur appliqua du feu sur le dos. On leur troua la tête et la boîte cranienne avec des tessons pointus. Ayant ainsi souffert un long martyre, ils ne s'écartèrent pas de la foi au Christ, mais moururent, en bonne confession, dans le Christ, le 8 Janvier.]

1. L'arménien porte « qui est appelé Lékou », le traducteur ayant transformé en nom propre le mot λαϊκοῦ (*Syn. Cp.*, col. 377), d'ailleurs correctement rendu quelques lignes plus bas.

Արացի Բ եւ Յունվարի Թ ։ Տօն է Աստուածայայտնութեան եւ վկայութիւն սրբոյն Պօղիեքտոսի ։

A fol. 154 r° b. Յետ Քրիստոսի Համբարձմանն փառօք * յերկինս մարտիրոսացաւ նախ Ստեփաննոս յԵրուսաղէմ, երկրորդն սուրբն Փիլորոմոս յԱղեկսանդրիա, եւ երրորդ մարտիրոս եղեւ Պօղիեքտոս՝ յամս ամբարիշտ թագաւորացն Դեկոսի եւ Վաղերիանոսի ։

Էր Պօղիեքտոս զօրական ի Մելիտինոյ Հայոց քաղաքէն. եւ էր այլ մի զօրական եւ նա եւս քրիստոնեայ, եւ էին ընկերակիցք միմեանց, եւ որպէս եղբարք սիրէին զմիմեանս. եւ էր անուն նորա Նէարխոն ։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելին հրամանք ի թագաւորացն զի զորս գտցեն քրիստոնեայս չարչարեսցեն ։ Եւ Նէարխոն կարծէր վասն Պօղիեքտոսի եթէ ոչ իցէ կատարեալ քրիստոնեայ, զի դեռ եւս չէր մկրտեալ, եւ ակն ունէր թէ որպէս քրիստոնեայ կալցեն զինքն եւ վասն Քրիստոսի մեռանիցի ։ Եւ յոյժ տրտմէր, ոչ վասն մարտիրոսութեանն՝ այլ վասն բաժանելոյն ի Պօղիեքտոսէ ։ Եւ նա իբրեւ տեսանէր զնա այնպէս տրտում ասէր. Ով Նէարխոն, մի տրտմիր վասն իմ, զի որպէս դու

2 Պօղիեքտոսի] Պօղիեքտիոսի B || 4 Փիլորոմոս] Փիլոռիմոս B || 5 Պօղիեքտոս] Պօղոքտիոս B || 6 եւ էր այր ... քրիստոնեայ] եւ էր այր մի այլ քրիստոնեայ, եւ նա եւս զօրական B || 7 ընկերակիցք] ընկերք B || 10 Նէարխոն] Նէարքոս B || 12 զինքն] զնա B — յոյժ] յորժամ B — տրտմէր] եւ սգայր *add.* B.

2 ARATZ, 9 **Janvier**.

Fête de l'Épiphanie et martyre de saint Polyeucte.

* A fol. 154 r° b. Après la glorieuse ascension du Christ * au ciel, ce fut d'abord Étienne qui fut martyrisé à Jérusalem, le deuxième fut saint Philoromos[1] à Alexandrie, et le troisième martyr fut Polyeucte (*Polikhtos*) aux jours des empereurs impies Dèce et Valérien.

Polyeucte était soldat de la ville de Mélitène d'Arménie. Il y avait encore un autre milicien, lui aussi chrétien; ils étaient compagnons et s'aimaient comme des frères; le nom de ce dernier était Néarque (*Nearḥon*).

A cette époque un édit des empereurs ordonnait de torturer ceux que l'on aurait trouvés chrétiens. Néarque croyait au sujet de Polyeucte qu'il ne serait pas parfait chrétien, parce qu'il n'était pas encore baptisé. Il s'attendait à être lui-même arrêté comme chrétien et à mourir pour le Christ; et il s'en désolait beaucoup, non pas à cause du martyre, mais à cause de sa séparation d'avec Polyeucte. Celui-ci, le voyant si triste, lui dit : « O Néarque! ne t'attriste pas à mon égard, car, comme toi, je suis aussi le fidèle serviteur

1. Nous ne voyons pas d'où le rédacteur arménien a tiré ce renseignement : Philoromos, tribun militaire, fut martyrisé sous Dioclétien avec Philéas, évêque de Thmuïs, *Acta SS.* febr., I, 459 sq.

Նոյնպէս եւ ես եմ ծառայ հաւատարիմ Քրիստոսի ։ Եւ պատմեաց նմա տեսիլ․ Զի տեսանէի որ տայր ինձ Քրիստոս ձի թեւաւոր, եւ եհան զզօրականութեան աղտեղի քղամիդս եւ զգեցոյց պայծառագոյն վերարկու ։ Եւ այժմ լուսաւորագոյն եմ միտօք եւ որպէս առաջի իմ կայով տեսանեմ զՔրիստոս եւ ի փայլատակմանէ * ճառագայթիցն լուսաւորին երեսք իմ․ եւ ժամ է այսուհետեւ մարտիրոսանալ ինձ ։ * A fol. 154 v° a.

Եւ երթեալ առեալ զամբարիշտ հրամանս ընթերցեալ ընկէց պատառեալ յերկիր ։ Եւ տեսեալ զոմանս ի կռապաշտիցն զի բարձեալ ունէին կուռս եւ երթային, ընթացեալ յափշտակեաց ի նոցանէն եւ ընկեցեալ յերկիր խորտակեաց ։

Եւ Փեղիքս աներ իւր ետես զոր արար Պօղիքտոս փեսայն իւր, տրտմեցաւ յոյժ քանզի իշխան էր եւ հրաման առեալ էր ի թագաւորէն զքրիստոնեայս տանջել ։ Եւ սգայր զզրկումն ի փեսայէն, եւ սկսաւ աղաչել ողոքանօք զի դարձցի ի Քրիստոսի հաւատոյն․ Նոյնպէս եւ կինն Պօղիքտոսի Պաւղինէ թախանձանօք եւ պաղատանօք աղաչէր զայրն իւր ։ Իսկ սուրբն Պօղիքտոս ոչ լուաւ աղաչանաց եւ արտասուաց կնոջն, այլ մանաւանդ խրատ տայր նմա լինել աստուածապաշտ ։

Եւ ապա հատին ի վերայ նորա վճիռ գլխատման ։ Եւ տեսեալ զՆէարքոն ասէ երդմամբ եթէ․ Տեսանեմ երիտասարդ մի զի ստիպէ զիս կատարել զկամն Քրիստոսի

1 եմ *om.* B — զի] եթէ B || 2 որ տայր] զի ետ B || 3 զգեցոյց] ինձ *add.* B || 6 Եւ երթեալ … յերկիր] Եւ երթեալ առ Փեղիքս աներ իւր որ էր իշխան քաղաքին, էառ զհրովարտակն արքունի եւ ընթերցաւ․ եւ տեսեալ զի հրամայէր հալածել զքրիստոնեայս՝ պատառեալ ընկէց յերկիր B || 15 ապա *om.* B

du Christ. » Et il lui raconta une vision : « Je vis le Christ qui me donnait un cheval ailé, m'enlevait l'impur manteau pourpre de la milice et me revêtait d'un manteau plus éclatant. A présent j'ai l'esprit plus éclairé, je vois le Christ comme s'il se tenait devant moi et mon visage s'illumine * des rayons lumineux qui émanent de Lui. C'est maintenant pour moi l'heure de souffrir le martyre. * A fol. 154 v° a.

Il alla saisir l'impie édit, et après l'avoir lu, le déchira et le jeta à terre. Puis ayant aperçu certains idolâtres qui transportaient des idoles, il courut après eux, s'en empara, et les brisa en les jetant à terre.

Félix, son beau-père, voyant ce que venait de faire son gendre Polyeucte, en fut très attristé, car il était magistrat et avait reçu ordre de l'empereur de torturer les chrétiens. Il se désolait de la privation de son gendre et se mit à le prier avec de douces paroles de revenir de la foi au Christ. De même la femme de Polyeucte, Pauline, implorait son mari avec sanglots et supplications. Mais saint Polyeucte, n'écouta pas les prières et les larmes de sa femme; au contraire, il l'exhorta à devenir adoratrice de Dieu.

Ordre fut donné de lui trancher la tête. (Polyeucte), apercevant Néarque, lui dit avec serment : « J'aperçois un jeune homme qui me presse de souffrir

մարտիրոսութիւնս, եւ արեամբս իմով մկրտիլ ։ Մի՛ մոռանար եղբայր իմ Նէարքոն զանխզելի զուխտն մեր ընդ միմեանս ։ Եւ առժամայն հատին զգլուխ նորա Յունվարի Թ ։ Եւ թաղեցին ի նոյն քաղաքին Մելիտինոյ ։

* A fol. 154 v° b. Եւ առեալ Նէարքոն պայծառ կտաւս շաղախեաց * յարենէ սրբոյն Պօղիքտոսի, տարաւ հաւատով ի Կանանեանոն քաղաք իւր ։

* B p. 19 b. [B* Վերստին տօն է Ծննդեան եւ Աստուածայայտնութեան ։ Երանելւոյն Պրոկղի ասացեալ ։

Յաւուրսն յայնոսիկ եկն Յովհաննէս Մկրտիչ յամենայն կողմն Յորդանանու քարոզէր ասելով. Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից ։ Եւ ժողովէին առ նա Երուսաղեմացիք ամենայն, եւ Հրէաստան եւ ամենայն կողմն Յորդանանու, եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց ։

Յաւուրսն յայնոսիկ՝ յո՞րս. յորում կատարեցաւ բան մարգարէութեանն Երեմիայի որ ասէ. Ահաւասիկ եկեսցեն աւուրք ասէ Տէր, եւ ուխտեցից տանն Իսրայէլի ուխտ նոր. ոչ ըստ ուխտին առաջնոյ զոր եդի ընդ հարս նոցա, եւ որ ի կարգին զասաբանեալ ։

4 շաղախեաց] շաղախեալ B || 5 քաղաք իւր ։] Նոյնպէս եւ սուրբն Փիլոխմոս բազում եւ անբմբերելի տանջանօք յառաջին հալածանսն կատարեցաւ վասն Քրիստոսի երանելի մահուամբ. եւ բազմաց եղեւ նախանձ յորդորման եւ օրինակ բարեաց ։ *add.* B.

le martyre pour le Christ et me baptiser dans mon sang. N'oublie pas, mon frère Néarque, notre serment mutuel indissoluble. » Aussitôt on lui trancha la tête, le 9 Janvier. On l'inhuma dans la ville même de Mélitène[1].

* A fol. 154 v° b. Néarque, ayant pris du beau linge, le trempa dans le sang * de saint Polyeucte et le porta avec foi dans sa ville des Cananéotes[2].

* B p. 19 b. [B* De nouveau, fête de la Nativité et de l'Épiphanie. Homélie du bienheureux Proclus[3].

En ces jours-là parut Jean-Baptiste, prêchant dans tout le pays qui avoisinait le Jourdain et disant : Faites pénitence, car le royaume des cieux est proche. Alors, s'assemblaient auprès de lui tous les habitants de Jérusalem et de la Judée et de tout le pays qui avoisine le Jourdain. Et ils se faisaient baptiser par lui dans le Jourdain en confessant leurs péchés[4].

En ces jours-là; lesquels? Lorsque se trouva accompli le verbe prophétique de Jérémie qui dit : *Voici que viendront des jours,* dit le Seigneur, *où je ferai un nouveau pacte avec la maison d'Israël, non pas selon le pacte ancien que j'ai fait avec leurs pères*[5], et tout ce qui suit.

1. Détail propre, sous cette forme, au synaxaire arménien; *Syn. Cp.*, col. 379, dit seulement que Polyeucte, soldat en garnison à Mélitène, fut le premier martyr de cette région. — 2. En grec : εἰς τὴν Κανανεωτῶν πόλιν. L'identité de cette ville est inconnue aux Bollandistes, cf. *Acta SS.* febr., II, 654; april. III, 12. — 3. Cette homélie ne correspond aucunement à celle qui se trouve en grec dans *P. G.*, LXV, col. 757-763. — 4. Matth., III, 1-6. — 5. Jérémie, XXXI, 31-32.

Յաւուրսն յայնոսիկ՝ յո՞րս. յորժամ լցաւ ժամանակ լինելոյ կամացն հեթանոսաց. յորժամ լցան տիեզերք ի ծագաց մինչ ի ծագս դիցամոլ կռապաշտութեամբք. յորժամ բազմացան մեղք ի վերայ երկրի որպէս աւազ առ ափն ծովու. յորժամ եւ նոյն ինքն ազգք աբրահամեան զաւակի որ կարծեցեալն էր գոլ աստուածապաշտ՝ գնաց զհետ ամենայն աստուածոց օտարաց ։ Յորժամ սպառեցան թագաւորք եւ իշխանք նորա. յորժամ դադարեաց մարգարէութիւնն եւ պակասեաց քահանայութիւնն, յորժամ բարձան զոհք ուխտիցն եւ պատարագաց նոցա. յորժամ լցան ժամանակք եօթանասուն եւ երկուց եօթներորդացն, զոր Դանիէլ ի մարգարէութեանն սահմանեալ ։ Յորժամ գիշեր կռապաշտութեանն մերժեցաւ, եւ տիւ յաւիտենական արդարութեանն եկն եհաս ։

Յայնժամ առաքեցաւ ճրագն Յովհաննէս՝ առաջի արեգականն արդարութեան, զի լցցի կանխաձայնեալ եսայեանն մարգարէութիւն զոր ասաց. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, եւ ուղիղ զշաւիղս նորա ։

* Յաւուրսն յայնոսիկ՝ յո՞րս. որ յետ հրեշտակապետականն առաքելութեան առ * B
կոյսն անարատ. յետ հրաշալի հովանաւորութեան զօրութեամբ Բարձրելոյ, եւ ամենասուրբ Հոգւով յղացման, եւ ի վեր քան զբնութիւնս ծննդեան յանհարսնացեալ մօրէ. յետ օրինաւանդ թլփատութեան աստուածախառն եւ ամենասուրբն մարմնոյ, որ է սրբոցն սուրբ. յետ քառասնօրեայ ժամանակի սքանչելւոյ ծերունոյն Սիմէոնի՝ ի հրէից օրինականն տաճարի ընդունելով ի գիրկս իւր՝ թաքուցեալ ի մարմնի տղայական p. 20 a.

En ces jours-là; lesquels? Lorsque fut arrivée à son terme l'époque des desseins des gentils; lorsque l'univers d'un bout à l'autre fut rempli d'un culte idolâtre; lorsque les péchés se furent accumulés sur la terre comme le sable au bord de la mer; lorsqu'elles-mêmes, les tribus de la race d'Abraham, que l'on pensait être pieuses, allèrent à la suite de tous les dieux étrangers. Lorsque leurs rois et leurs princes eurent disparu, lorsque la prophétie se fut éteinte et que le sacerdoce défaillit, lorsque leurs sacrifices votifs et leurs offrandes eurent disparu, lorsque fut terminée la période de soixante-douze semaines, qu'avait fixée Daniel dans sa prophétie; lorsque la nuit de l'idolâtrie s'évanouit et que le jour de la justice éternelle se leva.

C'est alors que fut envoyée la lumière, Jean, précédant le soleil de justice, pour accomplir la prédiction prophétique d'Isaïe, disant : *Parole de la voix dans le désert : Préparez le chemin du Seigneur, aplanissez ses sentiers*[1].

* En ces jours-là; lesquels? Après la mission de l'archange à la Vierge * B
immaculée; après la glorieuse protection de la puissance du Très-Haut, la p. 20 a.
conception par le Saint-Esprit, et la naissance surnaturelle, d'une mère intacte; après la circoncision, selon la loi, du très saint corps uni à Dieu qui est le saint des saints; après que, le quarantième jour, l'admirable vieillard Siméon eut reçu dans ses bras le temple légal des Juifs, Celui

1. Is., XL, 3.

հասակի զԱստուածն Բան, քարոզելով զնա արարչագործ բոլորն յաւիտենից. յետ երկոտասանամեայ ժամանակի երեւելոյ ի տաճարին՝ եւ վիճելոյ ընդ վարդապետս հրէականն օրինաց. յետ լրման զարմացմամբ երեսնամեայ աւուրց նոյն ինքն տէրունական եւ ամենասուրբն մարմնով ։ Յայնժամ ապա ի կատարումն մեծին խորհրդոյ, որ ըստ յառաջագրութեանն Աստուծոյ զոր կանխաւ սահմանեաց Աստուած ի փառս մեր՝ ըստ առաքելականն ձայնի ։]

* A fol. 154 v° b.

* Արաց Գ եւ Յունվարի Ժ ։ Յիշատակ երանելւոյն Գրիգորի Նիւսիոյ եպիսկոպոսին ։

Ճշմարիտ վարդապետն եւ Քրիստոսի քահանայապետն Գրիգորիոս եղբայր էր մեծին Բասիլիոսի Կեսարացւոյն, յոյժ հանճարեղ եւ գեղեցկախօս եւ լի շնորհօքն Աստուծոյ եւ զամենայն աւուրս կենաց իւրոց իբրեւ զհաստատուն սիւն էր եկեղեցւոյ եւ զօրեղ հակառակ ընդդէմ հերձուածողաց ։

Եւ էր յերկրորդ սիւնհոդոսն Կոստանդինուպօլսոյ մի ի հարիւր եւ յիսուն եպիսկոպոսացն ։ Եւ բազում ճառս վասն ուղղափառ հաւատոյ գրեաց եւ եթող յետ իւր

7 Նիւսիոյ] Նիւսացւոյ B || 9 Կեսարացւոյն] մի յաշխարհական երիցանց եկեղեցւոյն Նէոյկեսարիոյ առաջին Հայոց որ կոչի Նիւսա *add.* B — գեղեցկախօս] իմաստուն B || 10 եւ զամենայն աւուրս… եպիսկոպոսացն] ընտրեցաւ եպիսկոպոս նորին քաղաքի. եւ առաքեցաւ յաքսորս ի Վաղեսէ արիոսեան կայսերէ, զի բանիւ եւ գրով յաղթահարէր զարիանոսս ։ Եւ յետ դարձին իւրոյ գտաւ ի սիւնհոդսն Կոստանդինուպօլսոյ, եւ էր մի ի հարիւր եւ յիսուն եպիսկոպոսացն, եւ եցոյց անդ զհանդէս աստուածիմաստ գիտութեան իւրոյ B.

qui cachait dans un corps d'enfant le verbe de Dieu, en le proclamant le créateur de tous les siècles; après sa manifestation au Temple, à l'âge de douze ans, et la discussion des lois juives avec les docteurs; après qu'Il eut accompli étonnamment ses trente années, Lui le Seigneur, dans son corps très saint. C'est alors enfin que s'accomplit le grand *mystère que,* selon la prévoyance divine, *Dieu avait fixé à l'avance pour notre gloire*[1], suivant la parole de l'Apôtre.]

* A fol. 154 v° b.

* 3 ARATZ, **10 Janvier.**

Commémoration du bienheureux Grégoire (*Grigor*), évêque de Nysse.

Le vrai docteur et pontife du Christ, Grégoire (*Grigorios*), était le frère du grand Basile (*Basilios*) de Césarée, très intelligent et éloquent, rempli des grâces de Dieu. Il fut pendant tous les jours de sa vie un pilier solide de l'église et un champion puissant contre les schismatiques.

Il fut l'un des cent cinquante évêques du deuxième concile de Constantinople. Il écrivit de nombreuses homélies sur la foi orthodoxe qu'il laissa,

1. I Cor. II, 7.

յաւիտենական յիշատակ. եւ որք ընթեռնուն զգեղեցկապատում գիրս նորա՝ յոյժ հաստատին ի քրիստոսական ամրին հաւատն. քանզի քաղցրագոյն են բանք վարդապետութեան նորա քան զմեղու խորիսխ, եւ զարթուցանեն զմիտս մարդկան յերկիւղն Աստուծոյ ։ Եւ որպէս զարեգակն փայլեալ յեկեղեցի Աստուծոյ զբազումս լուսաւորեաց, եւ հասեալ ի վայելուչ ծերութիւն փոխեցաւ յերկնային խորանն յանմահական ի կեանսն Յունվարի Ժ ։

[B * Վերստին տօն է Ծննդեան եւ Աստուածայայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։ Ի ճառէ երանելոյն Պրոկղի ։ * B p. 21 a.

Արդ՝ յորժամ եկն Տէրն մեր ի Յորդանան մկրտիլ, եւ հրաժարէր դողալով մկրտիչն Յովհաննէս, յայնժամ ապա եւ գետն մեծ Յորդանան՝ պակուցեալ յաստուածեղէնն փառաց՝ յեղափոխեալ զսովորութիւն ընթացից ըստ բնականին գնացից, եւ որպէս մտանաւորեալ իմն բաժանէր յերիս առաջս. որոյ առաջինն ջուրք ինքնասանձ եղեալ՝ մանաւանդ թէ ըստ աստուածային ակնարկութեան զտեղի առեալ ընդ կրունկն դառնային. եւ դէզադէզ յեղյեղմամբ կուտակեալ ծովանային յոքնապտոյտ շրջադարձութեամբք. քանզի պարփակեալ զմիմեամբք յառաջ խաղալ ոչ իշխէին ։

Իսկ միջինն ջուրք՝ զարմանազան եւ նորագիտակ իմն տենչալի ճառագայթիւք որպէս զգեստ ինչ թագաւորական ծիրանազիտակ եւ ծաղկափայլն * պաճուճեալ * B p. 21 b.

4 լուսաւորեաց] եւ զամենայն աւուրս կենաց իւրոց զօրեղ ախոյեան եկաց ընդդէմ հերձուածողացն *add.* B || 5 վայելուչ] բարւոք B — փոխեցաւ] փոխադրեցաւ B || 6 ի կեանսն] հանգիստն B.

après lui, comme un souvenir éternel, et tous ceux qui lisent ses œuvres magnifiques se raffermissent considérablement dans la pure foi chrétienne; car les paroles de son enseignement sont plus douces que le rayon de miel, elles éveillent dans l'esprit des hommes la crainte de Dieu. Il brilla comme le soleil dans l'église de Dieu, illumina nombre de gens et, parvenu à une belle vieillesse, il passa au temple céleste, à la vie éternelle, le 10 Janvier.

[B* De nouveau, fête de la Nativité et de l'Épiphanie du Christ, notre Dieu. De l'homélie du bienheureux Proclus (*suite*). * B p. 21 a.

Or, lorsque Notre-Seigneur vint au Jourdain pour y être baptisé et que Jean-Baptiste s'en défendait en tremblant, au même moment, le grand fleuve Jourdain ébloui des splendeurs divines, déviant le trajet habituel de son cours naturel, se partagea, comme à dessein, en trois courants : les premières eaux, se refrénant d'elles-mêmes ou plutôt s'arrêtant sous les regards divins, revinrent en arrière et s'amoncelant par des afflux successifs formèrent une mer agitée par des tourbillons multiples, car ces eaux se circonvenant elles-mêmes n'osaient pas avancer.

Les eaux moyennes, reflétant des rayons nouveaux et merveilleusement agréables, formèrent comme un manteau royal de pourpre et de fleurs, *irisé * B p. 21 b.

երփն երփն գունովք՝ հեղեղ ճառագայթս յինքենէ առաքելով, պտուտկեալ շուրջ զտէրունական եւ զգերաշխարհիկն մարմնով, որպէս պսակ ինչ հրաշարփի առ ի զանազանն բոլորեալ ծաղկանց, զպաշտաւորականն հատուցանելով դկարգ ծաւալէին ։

Յայնժամ ապա եւ դասք անմարմնական վերնոցն պետութեանց պարաւորեալք շուրջ զամենասուրբ եւ զաստուածեանն մարմնով՝ ի հոսանս գեղեցկածաւալն ջուրց, որպէս զնոյն ինքն քրովբէական ի բարձունս զհրացայտն աթոռով՝ երաժշտական ձայնիւք զերեքսրբեանն հատուցանելով օրհներգութիւնս, հնչեալ գոչէին ասելով հրեղէն լեզուօք. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք նորա ։

Ուստի ստուգապէս յայնժամ երկիրս երկինք հանդիպեցան՝ լցեալ անճառելի պարգեւօք աստուածային փառացն՝ հանդերձ սրովբէագոչն հնչմամբ հոգեւոր երգոց ։ Վասն զի յայնժամ եւ նոյն ինքն՝ անհասանելին, անտեսանելին, անսկիզբն, մշտապայծառն, աննիւթն, անպարագրելին, անճառելին, եւ ծայրագոյնն համապատիւ, եւ երեքանձեանն տէրութիւն, սրբոյ ասեմ եւ թագաւորականի եւ անհետազօտելին Երրորդութեան, արփիափայլ ճոխութեամբ եւ սրբարարական զօրութեամբ ստորափայլեալ ի բարձանց՝ բացայայտեալ ճանաչիւր ի հոսանս Յորդանան գետոյ ։ Քանզի յորժամ Տէրն տերանց ել ի ջրոյ անտի բացան նմա երկինք, եւ Հոգին սուրբ իջեալ ի բարձանց նմանութեամբ աղաւնոյ՝ անձեռագործ պսակ նմա մատուցանէր ։

de couleurs chatoyantes, et lançant des rayons paisibles autour du merveilleux corps du Seigneur comme une couronne magnifique tressée de fleurs variées, et ces eaux s'étendaient en acquittant leur tour de service.

C'est alors aussi que les ordres incorporels des puissances célestes formant chœur autour du très saint corps divin dans le bouillonnement des belles eaux répandues, à l'instar des chérubins qui entourent le trône fulgurant dans les cieux et mélodient d'une voix musicale le trisagion de bénédiction, proclamaient par la voix de leur langue de feu : « Saint, saint, saint le Seigneur des puissances, toute la terre est remplie de sa gloire. »

C'est pourquoi vraiment la terre fut à ce moment changée en ciel, remplie des dons ineffables de la gloire divine grâce au retentissement des chants spirituels entonnés par les séraphins. Car, à ce moment, l'Incompréhensible lui-même, l'Invisible, celui qui est sans commencement, toujours brillant, immatériel, celui qui ne peut être contenu, l'Ineffable et l'Être suprême égal en dignité, la Seigneurie trine, la sainte, dirai-je, royale et inscrutable Trinité, dans un éblouissement d'étoiles, brillante de puissance sanctifiante dans les cieux, fut reconnue manifestement dans le courant du fleuve Jourdain. Car lorsque le Seigneur des seigneurs sortit des eaux, le ciel s'entr'ouvrit pour Lui et le Saint-Esprit, descendant d'en haut sous la forme d'une colombe, Lui offrit une couronne qui n'était pas faite de main d'homme. Et le Père, faisant entendre sa voix d'en haut, témoigna par ces

Եւ որ եւ Հօր ի վերուստ բարբառ արձակեալ վկայէր, մատնացոյց արարեալ՝ զնա ատենակալացն՝ ասելով. Դա է որդի իմ սիրելի որով հաճեցայ, դմա լուարուք :

Ի սմին աւուր յիշատակ սուրբ եւ գեղեցիկ մանկանն եւ քաջայաղթ եւ սքանչելագործ նահատակին Քրիստոսի Մորպօհնաւի, եւ քեռ նորա Սառայի կուսի աղախնոյն Քրիստոսի. որ նահատակեցան ի հօրէն իւրեանց ի Սենեքերիմայ արքայէ :

* Յայսմ աւուր կուրութիւն եւ դարձ Պօղոսի առաքելոյ, զի ետես զՏէր Յիսուս ի ճանապարհին Դամասկոսի :] * B p. 22 b.

Արացի Դ եւ Յունուարի ԺԱ : Տօն է Աստուածայայտնութեանն եւ վկայութիւն սրբոյն Պետրոսի Աղեքսանդրու հայրապետին եւ Աբիսաղոմայ սարկաւագին :

* Պետրոս հայրապետ էր Աղեքսանդրացւոց. եւ էր յաւուրս Դիոկղետիանոսի անօրէն արքայի, ի ժամանակս հալածանաց եկեղեցւոյ : Սա նզովեաց զպիղծն Արիոս հերձուածողն զի ոչ ասէր զՈրդի ի բնութենէ Հօր, այլ արարած եւ կրտսեր, եւ յետ * A fol. 155 r° a.

paroles en Le désignant aux assistants : *Celui-ci est mon Fils bien-aimé, en qui je me suis complu. Écoutez-le*[1].

En ce même jour, commémoration du saint et bel enfant, le victorieux et thaumaturge martyr du Christ Mar-Behnam[2] (*Morpōhnav*) et de sa sœur Sarah (*Sara*) la vierge et servante du Christ, qui furent martyrisés par leur père, le roi Sennachérib (*Sénécherim*).

* En ce même jour, aveuglement et conversion de l'apôtre Paul, qui aperçut le Seigneur Jésus sur la route de Damas (*Damaskos*).] * B p. 22 b.

4 ARATZ, 11 Janvier.

Fête de l'Épiphanie et martyre de saint Pierre patriarche d'Alexandrie (*Aleksandrou*) et du diacre Absalom (*Abesalom*[3]).

* Pierre était patriarche des Alexandrins (*Aleksandratsi*) aux jours de Dioclétien, l'empereur impie, à l'époque des persécutions de l'église. Il anathématisa l'immonde hérétique Arius, qui ne disait pas que le Fils fût de la * A fol. 155 r° a.

1. Matth., iv, 17. — 2. La particule honorifique du syriaque ܡܪܝ *Mor* ou *Mār*, a été soudée au nom *Behnam*, soit par le rédacteur arménien, soit par son modèle grec. A la ligne suivante, le changement de *b* en *m*, dans le nom *Sennachérib* devenu *Senecherim*, suppose un intermédiaire grec écrit en minuscule, cf. actes syriaques dans Bedjan, *Acta Sanctorum et Martyrum*, t. II, Paris et Leipzig, 1891, p. 397-441. — 3. Ce diacre Absalom, martyrisé avec le patriarche d'Alexandrie, paraît propre au calendrier arménien, cf. Nilles, *Kalendarium manuale utriusque Ecclesiae...*, t. II, Inspruck, 1897, p. 565. On pense tout naturellement à une intrusion d'Avselamos ou Abselamos d'Éleuthéropolis, dont la notice est donnée ci-dessous.

ժամանակի եղեալ. եւ զբազումս մոլորեցոյց ի հերձուածն իւր : Վասն այսորիկ պատճառանաց որոշեաց զնա սուրբ հայրապետն Պետրոս յեկեղեցւոյ Աստուծոյ :

Եկն դահիճ քրիստոսամարտին Դիոկղետիանոսի ըմբռնեալ զերանելին Պետրոս, եւ ունէին ի բանդին կապանօք : Եւ Արիոս գնացեալ ի ժողով երիցանց՝ կեղծաւորութեամբ զղջացեալ՝ աղաչէր բարեխօսել առ հայրապետն լուծանել զնա յորոշմանէ : Եւ իբրեւ աղաչեցին, ասէ սուրբն. Արիոս՝ որոշեալ լիցի ի փառաց Որդւոյն Յիսուսի Քրիստոսի, յայժմու յաւիտենիս եւ ի հանդերձելումն :

Եւ իբրեւ տրտմեցան նոքա, ասաց. Տեսի յայսմ գիշերի զՔրիստոս եւ զպատմուճանն իւր պատառեալ յերկուս, եւ ի լանջսն ածեալ ունէր զպատառուածսն : Եւ ասեմ. Տէր, ո՞վ պատառեաց զքո պատմուճանդ : Եւ նա ասէ. Արիոս. եւ դու զգոյշ լեր, մի հաւանիր լուծանել զնա յորոշմանէն, զի հանդերձեալ են աղաչել զքեզ վասն նորա, եւ պատուիրեա Աղեքսանդրի եւ Աքիլլայ որք հանդերձեալ են զկնի քո ունել զաթոռ քո, զի մի եւ նոքա ընդունիցին զնա ի հաղորդութիւն :

* A fol. 155 r° b. *Եւ եհաս հրաման ի Դիոկղետիանոսէ սպանանել սրով զերանելին Պետրոս : Եւ ժողովուրդն ամենայն պահէր զդուռս բանդին եւ ասէին. Նախ մեք մեռցուք եւ ապա զնա առնուք : Եւ զօրականացն ծակեալ զորմն բանդին յետուստ զի մի գիտասցեն ժողովուրդն, եւ հանեալ տարան մօտ ի գերեզման սուրբ աւետարանչին Մարկոսի,

nature du Père, mais créé et inférieur, ayant pris existence dans le temps, et qui induisit bien des gens à son schisme. C'est pour cette raison que le saint pontife Pierre l'exclut de l'église de Dieu.

Le bourreau de Dioclétien, l'ennemi du Christ, vint arrêter le bienheureux Pierre et le garda en prison dans les chaînes. Or, Arius, s'étant rendu dans l'assemblée des prêtres et hypocritement faisant acte de repentir, les pria d'intercéder pour lui auprès du pontife afin qu'il le déliât de l'excommunication. Lorsque (les prêtres) l'en prièrent, le saint répondit : « Qu'Arius soit exclu de la gloire du Fils, Jésus-Christ, dans ce monde et dans l'autre! »

Et comme ceux-ci s'en attristaient, il leur dit : « J'ai aperçu, cette nuit, le Christ; il avait sa tunique déchirée en deux et tenait les lambeaux contre sa poitrine. Et je Lui dis : Seigneur, qui a déchiré ta tunique? Il me répondit : Arius; et toi, prends garde, ne consens pas à le délier de l'excommunication, car on viendra te prier à son sujet, et ordonne à Alexandre et à Achille, qui doivent avoir ton siège après toi, de ne pas l'admettre, eux aussi, à la communion. »

* A fol. 155 r° b. * Il arriva un ordre de Dioclétien de tuer par l'épée le bienheureux Pierre. Or, toute la population gardait la porte de la prison en disant : « Nous mourrons d'abord et vous le prendrez ensuite. » Les officiers, ayant percé un trou dans le mur de la prison, par derrière, à l'insu de la population, et ayant fait sortir (Pierre), l'emmenèrent près du tombeau du saint évangéliste

հատին զպատուական գլուխ նորա ։ Սպանին ընդ նմա եւ զծեր սարկաւագն Աբիսաղոմ ։ Եւ գիտացեալ ժողովրդեանն բարձին զպատուական մարմին նորա, եւ տարան յեկեղեցին եւ նստուցին յաթոռ իւր, զի ոչ նստէր սուրբն ի կենդանութեան իւրում ի վերայ աթոռոյն, այլ ի վերայ պատուանդանին զի տեսանէր այր մի լուսաւոր ի վերայ աթոռոյն նստեալ, եւ նմա հրամայէր նստել ի պատուանդանին, եւ ուսուցանել ժողովրդեանն ։ Եւ ապա թաղեցին զնա պատուով ։ Կատարեցաւ սուրբն Պետրոս եւ Աբիսաղոմ Յունուարի ԺԱ ։

Յայսմ աւուր վկայութիւն միւս Պետրոսի որ Աւսալեմոս կոչի ։

Պետրոս Քրիստոսի վկայն երիտասարդ հասակաւ, էր ի քաղաքէն Ելեւթորուպօլեաց, որ թարգմանի ազատ քաղաք, ի գեղջէն Արասէասայ ։ Եւ էր զօրութեամբ ախոյեան եւ հանճարեղ ի սէրն Քրիստոսի, զոր իշխան քաղաքին բռնադատէր ողոքանօք եւ սպառնալեօք ուրանալ զՔրիստոս եւ պաշտել զկուռսն ։ Որում ամենեւին յանձն ոչ առ, այլ մանաւանդ պարզ * երեսօք եւ համարձակութեամբ աղաղակէր * A fol. 155 v° a.

8 Աւսալեմոս] Ավէսալամիոսս, զոր Աբեսողոմ կոչեն *add.* B || 9 Ելեւթորուպօլեաց] Ելեւթերուպօլսոյ B || 10 Արասէասայ] Արեւէասայ B — Եւ էր զօրութեամբ... իշխան] Եւ էր հաւատով քաջեպաշտ ի Քրիստոս, եւ մարմնով զօրաւոր. որ եւ ի ժամանակս հալածանացն Մաքսիմիանոսի համարձակութեամբ խոստովանէր զՔրիստոս Աստուած ։ Զոր կալեալ զնա իշխան *add.* B || 13 պարզ] լուրջ B.

Marc, et lui tranchèrent la tête. Ils mirent à mort également avec lui le vieux diacre Absalom (*Abisalom*). Les habitants, informés du fait, relevèrent son précieux corps, le portèrent à l'église, et le firent asseoir sur son siège, car le saint, de son vivant, ne s'était jamais assis sur son trône, mais sur le marchepied, car il apercevait un homme lumineux assis sur le trône qui lui ordonnait de s'asseoir sur le marchepied et d'enseigner le peuple. Ensuite ils l'inhumèrent avec honneur. Saint Pierre et Absalom (*Abisalom*) furent mis à mort le 11 Janvier.

En ce jour, martyre de l'autre Pierre qui s'appelle Abselamus (*Avsalemos*).

Pierre, le martyre du Christ, jeune encore, était de la cité d'Éleuthéropolis (*Eleutoroupoleats*), nom qui se traduit ville libre, du village d'Anéa[1] (*Araseas*). C'était un athlète puissant et plein de talent dans l'amour du Christ, que le gouverneur de la ville pressait par des prières et des menaces de renier le Christ et d'adorer les idoles. Il n'accepta aucunement, mais plutôt d'un visage * calme et avec hardiesse il s'écria au milieu de l'assemblée devant * A fol. 155 v° a.

1. Eusèbe cite deux localités voisines de ce nom, au sud de la Palestine, dont l'une à neuf milles au sud d'Hébron, *Onomasticon*, éd. Klostermann, Leipzig, 1904, p. 26.

ի մէջ ժողովրդեանն առաջի իշխանին. Աստուած մեր յերկինս է, եւ այսք որ յերկրի են՝ դեւք են, եւ կուռք ձեռագործք մարդկան :

Եւ հրամայեաց իշխանն եւ ուժգին եւ յերկար եւ խիստ չարչարանօք տանջեցին զսուրբն Պետրոս, եւ ապա արկին զնա ի հուր, բայց ոչ ի բորբոքեալ՝ զի մի արագ մեռցի, այլ ի սակաւաբոց կայծակունս, եւ այնպէս երկարագոյն տանջեալ՝ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած :

Յայսմ աւուր յիշատակ է սրբոյն Թէոդոսի անապատականի, որ զմիաբանակեցաց վանս կարգեաց յԵրուսաղէմ եւ յանապատս :

Մեծն Թէոդոսիոս ի կենդանութեան իւրում շինեաց զտապան իւր, եւ յորժամ կատարեաց ասէ ցկրօնաւոր եղբարսն. Ո՞վ ի ձէնջ առնէ նաւակատիս գերեզմանիս իմում : Եւ ոմն ի նոցանէ քահանայ Բասիլիոս անուն, այր աստուածահաճոյ եւ մեծ ճգնաւոր ասէ. Ես հայր պատուական : Եւ իջեալ ի տապանն՝ տարածեցաւ որպէս մեռեալ, եւ աւանդեաց զհոգին : Եւ յոյժ ողբացին զնա Թէոդոսիոս եւ ամենայն դասք եղբայրութեանն, եւ ըստ արժանեաց իւրոյ թաղեցին զնա ի նոյն գերեզմանին :

1 իշխանին] եւ ասէր *add.* B || 3 ուժգին] ուժգնակի B — յերկար] ընդերկար B || 5 սակաւաբոց] սակաւագոյն B — երկարագոյն] երկայնագոյն B || 6 Աստուած] Յունուարի ԺԱ եւ Արաց Դ *add.* B || 7 Թէոդոսի] Թէոդորոսի B || 9 Թէոդոսիոս] Թէոդորոս որ եւ կոչի Թէոդոսէոս, էր խստակրօն եւ յոյժ առաքինի. զամս երեսուն եկաց յանապատի խստաբուռ կենօք եւ նշանագործութեամբ որ եւ *add.* B || 13 եւ աւանդեաց զհոգին] եւ կատարեցին եղբարքն ի վերայ նորա զքառասնօրեայ կարգ ննջեցելոց :Եւ յետ քառասուն աւուր ննջեաց երանելին Բասի-լիոս ի Տէր *add.* B.

le gouverneur : « *Notre Dieu est au ciel*, et (les dieux) qui sont sur la terre ne sont que des démons; les idoles sont *l'œuvre des hommes*[1]. »

Le gouverneur ordonna de frapper saint Pierre vigoureusement et longuement, on le soumit à de cruelles tortures et on le jeta ensuite dans un feu, mais pas vif, afin qu'il ne mourût pas vite, mais sur des braises peu ardentes, et c'est ainsi que, longuement torturé, il rendit son âme à Dieu.

En ce jour, commémoration de saint Théodose (*Théodosi*), l'anachorète, qui fonda des couvents de religieux à Jérusalem et dans les déserts.

Le grand Théodose (*Théodosios*) avait, de son vivant, fait construire son tombeau, et lorsqu'il l'eut achevé il dit aux moines, ses frères : « Qui de vous veut célébrer la dédicace de mon tombeau? » Un d'eux, prêtre, nommé Basile (*Basilios*), homme agréable à Dieu et grand ascète, répondit : « Moi, père vénéré. » Il descendit dans le tombeau, s'étendit comme un mort, et rendit l'âme. Théodose et tous les groupes de la confrérie le pleurèrent beaucoup et l'enterrèrent dans ce même tombeau avec les honneurs conve-

1. Ps. cxiii, 11 sq.

Եւ ի բազում աւուրս ի գիշերային ժամու պաշտամանն՝ երեւէր հօրն Թէոդոսի, եւ սաղմոսէր ընդ այլ կրօնաւորսն որ եւ զձայնն ամենեքեան լսէին բայց զնա ոչ տեսանէին այլ Թէոդոս միայն ։

Եւ ասէ ցկրօնաւորսն թէ. Յամենայն ժամ * տեսանեմ զնա կալով ի մէջի մերում * A fol. 155 v° b. եւ պաշտէ ընդ մեզ ։ Եւ աղաչեցին զնա զի եւ նոքա տեսցեն զնա ։ Եւ խնդրեաց նա յԱստուծոյ. եւ ի քառասներորդ աւուրն, յետ մահուան նորա, երանելին Բասիլիոս երեւեցաւ ամենեցուն ի գիշերային ժամուն պաշտելով ընդ նոսա ։ Եւ ի կատարել զառաւօտուն պաշտօնն՝ երկիր եպագ ամենեցուն եւ ասէ. Ողջոյն ընդ ձեզ եղբարք եւ ընկերակիցք իմ, այլ զԲասիլիոս ոչ տեսանէք ։ Եւ անյայտ եղեւ ։

[B * Վերստին տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեանն Քրիստոսի ։ Ի նոյն * B p. 22 b. ճառէ երանելոյն Պրոկղի ասացեալ ։

Ի մկրտիլ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զիջանելով խոնարհութեամբ որպէս մարդ, յայտնեալ լինէր ի Հօրէ երկնից որպէս Աստուած, որ ձայնէր ի վերայ նորա եթէ. Դա է որդի իմ սիրելի ։ Դա է, որում հաճեցայ փրկել զտիեզերս առ ի սատանայական բռնութենէ ։ Դա է պսակ փառաց իմոյ ամենակալութեան, եւ զօրութիւն

4 զնա] զԲասիլիոս B || 5 նա] Թէոդոսիոս B — յԱստուծոյ] զի տեսցեն զնա եղբարքն *add.* B || 6 նորա] իւրում B || 9 ընկերակիցք իմ] Յիշեցէք բարեաւ *add.* B — անյայտ եղեւ] առժամայն ։ Իսկ սուրբ հայրն Թէոդորոս որ եւ Թէոդոսիոս եկաց այլ եւս յերկար ժամանակս, եւ բազմացոյց վանորայս, եւ արար բազում նշանս, եւ լի աւուրբք եւ արդեամբք հանգեաւ ի Տէր ի հասակի իբրեւ ի հարիւր քսան ամաց ։ *add.* B.

nables. Pendant de nombreux jours, aux offices de la nuit, (Basile) apparut au père Théodose (*Théodosi*), et il psalmodiait avec les autres religieux qui tous entendaient sa voix, mais ils ne l'apercevaient pas, à l'exception du seul Théodose (*Théodos*).

Or, celui-ci dit à ses religieux : « Je l'aperçois toujours * qui se tient au * A fol. 155 v° b. milieu de nous et officie avec nous. » Ils le prièrent de le leur faire voir aussi. Il supplia Dieu, et le quarantième jour après sa mort, le bienheureux Basile apparut à tous, à l'office de la nuit, faisant l'office avec eux. A la fin de l'office du matin, il s'inclina devant tous et dit : « Salut à vous, mes frères et mes compagnons, vous ne reverrez plus Basile. » Et il disparut.

[B * De nouveau, fête de la Nativité et de l'Épiphanie du Christ. (Suite de * B p. 22 b. l')homélie prononcée par le bienheureux Proclus.

Notre-Seigneur Jésus-Christ, en consentant humblement à être baptisé comme homme, fut révélé par le Père des cieux comme Dieu grâce aux paroles qu'Il fit entendre au-dessus de lui : « *Celui-ci est mon fils bien-aimé*[1]. *Il est celui en qui je me suis complu* pour sauver l'univers de la tyrannie de Satan. Il est la couronne de gloire de ma toute-puissance, ma force et ma

1. Matth., IV, 17.

իմ եւ իմաստութիւն. դա է, որով ուրախ լինիմ հանապազ, եւ ցնծամ յորդիս մարդկան : Դա է արարչագործն բոլոր յաւիտենից, որ զդասս վերնոցն պետութեանց :

Դա է որ կախեաց զերկինս ցոչինչ, եւ լուսաւորեաց զնա ճառագայթիւք զանազանափայլ լուսաւորացդ զեղեցկութեամբ : Դա է կառավար արեգականն եւ լուսնի եւ բոլոր աստեղացն բազմութեան : Դա է որ հիմնեաց զերկիր ի վերայ ջուրց որպէս յատակի, եւ զարդարեաց զնա երփն երփն ծաղկօք եւ տնկոցն որակութեամբք : Դա է որ արար զծով եւ կապեաց զնա չնչին աւազաւ, փարթամացուցեալ լիութեամբ յոքնազանն կենդանեաց : Դա է որ բղխեաց զաղբիւրս եւ առաջնորդեաց գետոց առ ի սնունդ եւ ի մխիթարութիւն դաշտաց եւ բուրաստանաց, եւ բոլոր կենդանեաց ցամաքայնոց եւ ջրայնոց անբանից եւ բանաւորաց :

Եւ այսպիսի ծայրափայլ եւ բարձրագոյն վկայութեամբք որոտացեալ Հօր ի
* B p. 23 a. * վերուստ, ըստ աստուածեղէնն բնութեան միածնի Որդւոյ իւրոյ բացայայտեաց զնա համազօր եւ համապատիւ եւ արարչակից ինքեան եւ ամենասուրբ Հոգւոյն. ըստ այնմ եթէ. Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց, եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց :]

sagesse. Il est celui en qui je me réjouis quotidiennement, et qui fait ma joie parmi les fils des hommes. Il est le créateur de tous les siècles et des ordres des puissances supérieures.

« Il est celui qui a suspendu le ciel dans le néant, qui l'a illuminé de la beauté des rayons variés des astres. Il est le régisseur du soleil et de la lune et de la multitude des étoiles. Il est celui qui a fondé la terre sur les eaux comme sur un sol et qui l'a ornée de fleurs variées et de plantes aux nombreuses qualités. Il est celui qui a créé la mer et qui l'a entourée de sable, en l'enrichissant d'une foule d'animaux variés. Il est celui qui a fait surgir les sources et qui a tracé le cours des fleuves pour alimenter et réjouir les prairies et les jardins, et tous les animaux terrestres et aquatiques, raisonnables et sans raison. »

En formulant d'en haut cet éclatant et suprême témoignage sur la nature
* B p. 23 a. divine * de son Fils unique, le Père l'a déclaré son égal en puissance et en honneur, cocréateur avec le très Saint-Esprit, ainsi qu'il est dit : *La voix du Seigneur sur les eaux, et le Dieu de gloire a fait retentir sa voix, le Seigneur lui-même, sur les eaux nombreuses*[1].]

1. Ps. xxviii, 3.

Արացի Ե եւ Յունուարի ԺԲ : Տօն Աստուածայայտնութեան եւ վկայութիւն սրբոյն Մեւարդիոսի:

Ճշմարիտ վկայն Քրիստոսի Մեւարդիոս էր ի ժամանակս Դիոկղետիանոսի կռապաշտ արքային եւ զեօթն եւ տասն ամ ի զօրականութեան թագաւորին կացեալ հաւատաց ի Քրիստոս, եւ մատնեցաւ ի ձեռս անօրէն նեղչացն : Եւ կացեալ առաջի ատենին խոստովանեցաւ զՔրիստոս ճշմարիտ Աստուած արարիչ երկնի եւ երկրի : Եւ հրամայեաց դատաւորն երեսուն եւ վեց արանց հարկանել բրովք ուժգին զվկայն Քրիստոսի. եւ զեօթն օր այնպէս ձաղկէին եւ համբերէր կարծրագոյն տանջանացն, եւ փառաւորելով զԱստուած աւանդեաց զհոգին ի ձեռս հրեշտակաց Յունուարի ԺԲ : Եւ թաղեցին զնա ի տեղւոջ նշանաւոր :

[B* Վերստին տօն է Ծննդեան եւ Աստուածայայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ : Դարձեալ ի նոյն ճառէ երանելոյն Պրոկղի : * B p. 24 a.

Տէր մեր Յիսուս Քրիստոս որ խոնարհաբար որպէս մարդ ի Յովհաննէ մկրտեցաւ, նոյն ինքն է որ իբրեւ զԱստուած ստեղծ խորհրդով զմարդն առաջին՝ սուրբ ի սուրբ

2 Մեւարդիոս] Մէորդի, որ Մէրտիոս կոչի *add.* B || 4 արքային] զինուորեալ ի կարգ Մաւրոսացն որք սեւք կոչին *add.* B || 5 հաւատաց... կացեալ] սիրելի եղեւ նմա եւ ամենայն զինուորակցաց վասն քաջութեան իւրոյ : Եւ յետոյ ի լինել հալածմանց յայտնի արար զքրիստոնէութիւն իւր եւ կալեալ կացուցին *add.* B || 6 երկրի] եւ ստիպեցին զնա զոհել չաստուածոց իւրեանց, եւ իբրեւ ոչ հաւանեցաւ, լուծին զգօտի զինուորութեանն, եւ հանին զնա ի պատուոյն *add.* B || 8 ձաղկէին եւ համբերէր] ձաղկեցին եւ համբեր B — տանջանացն] մինչեւ զարմանալ ամենեցուն, եւ կիսամահ արկին զնա ի բանտ ուր *add.* B || 10 նշանաւոր] յորմէ բազում բժշկութիւնք կատարին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ *add* B.

5 ARATZ, 12 Janvier.

Fête de l'Epiphanie et martyre de saint Méortios.

Le vrai martyr du Christ Méortios (*Mevardios*) vivait aux jours de l'empereur idolâtre Dioclétien. Après avoir servi dix-sept années dans la milice de l'empereur, il crut au Christ, et fut livré aux mains des persécuteurs impies. Se tenant devant le tribunal, il confessa le Christ vrai Dieu, créateur du ciel et de la terre. Le juge ordonna à trente-six hommes de frapper vigoureusement à coups de bâton le martyr du Christ. On le battit ainsi pendant sept jours, mais il endura ce cruel supplice et, tout en glorifiant Dieu, il rendit son âme entre les mains des anges, le 12 Janvier. Il fut inhumé dans un endroit distingué.

[B * De nouveau, fête de la Nativité et de l'Épiphanie du Christ, notre Dieu. Suite de la même homélie du bienheureux Proclus. * B p. 24 a.

Notre-Seigneur Jésus-Christ qui se fit baptiser humblement, comme homme, par Jean, est le même qui, comme Dieu, créa symboliquement le

երկրէ ամենասուրբ ձեռօք : Եւ փչեալ ի նա շունչ կենդանի անձնացոյց, գոյացուցեալ սա ի չորից որակութեանց բարեխառն տարերց, եղեալ ահա կրկնակ այս է, զգալի եւ իմանալի : Զոր եւ գերապատուեալ պայծառացոյց, աւարտեալ զնա բանականութեամբ, իմաստութեամբ եւ հոգեւորութեամբ, եւ զնոյն յորջորջեալ ձայնեաց :

Ապա զնոյն սակաւ երկիր կամ իր՝ որ է մարմին եւ արիւն. որոյ անուն զբնութիւնն զեկուցանէ, եւ բնութիւնն զանունն բացայայտէ : Եւ ոչ միայն՝ այլ եւ նախամեծարեալ արար զնա հաղորդակից արարչութեանն իւրոյ յարադրութեամբ անուանակոչութեամբն որ ի վերայ բոլորից սակս աստուածութեանն նմանութեան : Արդ եւ հնազանդեցուցեալ զբնաւ աշխարհ եւ որ ինչ յաշխարհի, կացոյց զնա թագաւոր ինքնիշխանութեամբ ի վերայ ամենայնի, կանխապատկերելով ի նմա զինքեան աստուածականն յայտնութիւն՝ անտեսական մարմնով ի վերայ երկրի ի հոսանս Յորդանան գետոյ :

*B p. 24 b.

* Ի սմին աւուր յիշատակ է սրբուհւոյ կուսին Տատիանեայ :

Սուրբ եւ կոյս վկայն Քրիստոսի Տատիանի էր ի քաղաքէն Հռոմայ յաւուրս Աղեքսանդրոսի արքայի, գոլով ի հօրէ հիւպատոսաց, եւ էր ըստ կարգի եկեղեցւոյն սարկաւագ :

Եւ վասն զի հաւատացեալ էր ի Քրիստոս կացուցին զնա առաջի արքային, եւ

premier homme, saint, de la terre sainte, par ses très saintes mains. Lui ayant inspiré un souffle vivant, il le personnifia, et l'ayant produit des quatre espèces d'éléments tempérés, il le fit double, c'est-à-dire matériel et spirituel. Il le perfectionna hautement en le complétant par l'intelligence, la sagesse et la piété, et il l'appela en lui donnant un nom.

Comment dire ensuite terre ou chose, celui qui est corps et sang, dont le nom déclare la nature, et dont la nature explique le nom? Et non seulement (Dieu lui donna un nom), mais l'ayant préféré, il le fit participer à sa puissance créatrice en lui ajoutant le pouvoir de donner un nom à toutes choses, en raison de sa ressemblance avec la divinité. Lui ayant donc assujetti la terre entière et tout ce qui se trouve sur la terre, il l'institua roi avec pleine souveraineté sur toutes choses, symbolisant à l'avance en celui-ci sa propre révélation comme Dieu, avec un corps invisible, sur la terre, dans les eaux du Jourdain.

*B p. 24 b.

*En ce jour, commémoration de la vierge sainte Tatiana.

La sainte vierge et martyre du Christ, Tatiana (*Tatiani*)[1], était de la ville de Rome, aux jours de l'empereur Alexandre, son père étant du rang des consuls (ὕπατος)[2], et elle était, dans l'ordre ecclésiastique, diaconesse.

Comme elle avait cru au Christ, on l'amena en présence de l'empereur,

1. Cette forme correspond exactement au grec Τατιανή. — 2. Au lieu de cette transcription հիպատոս, les auteurs arméniens emploient habituellement հիւպատ, pl. հիպատեան.

խոստովանեցաւ զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ աներկիւղ ։ Տարաւ զնա թագաւորն ի տուն կռոցն, եւ անդ բռնադատէր զնա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն. եւ նա աղօթիւք կործանեալ փշրեաց զկուռսն, եւ ասէ. Տես զտկարութիւն աստուածոց քոց ։

Եւ բարկացեալ թագաւորն * հրամայեաց եւ զերեսս սրբուհւոյն վիրաւորեցին յոյժ, եւ խլեցին զթարթիչս եւ զկոպս աչացն, խոցեցին եւ զաչսն. եւ ի փայտի բարձրացուցեալ զնա քերեցին երկաթի ճանկօք զամենայն մարմինն մինչեւ յոսկերսն. այլ եւ քերծեալ քերթեցին զգլուխն եւ ընկեցին զսուրբն ի հուր. զոր կալեալ անդէն հատին զգլուխ նորա, եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս ։] * B p. 25 a.

Արացի Զ եւ Յունուարի ԺԳ ։ Տօն ութօրեայ Թլփատութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ վկայութիւն Երմուղոսի եւ Ստրատոնիկոսի ։

Այս բարեպաշտ վկայքս Քրիստոսի * էին յամս անօրէն թագաւորին Լիկիանոսի ։ Սուրբն Երմուղէոս սարկաւագ էր, եւ կացեալ առաջի արքային խոստովանեցաւ զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ասէ. Ծառայ եմ Քրիստոսի եւ սարկաւագ եմ ուխտի Տեառն ։ Ապտակեցին զծնօտսն պղնձի թաթովք եւ արկին ի բանդ. եւ * A fol. 156 r° a.

11 վկայութիւն] սրբոց վկայիցն *add.* B — Երմուղոսի] Երմեղէոսի B || 13 Երմուղէոս ... կացեալ] Երմեղէոս, որ եւ Երմողայոս, սարկաւագ էր, եւ ի ժամանակի հալածմանցն քարոզէր զՔրիստոս ։ Եւ կալեալ կացուցին *add.* B || 15 եմ *om.* B — բանդ] եւ ի գիշերին լոյս մեծ ծագեաց ի բանդին եւ երեւեալ *add.* B.

et elle confessa sans crainte le nom du Christ notre Dieu. L'empereur la conduisit au temple des idoles, et là, voulait l'obliger à renier le Christ et à immoler aux idoles; mais elle, par ses prières, pulvérisa les idoles en les renversant, et dit : « Regarde la faiblesse de tes dieux. »

L'empereur, irrité, * donna des ordres; on blessa grièvement le visage de la sainte, on lui arracha les cils et les paupières, on lui endommagea les yeux, et, l'ayant élevée à un poteau, on lui laboura avec des ongles de fer tout le corps jusqu'aux os; l'ayant rasée, on lui écorcha aussi la tête, et on jeta la sainte dans les flammes; puis l'en ayant retirée, on lui trancha la tête. C'est ainsi qu'elle mourut dans le Christ.] * B p. 25 a.

6 ARATZ, 13 Janvier.

Fête de l'octave (de la Nativité); circoncision de Notre-Seigneur Jésus-Christ, et martyre d'Hermylus et de Stratonicus.

Ces victorieux martyrs du Christ * vivaient aux jours de l'empereur impie Licinius. Saint Hermylus (*Ermoulios*) était diacre. Mis en présence de l'empereur, il confessa le nom de Notre-Seigneur Jésus-Christ, et dit : « Je suis le serviteur du Christ, et diacre de la congrégation du Seigneur. » On lui souffleta les joues avec des mains de bronze et on le jeta en prison, mais * A fol. 156 r° a.

հրեշտակ Տեառն զօրացոյց զնա կալ արիաբար եւ ոչ երկնչել ի տանջանաց, այլ համբերել եւ առնուլ զպսակն մարտիրոսութեան :

Եւ դարձեալ կացուցին առաջի բեմին եւ հարցանէին նմա. Պաշտեսցես զկուռս եւ զոհս մատուցես : Եւ նորա ոչ հաւանեալ՝ գանեցին զնա վեց դահիճք : Եւ ձայն եղեւ յերկնից առ նա եւ ասէ. Երմողիէ, արիական վկայ իմ, ամէն, ամէն ասեմ քեզ, յետ երից աւուրց փոխեսցիս ի բռնաւորէդ, եւ ընկալցիս զպատրաստեալ քեզ պսակն :

Դարձեալ արկին զսուրբն ի բանդ, եւ հրամայեցին զօրականի միոյ սիրելւոյ Երմողիոսի, որոյ անուն էր Ստրատոնիկոս պահել զնա ի բանդին : Եւ մինչդեռ աղօթէր սուրբն ի գիշերի լոյս ծագեաց, եւ ձայն յերկնից եկն իբրեւ զառաջինն : Եւ դարձեալ երիցս անգամ կացուցին յատենի, եւ բրօք ջարդեցին զոսկերս նորա, եւ ճանկօք արծուոյ պատառեցին զորովայնն, եւ տարան ի բանդն :

Եւ տեսեալ զհամբերութիւն սրբոյն Երմողայոսի հաւատաց Ստրատոնիկոս ի
* A fol. 156 r° b. Քրիստոս եւ կացուցին զնա առաջի թագաւորին, եւ * համարձակութեամբ խոստո-

2 մարտիրոսութեան :] Եւ պահապան նորա Ստրատոնիկոս տեսեալ ի պատուհանէն զտեսիլն զայն, սիրով յարեցաւ ի նա եւ հաւատաց ի Քրիստոս : *add.* B || 4 դահիճք . . . իբրեւ զառաջինն] եւ դարձեալ արկին ի բանդ : Եւ մինչդեռ աղօթէր սուրբն ի գիշերի՝ լոյս ծագեաց իբրեւ զառաջինն, եւ աստուածային ազդեցութեամբ ծանուցաւ նմա եթէ յետ երից աւուրց փոխեսցիս ի բռնաւորէդ, եւ ընկալցիս զպատրաստեալն քեզ պսակ B || 10 յատենի] եւ իբրեւ տեսին հաստատուն ի հաւատս *add.* B || 11 եւ տարան ի բանդ . . . եւ ասէ] եւ յարատեւել Ստրատոնիկոսի սիրելւոյ նորա, քննեցին եւ զնա եւ համարձակ խոստովանեցաւ զանունն Քրիստոսի : Հարին զնա ուժգին բրօվք, եւ արկին ի բանդ ընդ սրբոյն Երմողիոսի : Եւ յաղօթելն նոցա ազդեցաւ նոցա առ յԱստուծոյ եթէ B.

l'ange du Seigneur l'encouragea à résister courageusement et à ne pas craindre les supplices, mais à prendre patience et à recevoir la couronne du martyre.

On l'amena de nouveau devant le tribunal et on lui demanda : « Vas-tu adorer les idoles et offrir des sacrifices ? » Et comme il n'accepta pas, six bourreaux se mirent à le frapper. Une voix du ciel se fit entendre à lui, disant : « Hermylus (*Ermolié*), mon martyr intrépide, en vérité, en vérité, je te le dis, dans trois jours tu auras trépassé des mains de ce tyran et tu recevras la couronne qui t'est préparée. »

On jeta de nouveau le saint en prison, et on ordonna à un soldat ami d'Hermylus, qui se nommait Stratonicus, de le garder dans la prison. Tandis que le saint priait pendant la nuit, une lumière jaillit et une voix venant du ciel se fit entendre comme la première fois. On l'amena pour la troisième fois au tribunal et on lui brisa les os à coups de bâton, on lui déchira le ventre avec des griffes d'aigle, puis on le reconduisit à la prison.

Ayant vu la patience de saint Hermylus, Stratonicus crut au Christ. On
* A fol. 156 r° b. l'amena en présence de l'empereur, et il * confessa avec hardiesse le nom du

վանեցաւ զանունն Քրիստոսի : Եւ հրամայեաց եւ հարին զնա ուժգին բրովք, եւ արկին ի բանդ ընդ սրբոյն Երմողայոսի : Եւ յաղօթելն նոցա ձայն եղեւ առ նոսա եւ ասէ . Զընթացս կատարեցէք, զհաւատս պահեցէք, արդ պատրաստեալ է ձեզ պսակն արդարութեան, քանզի յաղթեցէք արիաբար բռնաւորին :

Եւ ի վաղիւն սրով կոտորեցին զմարմինս նոցա, եւ ընկեցին ի գետն Դանուբայ, եւ գոհութեամբ աւանդեցին զհոգիս իւրեանց ի Յունուարի ԺԳ : Եւ յետ երից աւուրց եհան գետն զմարմինս իւրեանց ի ցամաքն, զոր առեալ հաւատացելոցն եդին յայրի միում արտաքոյ քաղաքին Սանգխտայ, ութ եւ տասն մղոնաւ հեռի :

[B* Վերստին տօն է Ծննդեան, եւ ութօրեայ Թլփատութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ : *B p. 25 a.

Տէր եւ Աստուածն մեր Յիսուս Քրիստոս միածին որդին Աստուծոյ յետ մարմնաւոր ծննդեանն որ յանարատ եւ յաստուածածին կուսէն Մարիամայ, զկնի ութ աւուր յանձն առ թլփատիլ այսօր ըստ օրինացն վասն բազում պատճառաց : Նախ առաջին՝ զի ստուգեսցէ եւ հաւատարմապէս ցուցցէ թէ ճշմարտապէս մարդ եղեւ եւ առանց

5 Դանուբայ] որ է Իստէր *add.* B || 6 եւ գոհութեամբ աւանդեցին զհոգիս իւրեանց *om.* B || 7 իւրեանց] սրբոց վկայիցն B || 8 Սանգխտայ] Սանգիտայ B.

Christ. Il (l'empereur) ordonna de le frapper violemment avec des bâtons, puis on le jeta en prison avec saint Hermylus. Pendant qu'ils priaient, une voix se fit entendre à eux et dit : « Vous avez *achevé votre carrière,* vous avez *conservé votre foi*[1]; *la couronne de justice* vous *est préparée,* car vous avez courageusement vaincu le tyran. »

Le lendemain, on déchiqueta leur corps à coups d'épée, et on les jeta dans le fleuve Danube[2]. Ils rendirent leur âme avec actions de grâces, le 13 Janvier. Trois jours après, le fleuve déposa sur la berge leurs corps, que les fidèles emportèrent dans une grotte hors de la ville de Singidunum (*Sangoukht*), distante de dix-huit lieues[3].

[B* De nouveau, fête de la Nativité et, en son octave, Circoncision du Christ, notre Dieu. * B p. 25 a.

Notre-Seigneur et Dieu Jésus-Christ, fils unique de Dieu, après sa naissance corporelle de la pure mère de Dieu la Vierge Marie, consentit, huit jours après, à se faire circoncire, en ce jour, d'après les lois, et pour plusieurs raisons. D'abord, en premier lieu, pour confirmer et prouver indubitablement

1. II Tim., IV, 7. — 2. Les vies grecques ont le nom d'origine thrace Ἴστρος, cf. *Syn. Cp.,* col. 387; Métaphraste, *P. G.,* CXIV, col. 564. — 3. Grec : τῆς πόλεως Σιγγήδονος = Belgrade.

կարծեաց. ընկալաւ ի բնութենէս Ադամայ նիւթական մարմին թանձրագոյն որով թլփատեցաւ հաւաստեաւ :

Զի թէ առաչօք էր մարմինն եւ ձեւ կերպարանաց միայն ըստ որում ասացին հերձուածողքն, զիա՞րդ ձեւն եւ կերպարանն մարմնոյ թլփատութիւն ընդունէր ստուգապէս. կամ ով ապա էր որ թլփատեցաւ ութօրեայ, քանզի ասէ անսուտ պատմութիւնն աւետարանին սրբոյ եթէ. Իբրեւ լցան աւուրք ութ եկին թլփատել զնա :

* B p. 25 b Եւ որպէս եւ զայլ բազում ինչ յանձն առ. այսինքն՝ զքունն, զվաստակելն, զքաղցն եւ զծարաւն, զարտասուքն եւ զերկիւղն, * զտրտմութիւն եւ զքիրտն, զզօրանալն ի հրեշտակէ, եւ զմահն եւ զայլս : Այնպէս եւ զթլփատութիւնն ի սկզբանն անդէն ընդունի, հաւասարելով զինքն ընդ մարդկան, զի համարձակեսցի ծնողն սպասաւորել նմա մարդկաբար որպէս մանկան եւ մարդոյ. եւ զի յամօթ արասցէ զհերձուածողսն, եւ ցուցցէ ճշմարիտ եւ ստոյգ զմարմինն :

Դարձեալ զի մարդ եղեւ փոխանակ առաջին մարդոյն, զի որք զլորեցաք մեք կանգնեսցէ : Արդ զի Ադամն այն որ ստեղծուած էր Աստուծոյ եւ ծառայ՝ ի սկզբան անդ ոչ պահեաց զհրամանն Աստուծոյ, այլ եղծ զպատուիրանն որ տուաւ նմա. որով ամենեցուն եղեւ պատճառ կործանման. յիրաւի ընդդէմ այնորիկ Տէրն մեր Յիսուս Քրիստոս որ Աստուած էր եւ Որդի Աստուծոյ, մարմնով Ադամայ որ միացաւ

qu'il était vraiment homme, sans aucun doute, puisqu'il avait reçu de la nature d'Adam un corps matériel, épais, lequel a été vraiment circoncis.

Car s'il avait eu un corps fantôme et l'apparence de la forme seulement, ainsi qu'ont dit les hérétiques, comment cette forme et cette apparence de corps aurait-elle reçu réellement la circoncision? Et qui est donc celui qui a été circoncis à l'âge de huit jours, ainsi que le dit le récit véridique du saint évangile : *Lorsque huit jours furent écoulés, on vint le circoncire*[1].

* B p. 25 b. Il l'accepta, comme Il avait accepté bien d'autres choses, c'est-à-dire le sommeil, le travail, la faim, la soif, les larmes, la crainte, * la tristesse, les sueurs, les encouragements de l'ange, la mort, etc. Ainsi a-t-Il accepté, dès le commencement, la circoncision, en se mettant au niveau des hommes, pour que sa mère osât le soigner en tant qu'homme, comme enfant et homme, et afin de confondre les hérétiques en montrant un corps vrai et réel.

Il s'est aussi fait homme pour remplacer le premier homme, afin que nous soyons relevés, nous, qui avions succombé. Et puisque Adam, qui était une créature de Dieu et son serviteur, n'avait pas observé, dès le début, les commandements de Dieu, mais avait enfreint l'ordre qui lui était donné, par où il fut la cause de notre ruine à tous, Notre-Seigneur Jésus-Christ qui était Dieu et Fils de Dieu et qui avait uni le corps d'Adam au Verbe, pour effacer

1. Luc, II, 21.

ընդ բանին վասն զի զնորայն քաւեսցէ զսկզբնական օրինազանցութիւնն, ի սկզբան անդ մարդեղութեան իւրոյ սկսանի ըստ կարգի եւ կատարէ զօրէնսն Աստուծոյ որչափ ինչ հնար էր ի տղայական հասակին կատարել նմա. այսինքն զհրամանս եւ զօրէնս պատուիրանի թլփատութեանն, իբրու զրոշմիւ յանձին ընկալեալ եւ կնքեալ ։

Նա եւ զամենայն արդարութիւն հանդերձեալ էր կատարել եւ լնուլ ի մարմինն իւր ըստ ասելոյն առ Յովհաննէս. որ եւ քան զամենայն խոնարհութիւն այժմ առաւել եւ մեծագոյն խոնարհի ընդդէմ համբարտաւանութեանն Ադամայ՝ զի զայն լուծցէ ։ Վասն որոյ որք հարազատ զորդիութիւնն եւ զժառանգութիւն աստուածպաշտութեանն Աբրահամու փոխանորդեցին, թլփատութեամբն որոշեցան ի հեթանոսաց ։

Արդ՝ զի աւետիքն Աբրահամու այս էր, զի ի զաւակէ նորա յայտնելոց էր Քրիստոս եւ զաւակի նորին զրոշմն թլփատութիւնն ութօրեայ էր. ապա Քրիստոս թլփատելովն ի ծննդեան ութօրեայ յայտ արար թէ որդի էր * Աբրահամու, եւ ճշմարտեցաւ առ նա * B p. 26 a.
երդումն Աստուծոյ ։

Որով ապա թէ չէր թլփատեալ Քրիստոս ըստ մարմնոյն, ասէին հակառակորդքն եթէ բանզի նշան որդւոցն Աբրահամու առ յԱստուծոյ թլփատութիւնն տուաւ, եւ Քրիստոս զնոյն ոչ ընկալաւ, չէ հարազատ ժառանգ եւ զաւակ Աբրահամու ըստ մարմնոյ, որով եւ աւետիքն հարցն անկատար թուէր ։

la primitive transgression des commandements, commence en vérité, au début de son incarnation, par accomplir une à une les lois de Dieu, autant qu'il Lui était donné de le faire dans son enfance, c'est-à-dire l'observation et les règles de la circoncision, comme un sceau accepté sur sa personne et appliqué effectivement.

Il devait aussi *accomplir toute justice*[1] en sa personne ainsi, qu'Il le dit à Jean, et Il fit d'abord par preuve d'humilité, et par une plus grande humilité encore contre l'enorgueillissement d'Adam, pour pouvoir l'absoudre. C'est pourquoi tous ceux qui se sont transmis l'intime filiation et l'héritage du culte du Dieu d'Abraham, se sont distingués des gentils par la circoncision.

Or, comme les promesses à Abraham étaient que le Christ devait se révéler de parmi ses descendants, le signe de sa race étant la circoncision au huitième jour, le Christ, en se laissant circoncire le huitième jour après sa naissance, a manifesté qu'il était fils * d'Abraham, et le serment de Dieu s'est * B
trouvé vérifié en Lui. p. 26 a.

Car si le Christ n'avait pas été circoncis corporellement, les adversaires auraient dit que, la circoncision ayant été donnée par Dieu comme signe pour les fils d'Abraham et le Christ ne l'ayant pas reçue, Il n'est pas le véritable héritier et descendant d'Abraham d'après le corps, de sorte que les promesses faites aux patriarches auraient paru incomplètes.

1. Matth., iv, 15.

Զի գոյին եւ այլ որդիք Աբրահամու ոչ թլփատեալք որք ոչ համարին ի զաւակս, որպէս ցեղեալքն ի Քետուրայ ։ Եւ Իսմայէլ որդի աղախնոյն, որ թէպէտ եւ ընկալաւ զնոյն՝ այլ ոչ հարազատաբար ութօրեայ որպէս զԻսահակ. զի երկոտասան ամաց էր Իսմայէլ ի թլփատելն իւրում եւ ոչ ութօրեայ. վասն որոյ ասաց. Ի բաց հան զորդի աղախնոյդ ոչ ժառանգել ընդ ազատին. եւ թէ. Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ ։ Զի Իսահակ ութօրեայ զթլփատութիւնն ընկալեալ՝ աւանդեաց ի Քրիստոս, որ նոյնպէս ութօրեայ եւ վերջին թլփատեալ կոչեցաւ զաւակ Աբրահամու, զաւետիսն հաստատուն ունելով եւ զերդումն Աստուծոյ ճշմարտելով ։

Արդ երկրպագելով խոնարհութեան նորա որ զամենայն վասն մեր յանձն էառ, զի ի հանդերձեալ ութեկին՝ իբրեւ նշանաւորեալք եւ դրոշմեալք Աստուծոյ՝ ճշմարիտ տօնիւ արժանի լիցուք փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն ։

* B p. 27 a.

*Յայսմ աւուր հանգիստ ճգնաւոր հօրն մերոյ եւ սքանչելագործ քահանայապետին Աստուծոյ՝ սրբոյն Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսին ։

Սուրբն Յակոբ էր ծննդեամբ ի մեծ քաղաքէն Մծբնայ որ կոչի Նսեպի, որ է ընդ

Car il y a d'autres descendants d'Abraham incirconcis, qui ne sont pas comptés dans sa race, comme les descendants de Cethura (*Khetouray*). Quant à Ismaël, le fils de la servante, bien qu'il l'eût reçue (la circoncision), ce ne fut pas légalement au huitième jour comme Isaac, car Ismaël avait douze ans lorsqu'il fut circoncis et non pas huit jours. C'est pourquoi il est dit : *Renvoie le fils de ta servante pour qu'il n'hérite pas avec le fils libre*[1]; et encore : *C'est par Isaac que ta descendance sera nommée*[2]. Isaac (*Isahak*) ayant donc reçu la circoncision le huitième jour, la transmit au Christ, qui lui aussi, âgé de huit jours et le dernier circoncis, fut appelé fils d'Abraham, confirmant ainsi les promesses et vérifiant le serment de Dieu.

Aussi, nous adorons Son humilité, qui a accepté tout pour notre cause, et dans l'octave qui se prépare, nous allons, comme si nous avions reçu un signe et avions été confirmés par Dieu, nous rendre dignes, par une sincère célébration de la fête, de glorifier le Père, le Fils et le Saint-Esprit, maintenant et toujours et dans l'éternité. Amen.

* B p. 27 a.

*En ce jour, trépas de notre père ascète, le thaumaturge pontife de Dieu, saint Jacques évêque de Nisibe[3].

Saint Jacques était natif de la grande ville de *Mdzbin* que l'on appelle

1. Gen. XXI, 10 et Gal. IV, 30. — 2. Gen. XXI, 12. — 3. Cf. PEETERS, *La légende de saint Jacques de Nisibe*, dans *Analecta Bollandiana*, XXXVIII (1920), p. 285-378. La présente notice contient des éléments communs avec les paragraphes 2. 5. 16. 17. 18. 23 de la vie arménienne traduite par le P. Peeters.

մէջ սահմանաց Հոռոմոց եւ Պարսից ։ Եւ եղեւ ի տղայութենէ անարատ եւ սուրբ, եւ զանապատական եւ զմիանձնական վարս սիրէր, մեծ ճգնութեամբ բնակելով յանբնակ եւ ի բարձրագոյն ծայրս մեծամեծ լերանց ։ Եւ ի գարուն եւ յամառն՝ ոչ այլ ինչ քան զերկինս միայն ունելով յարկ եւ հովանի, եւ ձմեռն ի փոքր խղի կամ յայրի ինչ մտանելով կայր ։

Եւ ոչ այլ ինչ ճաշակէր քան միայն զվայրի բանջարս որ լինէին ի լերինն, ամենեւին ոչ հաղորդելով աշխարհական կերակրոց կամ որ ինչ անցանէր ընդ հուր ։ Եւ զգեստ ոչ այլ ինչ ունէր կամ անկողին՝ բայց միայն խոշոր մազեղէն խորգ. եւ հերքն որ ծածկէր զմարմինն՝ ի ցրտոյ եւ ի տօթոյ խոշորացեալ էր իբրեւ զմամուռս քարանց ։

Ընկալաւ եւ յԱստուծոյ շնորհս զօրաւոր գործոց եւ հոգի նախագիտութեան, որով յառաջ տեսանէր որ լինելոցն էր. եւ բազում սքանչելագործութիւն առնէր շնորհօք սուրբ Հոգւոյն, եւ միշտ կերակրէր հոգւով աստուածային եւ հոգեւոր կերակրով ։

Յաւուր միում մեծս այս եւ աստուածազգեաց հայրս գայր յաղբիւր ինչ որ ի լեառն ուր բնակէր սուրբն, եւ եգիտ աղջկունս մերկս ուր լուանային զզգեստս ինչ, եւ ի տեսանել զսուրբն ոչ ծածկեցան կամ ամաչեցին ։ Որ եւ զաղբիւրն ցամաքեցոյց, եւ զհերս գլխոց նոցա սպիտակացոյց աղօթիւք. եւ յետոյ դարձեալ վերստին զաղբիւրն բղխեցոյց, բայց զհերս աղջկանցն ոչ դարձոյց ի սեւութիւն ։

Այլ երբեմն ետես զդատաւոր մի պարսիկ զի անիրաւ դատէր զդատաստանն. եւ

Nisibe (*Nsepi*), laquelle se trouve sur les confins des Grecs et des Persans. Il fut, dès l'enfance, pur et saint, aimant la vie d'anachorète et de solitaire, et il vécut avec grand ascétisme sur les sommets inhabités et les plus élevés des hautes montagnes. Le printemps et l'été, il n'avait pour tout abri et toit que le ciel; l'hiver, il se retirait dans une petite cellule ou grotte et y vivait.

Il n'avait pas d'autre nourriture que les légumes sauvages qui poussent dans la montagne, ne prenant jamais de mets mondains ni rien de ce qui était passé par le feu. Il n'avait pour vêtement et pour lit qu'un grossier cilice de poils, et les poils qui recouvraient son corps, endurcis par le froid et la chaleur, étaient comme la mousse des rochers.

Il avait reçu de Dieu les grâces de puissantes actions et l'esprit de prescience, par lequel il prévoyait ce qui devait arriver. Il accomplit de nombreux prodiges par les grâces du Saint-Esprit, et nourrissait toujours son âme d'une nourriture divine et spirituelle.

Un jour, ce père grand et revêtu de Dieu, arrivé près d'une source qui jaillissait dans la montagne où il habitait, y aperçut des jeunes filles nues en train de laver des vêtements, qui, à la vue du saint, ne se cachèrent pas et n'eurent pas honte. Il dessécha la source par ses prières et rendit leurs cheveux blancs; plus tard, il fit jaillir la source de nouveau, mais il ne rendit pas aux cheveux des jeunes filles leur noirceur.

Une autre fois, le saint, voyant un juge persan rendre un jugement injuste,

* B p. 27 b. սուրբն զվէմ մի մեծ * որ մերձ էր դատաւորին անիծեաց եւ փշրեցաւ իսկոյն. եւ յոյժ երկեաւ դատաւորն եւ ուղղեաց զիրաւունսն :

Յայնմ ժամանակի յորժամ սուրբս այս աստուածային յայտնութեամբ հրեշտակի երեւելով բերեալ եղեւ ի լեռնէն, եւ ձեռնադրեցաւ եպիսկոպոս քաղաքին իւրոյ Մծբնայ, եւ բարիոք հովուելով ուղղափառ վարդապետութեամբ լուսաւորէր զեկեղեցի, եւ մեծամեծ սքանչելագործութեամբ զբազումս ի հեթանոսաց դարձուցանէր ի Քրիստոս : Դարմանէր եւ զաղքատսն յոյժ մխիթարութեամբ, եւ կեայր հրեշտակական ձգնութեամբն, եւ որպէս յանապատին նոյնպէս եւ յեպիսկոպոսութեան իւրում անփոփոխելի զկերակուրսն եւ զհանդերձսն ունէր :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ յայտնեցաւ անաստուած կատաղին Արիոս, եւ չար հերձուածովն խռովէր զեկեղեցին Աստուծոյ. վասն որոյ ընդդէմ նորա ժողովեցան սուրբ հարքն ի Նիկիա, ընդ որս գնաց եւ սուրբն Յակոբ. եւ ընդ այլ սուրբ հարքն հաստատեցին զուղղափառ հաւատս համագոյ սուրբ Երրորդութեանն : Եւ այնպէս զեօթն օր աղօթս արարեալ աստուածային յայտնութեամբն որոշեցին կորեցին ի բաց զհայհոյիչն Արիոս :

Եւ մինչդեռ մատուցանէր սուրբն Յակոբ զաստուածային պատարագն, ի ժամ սրբոյ պատարագին պղծոյն Արիոսի ամենայն փորոտիքն աղեօքն հանդերձ հոսեալ ի վայր վայթեցաւ. եւ պատառեցաւ ինքն չարաչար յանարգ աղբատեղին ըստ անիծիցն

* B p. 27 b. maudit une grosse pierre * qui se trouvait près du juge, laquelle fut aussitôt réduite en menus morceaux. Le juge fut saisi d'une grande peur et rectifia le jugement.

C'est à cette même époque que ce saint, ayant été transporté hors de la montagne par la merveilleuse manifestation d'un ange de Dieu, fut sacré évêque de sa ville de Nisibe; il gouverna bien son église, l'illumina de la doctrine orthodoxe, et par l'accomplissement de grands miracles convertit au Christ beaucoup de païens. Il prenait soin des pauvres et les réconfortait grandement. Il vivait dans un ascétisme angélique et, dans son épiscopat comme au désert, il conserva sans changement nourriture et vêtement.

C'est en ces jours-là que parut le furieux athée Arius, qui troubla l'église de Dieu par son schisme mauvais, c'est pourquoi les saints pères se réunirent contre lui à Nicée; saint Jacques y vint aussi et de concert avec les autres saints pères ils établirent la foi orthodoxe sur la consubstantialité de la sainte Trinité, et après avoir prié pendant sept jours, ils excommunièrent, par révélation divine, le blasphémateur Arius.

Pendant que saint Jacques offrait le divin sacrifice, à l'heure de la sainte messe, l'ignoble Arius, perdant complètement entrailles et viscères, les répandit sous lui, et (son corps) s'ouvrit d'une façon atroce sur un fumier,

սրբոյն Յակոբայ ։ Իսկ երանելին Յակոբ դարձաւ ի քաղաքն իւր, եւ զամենեսին հաստատէր յուղղափառութիւն ։

Յետ ժամանակաց Թագաւորն Պարսից եկն ի վերայ քաղաքին սրբոյն բազում զօրօք եւ պաշարեաց. որ եւ զգետն մեծ ուղղեցին գալ ի վերայ քաղաքին, կործանել զպարիսպն եւ զքաղաքն ապականել ։ Իսկ սուրբն Յակոբ տեսեալ զի մասն ինչ ի պարսպէ * քաղաքին կործանեաց գետն, ել ի վերայ պարսպացն ընդդէմ զօրացն եւ * B p. 28 a.
աղօթեաց. եւ երեւեցաւ ինքն Թագաւորին Պարսից եւ զօրաց նորա ի կերպարանս Թագաւորին Հոռոմոց բազմութեամբ հրեշտակաց զոր տեսեալ կարծեցին եթէ կայսրն ինքնին եկեալ է անդր զօրօք իւրովք առ ի փրկել զքաղաքն ։ Եւ վաղվաղակի էարկ սուրբն աղօթիւք ի մէջ նոցա մժեխ, եւ շանաճանճ, եւ ճանճիւն, եւ սպիտակ բոռս, որ մեծապէս վտանգէր զնոսա եւ զերիվարս իւրեանց, եւ ի սպառ հարեալ սատակէր զնոսին. վասն որոյ յարուցեալ փախեան անտի ահիւ եւ տագնապաւ մեծաւ ։

Եւ սուրբն կացեալ մեծաւ առաքինութեամբ եւ երանելի կենօք, բազում նշանս առնելով հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս որում ցանկայրն ։]

Արացի է եւ Յունուարի ԺԴ ։ Տօն սրբոց աբեղայիցն Սինէական եւ Հռութայ լերինն ։

Մարդակեր եւ պղծազոհ բարբարոսքն որք բնակեալ էին յԱրաբիա մինչեւ յԵգիպտոս, եւ յանապատս Յորդանանու մինչեւ ի Սինէական լեառն, յանկարծակի

selon la malédiction de saint Jacques. Le bienheureux Jacques retourna à sa ville et raffermit tout le monde dans l'orthodoxie.

Quelque temps après, le roi de Perse marcha contre la ville du saint à la tête de nombreuses troupes et l'assiégea ; on détourna le grand fleuve dans la direction de la ville pour détruire les murailles et abîmer la ville. Lorsque saint Jacques aperçut que le fleuve avait détruit une partie des murailles
* de la ville, il monta sur les murs, face aux troupes, et pria. Il apparut lui- * B p. 28 a.
même au roi des Perses et à ses troupes sous les apparences de l'empereur des Grecs, entouré d'une multitude d'anges ; ce que voyant, (les ennemis) crurent que c'était l'empereur lui-même, arrivé avec ses troupes pour sauver la ville. Le saint, par ses prières, jeta aussitôt parmi eux des moustiques, des tiques, des mouches et des taons blancs qui les tourmentèrent grandement, eux et leurs chevaux, et les blessant tous, les exterminaient; c'est pourquoi ils levèrent le siège et s'enfuirent, saisis d'une grande frayeur.

Le saint, après une vie de grandes vertus et bienheureuse, ayant accompli nombre de miracles, reposa en paix dans le Christ après lequel il aspirait.]

7 ARATZ, **14 Janvier.**

Fête des saints moines du Sinaï et de la montagne de Raythou (*Ruth*).

Les barbares anthropophages, aux sacrifices immondes, qui habitaient de l'Arabie à l'Égypte et des déserts du Jourdain jusqu'au mont Sinaï, tombèrent

անկան ի վերայ եւ կալան զանապատաւոր հարսն, եւ խոշտանգէին զնոսա եւ խնդրէին զանձս եւ ինչս ։ Եւ նոքա ցուցանէին զոր ինչ զգեցեալ էին յանձինս իւրեանց. ոմանք հնացեալ մաշկեղէնս որ միայն զլանջսն եւ զթիկունսն ծածկէին, եւ ոմանք զպըրտուեղէնն զոր ի թիկունսն * միայն ունէին. իսկ մերկքն ցուցանէին զգլուխս իւրեանց հերօք զձեռսն եւ զոտս ։

* A fol. 156 v° a.

Եւ նոքա մոլորեալք եղին սուր ի վերայ եւ կոտորեցին անխնայաբար, զոմանս խոտաճարակս ի լերինս, զոմանս յարգելական քարայրս, զոմանս յեկեղեցիս ապաւինեալս ։ Իսկ զմանկագոյնս եւ զերիտասարդս կենդանի տարան առ ի զոհել աստեղացն զոր պաշտէին ։ Եւ եթէ որպէս կոտորեցին ասացից ։ Զոմանց զգլուխս սրով յերկուս բաժանէին, զոմանց զձեռս եւ զոտս ի բարձիցն եւ ի թիկանցն ի բաց հատանէին, եւ ոմանց զսուրն ի վերայ սրտին դնելով եւ ընդ թիկնամէջսն հանէին ։

Եւ՛ այնպէս չարաչար մահուամբ կատարեցան սուրբ անապատական հարքն, որք ի բազում ժամանակաց ի լերինս, յայրս եւ ի փապարս խոտաճարակք՝ նեղեալք եւ մեծաւ ճգնութեամբ կացեալք, ոմանք մերկք, ոմանք մաշկեղինօք առանց թեզանեաց մինչեւ ի ծունկսն, քաղցեալք եւ ծարաւեալք, սառուցեալք ի ձմերայնի եւ արեգակնակիզեալք ի խորշակի ։ Որք եւ կրկին պսակացն արժանաւորեցան ի ձեռաց պսակողին Քրիստոսի, եւ նախ քան զյարձակմունսն շաղակեր եւ պղծալաւան խուժադուժ բար-

à l'improviste sur les pères anachorètes, les saisirent, les maltraitèrent et leur réclamèrent de l'argent et des biens. Ceux-là leur montrèrent ce qu'ils portaient sur leur personne, d'aucuns portant des vieilles peaux qui ne leur cachaient que la poitrine et les épaules, d'autres des nattes qui leur couvraient seulement le dos, * en laissant à nu la tête, les cheveux, les mains et les pieds.

* A fol. 156 v° a.

(Les barbares), dans leur égarement, tirèrent leur épée et les tuèrent sans pitié, et ceux qui se nourrissaient d'herbes dans la montagne et ceux qui vivaient cloîtrés dans des grottes, et ceux qui s'étaient réfugiés dans les églises. Quant aux moins âgés et aux jeunes gens, ils les emmenèrent vivants pour les immoler aux astres qu'ils adoraient. Je vous dirai de quelle façon ils les massacrèrent. A quelques-uns ils tranchèrent la tête en deux parties d'un coup d'épée, à d'autres ils coupèrent les mains et les pieds, les séparant des jambes et des épaules, à d'autres ils enfoncèrent l'épée dans le cœur, la faisant sortir par le dos.

C'est de cette affreuse mort que moururent les saints pères du désert qui avaient pendant longtemps vécu dans les montagnes, les grottes et les anfractuosités, vivant d'herbes, se privant de tout avec un grand ascétisme; les uns nus, les autres couverts de vêtements de peau sans manches qui leur descendaient jusqu'aux genoux, affamés, assoiffés, gelés l'hiver et brûlés par le soleil sous le hâle. Mais ils se rendirent dignes de recevoir une double couronne des mains du Christ; car, avant l'attaque de ces barbares, mangeurs

բարոսայ, ծանոյց Աստուած զբարի դաւանութեամբ կատարումն նոցա, ձայն եղեւ յերկնից առ նոսա. Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ : Եւ բազում ողբմունք եւ հառաչմունք եղեն առ հարսն * որ ոչ հանդիպեցան մարտիրոսութեան : * A fol. 156 v° a.

Կատարեցան սուրբ ճգնաւոր անապատական հարքն Յունուարի ԺԴ :

Յայսմ աւուր կատարեցաւ յառիւծէ սուրբ վկայն Քրիստոսի Բասիլիոս՝ յուրացող արքայէն Յուլիանոսէ ի Կեսարիա Կապադովկեցւոց :

[B * Վկայութիւն սրբոց արեղայիցն Սինէական եւ Ռայթայ լերինն : * B p. 28 a.

Երանելի արեղայքս այսոքիկ էին ի ժամանակս սրբոյն Անտոնի աբբայի, եւ սրբոյն Պետրոսի Աղեքսանդրու հայրապետին : Եւ եղեւ յորժամ մեռաւ իշխանն սարակինոսաց, ժամ դիպող գտեալ մարդակեր եւ պղծազոհ բարբարոսքն որք բնակեալ էին յԱրաբիոյ մինչեւ յԵգիպտոս, եւ յանապատս Յորդանանու մինչեւ ի Սինէական լեառնն, յանկարծակի յարձակեցան ի վերայ եւ կալան զանապատաւոր հարսն, եւ խոշտանգէին զնոսա եւ խնդրէին զանձս եւ ինչս :

Եւ նոքա ցուցանէին զոր ինչ զգեցեալ էին յանձինս իւրեանց. ոմանք զհնացեալ մաշկեակս, որ միայն զթիկունս եւ զլանջսն ծածկէին. եւ ոմանք զպատուեալս զոր ի թիկունս * միայն ունէին. իսկ մերկքն ցուցանէին զգլուխս իւրեանց հերօքն եւ զձեռսն եւ զոտսն : * B p. 28 b.

de cadavres et au culte immonde, Dieu leur avait fait connaître leur martyre en bonne confession, et une voix du ciel s'était fait entendre à eux, disant : *Venez à moi, vous tous qui êtes fatigués et ployés sous le fardeau, et je vous soulagerai*[1]. » Il y eut beaucoup de gémissements et de sanglots parmi les pères * qui n'obtinrent pas le martyre. * A fol. 156 v° a.

Les saints pères ascètes du désert furent martyrisés le 14 Janvier.

En ce jour mourut par un lion le saint martyr du Christ Basile (*Basilios*), sous l'empereur Julien l'apostat, à Césarée de Cappadoce.

[B * martyre des saints moines du Sinaï et de la montagne de Raythou[2]. * B p. 28 a.
Ces bienheureux moines vivaient aux jours de saint Antoine l'abbé et de saint Pierre le patriarche d'Alexandrie. Or il arriva que le chef des Sarrasins (*Sarakinosats*) étant mort, trouvant l'occasion favorable, les barbares anthropophages, aux sacrifices immondes, qui vivaient dans le pays entre l'Arabie et l'Égypte, du désert du Jourdain jusqu'au mont Sinaï, se ruèrent à l'improviste sur les pères du désert, les arrêtèrent, les maltraitèrent en exigeant d'eux de l'argent et des biens.

Ceux-là leur montrèrent ce qu'ils portaient sur leur personne, certains une peau usée qui ne leur couvrait que les épaules et la poitrine, d'autres les nattes qui cachaient leur dos * simplement, laissant à nu la tête, les cheveux, les mains et les pieds. * B p. 28 b.

1. Matth., xi, 29. — 2. Raythou, région occidentale de la péninsule sinaïtique, où se trouve Et-Tor.

Ընդ որ դառնացեալ մարդադէմ գազանացն վասն ատելութեանն զոր ունէին առ քրիստոնեայս, եղին սուր ի վերայ եւ կոտորեցին անխնայաբար ։ Զոմանց զգլուխս սրով յերկուս բաժանէին, զոմանց զձեռս եւ զոտս ի բարձիցն եւ ի թիկանցն ի բաց հատանէին, եւ ոմանց զսուրն ի վերայ սրտին դնելով եւ ընդ թիկնամէջսն հանէին ։ Եւ այնպէս չարաչար մահուամբ կատարեցան սուրբ հարքն՝ թուով իբր ութսուն եւ մի, որք ի բազում ժամանակաց ի լերինս, յայրս եւ փապարս խոտաճարակք եղեալք՝ մեծաւ ճգնութեամբ կացեալք. ոմանք մերկք, ոմանք մաշկեղէնօք եւ պրտուեղէնօք առանց թեզանեաց եւ մինչեւ ի ծունկսն. քաղցեալք եւ ծարաւեալք, սառուցեալք ի ձմերայնի, եւ արեգակնակիզեալք ի խորշակի, որք եւ կրկին պսակաց արժանաւորեցան ի ձեռաց պսակողին Քրիստոսի՝ ճգնութեան եւ մարտիրոսութեան ։ Եւ եղեւ կատարումն սուրբ ճգնաւորացն Յունվարի ԺԴ ։

Իսկ ոմանք ի նոցանէ կալեալ զմանկագոյնս եւ զերիտասարդս կենդանի տարան առ ի զոհել աստեղացն՝ զորս պաշտէին ։ Եւ ի գիշերին յայնմիկ տեսին բարբարոսքն զլեառն Սինա վառեալ ի բոց հրոյ, եւ զահի հարեալ թողին զզէնս իւրեանց եւ փախեան ։ Իսկ երկուք յաբեղայից անտի՝ որոց անուանքն էին Սաբա եւ Եսայի՝ խնամօքն Աստուծոյ պահեցան կենդանի ի մէջ բազմութեան անկելոց, եւ թաղեցին զսուրբ ընկերս իւրեանց, եւ աւանդեցին գրով զկատարումն նոցա ։

Ces bêtes féroces, au visage humain, irritées, et par suite de la haine qu'elles nourrissaient contre les chrétiens, tirèrent l'épée et les massacrèrent, sans pitié. A certains ils tranchèrent la tête en deux par l'épée, à d'autres ils coupèrent et détachèrent les mains et les pieds des jambes et des épaules, et à d'autres ils appuyèrent leur épée sur le cœur, la faisant ressortir par le dos. C'est de cette affreuse mort que les saints pères moururent au nombre de quatre-vingt-un, eux qui avaient vécu de longues années dans les montagnes, les grottes et les anfractuosités, se nourrissant d'herbes et vivant en grand ascétisme, quelques-uns nus, d'autres vêtus de peaux et de nattes sans manches qui leur descendaient jusqu'aux genoux, affamés, assoiffés, gelés l'hiver et brûlés par le soleil sous le hâle, mais ils se rendirent dignes de la double couronne qu'ils reçurent des mains du Christ qui les couronna, celle d'ascétisme et celle du martyre. Le martyre des saints ascètes eut lieu le 14 Janvier.

Quelques barbares, ayant saisi les moins âgés et les jeunes gens, les emmenèrent vivants pour les immoler aux astres qu'ils adoraient. Mais cette même nuit, les barbares aperçurent le mont Sinaï (*Sina*) brûlant dans les flammes, et effrayés, ils abandonnèrent leurs armes et s'enfuirent. Deux de ces moines, nommés Saba et Isaïe, par la faveur de Dieu, furent conservés vivants parmi le grand nombre des morts; ils inhumèrent leurs saints compagnons et racontèrent par écrit leur martyre.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Բասիլիոսի, որ վասն ի Քրիստոս հաւատոցն ի յուրացող արքայէն Յուլիանոսէ քերանօք տանջեցաւ յԱնկիւրիա, հրով փորձեցաւ ի Կոստանդինուպօլիս, * եւ կատարեցաւ յառիւծէ ի Կեսարիա Կապադովկեցւոց քաղաքին : * B p. 29 a.

Ի նմին աւուր յիշատակ սրբոյն Փիլիկտիմոնի ճգնաւորի, եւ որոց ընդ նմա բազմաց : Եւ սուրբ հօրն Ստեփաննոսի մեծի ճգնաւորի, որ յանապատն Յորդանանու :]

Արացի Ը եւ Յունուարի ԺԵ : Վարք երանելւոյն Յովհաննու կամաւոր աղքատի :

Այս Յովհաննէս որդի էր մեծատուն իշխանի ի Կոստանդինուպօլիս, որոյ անունն էր Եւտրոպիոս, եւ յոյժ սիրեցեալ էր ի ծնողացն : Եւ մինչդեռ պատանեակն էր եւ ուսանէր գիր, խնդրեաց ի ծնողացն աւետարան, եւ նորա արարին նմա փոքրիկ աւետարան, եւ զտուփն ոսկւով եւ ականքք եւ մարգարտով զարդարեալ . եւ ունէր հանապազ ի ձեռս իւր եւ ընթեռնոյր :

Եւ ի միում աւուր եսես կրօնաւոր մի յանհանգստից վանացն որ երթայր յԵրուսաղէմ յաղօթս, եւ տեղեկանայր ի նմանէ զկարգս եւ զկեանս վանացն . եւ ուխտ եդեալ միմեանց զի ի դարձին իւրում տարցէ զնա ի վանս իւր :

7 Վարք ... աղքատի] Վարք Յովհաննու վասն Քրիստոսի աղքատացելոյ B || 11 մարգարտով] մարգարտիւք B.

En ce jour, martyre de saint Basile qui fut, pour sa foi au Christ, sous l'empereur Julien l'Apostat, labouré avec des ongles de fer à Ancyre, puis jeté aux flammes à Constantinople, * et achevé par un lion à Césarée, ville de Cappadoce. * B p. 29 a.

En ce même jour, commémoration de saint Philictimon, l'ascète, et de beaucoup d'autres avec lui; et du saint père Étienne [1], le grand ascète, dans le désert du Jourdain.]

8 ARATZ, 15 Janvier.

Vie du bienheureux Jean, le pauvre volontaire.

Ce Jean était le fils d'un prince riche à Constantinople, nommé Eutrope; il était très aimé de ses parents. Jeune encore, pendant qu'il apprenait à lire, il demanda un évangile à ses parents, et ceux-ci lui firent copier un évangile minuscule avec reliure en or enrichie de pierres précieuses et de perles, qu'il tenait toujours à la main en lecture.

Un jour, ayant aperçu un religieux du couvent des Acémètes (*Anhangéstits*) qui se rendait à Jérusalem pour y prier, et s'étant informé auprès de lui des règlements et de la vie du couvent, ils firent vœu réciproquement qu'à son retour celui-ci l'emmènerait au couvent.

1. Etienne, après avoir vécu en Palestine, devint le fondateur de la Χηνολάκκου μονή, à Constantinople.

Եւ յորժամ դարձաւ ետես զնա Յովհաննէս եւ ուրախ եղեւ յոյժ. եւ երթեալ առ ծնողսն իւր խնդրեաց դահեկան զի արասցէ ճաշ ուսումնակցաց իւրոց. եւ առեալ գնաց առ արեղայն, եւ տուեալ զդահեկանն վարձ նաւավարին՝ գնացին ի վանսն :

Եւ հայր վանացն գերծեաց զգլուխն, եւ զգեցոյց զսուրբ սքեմն : Եւ այնչափ
* A fol. 157 r° a. * ճգնութիւն առաջաւ որ եւ զարմացան կրօնաւորքն եւ ասէին թէ յանմարմին հրեշտակաց է : Էր ամաց երկոտասանից յորժամ գնաց ի վանսն, եւ արարեալ անդ ամս վեց :

Նախանձեցաւ սատանայ եւ էարկ ի սիրտ նորա զկարօտութիւն ծնողացն, եւ ի ճգնութենէն եւ ի կարօտութենէն մաշեցաւ յոյժ : Եւ երկեան հայր վանացն եւ կրօնաւորքն եւ ասեն ցՅովհաննէս. Մի այնչափ զանձն քո տառապեցուցաներ, զոր Աստուած ոչ պահանջէ ի մարդկանէ առաւել քան զչափն : Եւ նա յայտնեաց նոցա զհնարս սատանայի : Եւ հրամայեցին նմա երթալ եւ տեսանել զծնողս իւր : Եւ արարեալ աղօթս յուղարկեցին զՅովհաննէս :

Եւ նորա ելեալ ի վանացն լալով եւ արտասուօք եւ ասէր. Ով սատանայ, հաներ զիս ի հրեշտակական դասուցն, այլ ունիմ Փրկչին իմոյ Քրիստոսի, որ եւ ի տան հօր իմոյ կոխեցից զխայթոց քո : Եւ հանդիպեցաւ ի ճանապարհին աղքատի միոյ զգեցեալ հնոտի մաղեղէն, եհան զոր ինքն զգեցեալ էր ետ աղքատին. եւ ինքն

1 յորժամ] իբրեւ B || 3 նաւավարին] նաւավարաց B || 5 յանմարմին] յանմարմնոց B || 10 մի] զի B — տառապեցուցաներ] տառապեցուցանես B || 15 իմոյ] Յիսուսի *add.* B.

Lorsqu'il fut de retour, Jean le vit, eut une grande joie, alla demander à ses parents de l'argent pour offrir un dîner à ses camarades d'études, et l'ayant reçu, il se rendit auprès du moine, remit l'argent en paiement au capitaine d'un navire, et ils se rendirent au couvent.

Le prieur du couvent lui fit raser la tête et le revêtit du saint habit
* A fol 157 r. a. monacal. Il acquit un tel * ascétisme que les religieux en furent étonnés et disaient : « C'est un ange incorporel. » Il avait douze ans lorsqu'il entra au couvent, et il y resta six années.

Le démon en fut jaloux et mit dans son cœur le désir de ses parents; l'ascétisme et l'affection des parents le minèrent considérablement. Le prieur du couvent et les religieux dirent à Jean : « Ne t'exténue pas ainsi, Dieu n'exige pas de l'homme plus qu'il ne peut faire. » Il leur révéla donc les ruses du démon; ils lui ordonnèrent d'aller voir ses parents et, après avoir prié, ils mirent Jean en route.

Il quitta le couvent avec des larmes et des pleurs en disant : « O démon, tu m'as fait quitter les chœurs des anges, mais j'espère, par mon sauveur le Christ, que, aussi dans la maison de mon père, je foulerai aux pieds ton aiguillon. » Ayant rencontré sur son chemin un pauvre vêtu d'un vieux sac, il enleva ce dont il était lui-même revêtu, le donna au pauvre, et se revêtit

ագաւ զպատառատուն խորգն ։ Եւ մտեալ ի նաւ գնաց ի քաղաքն, եւ երթեալ ի դուռն տան հօր իւրոյ զաչսն յերկինս համբարձեալ եւ արտասուելով աղաչէր զԱստուած տալ նմա համբերութիւն առ դրան ծնողաց իւրոց ։

Եւ ելեալ հօրն ետես զնա Յովհաննէս, նոյնպէս եւ զմայրն, եւ գոհացաւ զԱստուծոյ. եկաց յանկիւն մի փողոցին ընդդէմ դրանն ամս վեց ։ Եւ գթացեալ * ի նա դռնապանն՝ արար պրտուեայ խուղ ի վերայ նորա ։ Եւ տեսեալ ծնողացն ողորմէին նմա որպէս աղքատի, եւ յուղարկէին նմա կերակուր ի սեղանոյ իւրեանց. եւ նա ոչ ուտէր այլ տայր աղքատաց ։

* A fol. 157 rº b.

Եւ այնչափ վիրաւորեցաւ մինչ զի նեխեցաւ եւ որդնալից եղեւ մարմինն եւ շունք լիզուին զթարախս վիրացն ։ Եւ ելեալ մայրն յաւուր միում էառ զազդումն ժահահոտութեան, եւ հրամայեաց հանել զնա ի տեղւոջէն ։ Եւ նա աղաչեաց զդռնապանն եւ ասէ. Արա՛ առ իս ողորմութիւն, եւ ի տեղւոջէս մի՛ հաներ զիս ես ի տարւոջս յայսմիկ մեռանիմ, եւ առցես վասն իմ վարձս յԱստուծոյ ։ Եւ յորժամ կամիցի տիկինն ելանել յառաջեա՛ դու եւ տար զիս հեռագոյն մինչեւ անցանէ, եւ ապա բերցես զիս ի խուղս իմ ։ Եւ այնպէս առնէր դռնապանն եւ ոչ տայր հայել տիկնոջն ։

Եւ ունէր զաւետարանն յինքեան ։ Եւ յորժամ գիտաց զվախճանն իւր մերձեալ, կոչեաց զդռնապանն, եւ յոյժ օրհնեաց զնա եւ ասէ. Ասա՛ տիկնոջն քո թէ աղքատն որ քոյին դրանս հանդէպ կայ, հանգերձեալ է մեռանել, եւ կամի զի խոնարհեալ

1 ագաւ] զգեցաւ B || 9 զի *om.* B || 14 անցանէ] անցցէ B — ապա] յետոյ B.

lui-même du sac déchiré. S'étant embarqué, il se rendit à sa ville, puis, arrivé devant la porte de la maison de son père, il leva les yeux au ciel et pria Dieu avec larmes de lui accorder la patience à la porte de ses parents.

Son père étant venu à sortir, Jean le vit, de même sa mère, et il rendit grâces à Dieu. Il demeura six ans dans un coin de la rue en face de la porte. Le portier, en ayant eu pitié, * lui construisit une cabane de roseau. Les parents, l'ayant aperçu, eurent pitié de lui, comme d'un pauvre, et ils lui envoyaient des mets de leur table, mais il n'y touchait point, et les distribuait aux pauvres.

* A fol. 157 rº b.

Il fut couvert de plaies à tel point que son corps, rempli de vers, se putréfiait, et les chiens venaient lécher le pus de ses plaies. Sa mère, un jour, en sortant, eut la sensation de la mauvaise odeur et ordonna de l'éloigner de cet endroit. (Jean) pria le portier et lui dit : « Fais-moi la charité de ne pas me chasser de cet endroit, car je vais mourir cette même année, et tu recevras une récompense de Dieu à cause de moi. Lorsque la dame voudra sortir, tu la devanceras, tu m'emmèneras un peu plus loin jusqu'à ce qu'elle soit passée, et tu me ramèneras à ma hutte. » Ainsi fit le portier, pour éviter à la dame de l'apercevoir.

Il avait toujours sur lui son évangile. Lorsqu'il sentit sa fin approcher, il appela le portier, le bénit longuement et lui dit : « Dis à ta maîtresse : Le pauvre qui se tient en face de ta porte est sur le point de mourir et désire

տեսանիցես զնա, բան ինչ է զի խօսեցի ընդ քեզ : Եւ նա վասն ժահահոտութեանն ոչ կամեցաւ : Ասէ այրն. Երթ, տես եւ խօսեա՛ց ընդ նմա, զի այնպիսեացն է արքայութիւնն Աստուծոյ, թերեւս եւ մեք վասն դորա ողորմութիւն գտցուք : Եւ պատեալ
*A fol. 157 v° a. զերեսն իւր գնաց ի խուղն : Եւ օրհնեաց Յովհաննէս յոյժ զհայրն * եւ զմայրն, եւ հանեալ զաւետարանն՝ ետ ցմայրն իւր եւ ասէ. Եղիցի այդ քեզ ի փրկութիւն քո եւ վարձ զի ի դրան քում հանգեայ :

Եւ առեալ կինն զաւետարանն՝ ծանեաւ, եւ աղաչեաց արտասուալից հառաչմամբ եւ ասէ. Երդմնեցուցանեմ զքեզ յարարողն երկնի եւ երկրի, ասա ինձ եթէ յումէ անկաւ աւետարանս այս առ քեզ : Կոչեաց եւ զայրն իւր անդ : Ասէ Յովհաննէս. Երդուիր եւ դու ինձ զի զոր ինչ պատուիրեմ քեզ առնես այնպէս : Եւ նա երդմամբ յանձն առ : Եւ նա ասէ. Ի տեղւոջս յայսմիկ թաղեա զիս մազեղինաւս : Ես եմ Յովհաննէս որդին քո : Եւ նոյնժամայն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած :

Եւ անկեալ մայրն ի վերայ նորա, նուաղեցաւ. եւ ջուր արկեալ զերեսօքն՝ կանգնեցաւ : Եւ բազմութիւն քաղաքին ժողովեցան ի տեղին, եւ լուր եղեւ յամենայն քաղաքն, որ եւ թագաւորն լուեալ եւ պատրիարգն՝ գնացին տեսանել :

Այլ զողբումն մօրն ո՞վ կարասցէ պատմել կամ գրել : Եւ մոռացաւ մայրն

3 պատեալ] պատատեալ B || 5 փրկութիւն] հոգւոյ *add.* B || 9 առ քեզ] ի քեզ B — զայրն] զհայրն B || 10 առնես] առնիցես B || 12 Աստուած] եւ բուրեաց ի նմանէ հոտ անուշից *add.* B || 15 տեսանել] ի տեսութիւն B || 16 Եւ մոռացաւ... թաղեցին] եւ կամէին մեծագին եւ ոսկեթել հանդերձս զգեցուցանել նմա ծնօղքն, բայց յիշեալ զերդումն՝ իւրով մազեղէն խորգովն թաղեցին B.

que tu aies la condescendance d'aller le voir, il a quelque chose à te dire. » Mais elle refusa à cause de la mauvaise odeur. Le mari lui dit : « Va le voir et parle-lui, car le royaume de Dieu est pour ceux-là; peut-être trouverons-nous de la miséricorde à cause de lui. » Elle s'enveloppa le visage et vint à
*A fol. 157 v° a. la hutte. Jean bénit grandement son père * et sa mère, sortit l'évangile, le remit à sa mère en disant : « Ce sera pour ton salut et pour ta récompense, de ce que c'est à ta porte que je me serai reposé dans la mort. »

La femme prit l'évangile, le reconnut, et le pria avec larmes et sanglots, en disant : « Je t'adjure par le Créateur du ciel et de la terre, dis-moi de qui t'est échu cet évangile. » Et elle fit venir son mari. Jean dit : « Et toi, jure-moi de faire ce que je te demanderai. » Elle accepta avec serment. Alors il dit : « Tu m'enterreras à cette place avec ce vêtement de poils. Je suis ton fils Jean. » Et il rendit aussitôt son âme à Dieu.

Sa mère se jeta sur lui et s'évanouit. On aspergea d'eau son visage et elle se releva. De nombreux habitants de la ville se rassemblèrent à l'endroit, et la nouvelle se répandit dans toute la ville, de sorte que l'empereur lui-même et le patriarche, l'ayant appris, allèrent voir.

Mais qui pourra jamais raconter ou décrire les déchirements de la mère?

զերդումն, եւ բերեալ հանդերձս ոսկեթելս զգեցոյց նմա, եւ առժամայն ձեռքն գօսացան. եւ յիշեալ զերդումն եհան զոր զգեցոյցն, եւ ագոյց նմա զմազեղէն խորգն իւր եւ ողջացան ձեռքն ։ Եւ թաղեցին զնա ի տեղւոջն յայնմիկ՝ Յունուարի ԺԵ ։ Եւ շինեցին ի վերայ նորա մատուռն եւ կրօնաւորեցան ծնողքն եւ ճգնութեամբ ծառայէին սուրբ նշխարացն, եւ բարի վարուք հանգեան * եւ նոքա ։ * A fol. 157 v° b.

Յայսմ աւուր կատարեցաւ ի ծովու վկայն Քրիստոսի Թէոգենէս եպիսկոպոս ի Պորիո քաղաքին ի Զիլիկիոյ դատաւորէն ։

[B * Ի սմին աւուր վկայութիւն Գորդիանոսի թագաւորին, եւ կնոջն Անատոլայ, եւ որդւոյն Սեբաստիանոսի, եւ դստերն Թէոդոսիայ ։ Եւ յիշատակ Կոզմայի ճգնաւորի ։] * B p. 30 b.

Արացի Թ եւ Յունուարի ԺԶ ։ Վկայութիւն սրբուհւոյ կուսին Եւգինեայ, որ է ազնուական ։

Ի ժամանակս ամբարիշտ արքային Դոմիդի՝ Փիլիպպոս եպարքոսին դուստր էր Եւգինեա ի քաղաքին Աղեկսանդրիա. եւ ուսեալ էր զամենայն արտաքին գրոց զհանճար եւ փիլիսոփայութիւն, եւ զհռետորական իմաստասիրութիւնն ։ Ընթեռնոյր եւ ի միտ

4 եւ կրօնաւորեցան ծնողքն *om.* B || 7 դատաւորէն] վասն անուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։ Իսկ յետ երից աւուրց գտաւ մարմին նորա ի ցամաքի, եւ թաղեցաւ յաշակերտաց իւրոց, զոր տեսեալ բազմաց հաւատացին ի Քրիստոս *add.* B || 11 որ է ազնուական] որ թարգմանի ի հայ լեզու ազնուական B.

La mère oublia son serment, et ayant fait apporter des vêtements brodés d'or, elle l'en revêtit, mais ses mains se desséchèrent aussitôt; alors, se rappelant son serment, elle ôta ce dont elle l'avait revêtu, l'habilla de son cilice de poils et ses mains furent guéries. On l'enterra à cette même place, le 15 Janvier. On construisit une chapelle sur (son corps), ses parents se firent religieux, desservirent, avec ascétisme, les saintes reliques, et reposèrent, * eux aussi, après une vie de piété. * A fol. 157 v° b.

En ce jour, fut mis à mort dans la mer le martyr du Christ, Théogène[1] (*Ṭēogenēs*), évêque de la ville de Parios (*Porio*), par le juge Zilicius (*Zilikioy*).

[B * En ce jour, martyre du roi Gordien, de sa femme Anatolie (*Anatolay*), de leur fils Sébastien et de leur fille Théodosia. De même commémoration de l'ascète Cosmas.] * B p. 30 b.

9 Aratz, **16 Janvier**.

Martyre de la vierge sainte Eugénie, c'est-à-dire Noble.

Aux jours de l'empereur impie Domitien (*Domidi*), l'éparque Philippe eut une fille, Eugénie, dans la ville d'Alexandrie. Elle avait étudié toute la littérature des livres profanes, la philosophie et la science de la rhétorique. Elle

1. La forme Θεαγένης paraît la plus fréquente, cf. *Syn. Cp.*, au 3 janvier, mais on trouve aussi Θεογένης. Le nom du juge dans *Syn. Cp.* est Ζαλικινθίος avec variante Ζιλικινθίνος.

առնոյր զգիրսն սրբոյն Պօղոսի. ունէր եւ ինքեան երկու ներքինի ծառայս, որոց անուանքն էին Պռոտաս եւ Յակինթոս :

Եւ վանք մի էր արտաքոյ քաղաքին յորում ժողովէին բազում քրիստոնեայք վասն հալածանացն ի կռապաշտիցն : Եւ խորհուրդ արարեալ Եւգինեայ ընդ երկու ծառայս իւր, գաղտ ի ծնողացն զգեցաւ առն զգեստ եւ գերծեալ զգլուխ իւր գնաց նոքօք ի վանսն : Եւ մեծաւ առաքինութեամբ եւ պարկեշտ վարուք կացեալ՝ հաճոյ եղեւ Աստուծոյ : Բայց դեռ մկրտութեան չէր արժանաւորեալ :

Եւ եկեալ Եղենոս եպիսկոպոսն տասն հազար քրիստոնէիւք, եւ սաղմոսէին . Ճանապարհք արդարոց ուղիղ են, եւ կուռք հեթանոսաց դեւք են եւ ոսկեղէնք եւ արծաթեղէնք : Եւ լուեալ երանելի կոյսն՝ առեալ զերկու ներքինի ծառայսն գնաց
* A fol. 158 r° a. առ եպիսկոպոսն եւ մկրտեցաւ, * եւ եպիսկոպոսն զոր ինչ հանդիպելոց էր յանօրէն կռապաշտիցն ասաց նմա :

Իսկ Փիլիպպոս եպարքոսն եւ կինն իւր ողբային եւ խնդրէին զդուստրն իւրեանց եւ ոչ գտանէին, հարցանէին ընդ դիւթս եւ ընդ կախարդս, եւ նոքա ասէին եթէ . Աստուածք մեր ցանկացան գեղեցկութեան դստերն ձերոյ եւ եկեալ ի գիշերի յափշտակեցին զնա եւ հանին գաղտ յերկինս : Եւ լուեալ զայս հօրն իւրոյ արար պատկեր

2 Պռոտաս] Պռոտիոս B || 3 բազում քրիստոնեայք] բազմութիւն քրիստոնէից B || 4 երկու] ներքինի *add.* B || 8 Եղենոս] սքանչելագործ *add.* B || 9 արդարոց] արդարութեան B || 12 նմա *om.* B || 15 եկեալ] եկին B.

avait lu également et approfondi les épîtres de saint Paul. Elle avait auprès d'elle deux domestiques eunuques nommés Prote (*Protas*) et Hyacinthe (*Yakinṭos*).

Il y avait, hors de la ville, un couvent où se réunissaient de nombreux chrétiens, à cause des persécutions des idolâtres. Eugénie, s'étant concertée avec ses deux domestiques, revêtit, à l'insu de ses parents, des vêtements d'homme, rasa sa tête, et partit avec eux au couvent. Elle y séjourna en grande vertu et avec une conduite pleine de modestie et fut agréable à Dieu, mais elle n'avait pas encore mérité le baptême.

L'évêque Hélènos y arriva avec dix mille chrétiens, qui psalmodiaient : *Les voies des justes sont droites* [1], *les idoles des païens sont des démons en or et en argent* [2]. La bienheureuse vierge, l'ayant appris, prit avec elle ses deux domes-
* A fol. 158 r° a. tiques eunuques, se rendit auprès de l'évêque et se fit baptiser. * L'évêque lui prédit ce qui devait lui arriver par les mains des idolâtres impies.

Cependant, l'éparque Philippe et sa femme se lamentaient et cherchaient leur fille, sans la trouver. Ils consultèrent les mages et les sorciers, et ceux-ci répondirent : « Nos dieux ont convoité la beauté de votre fille, sont venus la nuit l'enlever et l'ont emportée aux cieux. » Ayant entendu, cela le père

1. Cf. Is. xxvi, 7. — 2. Ps. cxiii, 12; cxxxiv, 15.

ոսկի ի նմանութիւն դստերն իւրոյ, եւ կանգնեաց ընդ կուռսն, երկիր պագանէր եւ զոհս մատուցանէր :

Եւ երանելին Եւգինեա եւ երկու ներքինիքն եղեն կրօնաւորք, եւ տուան նմա շնորհք յԱստուծոյ եւ բժշկէր զամենայն հիւանդս եւ զախտաժետս, եւ զդեւս ի մարդկանէ հալածէր անուամբն Տեառն : Եւ յետ երից ամաց մեռաւ հայր վանացն :

Եւ կին մի հիւանդ մեծատուն որոյ անուն Մելանթիա եկեալ առ երանելի կոյսն՝ եւ նորին աղօթիւքն բժշկեցաւ : Եւ նորա լցեալ երիս սկիփայս արծաթ առաքեաց Եւգինեայ, եւ նա ոչ առեալ դարձոյց յետս եւ ասէ. Տո՛ւր ձեռօք քո աղքատաց : Եւ յայնմհետէ ստէպ երթայր Մելանթիա առ Եւգինեայ, եւ կարծէր եթէ երիտասարդ այր է, տռփացաւ ի գեղեցկութիւն նորա : Եւ խորհէր խորհուրդ սատանայական, եւ կամէր հանել զերանելին ի վանացն եւ առնել աշխարհական եւ ամուսնանալ ընդ նմա. * եւ խոստանայր նմա գանձս եւ ինչս եւ ստացուածս բազումս : * A fol. 158 rº b.

Իսկ աղախինն Քրիստոսի լուեալ զայն՝ անէծ նմա, եւ անարգ եւ ամօթալից եհան ի վանացն : Եւ Մելանթիա գնաց առ Փիլիպպոս եպարքոսն չարախօսեաց զԵւգինեայ եթէ. Քրիստոնեայ է եւ անարգէ զաստուածսն մեր, եւ բռնադատեաց եւ կամէր պոռնկել ընդ իս :

Եւ ածին առաջի եպարքոսին զԵւգինեա որպէս այր, եւ զայլ կրօնաւոր եղբարսն :

3 տուան] տուաւ B || 5 վանացն] եւ միաբանեալ եղբարցն արարին զԵւգինեա հայր վանացն *add.* B || 7 սկիփայս] սկիփար B || 8 առեալ] ա՛ռ B || 14 Մելանթիա] բարկութեամբ *add.* B.

fit faire une statue en or à la ressemblance de sa fille et la mit au rang des idoles, il l'adorait et lui immolait des sacrifices.

La bienheureuse Eugénie et les deux eunuques se firent religieux; or les faveurs de Dieu lui furent données et elle guérissait tous les malades et les infirmes, et chassait les démons des corps des hommes, au nom du Seigneur. Trois ans après, le prieur du couvent vint à mourir.

Une femme riche, nommée Mélantia, malade, vint trouver la bienheureuse vierge et fut guérie par ses prières. Elle fit remplir trois tasses (σκύφος) d'argent et les envoya à Eugénie, qui ne les accepta pas, mais les lui retourna en disant : « Distribue-les de tes propres mains aux pauvres. » A partir de ce jour Mélantie alla souvent voir Eugénie, et la prenant pour un jeune homme, s'éprit de sa beauté, conçut le dessein diabolique d'enlever la bienheureuse du couvent, de la laïciser et de l'épouser; * elle lui promit de l'argent, des biens et beaucoup de propriétés. * A fol. 158 r° b.

La servante du Christ, entendant cela, la maudit, et la fit sortir du couvent, honteuse et confuse. Mélantia se rendit auprès de l'éparque Philippe et calomnia Eugénie : « C'est un chrétien, dit-elle, qui méprise nos dieux ; il a voulu me violenter et coucher avec moi. »

On amena Eugénie devant l'éparque comme étant un homme, avec d'autres

Եւ մտեալ երանելին առանձինն առ եպարքոսն, կոչեաց եւ զՄելանթիա, եւ յայտնեաց զինքն հօր իւրում ։ Եւ զահի հարեալ ամենեքեան ընդ սքանչելի գործն, եւ հաւատաց Փիլիպպոս եպարքոսն յԱստուած եւ մկրտեցաւ, նոյնպէս եւ կինն եւ որդիքն եւ ծառայքն իւր ։ Եւ դարձեալ երանելին Եւգինեա զգեցաւ կանոնի զգեստ կրօնաւորութեան եւ Փիլիպպոս հայրն իւր եղեւ եպիսկոպոս քրիստոնէից ։

Եւ լուեալ թագաւորն առաքեաց այլ եպարքոս յԱղեքսանդրիա զՊերէնիոս ։ Կամեցաւ եւ զՓիլիպպոս կապանօք տանել ի Հռոմ, բայց ոչ կարաց վասն բազմութեան քրիստոնէից որք էին յԱղէկսանդրիա զի մի ապստամբեսցեն ։ Եւ հնարս իմացաւ սատանայական, առաքեաց զօրականս որպէս քրիստոնեայս, եւ մինչդեռ յեկեղեցին աղօթէր Փիլիպպոս՝ մտին ի ներքս եւ սրով սպանին զնա ի վանսն զոր շինեաց դուստրն իւր Եւգինեա ։

* A fol. 158 v° a. Յայնժամ առեալ Եւգինեա զմայր իւր * Կղաւդիա եւ զեղբարսն գնաց ի Հռոմ, եւ զհաւատացեալսն հաստատէր ի հաւատս, եւ զանհաւատսն լուսաւորէր ։

Դարձոյց եւ կին մի խօսեցեալ առն յաստուածգիտութիւն, որոյ անուն էր Բասիլիա. եւ գիտաց խօսեցեալ այրն իւր Պոմպիոս, ազդեաց վասն նորա թագաւորին, եւ առաքեաց դահիճ եւ հատին զգլուխն Բասիլեայ զի հաւատաց ի Քրիստոս ։

Եւ տարան առաջի զերանելին Եւգինեա եւ զերկու ներքինիսն, եւ հրամայեաց

5 եղեւ եպիսկոպոս քրիստոնէից] հրաժարեալ ի մարմնաւոր իշխանութենէն՝ ընտրեցաւ յետոյ եպիսկոպոս ի կողմանս Եգիպտոսի || 6 լուեալ] վասն նորա *add.* B.

frères moines. La bienheureuse se fit introduire seule auprès de l'éparque, y fit venir Mélantie et se révéla à son père. Tous furent stupéfaits de ce fait miraculeux; l'éparque Philippe crut à Dieu et fut baptisé, ainsi que sa femme, ses enfants et ses domestiques. La bienheureuse Eugénie prit de nouveau des vêtements monastiques et son père Philippe devint évêque des chrétiens.

L'empereur, ayant eu connaissance de cela, envoya à Alexandrie un autre éparque, nommé Perenius (*Perenios*). Il voulait aussi faire venir à Rome Philippe chargé de fers, mais il ne put le faire à cause de la multitude de chrétiens qui étaient à Alexandrie, de peur qu'ils ne se soulevassent. Alors il conçut ce dessein diabolique d'envoyer des soldats, comme étant chrétiens, et pendant que Philippe priait à l'église, ils pénétrèrent à l'intérieur et le tuèrent par le glaive dans le couvent que sa fille avait fait construire pour lui.

* A fol. 158 v° a. Alors Eugénie prit sa mère * Claudia et ses frères et partit avec eux à Rome; elle affermissait les fidèles dans sa foi et illuminait les infidèles.

Elle convertit également à la connaissance de Dieu une jeune fille, fiancée, dont le nom était Basilia. Son fiancé Pompée (*Pompios*) le sut, et en avertit l'empereur, qui envoya le bourreau, et on trancha la tête de Basilia pour avoir cru au Christ.

On amena devant (l'empereur) la bienheureuse Eugénie et les deux

տանել զնոսա ի տաճար կռոցն զի երկիր պագցեն ։ Եւ նոքա յանձն ոչ առին, այլ ծառայանող աղաչեցին զԱստուած եւ անկան բագինքն եւ խորտակեցան կուռքն ։ Եւ նոյնժամայն հատին զգլուխ երկու ներքինեացն զՊրոտասայ եւ զԱկիւնդոյ ։

Եւ ի սրբուհւոյ կուսին Եւգինեայ յոտն կապեցին վէմ մի մեծ եւ ընկեցին ի գետն Տիբերիոյ ։ Եւ լուծաւ վէմն եւ էջ ի խորսն, եւ աղախինն Քրիստոսի կայր ի վերայ ջրոյն ։ Եւ հանին ի ջրոյն եւ ընկեցին ի հուր, եւ հուրն շիջաւ, եւ տարան ի բանդն, եւ հնգետասան օր անսուաղ պահեցին, եւ հրեշտակ Տեառն կերակրէր զնա ։ Եւ ապա առաքեաց դատաւորն դահիճ ի բանդն եւ հատին զգլուխ երանելւոյն Եւգինեայ Յունուարի ԺԶ ։ Եւ թաղեցին արտաքոյ քաղաքին Հռոմայ ։

Եւ մայր նորա Կղօդիա կայր առ հողս դստերն՝ լայր անմխիթար ողբովք ։ Եւ ի մէջ գիշերի երեւեցաւ նմա սրբուհի դուստր իւր յանուրջս սուրբ կուսանօքն եւ ասէ. Ողջոյն ընդ քեզ, մայր իմ, * Կղօդիա ։ Ուրախ լեր վասն իմ, զի եւ զիս դասեցոյց * A fol. 158 v° b.
Աստուած յուրախութիւնս արդարոց, եւ զհայրն իմ ի դասս քահանայապետացն ։ Նոյնպէս եւ զքեզ ընկալցի յաւուր կիւրակէի եւ հանգուցէ ընդ մեզ ։ Պատուէր տուր որդւոց քոց եղբարց իմոց, զի պահեսցեն ուղիղ զդրոշմն սրբոյ խաչին, որ եւ նոքա արժանի լիցին այսմ ցանկալի եւ անանց կենացս ։

2 կուռքն] *om.* B || 6 եւ հուրն շիջաւ *om.* B || 7 պահեցին] թողին B — եւ հրեշտակ Տեառն կերակրէր զնա] եւ խնամօք Աստուծոյ ապրեցաւ B || 8 հատին] եհատ B || 9 Յունուարի ԺԶ] եւ Արացի Թ *add.* B.

eunuques, et il ordonna de les conduire au temple des idoles pour qu'ils les adorassent; ils ne consentirent point, mais ils prièrent Dieu : les autels se renversèrent et les idoles furent brisées. On trancha aussitôt la tête aux deux eunuques Protas (*Protasay*) et Hyacinthe (*Akiundoy*).

On attacha une grosse pierre aux pieds de la sainte vierge Eugénie, et on la jeta dans le Tibre (*Tiberioy*). La pierre, s'étant détachée, coula à fond, et la servante du Christ revint sur l'eau. On la retira de l'eau et on la jeta dans les flammes, mais les flammes s'éteignirent; on la conduisit en prison, on la laissa quinze jours sans nourriture, mais l'ange du Seigneur la nourrissait. Le juge envoya ensuite le bourreau à la prison et on trancha la tête de la bienheureuse Eugénie, le 16 Janvier. On l'inhuma hors de la ville de Rome.

Sa mère Claudia se tenait près du tertre de sa fille et pleurait avec des sanglots, inconsolable. Au milieu de la nuit, sa sainte fille lui apparut dans un songe entourée des vierges saintes et lui dit : « Salut à toi, ma mère * Claudia. Réjouis-toi à mon égard, car Dieu m'a élevée au rang des justes * A fol. 158 v° b.
bienheureux, et mon père au rang des pontifes. Il te recevra également le jour de dimanche et tu reposeras avec nous. Recommande à tes fils, mes frères, de conserver avec droiture le sceau de la sainte croix, pour qu'eux aussi, ils se rendent dignes de cette vie désirable et immortelle. »

Յայսմ աւուր տօն եւ երկրպագութիւն պատուական շղթայից Պետրոսի առաքելոյն ։

* B p. 31 a [B * Տօն է պատուական շղթայիցն Պետրոսի առաքելոյն ։

Գլխաւորն առաքելոց եւ եկեղեցւոյ վէմն աստուածայինն Պետրոս՝ քարոզելով զճշմարտութիւն հաւատոցն Քրիստոսի, կալեալ եղեւ ի Հերովդէէ՝ կապեալ ի շղթայս եդաւ ի բանդի. եւ ի ձեռն տեսլեան հրեշտակի արձակեցաւ ի բանդէն, որ եւ եհան զշղթայսն ի նմանէ, զոր գտեալ հաւատացեալ աշակերտքն պահեցին. եւ ձեռաց ի ձեռս փոխադրելով հաւատացելոց բերեալ եղեւ ի քաղաքն Հռոմ, եւ եդաւ ի տաճար սուրբ առաքելոյն Պետրոսի. եւ բազում բժշկութիւնք լինէին հիւանդաց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։]

Արացի Ժ եւ Յունուարի ԺԷ. Տօն է Անտոնի անապատականի, մեծի ճգնաւորին, զոր գրեաց սուրբն Աթանաս Աղեկսանդրու հայրապետն ։

Մեծն Անտոնիոս եգիպտացի էր, մեծատուն եւ քրիստոնեայ ծնողաց զաւակ. եւ գիր ամենեւին ուսանել ոչ կամեցաւ ։ Եւ յորժամ ծնողքն վախճանեցան՝ մնաց քոյր մի Անտոնի ։ Եւ ինքն էր ամաց տասն եւ ութից ։ Եւ յաւուր միում լուաւ յեկեղեցւոջն զբանս աւետարանին որ ասէր. Եթէ կամիցիս կատարեալ լինել, վաճառեա զինչս քո

10 Տօն է... ճգնաւորին] Վարք եւ հանգիստ մեծ հօրն ամենայն հարանց, երանելոյն եւ մեծ ճգնաւորին եւ անապատականին Անտոնի B || 11 գրեաց] զսքանչելի վարս նորա *add.* B || 12 մեծատուն] մեծանուն B.

En ce jour, fête et vénération des précieuses chaînes de l'apôtre Pierre.

* B p. 31 a. [B * Fête des précieuses chaînes de l'apôtre Pierre.

Le chef des apôtres et la pierre de l'église, le divin Pierre, lorsqu'il prêchait la vérité de la foi du Christ, fut arrêté par Hérode (*Herowdès*) et jeté en prison chargé de chaînes. Il fut délivré de la prison par un ange qui lui apparut et lui ôta les chaînes. Les disciples fidèles, ayant trouvé ces (chaînes), les conservèrent, et, de mains en mains, elles furent transmises par les fidèles jusqu'à ce qu'elles fussent apportées à Rome et déposées dans le temple du saint apôtre Pierre. Nombre de guérisons eurent lieu sur les malades pour la gloire du Christ, notre Dieu.]

10 ARATZ, 17 Janvier.

Fête d'Antoine (*Antoni*) l'anachorète et grand ascète; vie écrite par saint Athanase (*Atanas*), patriarche d'Alexandrie.

Le grand Antoine (*Antonios*) était égyptien, fils de parents riches et chrétiens. Il ne voulut jamais apprendre les lettres. Lorsque ses parents moururent, il restait une sœur à Antoine. Il avait à ce moment dix-huit ans. Un jour, ayant entendu à l'église les paroles de l'évangile : *Si tu veux être parfait,*

եւ տուր աղքատաց ։ Եւ առժամայն վաճառեաց զինչս իւր բաշխեաց աղքատաց, եւ զքոյրն եդ ի կուսանաց վանս ։ Եւ էր մերձ ծերունի մի նախանձեցաւ * ընդ վարս նորա եւ ճգնէր առանձինն ։ *A fol. 159 r° a.

Եւ չար դեւքն յոյժ ի նեղութիւն արկանէին զնա, եւ զփափկութիւն կենացս յիշեցուցանէին, եւ ի միտս իւր ընկենուին զմարմաջմունս ցանկութեան, եւ ոչ կարացին խախտել զերանելին ։ Կերակուր էր նորա հաց եւ աղ ի մուտս արեգականն, այլ եւ յետ երկուց եւ երից եւ չորից աւուրց ճաշակէր. եւ պրտուեղէն էր անկողին նորա ի վերայ գետնոյ ։

Երթեալ եմուտ յունայն գերեզման, եւ անդ զաղօթս իւր կատարէր. եւ ժողովեցան դեւք եւ այնչափ հարուածովք վիրաւորեցին զնա մինչեւ անխօս լինել եւ կիսամահ թողեալ գնացին ։ Եւ երթեալ սպասաւորն իւր եբարձ յուսս եւ տարաւ ի գեօղն, եւ անդ անկեալ կայր մինչեւ սակաւիկ մի ողջացաւ, եւ յարուցեալ գնաց դարձեալ ի գերեզմանն ։ Եւ աղաղակէր մեծաձայն. Ասեմ ես Անտոն ոչ երկնչիմ ի ձէնջ, եւ ոչ վեհերիմ ի հարուածոց ։ Եւ երթեալ սատանայի շարժեաց ուժգին զգերեզմանն, եւ եցոյց նմա բազում սողունս եւ գազանս զի դիմէին ի վերայ նորա. եւ Անտոն աղօթիւք եւ նշանաւ խաչին անյայտ առնէր զերեւմունս ։ Եւ հայեցեալ ի վեր տեսանէ զձեղունսն

4 նեղութիւն] նեղասրտութիւն B || 7 նորա] իւր B || 9 Երթեալ եմուտ... յամենայն երկրի] Եւ մշտամռունչ աղօթիւք եւ նշանաւ խաչին Քրիստոսի յաղթեաց մահուչափ արկածից դիւաց՝ որ ուժգին մարտնչէին ընդ նա, խափանել զքարոզ գնացս նորա որ առ Աստուած ։ B.

va, vends tes biens et donne-les aux pauvres[1], il vendit aussitôt ses biens et distribua (le prix) aux pauvres. Il fit entrer sa sœur dans un couvent de vierges. Il y avait près de là un vieillard; (Antoine) envia * sa conduite et se mit à se mortifier. *A fol. 159 r° a.

Or les méchants démons le jetaient dans de grandes tribulations, ils lui rappelaient les délices de la vie, et réveillaient en son esprit le prurit des passions, mais ils ne purent ébranler le bienheureux. Toute sa nourriture consistait en pain et sel au coucher du soleil, encore n'était-ce que tous les deux ou trois ou quatre jours qu'il en prenait; son lit était une natte étendue sur le sol.

Étant allé, il entra dans un tombeau vide et se mit à y accomplir ses prières. Les démons s'assemblèrent et le blessèrent par leurs coups à tel point qu'il perdit l'usage de la parole; puis, l'ayant laissé à demi mort, ils s'en allèrent. Son domestique, étant venu, le chargea sur ses épaules et l'emmena au village; il y resta étendu, jusqu'à ce qu'il fût un peu rétabli, puis se leva et partit de nouveau vers le tombeau. Or il criait à haute voix : « Je vous dis, moi Antoine (*Anton*), que je n'ai pas peur de vous et ne crains pas les coups. » Le démon, étant venu, secoua fortement le tombeau, lui fit apparaître de nombreux reptiles et bêtes sauvages qui se jetèrent sur lui, mais

1. Matth., XIX, 21.

* A fol. 159 r° b.

բացեալ եւ ճառագայթ լուսափայլեալ ի վերայ նորա, եւ առժամայն թեթեւացան ի ի նմանէ ցաւք վիրացն, եւ ասէ արտասուալից բարբառով. Տէր, ո՞ւր էիր մինչեւ ցայժմ, եւ * ընդէր յառաջնումն ոչ երեւեցար եւ բարձեր յինէն զցաւս ։ Ձայն եղեւ առ նա եւ ասէ. Ով Անտոնիէ, աստ էի եւ կամէի տեսանել զքաջութիւնդ քո. արդ որովհետեւ յաղթեցեր եւ ոչ յաղթեար, եղէց քեզ հանապազ օգնական եւ արարից զքեզ անուանի յամենայն երկրի ։

Եւ էր երանելին յայնժամ ամաց երեսուն եւ հնգից, եւ ի միում աւուր մինչդեռ երթայր յանապատն եցոյց սատանայ սկաւառակ ոսկի անկեալ ի գետնի, եւ ամենեւին ոչ հայեցաւ, ասէ. Յանապատի սկաւառակ ուստի՞ իցէ. եւ յառաջ երթեալ ետես զանձ հեղեալ յերկրի եւ որպէս ընդ ստուեր էանց ։

Եւ երթեալ ի վանս մի անապատին, արգելաւ ի խուց մի ժամանակս բազումս. եւ որ երթային տեսանել զԱնտոն՝ լսէին ձայն որպէս թէ վիճէին ընդ միմեանս, եւ յահի լեալք դառնային. եւ դարձեալ յորժամ մտանէին առ նա՝ տեսանէին զնա միայն ի լռութեան խաղաղ, ուսուցանէր զնոսա եւ պատուիրէր ամենեցուն չերկնչել ի դիւական հնարից ։ Եւ բազումք նորա վարդապետութեամբն հրաժարեցին յայսմ կենցաղոյս, եւ առին զխաչս իւրեանց եւ գնացին կրօնիւք զկնի Քրիստոսի. եւ շինեցին վանորայս

8 յանապատն] ընդ անապատն B — եցոյց] երեւեցոյց B || 12-14 լսէին ձայն... խաղաղ *om.* B.

* A fol. 159 r° b.

Antoine fit disparaître ces apparitions par ses prières et le signe de la croix. Puis, ayant levé les yeux, il aperçut le plafond entr'ouvert et un rayon lumineux brilla sur lui; au même instant les douleurs de ses blessures diminuèrent et il s'écria avec des larmes aux yeux : « Seigneur, où étais-tu jusqu'à présent, pourquoi * ne m'es-tu pas apparu la première fois pour atténuer mes douleurs? » Une voix se fit entendre à lui qui dit : « O Antoine (*Antoniē*), j'étais ici, mais j'ai voulu voir ton courage, et comme tu as vaincu maintenant et n'as pas été vaincu, je serai continuellement ton aide et je te rendrai célèbre sur toute la terre. »

Le bienheureux avait alors trente-cinq ans. Un jour qu'il se rendait au désert, le démon lui fit voir un plateau d'or tombé à terre. Il n'y regarda même pas, et dit : « D'où vient ce plateau ici au désert? » Étant allé plus loin, il aperçut des pièces de monnaie dispersées par terre, il passa à côté comme une ombre.

S'étant rendu dans un couvent du désert, il se cloîtra dans une cellule pendant de longs jours, et ceux qui allaient pour voir Antoine (*Anton*), entendaient des voix qui discutaient entre elles, et, pris de peur, s'en retournaient, puis étant revenus, lorsqu'ils entraient chez lui, ils le trouvaient seul et calme dans le silence, et il leur enseignait et leur recommandait à tous de ne pas craindre les ruses du démon. Beaucoup, à cause de son enseignement, abandonnèrent cette vie, prirent leur croix et suivirent religieusement

յանապատին, եւ ամենեքեան որպէս ի հայր եւ յառաջնորդ երթային առ Անտոն եւ առնուին ի նմանէ պատուէրս :

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ հալածումն ի Մաքսիմիանոսէ դատաւորէն * եւ զքրիստոնեայս տանէին կապանօք յԱղեքսանդրիա քաղաքն : Եւ ելեալ Անտոն ի խցէն, գնաց տեսանել զկապեալ խոստովանողս վկայսն Քրիստոսի . եւ մտանէր ի բանտս սպասաւորէր նոցա, եւ քաջալերէր զնոսա հաստատուն կալ ի հաւատս եւ ուրախութեամբ մարտիրոսանալ : Եւ հրամայեաց դատաւորն զի աբեղայ մի երեւեսցի ի քաղաքին : Իսկ Անտոնիոս լուաց զպարեգօտն իւր եւ ընդ առաւօտն երթեալ եկաց առաջի դատաւորին . եւ նա ամենեւին ոչ հայեցաւ ի նա, զի ոչ էր հրաման յԱստուծոյ մարտիրոսանալ Անտոնի : Թէպէտ եւ ինքն իսկ զանձն յայտնէր կռապաշտիցն, եթող զնա Աստուած յերկրի, որ ուղղէր եւ կարգաւորէր զկարգ կրօնաւորութեան վարուց : *A fol. 159 v° a.

Եւ դարձաւ անդրէն ի վանսն, եւ բժշկէր զամենայն հիւանդս, եւ զախտաժետս եւ զդիւահարս : Եւ զի բազումք երթային առ նա եւ ձանձրացուցանէին, խորհեցաւ գնալ ի լեառն Թեբայիդ . եւ ձայն եղեւ յերկնից առ նա եւ ասէ . Թէ եւ ի Թեբայիդ երթաս առաւել ձանձրութիւն գտցես, այլ եթէ կամիս ի լռութեան կալ, տաճիկք անցանեն երթիցես զկնի նոցա եւ մուտ ի ներքսագոյն անապատն :

Եւ յարուցեալ գնաց զկնի նոցա զերիս տիւս եւ զերիս գիշերս, եհաս ի լեառն եւ

14 եւ ձայն ... ասէ] եւ ազդեցաւ նմա ի տեառնէ B || 15 երթաս առաւել] երթիցէ առաւելապէս B — գտցես] գտցէ B || 16 երթիցես] երթիցէ B — մուտ] մտցէ B.

le Christ, construisirent des couvents dans le désert et allaient à Antoine comme à leur père et à leur supérieur pour en recevoir des conseils.

En ces jours-là, il y eut une persécution du juge Maximien, et on amenait * les chrétiens chargés de fers à la ville d'Alexandrie (*Alekhsandria*). Antoine quitta sa cellule pour aller voir les confesseurs enchaînés, martyrs du Christ; il s'introduisait dans les prisons, leur rendait service et les encourageait à demeurer fermes dans la foi et accepter le martyre avec joie. Le juge donna l'ordre à ce qu'aucun moine n'apparût à la ville. Antoine (*Antonios*) lava sa tunique et le lendemain matin alla au-devant du juge, mais celui-ci ne le regarda aucunement, car Dieu n'avait pas ordonné le martyre d'Antoine ; et bien que celui-ci se fît voir aux idolâtres, Dieu le laissa sur terre pour diriger et organiser l'ordre de la vie monacale. *A fol. 159 v° a.

Il retourna donc aux couvents, et y guérit tous les malades, les infirmes et les possédés. Mais comme beaucoup allaient le voir et le dérangeaient, il songea à se rendre au mont Thébaïde (*Ṭebayid*), une voix du ciel se fit entendre qui lui dit : « Même si tu allais dans la Thébaïde tu y trouverais plus de dérangement, mais si tu veux te tenir dans le silence, voilà que des sarrasins (*Taǵikh*) passent; marche à leur suite et entre dans le désert plus intérieur.

Il se leva, les suivit pendant trois jours et trois nuits, et arriva à une

եգիտ ջուր եւ արմաւենիս բնակեցաւ անդ, եւ ցանեաց ցորեան եւ արար հաց վասն երթալոցն առ նա ։

* A fol. 159 v° b. Եւ աստուածային * նախագիտութեամբն գիտէր Անտոն զոր ինչ հանդերձեալ էր լինել ։ Տեսեալ եւ զհոգի սրբոյն Ամոնի անապատական ծերոյն զի ելանէր յերկինս ։ Եւ յաւուր միոջ մինչդեռ զինն ժամու աղօթսն կատարէր, յափշտակեցան միտք իւր որպէս թէ ոք վերացուցեալ զԱնտոն յամպս, եւ խաւարային սեւագոյն արք արգելուին եւ չտային թոյլ ելանել ի վեր. եւ լուսաւոր այրն որ հանէր զԱնտոն ի վեր ընդդիմանայր եւ մարտնչէր ընդ խաւարադէմսն ։ Եւ նոքա ասէին. Ցո՛յց մեզ զզորս ի տղայութենէ զգործսն ։ Ասէ լուսաւոր այրն եթէ. Զտղայութեան մեղսն Անտոնի Աստուած ջնջեաց. այլ ի կրօնաւորութենէն ես ոչինչ մեղս տեսի ի սա, եւ եթէ գիտէք դուք՝ ասացէք ։ Եւ սեաւքն ամօթալից լեալ անկան յերկիր. եւ նոքա անխափան ելին յերկինս ։ Եւ դարձան միտք իւր առ ինքն, եւ էր նոյն Անտոն ։

Եւ եկաց նօթի աւուրս ինչ եւ ասէ. Աղօթեցարո՛ւք եղբարք, զի անվնաս անցցուք ընդ իշխանութիւնս աներեւութիցն ։ Տեսանէի ի զարմացմանն իմում՝ այր մի երկայն, չարատեսակ, ահաւոր եւ հասանէր գլուխն յօդս. տեսանէի բազումս թռուցեալս զի վերանային. եւ նա՝ զոմանս հարկանէր ձեռօքն եւ յերկիր ընկենոյր, եւ ուրախանայր ընդ անկումն նոցա ։ Եւ այլք վերաթռիչք լինէին, եւ անխափան մտանէին յերկինս.

14 իշխանութիւնս] եւ ընդ պետութիւնս *add.* B.

montagne où il trouva de l'eau et des palmiers ; il y habita, y sema du blé et en fit du pain pour ceux qui viendraient le voir.

* A fol. 159 v° b. Par la prescience * divine, Antoine connaissait tout ce qui devait arriver. Il aperçut aussi l'âme de saint Ammon, le vieil anachorète, qui montait au ciel. Un jour, pendant qu'il célébrait les offices de la neuvième heure, l'esprit d'Antoine fut ravi comme si quelqu'un le soulevait aux nues, tandis que des hommes de ténèbres, au teint noir, le retenaient et ne lui permettaient pas de monter. L'homme lumineux qui élevait Antoine dans les hauteurs luttait et bataillait avec les visages noirs, qui lui disaient : « Montre-nous ses œuvres de jeunesse. » L'homme lumineux répondait : « Dieu a absous les péchés de jeunesse d'Antoine, mais depuis qu'il s'est fait religieux je ne lui connais aucun péché, et si vous en connaissez, dites-le. » Les (hommes) noirs, remplis de honte, tombèrent à terre, tandis que (l'ange et Antoine) montaient sans encombre au ciel. Son esprit revint à lui, et c'était le même Antoine.

Il resta à jeun quelques jours et dit : « Prions, frères, pour que nous passions sans dommage à travers les puissances invisibles. J'ai vu, dans mon ravissement, un homme de haute stature, de mauvaise mine, terrible, dont la tête atteignait les airs. Je voyais aussi beaucoup d'hommes qui s'élevaient en volant, or celui-là frappait certains de ses mains, et les jetait à terre, et il se réjouissait de leur chute. Mais d'autres volaient haut et, sans

եւ նա կրճտէր * պատառմունս իւր վասն նոցա ։ Եւ ձայն եղեւ առ իս եւ ասէ։ Իմանա՞ս * A fol. 160 r° a. զոր տեսանես Անտոնիէ ։ Եւ բացան իմաստք սրտիս, եւ գիտացի որ էին նոքա հոգիք մարդկան, եւ երկայն այն՝ սատանայ, եւ զհոգիս մեղաւորաց ընկղմէր յանդունդս. իսկ արդարոցն վերաթռիչք լինէին եւ անխափան մտանէին յերկինս ։

Յաւուրսն յայնոսիկ դարձեալ եղեւ համարձակութիւն արիանոսացն. եւ բազումք յուղղափառաց եպիսկոպոսացն աղաչեցին զԱնտոն, եւ իջեալ ի լեռնէն գնաց յԱղեքսանդրիա, եւ նզովեաց զԱրիոսի հերձուածն ։ Եւ պատուիրէր եւ ուսուցանէր ժողովրդեանն ի բաց կալ յարիոսական հաղորդութենէն, զի յետին հերձուած է եւ յառաջընթաց նեռինն. զի որք զՈրդին Աստուծոյ ստեղծուած քարոզեն եւ նոքա զստեղծուածս պաշտեն. այլ որդին Աստուծոյ մշտնջենաւորակից Հօր եւ Հոգւոյ է ։

Գնացին եւ հեթանոսք առ Անտոն եւ հարցանէին բան ինչ ։ Եւ նա ասէ. Եթէ ես առ ձեզ գայի, արժան էր ինձ նախանձել ընդ ձեզ, ապա եթէ դուք առ մեզ եկիք նախանձեցարուք ընդ բարին եւ լերուք իբրեւ զիս քրիստոնեայ ։

Եւ այլք ոմանք յիմաստնոց գնացին առ Անտոն եւ ասեն. Որպէ՞ս կարես միայն կեալ յանբնակ անապատիս առանց գրոց ։ Եհարց զնոսա Անտոն. Ասացէք ինձ եթէ

9 զՈրդին] եւ զԲանն *add.* B || 12 եկիք] գայք B || 13 լերուք] լինիջիք B.

encombre, entraient au ciel, alors il grinçait des dents * à cause d'eux. Or, * A fol. 160 r° a. une voix se fit entendre à moi et dit : Antoine (*Antoniē*), comprends-tu ce que tu vois? L'intelligence de mon cœur s'épanouit, et je reconnus que c'étaient les âmes des hommes; et que l'homme de haute stature était le démon, qui rejetait dans les abîmes les âmes des pécheurs; quant aux âmes des justes, elles volaient en haut et arrivaient au ciel sans encombre. »

En ces jours-là, il y eut un retour d'audace des Ariens, et beaucoup d'évêques orthodoxes prièrent Antoine; étant descendu de la montagne, il se rendit à Alexandrie et anathématisa l'hérésie d'Arius. Il recommanda et enseigna à la population de se tenir à l'écart de la communion arienne, parce que c'était la dernière hérésie et le précurseur de l'antéchrist, car ceux qui prêchent que le Fils de Dieu est une créature, ont le culte des créatures, tandis que le Fils de Dieu est coéternel avec le Père et l'Esprit.

Les païens aussi se rendirent auprès d'Antoine et lui posèrent des questions. Il leur répondit : « Si j'étais venu à vous, j'aurais pu être envieux de vous, mais, puisque c'est vous qui êtes venus à nous, enviez le bien et devenez chrétiens comme moi. »

Certains autres, d'entre les sages, allèrent trouver Antoine et lui dirent : « Comment peux-tu vivre seul dans ce désert inhabité, sans livres? » Antoine leur demanda : « Dites-moi quel est le meilleur soutien de l'homme, le livre

* A fol. 160 r° b. որ լաւ պատճառք են մարդկան, զիր եթէ միտք ։ Ասեն *նոքա. Միտքն ։ Եւ նա ասէ. Ապա ողջամտացն գրոց պէտք ոչ են ։

Եւ երթեալ ոմանք կրօնաւորք յերկրէն հարցանէին նմա. Զինչ աւելի ճգնութիւն ունիք դուք որ ի լերինս եւ յանապատս բնակեալ էք քան զմեզ. զի զամենայն զոր ինչ դուք առնէք եւ մեք առնեմք, պահօք եւ աղօթիւք, տքնութեամբ եւ անընչութեամբ ։ Ասէ Անտոն. Մեք շնորհօքն Աստուծոյ պահեմք զմիտս մեր ։ Եւ նոքա անկեալ յոտս թողութիւն խնդրէին եւ ասէին. Մեք զայդ ոչ կարեմք առնել ։

Գրէին թագաւորքն առ Անտոն, Մեծն Կոստանդիանոս եւ որդիքն իւր Կոստաս եւ Կոստանդիոս, եւ խնդրէին զաղօթս նորա, եւ զի երթիցէ առ նոսա ։ Ասէ ցաշակերտսն իւր. Եթէ երթամ, լինիմ տէր Անտոն, եւ եթէ չերթամ՝ իցեմ աբեղայ Անտոն ։ Վա՜յ մարդոյն որոյ անունն մեծ է քան զգործն ։ Եւ Անտոն հրամանաւ ամենայն անապատաւորացն գրէր պատասխանի եթէ. Ամենայն աղօթք իմ եկեսցեն առ քեզ, բայց ոտք իմ ոչ մտցեն ։

Եւ ի միում աւուր տեսանէ յանուրջս երանելին Անտոն զի ջորիք մտանէին ի խորանս եկեղեցւոյն, եւ աքցատելով կործանէին զսուրբ սեղանն ։ Եւ յարուցեալ ելաց դառնապէս եւ ասէ. Դարձեալ եւս արիոսականք հալածեսցեն զուղղափառս եւ կալցեն զեկեղեցիս արիանոսքն ։

12 քեզ] ձեզ B. — || 15 աքցատելով] աքսորելով B || 17 զեկեղեցիս] որպէս եւ եղեւ իսկ. յետ մահուանն Անտոնի՝ կալան զեկեղեցիս *add.* B.

* A fol. 160 r° b. ou l'esprit? » Ils répondirent * : « L'esprit. » Il leur dit : « Dans ce cas, les esprits sains n'ont pas besoin de livres. »

Quelques religieux du pays allèrent le trouver et lui demandèrent : « Quel ascétisme avez-vous de plus que nous, vous qui vivez dans les montagnes et les déserts? Car tout ce que vous pratiquez, nous le pratiquons aussi, jeûnes, prières, veillées et détachement. » Antoine leur répondit : « Nous, nous conservons notre esprit par la grâce de Dieu. » Alors ils se jetèrent à ses pieds, demandèrent pardon, et dirent : « Cela, nous ne pouvons pas le faire. »

Les empereurs, le grand Constantin (*Kostandianos*) et ses fils Constant (*Kostas*) et Constance (*Kostandios*) écrivirent à Antoine, demandant ses prières et l'invitant à venir auprès d'eux. Il dit à ses disciples : « Si j'y vais, je deviens le seigneur Antoine, et si je n'y vais point, je reste le moine Antoine. Malheur à l'homme dont la renommée est plus grande que son œuvre. » Aussi Antoine, par ordre de tous les anachorètes, écrivit cette réponse : « Toutes mes prières iront à toi, mais mes pieds n'y iront point. »

Un jour le bienheureux Antoine vit en songe que des mulets pénétraient dans les chapelles de l'église et renversaient, par des ruades, le saint autel. Il se réveilla, pleura amèrement, et dit : « De nouveau, les Ariens persécuteront encore les orthodoxes; les Ariens s'empareront des églises. »

Եւ յորժամ եղեւ Անտոն հարիւր եւ հնգից ամաց, ժողովեաց զամենայն եղբարսն եւ ասէ. Մերձեալ է օր վախճանի իմոյ, եւ * մտեալ ի ներքսագոյն անապատն, * A fol. 160 v° a. պատուիրեաց աշակերտացն զի թաղեսցեն զմարմին նորա գաղտ յանյայտ տեղւոջ, զի մի ոք գիտասցէ: Եւ զմին մաշկեղէն պարեգօտն հրամայեաց տալ Աթանասի Աղեքսանդրու հայրապետին. եւ զպարեգօտն զոր Աթանաս տուեալ էր նմա եւ զմիւս այլ մաշկեղէնն եւ զարմաւենի զգեստն զոր ունէր ի սրբոյն Պօղոսէ Թեբայեցւոյն՝ եթող աշակերտացն իւրոց. եւ տուեալ ողջոյն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Յունուարի ժէ. եւ յանմահական կեանսն փոխեցաւ: Եւ որպէս հրամայեաց այնպէս թաղեցին զսուրբ մարմին նորա: Եւ երթեալ առ Աթանասիոս աղաչեցին զնա, եւ գրեաց զաստուածահաճոյ վարս նորա, զոր եթող օրինակ ամենայն կրօնաւորաց եւ անապատաւորաց սուրբն Անտոնիոս:

Յայսմ աւուր տօն է նախահարցն՝ Աբրահամու, Սահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Մովսէսի, Ահարոնի, Յեսուայ եւ Սամուէլի:

Եւ այս են ամք աւուրց կենացն Աբրահամու զոր եկեաց հարիւր եօթանասուն եւ հինգ ամ, եւ պակասեալ Աբրահամու մեռաւ ի բարւոք ծերութեան * ալեւորեալ եւ * A fol. 160 v° b. լի աւուրբք, եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր: Եւ թաղեցին զնա Իսահակ եւ Իսմայէլ

8 Յունուարի ժէ] եւ Արացի ժ *add.* B — փոխեցաւ] հանգեաւ B || 10 վարս նորա] վարս սրբոյն Անտոնի B — օրինակ *om.* B || 11 սուրբն Անտոնիոս] շահ եւ օգուտ B || 12 տօն] յիշատակ B || 13 Մովսէսի ... Սամուէլի *om.* B || 14 աւուրց *om.* B.

Lorsque Antoine eût atteint cent cinq ans, il rassembla tous les frères et leur dit : « Le jour de ma mort est arrivé. » Et, * se dirigeant dans l'intérieur * A fol. 160 v° a. du désert, il recommanda à ses disciples d'enterrer secrètement son corps, dans un endroit inconnu, pour que personne ne le sût. Il ordonna de donner une de ses tuniques en peau à Athanase, le patriarche d'Alexandrie. Quant à la tunique qu'Athanase lui avait donnée, ainsi que l'autre tunique et le vêtement de palmiers qu'il tenait de saint Paul de Thébaïde, il les laissa à ses disciples, et leur ayant donné le salut, il rendit son âme à Dieu, le 17 Janvier, et fut transporté dans la vie immortelle. On inhuma son saint corps ainsi qu'il avait ordonné. (Les disciples) se rendirent ensuite auprès d'Athanase et, sur leur prière, il écrivit la vie agréable à Dieu que saint Antoine légua comme exemple à tous les religieux et anachorètes du désert.

En ce jour, fête des premiers patriarches Abraham, Isaac, Jacob, Joseph, Moïse, Aaron, Josué et Samuel.

Les années qu'Abraham vécut furent cent soixante-quinze ; il succomba et mourut d'une bonne vieillesse * très avancée, chargé de jours, puis il fut * A fol. 160 v° b. réuni à son peuple. Isaac et Ismaël, ses fils, l'enterrèrent dans la double

որդիք իւր յայրի անդ կրկնումն, յագարակին Եփրոնի՝ որդւոյ Սահառայ Քետացւոյ, որ է յանդիման Մամբրէի, ագարակն եւ այրն զոր ստացաւ Աբրահամ յորդւոցն Քետայ. անդ թաղեցին զԱբրահամ եւ զՍառա կին նորա ։

Եւ եղեւ յետ մահուանն Աբրահամու օրհնեաց Աստուած զԻսահակ զորդի նորա. եւ բնակեցաւ Իսահակ առ ջրհորովն տեսլեանն. անդ թաղեցին զԻսահակ եւ զՌեբեկայ կին նորա ։ Եւ անդ թաղեցին զԼիա ի ստացուածի ագարակին եւ այրին որ է ի նմա առ ի յորդւոցն Քետայ ։

Եւ դադարեաց Յակոբ ի պատուիրելոյ որդւոց իւրոց. եւ առեալ զոտս իւր անդրէն ի մահիճսն պակասեաց եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր ։ Եւ անկեալ Յովսէփ ի վերայ երեսաց հօր իւրոյ լաց եւ համբուրեաց զնա ։ Եւ հրաման ետ Յովսէփ ծառայից իւրոց զխաղորդաց պատել զհայր իւր. եւ լցան նորա աւուրք քառասուն, եւ տարան զնա որդիք իւր յերկիրն Քանանացւոց, եւ թաղեցին զնա անդ ։

Եւ խօսեցաւ Յովսէփ ընդ եղբարս իւր եւ ասէ. Ես ահաւասիկ մեռանիմ, այցելութեամբ այց արասցէ ձեզ Աստուած եւ հանցէ յերկրէս յայսմանէ յերկիրն զոր երդուաւ
* A fol. 161 r° a. տալ հարցն ձերոց Աբրահամու Սահակայ եւ Յակոբայ ։ *Երդմնեցոյց Յովսէփ զեղբարսն իւր զորդիսն Իսրայէլի եւ ասէ. Յայցելութեանն յորժամ այց արասցէ ձեզ Աստուած՝ հանջիք եւ զիմ ոսկերս աստի ընդ ձեզ ։ Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր եւ տասանց, եւ թաղեցին զնա յԵգիպտոս ։

grotte, dans le champ d'Ephron, fils de Séor (*Saharay*) le Hétéen (*Khetatsuoy*), en face de Mambré, le champ et la grotte ayant été acquis par Abraham aux fils de Heth (*Khetay*). C'est là qu'on enterra Abraham et sa femme Sara.

Et il arriva qu'après la mort d'Abraham, Dieu bénit Isaac son fils. Isaac établit sa résidence près du puits de la vision. Là', on enterra Isaac et Rébecca sa femme. Là aussi, on enterra Lia, dans la propriété, le champ et la grotte qui s'y trouve, acquis aux fils de Heth.

Jacob, ayant terminé ses recommandations à ses enfants, rentra ses pieds dans la couchette et mourut; et il fut réuni à son peuple. Joseph, s'étant jeté sur le visage de son père, pleura et l'embrassa; et Joseph ordonna à ses domestiques embaumeurs d'embaumer son père; puis lorsque les quarante jours furent accomplis, ses fils le transportèrent au pays des Cananéens, et l'enterrèrent là[1].

Joseph, s'adressant à ses frères, leur dit : « Voici que je vais mourir, Dieu vous visitera d'une visite et vous fera sortir de ce pays pour le pays qu'il avait
* A fol. 161 r° a. juré de donner à vos pères Abraham, Isaac et Jacob. » * Joseph fit jurer ses frères, les fils d'Israël, et leur dit : « Lorsque Dieu vous aura visités d'une visite, vous emporterez mes os d'ici avec vous. » Et Joseph mourut à l'âge de cent dix ans et on l'enterra en Égypte.

1. Dans la grotte d'Hébron.

Մովսէսի եւ Ահարոնի, Յեսուայ եւ Սամուէլի գրած է յայլ տեղի յիւրեանց տօնի ։

*[B * Յայսմ աւուր յիշատակ է նշխարաց սրբոյն Անտոնի անապատականի, որ* * B p. 35 a. *մարմինն յայտնութեամբն Աստուծոյ գտաւ ի ժամանակն Յուստիանոսի կայսեր, եւ բերաւ յԱղեկսանդրիա եւ եդաւ յեկեղեցւոջ սրբոյն Յովհաննու ։]*

Արաց ԺԱ եւ Յունուարի ԺԸ ։ Յիշատակ է երանելի եւ փառաւորեալ հայրապետացն Աղեկսանդրու Աթանասի եւ Կիւրղի ։

Աստուածազգեաց եւ մեծ վարդապետքն եկեղեցւոյն Քրիստոսի եւ սիւն հաստատութեան ուղղափառ հաւատոյ, Աթանասիոս եւ Կիւրղոս, փայլեցին իբրեւ զարեգակն եւ զստուերս եկեղեցեաց հալածեցին ։

Սուրբն Աթանասիոս մինչդեռ պատանեակն էր՝ խաղայր ընդ այլ փոքրիկ մանկունսն, եւ լինէր ինքն եպիսկոպոս, եւ ձեռնադրէր զմանկունսն քահանայս եւ սարկաւագունս, եւ մկրտէր զտղայս, որ էր յառաջագուշակ իւրոյ քահանայապետութեանն ։

Եւ էր ի ժամանակս մեծին Կոստանդիանոսի, եւ էր սարկաւագ երանելոյն Աղեկսանդրի հայրապետին ։ Եւ ի Նիկիոյ յառաջին ժողովն գնաց եւ սա զկնի

1 *Մովսէսի .. տօնի* om. B || 5 *Յիշատակ*] *Տօն* B — *երանելի եւ փառաւորեալ*] *սուրբ* B || 11 *մինչդեռ*] *փոքր* add. B || 15 *եւ էր* om. B || 16 *Աղեկսանդրի*] *Աղեկսանդրեայ՝ Աղեկսանդրու հայրապետին* add. B.

Quant à Moïse, Aaron, Josué et Samuel, il en est écrit ailleurs, au jour de leur fête.

[B * En ce jour, commémoration des reliques de saint Antoine l'anachorète, dont le corps, par révélation de Dieu, fut découvert aux jours de l'empereur Justinien (*Youstianosi*), transporté à Alexandrie et déposé dans l'église de saint Jean.] * B p. 35 a.

11 ARATZ, 18 janvier.

Commémoration des bienheureux et glorieux patriarches d'Alexandrie, Athanase et Cyrille.

Les grands docteurs de l'église du Christ, revêtus de Dieu, piliers de soutien de la foi orthodoxe, Athanase et Cyrille, brillèrent comme le soleil et chassèrent les ombres des églises.

Saint Athanase (*Atanasios*), tandis qu'il était jeune, jouait avec d'autres petits enfants, et faisait l'évêque, il ordonnait ses petits compagnons prêtres ou diacres et il baptisait les nourrissons, ce qui était un présage de son patriarcat.

Il vivait aux jours du grand Constantin, et était diacre du bienheureux patriarche Alexandre (*Alekhsandri*). Il se rendit au premier concile de Nicée à

հայրապետին իւրոյ, եւ բազում քաջութիւնս եցոյց ընդդէմ Արիոսի, բայց ի թիւ սինհոդոսին ոչ համարեցաւ : Եւ յետ վախճանին Աղեքսանդրեայ ձեռնադրեցին յաթոռ նորա զԱթանասիոս :

* A fol. 161 rº b. Եւ զկնի մեծին Կոստանդիանոսի թագաւորեաց որդին * իւր Կոստանդիոս, եւ եղեւ Արիոսի հերձուածողն, եւ զմիախոհս միածնականին հալածէր. աքսորեաց եւ զԱթանասիոս յայլեւայլ տեղիս փոփոխելով : Եւ զքառասուն եւ երկու ամ ի գաւառէ ի գաւառ փախստական լեալ` ճգնեցաւ վասն ուղղափառ հաւատոյ ընդդէմ արիոսականաց եւ ամենայն հերձուածողաց, եւ եթող առ մեզ յիշատակ յաւիտենական, եւ փոխեցաւ ի հանգիստ անվախճանից Յունուարի ԺԸ :

Իսկ սուրբն Կիւրղոս էր ի ժամանակս Փոքր Թէոդոսի բարեպաշտ արքային . եղբօրորդի էր Թէոփիլոսի Աղեքսանդրու հայրապետին որ զՅովհաննէս Ոսկեբերանն հրապուրեալ ի յԵւդոքսիա թագուհւոյն` ընկէց յաթոռոյն եւ աքսորեաց : Եւ յետ մահուանն Թէոփիլոսի Աղեքսանդրու հայրապետին նստաւ յաթոռ հայրապետութեան սուրբն Կիւրեղ . եւ մեծաւ ջանիւ յառաջին ժողովն Եփեսոսի հակառակ եկաց ընդդէմ մարդապաշտին Նեստորի ունայնախոհ ամբարշտին, եւ զՄարիամ մայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ սինհոդոսովն ճշմարիտ աստուածածին քարոզեցին :

5 աքսորեաց] որ եւ աքսորեաց զսուրբն B || 7 ընդդէմ արիոսականաց ... Յունուարի ԺԸ] եւ եկաց մինչեւ ի թագաւորութիւն Յուլիանոսի ուրացողին եւ Վաղենտիանոսի : Եւ գրեաց գիրս եւ կանոնս վարդապետականս վասն ուղղափառ հաւատոց ընդդէմ արիանոսացն եւ ամենայն հերձուածողացն . եւ եթող մեզ յիշատակ յաւիտենական, եւ բարի դաւանութեամբ փոխեցաւ ի հանգիստն յաւիտենից B || 10 արքային] թագաւորին B || 13 Աղեքսանդրու հայրապետին *om.* B.

la suite de son patriarche et y déploya une grande vigueur contre Arius, bien qu'il ne fût pas compris dans le nombre des membres du synode. Après la mort d'Alexandre (*Alekhsandreay*), on sacra à son siège Athanase.

* A fol. 161 rº b. Or, après le grand Constantin régna son fils * Constance (*Kostandios*), qui était de l'hérésie d'Arius et persécutait les partisans du Fils unique; il exila Athanase en le transférant de place en place. (Athanase), passager de province en province pendant quarante-deux ans, lutta pour la foi orthodoxe contre les Ariens et tous les hérétiques; et il nous a laissé un souvenir éternel. Il trépassa au repos des immortels le 18 Janvier.

Quant à saint Cyrille (*Kiurlos*), il vivait aux jours de Théodose le Jeune, le pieux empereur. Il était le neveu de Théophile, patriarche d'Alexandrie, qui, entraîné par l'impératrice Eudoxie, avait déposé de son siège Jean Chrysostome et l'avait exilé. Après la mort de Théophile le patriarche d'Alexandrie, saint Cyrille (*Kiurel*) siégea sur le trône patriarcal et déploya beaucoup d'efforts, au premier concile d'Éphèse, à combattre contre celui qui reconnaissait (seulement) l'homme en (Jésus-Christ), Nestorius, cette nullité impie, et, avec le synode, il proclama Marie, mère de Notre-Seigneur Jésus-Christ, vraie mère de Dieu.

Գրեաց եւ կանոնս ընդդէմ Նեստորի, մեկնեաց զհին եւ զնոր աստուածաշունչ պատուիրանս, զոր ունի եկեղեցի իբրեւ զլամբարս լուսաւորս. եւ այնպէս փայլեալ ուղղափառութեամբ ի մէջ հայրապետաց՝ փոխեցաւ առ Աստուած Յունուարի ԺԸ։

* Արացի ԺԲ եւ Յունուարի ԺԹ։ Տօն է Թէոդոսի մեծի թագաւորին։ * A fol. 161 v° a.

Բարեպաշտ եւ մեծ թագաւորն Թէոդոս զօրավար էր Վաղէսի ամբարիշտ թագաւորին Յունաց. եւ յորժամ հրակէզ եղեւ Վաղէս, Գրատիանոս թագաւորն Հռոմայ թագաւորեցոյց զնա ի Կոստանդինուպօլիս՝ բաժնին Վաղէսի։ Եւ էր նա քաջ եւ վանեաց զամենայն պատերազմունս բարբարոսաց։

Եւ ի հիւանդութիւն անկեալ՝ մկրտեցաւ յԱքեղայոսէ եպիսկոպոսէ ի համագոյութեան հաւատն. եւ առողջացեալ եկն ի Կոստանդինուպօլիս։ Եւ խրատովն Գրիգորի աստուածաբանի արար ժողով եպիսկոպոսաց վասն Մակեդոնի հոգեմարտին։ Եւ ածեալ զՆերսէս հայրապետն Հայոց ի կղզւոյն զոր աքսորեաց զնա Վաղէս, եւ կացոյց զնա գլուխ ժողովոյն. եւ ազատեաց զեկեղեցի Աստուծոյ ի պիղծ աղանդոյն Արիոսի եւ Մակեդոնի՝ որ զքառասուն ամ կալեալ էին զեկեղեցիս։

3 Աստուած] Քրիստոս. կատարի տօն սոցա *add.* B || 4 Տօն է] սրբոյն *add.* B || 6 հրակէզ] հրկէզ B || 9 յԱքեղայոսէ] յԱքիղայէ B || 11 ժողով] հարիւր եւ յիսուն *add.* B || 13 գլուխ] ընդ գլխաւորս B — Աստուծոյ] Քրիստոսի B — աղանդոյն] հերձուածոյ B || 14 զեկեղեցիս] զեկեղեցին Աստուծոյ B.

Il rédigea des canons contre Nestorius, commenta les Testaments inspirés de Dieu, ancien et nouveau, que l'église tient pour des phares lumineux. Ayant ainsi brillé par son orthodoxie parmi les patriarches, il trépassa à Dieu, le 18 Janvier.

* 12 ARATZ, **19 Janvier.** * A fol. 161 v° a.

Fête du grand empereur Théodose.

Le pieux et grand empereur Théodose était général de l'impie empereur des Grecs Valens (*Valēsi*). Lorsque Valens mourut par les flammes, l'empereur de Rome Gratien le fit régner à Constantinople sur la part de Valens. Il était brave et repoussa toutes les attaques des barbares.

Étant tombé malade, il fut baptisé par l'évêque Achélaüs dans la foi à la consubstantialité, et s'étant rétabli, il vint à Constantinople. Sur le conseil de Grégoire le théologien, il convoqua un concile d'évêques au sujet de Macédonius, le pneumatomaque. Ayant fait venir Nersès, patriarche des Arméniens, de l'île où l'avait exilé Valens, il lui fit présider le concile; il délivra l'église de Dieu de la secte abominable d'Arius et de Macédonius qui tenaient les églises depuis quarante ans.

Եւ յորժամ սպանին զԳրատիանոս եւ զՎաղենտիանոս կացոյց նա զերկուս որդիս իւր թագաւորս ի Կոստանդնուպօլիս, եւ ինքն գնաց ի Հռոմ պատերազմել ընդ բռնակալին Մաքսիմիանոսի, եւ յաղթեաց զօրութեամբն Աստուծոյ ։ Եւ ապա հիւանդացաւ, եւ կացոյց թագաւոր ի Կոստանդնուպօլիս զԱրկադէոս. եւ զՈնորիոս կոչեաց առ ինքն ի Հռոմ, եւ կացոյց զնա անդ թագաւոր, եւ ինքն վախճանեցաւ ուղղափառութեամբ Յունուարի ԺԹ ։ Եւ էր սաստիկ հնազանդ եկեղեցւոյ եւ օրինաց որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ։

* A fol. 161 v° b.

* Յայսմ աւուր վկայութիւն Եփրասեայ կուսին ։

Ի քաղաքին Նիկոմիդեայ էր բնակեալ երանելին Եփրասիա, եւ էր քրիստոնեայ եւ ի մեծ տոհմէ, յաւուրս կռապաշտ թագաւորին Մաքսիմիանոսի ։ Կացուցին առաջի ատենին եւ բռնադատէին զնա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն. եւ նա հաստատուն մտօք խոստովանեցաւ զՔրիստոս ճշմարիտ Աստուած. եւ հարին զաղախինն Քրիստոսի ուժգին եւ արկին ի բանդ ։ Եւ յետ աւուրց հանին ի բանդէն, եւ հարցանէին եթէ. Պաշտե՞ս զկուռսն ։ Եւ նա առաւելապէս խոստովանեցաւ զՔրիստոս եւ անարգէր զորս ոչ հաւատային ի Քրիստոս ։

Եւ ապա ետուն զսրբուհին ի զօրական մի, զի տարցէ ի տուն իւր եւ պոռնկեսցի

3 բռնակալին] բռնաւորին B || 6 Յունուարի ԺԹ] եւ Արացի ԺԲ *add.* B || 8 վկայութիւն] սրբուհւոյ *add.* B || 12 խոստովանեցաւ] խոստովանէր B || 14 խոստովանեցաւ] խոստովանէր B || 16 զսրբուհին] զսրբուհի վկայն B.

Lorsque Gratien et Valentinien (*Valentianos*) furent tués, il établit ses deux fils empereurs à Constantinople et se rendit lui-même à Rome pour livrer bataille au tyran Maximien, et il le vainquit par la puissance de Dieu. Puis, il tomba malade, établit Arcadius empereur à Constantinople; il fit venir Honorius auprès de lui, à Rome, où il l'établit empereur. Il mourut dans l'orthodoxie, le 19 Janvier. Il fut très obéissant à l'église et à ses lois, et son souvenir sera en bénédiction.

* A fol. 161 v° b.

* En ce jour, martyre de la vierge Euphrasie.

La bienheureuse Euphrasie (*Ephrasia*) vivait dans la ville de Nicomédie, étant chrétienne et de grande famille, aux jours de Maximien, l'empereur idolâtre. On la fit venir au tribunal et on voulait l'obliger à renier le Christ et à immoler aux idoles, mais elle confessa, avec fermeté d'esprit, le Christ vrai Dieu. On frappa brutalement la servante du Christ et on la jeta en prison. Quelques jours après, on la fit sortir de la prison et on lui demanda : « Adores-tu les idoles? » Elle confessa plus amplement le Christ et méprisa ceux qui ne croyaient pas au Christ.

On remit ensuite la sainte entre les mains d'un soldat pour qu'il la

ընդ նմա եւ դարձուցէ ի կուռսն. եւ յերթալն Եփրասիա աղաչէր զԱստուած փրկել ի փորձութենէն : Եւ յորժամ մտին ի սենեակն, ծագեաց շնորհն Աստուծոյ ի սիրտ կուսին, եւ ասէ ցզօրականն. Մի՛ մերձենար յիս եւ տաց քեզ դեղ որ եթէ դնես զայն յանձն քո՝ սուր ի քեզ ոչ գծէ : Եւ նորա հաւատացեալ նմա ասէ. Տո՛ւր ինձ զոր ինչ խոստացար : Ասէ Եփրասիա. Բե՛ր ինձ սակաւիկ մի ձէթ, բե՛ր եւ զսուրն քո ընդ քեզ, եւ տեսցես զարմանալի գործս : Եւ նա գնաց ի բերել :

Եւ երանելին հանեալ մազ մի ի գլխոյ իւրմէ եւ եդ ի գրապանակն, եւ զօրականին բերեալ զձէթն եւ զսուրն, եւ առեալ Եփրասեայ արկ զձէթն յափն իւր, եհան եւ զմազն եւ թաւալեցոյց ի ձէթն. եւ * մերկացուցեալ զպարանոցն իւր պատեաց զնա * A fol. 162 rº a. մազովն այն, եւ ասէ ցայրն. Արդ ուժգին որչափ եւ ուժ է հա՛ր երկու ձեռամբդ, եւ գիտասցես զի ոչ կարասցես սպանանել զիս, այլ մանաւանդ կեցուցանես : Եւ խաբեցաւ այրն ի բանս նորա, եւ սրովն ուժգին զարկոյց, եւ անկաւ գլուխ երանելի կնոջն յերկիր, եւ լցաւ տունն արեամբ, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց Յունուարի ժԹ :

Եւ այրն տեսեալ զոր ինչ արար կոյսն. սկսաւ ողբալ եւ փետտել զմօրուսն, եւ ասել լալով. Վա՜յ ինձ թէ ո՞րպէս խաբեցայ, եւ զայս գեղեցիկ եւ մեծազգի կուսանն

7 հանեալ] եհան զաղտ B || 8 զսուրն] ի ձեռին *add.* B || 10 զնա մազովն այն] զմազն B || 13 առ Աստուած] անպարտ B || 14 Յունուարի ժԹ] եւ Արաց ԺԲ *add.* B || 15 զմօրուսն] զհերս գլխոյն եւ զմօրուացն B || 16 զայս] զայնպիսի B.

conduisît à sa maison, la souillât et la convertît à ces idoles. Chemin faisant, Euphrasie pria Dieu de la délivrer de la tentation. Lorsqu'ils furent entrés dans la chambre, la grâce de Dieu éclaira le cœur de la vierge, qui dit au soldat : « Ne me touche pas et je te donnerai un remède que, lorsque tu l'auras appliqué sur ton corps, l'épée ne pourra rayer. » Ayant cru à sa parole, il lui dit : « Donne-moi ce que tu viens de me promettre. » Euphrasie lui répondit : « Apporte-moi un peu d'huile, et apporte en même temps ton épée avec toi, et tu verras quelque chose de merveilleux. » Et il alla prendre (cela).

La bienheureuse détacha un cheveu de sa tête et le mit dans sa poche. Lorsque le soldat eut apporté l'huile et l'épée, Euphrasie versa un peu d'huile dans le creux de sa main, sortit le cheveu et le trempa dans l'huile, puis * elle mit à nu son cou, l'entoura de ce cheveu, et dit à l'homme : « Main- * A fol. 162 rº a. tenant frappe de tes deux mains et de toutes tes forces, et tu verras que non seulement tu ne me tueras pas, mais plutôt tu me feras vivre. » L'homme fut trompé par ces paroles et frappa vigoureusement de son épée, la tête de la bienheureuse femme roula à terre, et la maison fut remplie de sang. (Euphrasie) rendit son âme à Dieu entre les mains des anges, le 19 Janvier.

L'homme, voyant ce que la vierge lui avait fait faire, se mit à gémir et à s'arracher la barbe, et il dit en pleurant : « Malheureux que je suis de m'être

սպանի . զինչ պատասխանի տաց թագաւորին ։ Եւ ելեալ գաղտ փախեաւ ի թագաւորէն՝ զի մի գտցէ եւ փոխանակ կնոջն սպանցեն զնա ։

Յայսմ աւուր Թէոմպոմպոս եպիսկոպոս հրամանաւ Դիոկղետիանոսի արքային չերիվարաց կոխան եղեւ եւ կատարեցաւ ի Քրիստոս ։ Եւ Թէոնիաս որ երբեմն կախարդ էր եւ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ, եւ ի նոյն կատարեցաւ ի Քրիստոս ։

* B p. 38 a. [B * Յայսմ աւուր ճգնութիւն սրբոյն Մակարիոսի եգիպտացւոյն, եւ Մակարիոսի Եգիպտացւոյն, եւ Մակարիոսի Հռովմայեցւոյն, եւ Թէոփիլոսի, Սերսիսի եւ Իկինիոսի եւ ընկերաց նոցա ։

Ի սմին աւուր յիշատակ սուրբ վկային Գերմանի որ ի Զմիւռնիա ի գուբ գազանաց արկաւ ի ժամանակ Մարկոսի եւ Անտոնինոսի ամբարիշտ թագաւորացն ։]

Արացի ԺԳ եւ Յունուարի Ի ։ Տօն չորից զինուորացն Բասսի, Եւսեբի, Եւտիքի եւ Բասիլեոսի եւ այլոցն որք ընդ նոսա կատարեցան ։

* A fol. 162 r° b. Այս սուրբ մարտիրոսքս մեծամեծ իշխանք էին Դիոկղետիանոսի *կռապաշտ արքային, եւ մեծատունք յոյժ ։ Եւ տեսանէին զսուրբն Թէոպոմպոս զեպիսկոպոսն զի

1 ի թագաւորէն] ի քաղաքէն B || 2 գտցէ] գտցեն B || 3 աւուր] սրբոյն *add.* B || 5 եւ ի նոյն] սրով B — ի Քրիստոս *om.* B. || 13 սուրբ] վկայքս եւ երանելի *add.* B.

laissé tromper; j'ai tué cette belle et noble vierge; que répondrai-je à l'empereur? » Il s'enfuit secrètement loin de l'empereur, de crainte d'être pris et tué à la place de la femme.

En ce jour, l'évêque Théopompe, par ordre de l'empereur Dioclétien, fut foulé aux pieds des chevaux et mourut pour le Christ. Et Théonas, qui était auparavant sorcier, crut au Christ, se fit baptiser et fut martyrisé, le même jour, pour le Christ.

* B p. 38 a. [B * En ce jour, ascétisme de saint Macaire l'Égyptien, de Macaire l'égyptien[1], de Macaire le romain, de Théophile, Sersis, Icinius et leurs compagnons.

En ce jour, commémoration du saint martyr Germanicus (*Germani*), qui fut jeté dans la fosse aux fauves, à Smyrne, aux jours de Marc et Antonin, les empereurs impies.]

13 ARATZ, 20 Janvier.

Fête des quatre soldats Bassus, Eusèbe, Eutychius et Basilide (*Basilios*) et des autres qui furent martyrisés avec eux.

Ces saints martyrs étaient des grands princes de l'empereur impie Dioclé-
* A fol. 162 r° b. tien. * Ils étaient fort riches. Ayant été témoins des violentes tortures aux-

1. Il faut restituer sans doute « Macaire d'Alexandrie », comme *Syn. Cp.* Macaire de Rome est fêté au 23 octobre dans *Syn. Cp.*

չարչարէին ուժգին վասն հաւատոցն Քրիստոսի, եւ զարմանային ընդ համբերութիւնն. հաւատային եւ նոքա ի Քրիստոս ։

Եւ յորժամ լուաւ թագաւորն տրտմեցաւ յոյժ եւ բարկութեամբ կոչեաց առաջի իւր, եւ եհարց եթէ. Զիա՞րդ իշխեցէք զայդ առնել ։ Եւ նոքա որպէս ի միոջէ բերանոյ խոստովանեցան զՔրիստոս, եւ լուծին զգօտիս իւրեանց առաջի թագաւորին ։ Եւ նա փորձելով ասէ ցնոսա. Եթէ կատարեալ քրիստոնեայք էք բերէք ինձ զգանձս ձեր ։ Եւ նոքա երթեալ ի տունս իւրեանց բերին զգանձսն եւ եդին առաջի թագաւորին. սուրբն Բասոս՝ կենդինարս քսան, սուրբն Եւսեբիոս՝ կենդինարս քառասուն, սուրբն Եւտիքէ՝ կենդինարս վաթսուն, սուրբն Բասիլէոս՝ կենդինարս ութսուն ։ Եւ ասեն. Առ ի մէնջ զիշխանութիւնս եւ զգանձս, զի մեք զճշմարիտն Աստուած ծանեաք, որ կարող է տալ հաւատացելոց իւրոց զերկնից արքայութիւնն, որպէս ուսաք ի ծառայէն Աստուծոյ Թէոպոմպոսէ եպիսկոպոսէ, զի մեծ է Աստուածն քրիստոնէից, եւ կուռք հեթանոսաց սնոտիք ։

Հրամայեաց եւ արկին զնոսա ի բանդ զաւուրս հնգետասան. եւ կանայք իւրեանց երթային առ նոսա, եւ նոքա ուսուցանէին նոցա զբանն կենաց, եւ դարձուցանէին յաստուածգիտութիւն, եւ հաստատէին ի հաւատս եւ դառնային քրիստոնէութեամբ ի տունս իւրեանց ։

2 Քրիստոս] եւ մկրտեցան *add.* B || 9 Եւտիքէ] Եւտիքոս B || 11 իւրոց] ի նա B.

quelles on avait soumis le saint évêque Théopompe pour la foi au Christ, émerveillés de son endurance, eux aussi crurent au Christ.

Lorsque l'empereur l'apprit, il fut très affecté, et dans son irritation, il les convoqua devant lui. Il leur demanda : « Comment avez-vous osé faire cela ? » Ils confessèrent, comme d'une seule bouche, le Christ et détachèrent leur ceinturon devant l'empereur. Il leur dit, pour les mettre à l'épreuve : « Si vous êtes de véritables chrétiens, apportez-moi vos fortunes. » Étant allés à leurs maisons, ils rapportèrent leur avoir, et le déposèrent devant l'empereur : Saint Bassus, vingt quintaux[1]; saint Eusèbe, quarante quintaux; saint Eutychius, soixante quintaux; saint Basilide, quatre-vingts quintaux. Ils lui dirent : « Enlève-nous dignités et trésors, car nous avons reconnu le vrai Dieu, qui est capable de donner le royaume des cieux à ses fidèles, ainsi que nous l'avons appris du serviteur de Dieu, l'évêque Théopompe ; car grand est le Dieu des chrétiens, et les idoles des païens sont vaines. »

(L'empereur) ordonna de les jeter en prison pendant quinze jours; leurs femmes allèrent les visiter et ils leur enseignèrent la parole de vie et les convertirent à la connaissance de Dieu. Elles se fixèrent dans la foi et rentrèrent chez elles chrétiennes.

1. La quantité désignée par le mot *kentinar*, simple transcription de *centenarius*, est de cent livres d'or monnayé.

* A fol. 162 v° a. * Կացուցին միւսանգամ զսուրբսն առաջի, եւ ամենեւին ոչ կարաց խախտել զնոսա ի հաւատոյն Քրիստոսի ։ Ապա փորեցին գուբ եւ իջուցին անդ զսուրբն Բասոս եւ կացուցին ի վերայ ոտից իւրոց, եւ սրով կոտորեցին զմարմինն, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

Եւ զսուրբն Եւտիքոս կապեցին ի չորս ցիցս, եւ ի չորս կողմանէ քարշեցին ուժգին եւ հերձաւ յերիս մասունս, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

Եւ զսրբոյն Բասիլոսի հերձին զորովայնն եւ հեղան աղիքն ․ եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

Եւ զսուրբն Եւսեբիոս կախեցին գլխիվայր, եւ մրճօք խորտակեցին զմարմինն, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

Կատարեցան սուրբ մարտիրոսքն Յունուարի Ի ։

Յայսմ աւուր յիշատակ է Եւթիմիոսի մեծի անապատականին եւ քահանայի ։

Որ յաւուրս բարեպաշտ արքային Գրատիանոսի եւ Թէոդոսի Մեծի իբրեւ զարեգակն փայլեաց եւ բազում վանորայս շինեաց յանապատին, եւ հանգեաւ առ Աստուած ամաց իննսուն եւ եօթանց ։

Էր սա ի Մելիտինոյ քաղաքէն Հայոց եւ քսան եւ ինն ամաց գնաց ի լեառն եւ շինեաց զայրն՝ վանս, յորում Դաւիթ փախստական թաքեաւ ի Սաւուղայ ։

1 խախտել] խոտորել B || 3 զմարմինն] զամենայն մարմինն B || 7 Բասիլոսի] Բասիլիդեայ B || 9 խորտակեցին] կոտորեցին B || 11 Յունուարի Ի] եւ Արացի ԺԴ *add.* B.

* A fol. 162 v° a. * On fit de nouveau comparaître les saints, mais on ne put d'aucune façon les ébranler de la foi au Christ. On creusa alors une fosse et on y descendit saint Bassus, on le dressa sur ses pieds et on lui déchira le corps à coups d'épée. Il rendit son âme à Dieu.

On attacha saint Eutychius à quatre poteaux et on le tira vigoureusement des quatre côtés, il fut écartelé en trois morceaux et rendit son âme à Dieu.

On déchira le ventre à saint Basilide, ses intestins s'échappèrent, et il rendit son âme à Dieu.

On suspendit saint Eusèbe la tête en bas, on lui brisa le corps à coups de marteau, et il rendit son âme à Dieu.

Ces saints martyrs furent exécutés le 20 Janvier.

En ce jour, commémoration d'Euthymius, le grand anachorète et prêtre.

Il brilla comme le soleil aux jours des pieux empereurs Gratien et Théodose le Grand, il fonda de nombreux couvents dans le désert et reposa en Dieu à l'âge de quatre-vingt-dix-sept ans.

Il était natif de Mélitène, ville d'Arménie, avait vingt-neuf ans lorsqu'il se retira à la montagne et fit une laure de la grotte où David s'était caché lorsqu'il fuyait devant Saül.

Էր կարճահասակ եւ մօրուսն երկայն մինչեւ ի ծունկսն ։

[B * Յայսմ աւուր յիշատակ մեծի անապատականին Եւթիմիոսի քահանայի ։ * B p. 39 a.

Էր սա ի Մելիտինոյ քաղաքէն Հայոց՝ յաւուրս բարեպաշտ թագաւորացն Թէոդոսի մեծի եւ Գրատիանոսի, որ քսան եւ ինն ամաց գնաց ի լեառն եւ կրօնաւորեցաւ, եւ աստուածահաճոյ վարուք իբրեւ զարեգակն փայլեաց. շինեաց զվանորայս եւ բազմացոյց զմիայնակեացս ։

Եւ ապա գնաց յԵրուսաղէմ եւ շինեաց վանս զայրն՝ յորում Դաւիթ արքայն փախստական թաքեաւ ի Սաւուղայ. ուր արար եւ սքանչելի նշանս, եւ զբազումս յանհաւատից դարձոյց ի հաւատս Քրիստոսի ։ Եւ լի աւուրբք եւ արդեամբք հանգեաւ առ Աստուած ամաց իննսուն եւ եօթանց ։ Էր կարճահասակ, եւ մօրուսն երկայն մինչեւ ի ծունկսն ։]

Արացի ԺԴ եւ Յունուարի ԻԱ ։ Վկայութիւն սուրբ առաքելոյն Տիմոթէոսի աշակերտին Պօղոսի ։

* Սա էր ի քաղաքէն Լիստրոնի. հայրն էր հեթանոս եւ մայրն հրէայ. աշակերտեցաւ սրբոյ առաքելոյն Պօղոսի, եւ ճանապարհորդակից եղեւ նմա յաւետարանն Քրիստոսի ։ Եւ ապա ձեռնադրեցաւ ի Պօղոսէ եպիսկոպոս Եփեսոսի յաւուրս անօրէն արքային Ներոնի ։ * A fol. 162 v° b.

12 Վկայութիւն] տօն B — աշակերտին Պօղոսի *om.* B || 14 Սա] Սուրբ առաքեալն Տիմոթէոս B — Լիստրոնի] Լիւստրոնի B || 15 նմա] եւ գործակից *add.* B || 16 ի Պօղոսէ] ի նմանէ B || 17 Ներոնի] յառաջ քան զհաստատել Յովհաննու աւետարանչի զաթոռ իւր անդ, եւ քարոզէր բնակչաց զբանն կենաց ։ *add.* B.

Il était de petite taille et sa longue barbe lui arrivait jusqu'aux genoux.

[B * En ce jour, commémoration du grand anachorète Euthymius le prêtre. * B p. 39 a.

Il était de Mélitène, ville d'Arménie, aux jours des pieux empereurs Théodose le Grand et Gratien; il se retira dans la montagne à l'âge de vingt-neuf ans et y vécut en moine, et, par sa conduite agréable à Dieu, il brilla comme le soleil; il fonda des laures et multiplia les moines solitaires.

Il se rendit ensuite à Jérusalem, établit un couvent dans la grotte où le roi David s'était caché lorsqu'il fuyait devant Saül, y opéra des prodiges merveilleux et convertit beaucoup d'infidèles à la foi au Christ. Chargé d'années et de mérites, il reposa en Dieu à l'âge de quatre-vingt-dix-sept ans. Il était de petite taille et sa barbe lui arrivait jusqu'aux genoux.]

14 ARATZ, 21 Janvier.

Martyre du saint apôtre Timothée, disciple de Paul.

* Il était de la ville de Lystre (*Listroni*). Son père était païen, sa mère juive. Il se fit le disciple du saint apôtre Paul et devint son compagnon de voyage pour (prêcher) l'évangile du Christ. Il fut ensuite sacré par Paul évêque d'Éphèse aux jours de Néron, l'empereur impie. * A fol. 162 v° b.

Եւ մտեալ ի քաղաքն անցանէր ընդ մէջ քաղաքին, եւ տեսեալ զնի պատրաստէին զոհս ի պիղծ տօնս իւրեանց, եւ զգարշելի գործսն զոր առնէին արք եւ կանայք ծածկեալ երեսօք որպէս զի մի ճանաչեն զմիմեանս եւ խառնակէին ընդ իրեարս : Եւ տեսեալ զնոսա յանդգնի անառակ գործսն՝ երթեալ աղաչէր զնոսա եւ ուսուցանէր ի բաց կալ ի մոլորական խաբէութեանէն. եւ նոքա ժողովեցան ի վերայ նորա եւ բրօվք սպանին զերանելի առաքեալն Տիմոթէոս Յունվարի ԻԱ : Եւ թաղեցին զնա քրիստոնեայքն ի տեղւոջն որ կոչի Պիոն, յայնկոյս նաւահանգստին Որիոյ :

Եւ յաւուրս քրիստոնէութեան տարան զնշխարսն ի Կոստանդնուպօլիս եւ եդին ընդ այլ առաքելոցն, եւ է բարեխօս առ Քրիստոս վասն մեր :

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյ Տատիանէի եւ Նէոփիտոսի :

Սրբուհին Տատիանէ կատարեցաւ նահատակեալ ի յԱղեկսանդրոսէ արքայէն : Զերանելի կինն այնչափ գանեցին մինչեւ ամենայն մարմինն քերթեցաւ, եւ ակշօք զերեսն քերթեցին. եւ նա աղօթիւք զտաճար կռոցն այրեաց եւ զբագինն խորտակեաց :

1 Եւ մտեալ ... քաղաքին] Եւ յաւուրս անարժան տօնի Արտեմեայ գոյ՝ մինչ անցանէր ընդ մէջ փողոցին B || 2 ի պիղծ տօնս] ի պղծատօնս B — գործս] լկտութեան *add.* B || 3 ծածկեալ ... անառակ գործսն *om.* B || 5 խաբէութեանէն] իսկ նոցա ընդդէմ դարձեալ *add.* B — բրօվք] եւ քարամբք *add.* B || 6 Եւ թաղեցին զնա քրիստոնեայքն] Զոր բարձեալ քրիստոնէից թաղեցին պատուով B || 9 առաքելոցն] առաքեալսն յեկեղեցւոջ սրբոց առաքելոցն B — վասն մեր] վասն անձանց մերոց B.

Étant entré dans la ville et l'ayant traversée par le milieu. il vit les victimes que les habitants préparaient pour leurs fêtes abominables, et les actes ignobles qu'accomplissaient hommes et femmes s'unissant, le visage masqué afin de ne pas se reconnaître. Témoin de leurs actes lascifs, s'étant avancé, il les pria et leur enseigna à se détourner de cet égarement trompeur; mais ils s'assemblèrent, assaillirent et tuèrent à coups de bâton le bienheureux apôtre Timothée, le 21 Janvier. Les chrétiens l'inhumèrent à l'endroit appelé Pion, de l'autre côté du port Orius[1].

Aux jours du christianisme on transporta ses reliques à Constantinople et on les déposa aux côtés (de celles) des autres apôtres; il est notre intercesseur auprès du Christ.

En ce jour, martyre de sainte Tatiana et de Néophyte.

Sainte Tatiana mourut martyre sous l'empereur Alexandre. On frappa la bienheureuse femme à tel point que tout son corps fut écorché; on lui écorcha le visage avec des tenailles; par ses prières elle fit brûler le temple des idoles et renversa l'autel.

1. Peut-être ἱερὸς λιμήν. L'endroit de la sépulture Πίων est indiqué sans localisation dans la vie métaphrastique, *P. G.*, CXIV, col. 772.

[B * Ի սմին աւուր վկայութիւն սրբոյ վկային Նէօփիտոսի, որ թարգմանի * B p. 39 b. նորատունկ :

Յաւուրս ամբարշտին արքային Դիոկղետիանոսի՝ ի քաղաքին Նիկիա Բիւթանացւոց էին ամուսին Թէոդորոս եւ Փլորենդիա քրիստոնեայք. եւ էր նոցա զաւակ Նէոփիտոս, որ եղեւ ի տղայութեան զգաստ եւ պարկեշտ :

Եւ յորժամ եղեւ ինն ամաց ուսաւ գիր. եւ խօսք իմաստութեան տուան նմա շնորհ յԱստուծոյ : Եւ ժողովէր մանկունս որբս ի հեթանոսաց եւ կերակրէր զնոսա, եւ ուսուցանէր զհաւատս քրիստոնէականս :

Եւ գնացեալ հանդերձ նոքօք յարեւելեան * դուռն քաղաքին կանգնէր խաչ, եւ * B p. 40 a. կայր նոքօք յաղօթս. եւ Աստուած առնէր ի ձեռն նորա մեծամեծ սքանչելիս. եւ ելեալ յՈւղպիոս լեառն՝ ճգնէր յայրի միում : Եւ մինչ եղեւ մետասան ամաց յայտնութեամբն Աստուծոյ էջ ի լեռնէն ի տեսանել եւ յողջունել զծնօղսն. եւ յընչից նոցա յոլով բաշխեաց աղքատաց, եւ վերստին դարձաւ ի լեառն, եւ անդ ճգնէր մեծապէս :

Եւ յորժամ եղեւ հնգետասան ամաց շարժեալ ի վերին ազդեցութենէ գնաց անխեհեր առաջի Դեկոսի դատաւորին ի Նիկիա, եւ համարձակութեամբ զճշմարտութիւն աստուածութեանն վկայէր. եւ նա ստիպէր ուրանալ զՔրիստոս, եւ զոհել կռոցն : Իսկ սուրբն անգոսնեալ արհամարհեաց զկուռս եւ զդիւական պաշտամունս նոցա :

Եւ դատաւորն բարկացեալ յոյժ ետ տանջել արջառաջլօք, եւ կախեալ զփայտէ հեղին ի վերայ քացախ խառնեալ աղիւ. արկին զնա եւ ի հրացեալ թոնիր հացի եւ

[B* En ce jour, martyre du saint martyr Néophyte, qui se traduit « nou- * B p. 39 b. velle plante ».

Aux jours de l'empereur impie Dioclétien, vivaient dans la ville de Nicée de Bithynie les époux chrétiens Théodore et Florentia. Ils avaient un fils, Néophyte, qui fut dès son enfance sage et modeste.

Lorsqu'il eut neuf ans, il apprit à lire, et des propos de sagesse lui furent accordés par la grâce de Dieu. Il rassemblait les enfants orphelins des infidèles, les nourrissait et leur enseignait la foi chrétienne.

Il se rendait avec eux à la porte orientale * de la ville, plantait une croix * B p. 40 a. et se mettait à prier avec eux. Dieu accomplit par ses mains de grands miracles. Il se retira dans une grotte du mont Ulpius, et y vécut en ascète. Lorsqu'il eut onze ans, il descendit, par révélation de Dieu, de la montagne pour voir et saluer ses parents, distribua une grande partie de leurs biens aux pauvres, et retourna à la montagne, où il vécut en grand ascétisme.

Lorsqu'il fut âgé de quinze ans, poussé par une inspiration d'en haut, il se présenta courageusement au juge Décus à Nicée, et témoigna avec hardiesse de la vérité de Dieu. (Le juge) le pressa de renier le Christ et d'immoler aux idoles. Mais le saint méprisa avec dédain les idoles et leur culte démoniaque.

Le juge, très irrité, ordonna de le frapper avec des nerfs de bœuf; ensuite on l'attacha à un arbre et on répandit sur lui du vinaigre mélangé avec du

տարեալ զօրութեամբն Աստուծոյ ։ Եւ ապա կապեցին ի ցից մի մերկ, եւ թողին ի նա գազանս գիշատել եցան ի նա ։ Եւ մի ոմն ի դահճացն եհար գեղարդեամբն ի կուրծս սրբոյն, եւ անկեալ յերկիր հեղաւ արիւն նորա յոյժ, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Յունուարի ԻԱ ։ Եւ էր սուրբն Նէոփիտոս ամաց հնգետասանից եւ չորից ամսոց ։ Եւ երթեալ ծնողացն առին զմարմինն, եւ թաղեցին ի յարկս իւրեանց գաղտնի ։]

* A fol. 163 r° a.

* Արացի ԺԵ եւ Յունուարի ԻԲ ։ Տօն սրբոց վկայիցն Սահակայ եւ Յովսեփայ ի Կարնոյ քաղաքի ։

Սոքա էին ի Կարնոյ քաղաքէն. հայր սոցա տաճիկ էր եւ մայրն քրիստոնեայ. եւ ուսոյց զորդիս իւր աստուածապաշտ կարգօք կեալ եւ քրիստոնէական մկրտութեամբ ։ Եւ ի զօրանալ հագարացւոցն եւ ի նեղել զքրիստոնեայսն՝ խորհեցան գնալ ի Կոստանդինուպօլիս առ Լեւոն կայսրն Յունաց ։

Եւ իմացեալ իշխան քաղաքին Կարնոյ կալեալ զնոսա եդ ի բանդի. եւ ի բազում աւուրս խոշտանգէր զնոսա ուրանալ զՔրիստոս եւ դառնալ ի կրօնս տաճկաց. եւ

7 Տօն] Վկայութիւն B || 8 ի Կարնոյ քաղաքին *om.* B || 9 Սոքա] Սուրբս այսոքիկ եղբարք B — քրիստոնեայ] հայկազուն *add.* B || 12 Յունաց] եւ յայտնի պաշտել զքրիստոնէութիւնն *add.* B || 13 կալեալ] կալաւ B || 14 տաճկաց] իւր B.

sel; on le jeta dans un four chauffé, mais il resta en vie par la puissance de Dieu. Ensuite on l'attacha nu à un poteau et on l'abandonna aux bêtes féroces pour être dévoré par eux, mais elles ne s'approchèrent point de lui. Un des bourreaux frappa de sa lance la poitrine du saint, il tomba à terre, perdit beaucoup de sang et rendit son âme à Dieu, le 21 Janvier. Saint Néophyte était âgé de quinze ans et quatre mois. Ses parents allèrent relever son corps et l'inhumèrent dans leur maison secrètement.]

* A fol. 163 r° a.

* 15 ARATZ, 22 Janvier.

Fête des saints martyrs Isaac (*Sahak*, et Joseph de la ville de Karin[1].

Ils étaient de la ville de Karin. Leur père était musulman, leur mère chrétienne; elle enseigna à ses enfants à vivre d'une conduite pieuse et avec le baptême chrétien. Les Arabes (*Hagaratsikh*) augmentant leur puissance et maltraitant les chrétiens, ils décidèrent de se rendre à Constantinople auprès de Léon, l'empereur des Grecs.

Le gouverneur de la ville de Karin, l'ayant appris, les fit arrêter et mettre en prison; il les maltraita longtemps pour leur faire renier le Christ et revenir

1. Erzeroum.

սուրբքն ոչ հաւանեցան ։ Եւ խոստանայր նոցա պարգեւս եւ մեծութիւնս, եւ ոչ այնպէս կարաց հաւանեցուցանել զնոսա ։

Եւ երթեալ հայր նոցա ի բանդն լայր եւ զալիսն առաջի նոցա արկանէր առնել զկամս նոցա, եւ նոքա ոչ լուան նմա այլ հաստատուն կացին ի հաւատս ։ Ապա սրով բարձին զգլուխս նոցա Յունուարի ԻԲ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Անաստասի պարսկի ։

Յամս Հերակլի բարեպաշտ արքային եւ Խոսրովու հրապաշտ արքային Պարսից, էր Անաստասիոս յերկրէն Պարսից, ի գաւառէն Ռազիքայ, ի գեղջէն Ռաշմունի, եւ անուն էր նորա Մագունդատ. եւ էր յարուեստ մոգութեանն ճարտար, եւ դասաւորեալ ի դասս զօրականաց արքային ։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելին Պարսիկքն թշնամութեամբ յաշխարհն Հոռոմոց * եւ պաշարեցին զԵրուսաղէմ եւ առին զնա. վարեցին եւ զսուրբ Խաչն ի գերութիւն * A fol. 163 r° b.
եւ բազում նշանք լինէին ի սրբոյ խաչէն ի Պարս, եւ ել համբաւն ընդ ամենայն երկիրն եթէ. Աստուածն քրիստոնէից աստ եկեալ է ։

3 լայր] եւ աղաչէր *add.* B || 4 Ապա սրով.... մերոյ] Ապա հրամայեաց եւ սրով բարձին զգլուխս նոցա Արացի ԺԵ եւ Յունուարի ԻԲ. եւ ծագեաց լոյս ի վերայ մարմնոյ սուրբ նահատակացն, եւ զահի հարեալ իշխանն հրաման ետ քրիստոնէից՝ եւ թաղեցին զնա պատուով B || 7 արքային] կայսերն B || 13 խաչէն] նշանէն B.

à la religion musulmane, mais les saints n'acceptèrent point. Il leur promit des présents et des honneurs, mais il ne put quand même les persuader.

Leur père se rendit à la prison, versa des larmes, leur représenta ses cheveux blancs pour changer leur volonté, mais ils ne l'écoutèrent point et restèrent fermes dans la foi. On leur trancha ensuite la tête, le 22 Janvier, pour la gloire du Christ notre Dieu.

En ce jour, martyre de saint Anastase (*Anastasi*) le Perse.

Au temps du pieux empereur Héraclius et du roi de Perse Chosroès, l'adorateur du feu, Anastase (*Anastasios*) vivait en Perse, dans la province de Razik[1], au village de Rašmouni[2]; son nom était Magoundat. Il était habile dans l'art de la magie, et avait été enrôlé dans le corps des soldats du roi.

En ces jours-là, les Persans montèrent en ennemis contre le pays des Grecs; * ils assiégèrent Jérusalem et s'en emparèrent, ils emmenèrent aussi en captivité * A fol. 163 r° b.
la sainte croix. De nombreux miracles furent opérés en Perse par la sainte croix, et la renommée se répandit sur toute la terre que le Dieu des chrétiens y était arrivé.

1. Plus exactement Beit Raziq ou Razicène. — 2. La vie métaphrastique porte Ρασνουνή, *P. G.*, CXIV, col. 776, mais Ροσμουνή, col. 785.

Եւ լուեալ Մագունդատ եթէ այդ է խաչն յորում Քրիստոս խաչեցաւ, եւ վառեցաւ գութ սիրոյ նորա ի քրիստոնէութիւն, եւ ուսանէր ի հաւատացելոցն զճշմարիտ բանն Աստուծոյ ։

Առաքեաց Խոսրով Պարսից արքայն ի Քաղկեդոն զօրագլուխ զոմն զօրօք որոյ անուն էր Սայիտ, գնաց զկնի եւ Մագունդատ ։ Եւ յորժամ լուան զօրքն Պարսից ի Քաղկեդոն եթէ Հերակլ թագաւորն Հոռոմոց գնաց ի Պարս եւ աւերեաց եւ առ աւար եւ կործանեաց զամենայն տունն Պարսից, եւ զԽոսրով արքայն սպան, դարձան փախստական յետս ։

Եւ գնաց Մագունդատ ի քաղաքն յԵրապօլիս առ ոմն արծաթագործ, եւ ուսաւ զարուեստ նորա եւ վաստակէր ընդ վարդապետին իւրում ։ Երթայր յեկեղեցին եւ տեսանէր ի դեղագործս զպատկերս սրբոցն, ցանկայր եւ նա այնպիսի շնորհաց հանդիպել ։

Գնաց յԵրուսաղէմ եւ մկրտեցաւ, եւ անուանեցաւ Անաստասիոս ։ Եւ երթեալ ի վանս սրբոյն Սաբայի եղեւ կրօնաւոր, եւ ուսաւ գիր եւ զսաղմոսարանն, եւ էր երագ եւ փոյթ ի կարգ պաշտամանն եւ ի սպասաւորութիւն վանացն ։ Եւ լսէր յընթեռնուլն զվարս սրբոց հարցն եւ զչարչարանս սրբոց մարտիրոսացն, եւ մտադիւրութեամբ
* A fol. 163 v° a. հարցանէր * եւ արտասուօք հայցէր յԱստուծոյ հասանել մասին սրբոցն ։

1 Մագունդատ] տեղեկանայր *add.* B || 17 հայցէր] խնդրէր B.

Magoundat ayant appris que c'était la croix sur laquelle le Christ avait été crucifié, il se développa en lui un sentiment de piété et d'amour envers le christianisme et il s'instruisit auprès des fidèles de la vraie parole de Dieu.

Chosroès, le roi de Perse, envoya à Chalcédoine un chef d'armée, nommé Saïd (*Sayit*), avec des troupes. Magoundat fut de sa suite. Lorsque les troupes persanes apprirent à Chalcédoine que l'empereur des Grecs, Héraclius, avait envahi la Perse, l'avait dévastée, pillée, détruit toute la maison (royale) de Perse et tué le roi Chosroès, ils battirent en retraite en fuyant.

Magoundat se rendit dans la ville de Hiérapolis auprès d'un orfèvre, apprit son métier et travailla avec son patron. Il se rendait à l'église, voyait les images des saints dans les boutiques [1] et aspirait à mériter les mêmes grâces.

Il partit pour Jérusalem, y fut baptisé et reçut le nom d'Anastase. S'étant rendu au couvent de saint Saba, il devint moine et apprit la lecture et le psautier, se montrant prompt et zélé aux offices et au service du couvent. Ce qu'il entendait à la lecture des vies des saints Pères et des supplices des
* A fol. 163 v° a. saints martyrs, il en demandait avec beaucoup d'attention l'explication * et il implorait de Dieu avec larmes d'obtenir le sort des saints.

1. Le mot arménien signifie « chez les apothicaires ». La vie métaphrastique dit qu'Anastase voyait les images des miracles et des souffrances des saints sur les murs de l'église, ce qui est mieux en situation.

Եւ յաւուր միում տեսանէր յերազի զի կանգնեալ էր ի լերին միում, եւ այր մի ետ նմա ոսկի բաժակ լի գինւով, եւ առեալ էարբ։ Եւ յաւուր կիւրակէի հաղորդեցաւ ի սուրբ օրհնացն, եւ հրամանաւ հօր վանացն գնաց ի լեառն ի Գարիզին, եւ անտի ի Կեսարիա Պաղեստինեայ։

Եւ մինչդեռ շրջէր ի մէջ քաղաքին, տեսանէ մոգս պարսիկս զի առնէին զկախարդութիւնս, եւ սկսաւ նախատել զնոսա եւ անգոսնել։ Եւ նոքա հարցանէին նմէ. Ով ես դու։ Եւ նա ասէ. Եւ ես յառաջագոյն յայդմ կախարդութեան էի։ Եւ նոքա ասեն. Ոչ՝ այլ լրտես ես։ Եւ նա ասէ. Ես ծառայ եմ Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, եւ լաւագոյն եմ քան զձեզ։

Եւ կալեալ զնա տարան առ իշխանն իւրեանց Վարազաւան, եւ հրամայեաց նմա քարինս կրել։ Եւ ոմանք յազգականաց նորա ծանեան զնա, եւ յորժամ գիտացին զանխախտելի միտս նորա ի Քրիստոսի հաւատսն, փետէին զմօրուսն եւ անարգէին ասելով նմէ. Ոչ որ եղեւ յազգաց մերոց քրիստոնեայ, եւ դու ընդէ՞ր եղեր։ Եւ կամէին կապել զերանելին եւ հարկանել, եւ նորա յառաջեալ եհան յանձնէն զկրօնաւորական զգեստն եւ եդ մեկուսի, զի մի անարգեսցին կրօնքն յանօրինացն. եւ անկաւ մերկ յերկիր, եւ գանեցին զնա ուժգին։

Եւ լուաւ հայր վանացն յորում էր սուրբ Անաստասիոս եթէ հաստատուն հաւատով

1 *էր*] *ինքն* *add.* B || 7 *ես*] *իցես* B — *կախարդութեան էի*] *եւ այժմ քրիստոնեայ եմ* *add.* B || 10 *Վարազաւան*] *Վարզաւան* B || 11 *նորա*] *իւրոց* B || 14 *զկրօնաւորական*] *զկրօնաւորութեան* B 15 *կրօնքն*] *կրօնաւորքն* B.

Un jour il se vit, dans un rêve, debout sur une montagne ; un homme lui présentait une coupe d'or remplie de vin ; il la prenait et buvait. Le dimanche, il communia aux saintes espèces, et par ordre du prieur du couvent il se rendit à la montagne du Garizin (*Garizin*), et de là à Césarée de Palestine.

Pendant qu'il circulait dans la ville, il aperçut des mages persans qui opéraient des sortilèges, et il se mit à les insulter et les mépriser. Ils lui demandèrent . « Qui es-tu ? » Il leur répondit : « Moi aussi auparavant je participais à cette magie. » Ils lui dirent : « Non, mais tu es un espion. » Il leur répondit : « Je suis le serviteur de mon Seigneur Jésus-Christ, et je suis meilleur que vous autres. »

Ils s'en saisirent et le conduisirent à leur chef, Varazavan, qui lui ordonna de transporter des pierres. Quelques-uns de ses proches le reconnurent, et lorsqu'ils eurent compris que son esprit était inébranlable à la foi du Christ, ils lui arrachèrent la barbe et l'insultèrent en disant : « Personne de nos ancêtres n'a été chrétien, pourquoi l'es-tu devenu ? » Ils voulaient attacher le bienheureux et le frapper ; mais lui, les devançant, quitta l'habit religieux, le mit de côté pour que la religion ne fût insultée par ces impies, et se jeta nu à terre ; on le frappa vigoureusement à coups de bâton.

Le prieur du couvent, où était saint Anastase, ayant appris que, ferme

* A fol. 163 v° b. Համբերեաց գանիցն, ուրախ եղեւ յոյժ, եւ * գրեաց առ նա քաջութեամբ համբերել տանջանացն. եւ առաքեաց երկուս կրօնաւորս զի կացցեն առ նա եւ մխիթարեսցեն զնա ։

Եւ արկին զսուրբն ի բանդ, եւ ընդ հրէի միում կապեցին ի մի շղթայս ։ Եւ ի մէջ գիշերի տեսանէ հրէայն զդուռն բանդին բացեալ, եւ շուրջ զսրբովն արս սպիտակազգեստս եմփորոնով որպէս եպիսկոպոսք, եւ ունէին խաչ ի ձեռս իւրեանց, եւ երիտասարդ մի բուրվառով զի խնկէր նոցա. եւ տեսանէ զերեսս սրբոյն Անաստասիոսի փայլուն իբրեւ զլոյս ։ Եւ ասէ հրէայն. Սուրբ է Աստուած՝ հրեշտակք իցեն սոքա ։

Եւ ընդ առաւօտն հանին զսուրբն ի բանդէն, եւ բազում խոստմամբք ողոքէին դառնալ ի քրիստոնէական հաւատոյն. եւ ամենեւին լսել ոչ կամեցաւ ։

Եւ յետ տօնի սրբոյ Խաչին կապեցին զսուրբն եւ տարան ի Պարս, եւ արկին ի բանդ ։ Եւ առաքեաց առ նա արքայն Պարսից իշխանս եւ մոգպետս որք քաղցրութեամբ խրատ տային նմա դառնալ յառաջին մոգութիւնն եւ լինել զօրական ։ Եւ նա անարգեաց եւ նզովեաց զպարսկական դաւանութիւնն, եւ ամօթալից դարձոյց զնոսա առ արքայն ։

Եւ առաքեաց ի բանդն եւ ծաղկեցին զնա ուժգին, եւ հանին ի բանդէն եւ կախեցին զմիոյ ձեռանէն, եւ վէմ մի կապեցին յոտսն, եւ ապա իջուցին եւ տարան ի գետն եւ առաջի նորա խեղդեցին այլ եւս եօթանասուն քրիստոնեայս վասն Քրիստոսի հաւա-

6 Անաստասիոսի] Անաստասայ B.

* A fol. 163 v° b. dans la foi, il avait enduré les coups, eut une grande joie et * lui écrivit d'endurer bravement les supplices; et il lui envoya deux religieux pour l'assister et le consoler.

On mit le saint en prison, et on l'attacha avec un juif aux mêmes fers. Au milieu de la nuit, le juif vit la porte de la prison ouverte, et autour du saint des hommes habillés de blanc, portant l'omophorion, comme les évêques, et tenant une croix à la main, tandis qu'un jeune homme avec un encensoir les encensait. Il vit aussi le visage de saint Anastase (*Anastasiosi*) resplendissant comme la lumière. Le juif se dit : « Dieu est saint, ce doit être des anges. »

Au matin, on fit sortir le saint de la prison et on le pria avec force promesses de se détourner de la foi chrétienne ; mais il ne voulut rien entendre.

Après la fête de la sainte Croix on lia le saint et on le conduisit en Perse, où on le jeta en prison. Le roi de Perse lui envoya des princes et des chefs de mages qui lui conseillèrent avec douceur de revenir à son ancienne magie et d'être soldat. Il insulta et maudit la religion persane et les renvoya honteux auprès du roi.

Il (le roi) envoya à la prison des hommes qui le frappèrent violemment; ensuite, l'ayant sorti de la prison, ils le suspendirent par une main et attachèrent une grosse pierre à ses pieds; puis, l'ayant descendu, ils le conduisirent au fleuve et en sa présence ils y noyèrent soixante-dix autres chrétiens pour la

տոյն ։ Ընկեցին եւ զսուրբն ի գետն եւ դարձեալ հանին ի գետոյն եւ * հատին զգլուխ նորա Յունուարի ԻԲ ։ Եւ կրօնաւորքն որք զկնի գնային, եւ որդիքն Յեզդանայ՝ առին զմարմին սրբոյն Անաստասայ, պատեցին մաքուր կտաւօք եւ եդին յեկեղեցւոջ սրբոյն Սարգսի, մերձ ի գեօղն Վեթսաղոն ։ * A fol. 16 r° b.

Յայսմ աւուր սուրբն Պանսոփոս՝ որ թարգմանի ամէնիմաստ՝ մարտիրոսացաւ ։

Էր սա քրիստոնեայ եւ մեծատուն յոյժ, եւ թողեալ զամենայնն՝ կրօնաւորեցաւ. ել ի լեառն եւ արգելաւ ի խցի եւ ճգնէր խստակրօն վարուք ամս քսան եւ եօթն ։

Եւ յաւուրս Դեկոսի արքային բազում չարչարանս կրեաց յԱղեքսանդրիա քաղաքին ի դատաւորէն Լուկիոսէ, եւ զՔրիստոս ոչ ուրացաւ, եւ կատարեցաւ սրով վասն անուանն Քրիստոսի ։

[B * Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս Զապէլ թագուհի առաջինն ։ * B p. 42 a.

Էր սա դուստր Լեւոնի արքայի եւ կին թագաւորին Հեթմոյ, առաքինի յոյժ եւ աղքատասէր, որով սիրելի էր ամենեցուն ։ Եւ յորժամ հիւանդացաւ՝ յառաջ քան զամենայն պատրաստեաց զանձն բարի մահուամբ ելանել յաշխարհէ, եւ ընկալաւ զսուրբ խորհուրդն ի թոշակ վերջին. եւ լուաւ հոգւով ձայն յերկնից որ ասէր. Եկ

4 Վեթսաղոն] փառաւորելով զՔրիստոս *add.* B || 5 թարգմանի] ի հայ *add.* B || 6 Էր սա... կրօնաւորեցաւ] Էր սա յԱղեկսանդրիա քաղաքէն՝ որդի Նեղոսի Անթիպատրոսի. որ ի մեռանել հօր իւրոյ մնաց նմա մեծութիւն եւ զանձ բազում. բայց թողեալ նա զամենայն B.

foi au Christ. Ils jetèrent aussi le saint dans le fleuve, mais ils le retirèrent ensuite du fleuve et * lui tranchèrent la tête, le 22 Janvier. Les religieux qui l'avaient suivi et les fils de Hesdan[1] enlevèrent le corps de saint Anastase (*Anastasay*), l'ensevelirent de linge propre et le déposèrent dans l'église de saint Serge, près du village de Bethsalon (*Vetsalon*). * A fol. 164 r° a.

En ce jour, fut martyrisé saint Pansophos, nom qui se traduit « très sage ».

Il était chrétien et très riche, mais il abandonna tout, se fit religieux, se rendit à la montagne et s'enferma dans une cellule où il mena une vie austère et ascétique pendant vingt-sept ans.

Aux jours de l'empereur Dèce, il eut à subir beaucoup de tortures dans la ville d'Alexandrie, par le fait du juge Lucius, mais il ne renia pas le Christ et fut mis à mort par le glaive pour le nom du Christ.

[B * En ce jour, reposa dans le Christ la reine Zabel I[re]. * B p. 42 a.

Elle était fille du roi Léon et femme du roi Héthoum, très vertueuse, amie des pauvres, et aimée par tous. Étant tombée malade, avant tout, elle se prépara à quitter cette terre par une bonne mort, reçut le saint sacrement et l'extrême-onction, et entendit, en son âme, une voix du ciel qui lui dit :

1. Vie grecque : Ἰεσδίν, *P. G.*, CXIV, col. 808.

աղաւնի իմ, եկ սիրելի իմ, կատարեալ իմ ։ Եւ առժամայն անպատմելի խնդութեամբ լցաւ հոգի նորա, եւ զուարթացան երեսք նորա, մինչեւ զարմանալ մերձակայիցն որք հայէին ի նա ։ Եւ պատմեաց երանելի թագուհին զաստուածահրաւէր կոչումն իւր զոր լուաւ, եւ իսկ եւ իսկ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

Եւ ժողովեալ բազմութիւնք եկեղեցական դասուց եւ Կոստանդին կաթուղիկոս եւ թագաւորն Հեթում եւ արքայորդիքն եւ իշխանք եւ ամենայն բնակիչք քաղաքին, եւ մեծաւ հանդիսիւ բարձեալ տարան զմարմին նորա, եւ եդին ի տապանի ։]

Արացի ԺԶ եւ Յունուարի ԻԳ ։ Տօն է Կղեմայ եպիսկոպոսին
Անկուրիոյ եւ Ագաթանկեղոսի ։

Յամս Դիոկղետիանոսի կռապաշտ արքային՝ յետ Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի երկերիւր յիսուն եւ վեց ամաց, սուրբն Կղեմէս հեթանոս հօր զաւակ էր եւ քրիստոնեայ մօր, որոյ անուն էր Եփրոսինէ, որ սնուցեալ էր զորդին իւր բարեպաշտ հաւատով. եւ յառաջագուշակ մարգարէութեամբ ասաց վասն որդւոյն իւրոյ եթէ վասն Քրիստոսի մարտիրոսանայ. եւ մեռաւ բարի խոստովանութեամբ

8 Տօն ... Ագաթանկեղոսի] Վկայութիւն սուրբ եւ բազմաչարչար վկային Կղեմայ եպիսկոպոսին Անկիւրացւոյ եւ Ագաթանկեղոսի, եւ որոց ընդ նոսա B.

« Viens, ma colombe; viens, ma chère, ma parfaite. » Aussitôt son âme fut remplie d'une joie ineffable, son visage rayonna de joie au point d'émerveiller les personnes présentes qui la contemplaient. La bienheureuse reine leur raconta son rappel par l'invitation divine qu'elle avait entendue et rendit aussitôt son âme à Dieu[1].

La multitude des ordres ecclésiastiques avec le catholicos Constantin, le roi Héthoum, les fils du roi, les princes et tous les habitants de la ville s'assemblèrent, transportèrent son corps avec grande pompe et le déposèrent au tombeau.]

16 ARATZ, 23 Janvier.

Fête de Clément (*Klemay*), évêque d'Ancyre, et d'Agathange.

Aux jours de Dioclétien, l'empereur idolâtre, deux cent cinquante-six ans après l'Ascension de Notre-Seigneur Jésus-Christ, vivait saint Clément (*Klemès*), fils de père infidèle et de mère chrétienne nommée Euphrosyne (*Ephrosinè*). Celle-ci éleva son fils dans la piété et la foi et annonça pour son fils, par une prédiction prophétique, qu'il serait martyrisé pour le Christ. Elle mourut en

1. 12 Janvier 1252, d'après F. TOURNEBIZE, *Histoire politique et religieuse de l'Arménie*, p. 208; *Revue de l'Orient Chrétien*, IX (1904), p. 227.

թողեալ զորդին իւր ամաց երկոտասանից, եւ յանձն արար զնա ի կին մի քրիստոնեայ մեծատուն Սոփիա անուն : * Եւ նա սնոյց զնա եւ ուսոյց նմա գիր, եւ արար զնա կրօնաւոր : * A fol. 164 r° b.

Եւ եղեւ սով սաստիկ եւ ժողովէր Կղեմէս որբ մանկունս հեթանոսաց, եւ կերակրէր զնոսա եւ ուսուցանէր նոցա զՔրիստոսի հաւատն եւ մկրտէր զնոսա : Եւ յորժամ եղեւ քսան ամաց ձեռնադրեցաւ եպիսկոպոս Անկուրիոյ : Եւ աղդ արարին վասն նորա Դոմետիանոսի դատաւորին. եւ կացեալ առաջի խոստովանեցաւ Կղեմէս զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ կախեալ զփայտէ քերեցին զամենայն մարմին նորա մինչեւ յոսկերսն, եւ խորտակեցին զբերանն եւ զկզակն, եւ յուղարկեցին կապանօք ի Հռոմ առ Դիոկղետիանոս թագաւորն : Եւ զարմացաւ ընդ համբերութիւն սրբոյն, հրամայեաց եւ եդին առաջի Կղեմայ գանձս եւ սուսերս. եւ նորա տեսեալ՝ ոչ զանձին ցանկացաւ եւ ոչ ի սուսերացն երկեաւ, այլ համարձակութեամբ խոստովանեցաւ զճշմարիտ Որդին Աստուծոյ :

Կապեցին զսուրբն յանիւս եւ հոլովեցին ընդ զառիվայր տեղիս. եւ կոտորեցաւ ամենայն մարմինն, եւ լուծին յանուոյն եւ արկին ի բանդ : Եւ բազմութիւն արանց եւ կանանց մտին ի բանդն, տեսին զերեսս նորա պայծառ իբրեւ զլոյս. եւ հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան ի Կղեմայ : Եւ ի մէջ գիշերին իջեալ հրեշտակ Տեառն եւ կերակրեաց զնոսա :

1 արար] առնելով B || 17 մտին] մտեալ B || 18 Եւ ի մէջ գիշերին… կերակրեաց զնոսա *om.* B.

bonne confession, laissant son fils âgé de douze ans aux soins d'une riche chrétienne nommée Sophie. * Celle-ci l'éleva, lui apprit à lire et le fit moine. * A fol. 164 r° b.

Il y eut une grande disette et Clément rassembla les enfants orphelins des païens, les nourrit, leur enseigna la foi au Christ et les baptisa. Lorsqu'il eut vingt ans, il fut sacré évêque d'Ancyre. On le dénonça au juge Dométianus, et, mis en sa présence, Clément confessa le nom de Notre-Seigneur Jésus-Christ.

On le suspendit à un arbre et on lui déchira tout le corps jusqu'aux os, on lui brisa la bouche et le menton et on l'envoya, chargé de fers, à Rome, à l'empereur Dioclétien. Celui-ci fut étonné de l'endurance du saint, donna des ordres et fit présenter à Clément des trésors et des épées. A leur vue, il ne désira pas les trésors, ni ne craignit les épées, mais confessa avec hardiesse le vrai Fils de Dieu.

On attacha le saint à une roue qu'on fit rouler sur des endroits en pente : tout son corps fut brisé; on le détacha de la roue et on le jeta en prison. Une multitude d'hommes et de femmes ayant pénétré dans la prison aperçurent son visage resplendissant comme la lumière, et crurent au Christ et furent baptisés par Clément. La nuit, l'ange du Seigneur descendit et les nourrit.

Եւ լուեալ Դիոկղետիանոսի առաքեաց ի բանդն, եւ զամենեցուն հատին զգլուխսն, զարանց եւ զկանանց եւ զտղայոց եւ զամենեցուն որք հաւատացին * ի Քրիստոս ։ Եւ մի ոմն ի նոցանէ փախեաւ՝ որոյ անուն էր Ագաթանկեղոս, որ թարգմանի բարի հրեշտակ ։

* A fol. 164 v° a.

Եւ զսուրբն Կղեմէս գանեցին, եւ հրացեալ շամփրովք զկողսն այրեցին, եւ կապանօք յուղարկեցին ի Նիկոմիդիա քաղաքն առ Մաքսիմիանոս թագաւորն ։ Եւ եկեալ նոյնժամայն աղաղակեաց Ագաթանգեղոս. Քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ ։ Եւ կապեցին զնա եւ արկին ի նաւ եւ տարան ընդ սրբոյն Կղեմայ ի Նիկոմիդիա, զոր տեսեալ Կղեմայ ուրախ եղեւ յոյժ ։

Եւ յորժամ հասին ի Նիկոմիդիա, քննեաց զնոսա Մաքսիմիանոս, եւ ետես զի ամենեւին ոչ դառնային՝ տայ զնոսա յԱգրիպինէ եպարքոսն ։ Եւ նորա առեալ կախեաց զնոսա, եւ սրով կտորեաց զմարմինս նոցա, եւ իջուցեալ ի կախաղանէն արկ ի բանդ ։ Եւ ամենեքեան որ ի բանդին էին արգելեալք, տեսին զհամբերութիւն սրբոցն եւ զսքանչելիսն զոր առնէին, հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան ի Կղեմայ, եւ աղօթիւք նորա բացաւ դուռն բանդին եւ ելին ամենեքեան եւ գնացին ։

Եւ զսուրբսն հանին եւ ձգեցին կերակուր գազանաց. եւ գազանքն ոչ մերձեցան,

2 եւ զամենեցուն *om.* B || 3 թարգմանի] ի հայ լեզու *add.* B || 13 ամենեքեան] ամենայն պատժաւորք հեթանոսաց B || 16 ձգեցին] ընկեցին B.

Ce qu'ayant appris, Dioclétien envoya à la prison (des bourreaux), qui tranchèrent la tête à tous, hommes, femmes et enfants, à tous ceux qui avaient cru * au Christ. Un d'eux seulement put s'échapper, il se nommait Agathange, nom qui signifie bon ange.

* A fol. 164 v° a.

On frappa saint Clément et on lui brûla les côtes avec des broches rougies; ensuite on l'expédia, chargé de fers, à la ville de Nicomédie, à l'empereur Maximien. A ce moment arriva Agathange qui se mit à crier : « Je suis chrétien et serviteur du Christ. » On le lia, on l'embarqua sur un vaisseau avec saint Clément et on les conduisit à Nicomédie. Ce que voyant, Clément fut rempli de joie.

Lorsqu'ils furent arrivés à Nicomédie, Maximien les interrogea, et voyant qu'ils ne revenaient pas de leur foi, il les remit entre les mains de l'éparque Agrippinus. Celui-ci les fit suspendre, on déchira leurs corps à coups d'épée; ensuite les ayant descendus de la potence, on les jeta en prison. Tous ceux qui étaient détenus dans la prison, témoins de la patience des saints et des miracles qu'ils opéraient, crurent au Christ et furent baptisés par Clément, puis sur ses prières les portes de la prison s'étant ouvertes, tous sortirent et s'en allèrent.

On fit sortir les saints (de la prison) et on les jeta en pâture aux fauves.

այլ երթեալ երկիր պագին նոցա եւ լիզուին զոտս նոցա ։ Եւ տեսեալ ամբոխին դիմեցին ի վերայ եպարքոսին եւ քարկոծեցին եւ հաւատացին ի Քրիստոս ։

Եւ ապա արկին զսուրբսն ի խորգ եւ արկին ի ծով ։ Եւ մտեալ քրիստոնէիցն հանին զնոսա ի ծովէն կենդանի եւ տարան ի տունս իւրեանց եւ կերակրեցին . * եւ շրջէին ի մէջ քաղաքին ։ * A fol. 164 v° b.

Եւ հրամայեաց Մաքսիմիանոս եւ տարան զսուրբսն կապանօք յԻմիսոն քաղաք առ Դոմետիանոս դատաւորն ։ Եւ նորա շատ քննեալ զսուրբսն, ետես զնոսա հաստատուն հաւատով ի Քրիստոս, հրամայեաց եւ արկին զնոսա ի կիր եւ կացուցին պահապանս ։ Եւ ի մէջ գիշերին տեսին լոյս ի վերայ նոցա, եւ առ ժամայն պահապանքն մերկացան եւ անկան ի կիրն ընդ սուրբսն, եւ հաւատացին ի Քրիստոս ։ Եւ հատին առժամայն զգլուխս նոցա ։

Եւ սուրբքն ելին ամբողջ ի կրէն , եւ եդին ի վերայ հրացեալ երկաթի մահճաց, եւ ցանէին ի վերայ ձէթ եւ ծծումբ եւ ձիւթ, եւ սուրբքն ննջեցին ի վերայ հրոյն, եւ տեսին զՏէր զի ասէր ցնոսա . Մի երկնչիք զի ես ընդ ձեզ եմ ։

1 այլ երթեալ ... ի Քրիստոս *om.* B || 3 արկին] ընկեցին B || 6 կապանօք] յԱնկիւրիա առ Կուռիղոս դատաւորն . եւ նա ջեռոյց սաղաւարտ եւ եդ ի գլուխս նոցա, եւ ոչ կարաց հաւանեցուցանել . եւ հրամանաւ արքունի կապանօք առաքեաց *add.* B || 9 լոյս] պայծառ *add.* B || 11 եւ հատին առժամայն զգլուխս նոցա] եւ եկեալ անօրինաց հատին զգլուխս պահապանացն B || 12 Եւ սուրբքն ելին ամբողջ ի կրէն] Իսկ զսուրբն Կղեմէս եւ Ագաթանգեղոս հանին ամբողջ ի փռանէ կրոյն B.

Toutefois, les fauves ne les saisirent point, mais vinrent se prosterner devant eux et léchèrent leurs pieds. A cette vue, les assistants assaillirent l'éparque, le lapidèrent, et crurent au Christ.

On mit les saints dans un sac et on les jeta à la mer. Les chrétiens, s'étant jetés à la mer, les retirèrent vivants, les conduisirent chez eux et leur donnèrent à manger. * Ils se promenèrent à travers la ville. * A fol. 164 v° b.

Maximien ordonna de conduire les saints chargés de fers à la ville d'Amisos (*Imison*)[1], au juge Dométianus. Celui-ci, ayant longuement interrogé les saints et les voyant fermes dans la foi au Christ, ordonna de les jeter dans de la chaux. On mit des gardes auprès d'eux. La nuit, les gardes, ayant aperçu une lumière au-dessus (des saints), se dépouillèrent de leurs vêtements et se jetèrent dans la chaux auprès des saints. Ils crurent au Christ. On leur trancha aussitôt la tête.

Les saints sortirent indemnes de la chaux; on les étendit sur des lits de fer rougis, on les arrosa d'huile, de soufre et de poix; les saints s'endormirent sur les flammes, et virent le Christ qui leur disait : « Ne craignez pas, car je suis avec vous. »

1. Ville du Pont.

Եւ տեսեալ դատաւորին թէ այնչափ տանջանքն չյաղթեցին նոցա, առաքեաց զնոսա ի Տարսոն քաղաքն կապանօք առ Մաքսիմիանոս դատաւորն ։ Եւ երթային ընդ անջրդի ճանապարհ, նուաղեցան զօրականքն ի ծարաւոյն որք տանէին զսուրբսն, եւ Կղեմայ աղօթեալ՝ բղխեցոյց ջուր եւ արբին ամենեքեան եւ հաւատացին ի Քրիստոս, եւ ձայն եղեւ յերկնից եւ ասէ. Ով Կղեմէ, զամենայն խնդիրս քո կատարեցից, զօրացի՛ր եւ քաջ լե՛ր ։

Եւ երթեալ ի Տարսոն, հարցանէր Մաքսիմիանոս դատաւորն եթէ դառնան եւ զոհեն կռոցն ։ Ասէ Կղեմէս. Քրիստոնեայ թագաւորս յարուցանէ Աստուած որ կոր-
* A fol. 165 r° a. ծանեսցեն զբագինս կռոցն, եւ դարձուսցեն * զամենայն երկիր յաստուածգիտութիւն ։ Եւ բարկացեալ ընդ բանսն դատաւորն արկանէ զնոսա ի բորբոքեալ հուր. եւ բուրեաց անուշահոտութիւն ի հրոյն, եւ ելին սուրբքն անկիզելիք ի հրոյն եւ գնացին ի մէջ քաղաքին ։ Եւ կալեալ տարան զնոսա ի բանդն, եւ էին յարգելանս ամս երկուս ։

Եւ յետ երկուց ամաց հանին ի բանդէն, եւ ետուն յոմն Ափրոդիտոս անուն, եւ տարեալ զնոսա ի տուն իւր եդ առաջի նոցա բազմածախս սեղան, զի կերիցեն եւ արբցեն եւ արասցեն զկամս թագաւորին յորժամ ուրախասցին ։ Իսկ սուրբքն ամենեւին

2 Եւ երթային ընդ անջրդի ճանապարհ] Եւ ի ճանապարհին երթային ընդ անջրդի տեղին B || 4 բղխեցոյց] բղխեաց B || 5 եւ ձայն եղեւ... քաջ լեր *om.* B || 8 Ասէ Կղեմէս] Ասեն սուրբքն. Քա՛ւ լիցի ։ Եւ յայնժամ մարգարէացաւ սուրբն Կղեմէս եւ ասէ. Եթէ յետ սակաւուց *add.* B || 9 յաստուածգիտութիւն] յաստուածգիտութեան օրէնս B || 11 եւ բուրեաց ... կալեալ] եւ խնամօքն Աստուծոյ պահեցան անվնաս, եւ ապա առեալ B.

Le juge, voyant que tant de tortures ne les avaient pas vaincus, les envoya chargés de fers à la ville de Tarse, au juge Maximien. Comme ils cheminaient par des routes privées d'eau, les soldats qui accompagnaient les saints défaillirent de soif; Clément, par ses prières, fit sourdre de l'eau, ils en burent tous et crurent au Christ. Une voix venant du ciel dit : « O Clément (*Klemē*), tout ce que tu demanderas te sera accordé, prends courage et sois vaillant. »

Lorsqu'ils furent arrivés à Tarse, le juge Maximien leur demanda s'ils se convertissaient et immolaient aux idoles. Clément répondit : « Dieu suscitera
* A fol. 165 r° a. des rois chrétiens qui ruineront les temples des idoles et feront revenir * toute la terre à la reconnaissance de Dieu. » Le juge, irrité de ces propos, ordonna de les jeter dans un feu ardent. Une odeur suave se dégagea des flammes et les saints sortirent des flammes sans aucune atteinte de brûlure et allèrent pendant ville. On les arrêta et on les conduisit en prison et ils y furent détenus par la deux ans.

Après deux ans, on les tira de prison et on les remit entre les mains d'un certain Aphrodisius (*Aphroditos*), qui les conduisit chez lui et leur fit servir un fastueux repas, afin qu'ils mangeassent et bussent et fissent la volonté de l'empereur lorsqu'ils seraient pris de gaîté. Mais les saints ne touchèrent à

ոչ ճաշակեցին եւ ոչ աչօք իւրեանց նայեցան ի կերակուրսն ։ Եւ հրամայեաց դատաւորն եւ կապեցին վէմս ի պարանոց նոցա, եւ անցուցին ընդ մէջ քաղաքին ։

Եւ առաքեցին դարձեալ երկիցս անգամ յԱնկուրիա առ Լուկիոս դատաւորն, եւ արկին ի բանդ եւ պնդեցին զոտս նոցա ի փայտի ։ Եւ ընդ առաւօտն կոչեաց առ ինքն զԱգաթանգեղոս միայն, եւ ողոքանօք եւ խոստմամբ ջանայր պատրել զվկայն Քրիստոսի. եւ տեսեալ եթէ ոչ լսէ, հրամայեաց եւ անցուցին ընդ ականջս նորա շամփուր երկայն եւ հանին ընդ միւս այլ ականջն, եւ ապա հատին զգլուխն. զոր առեալ հաւատարիմ կինն Սոփիա, թաղեաց պատուով յատրիճանս եկեղեցւոյն իւրոյ ։ Եւ լուեալ սրբոյն Կղեմայ զկատարումն սրբոյն Ագաթանգեղոսի գոհացաւ զԱստուծոյ ։

Իսկ զսուրբն Կղեմէս կապեցին ի վէմ մի, եւ այնչափ հարին մինչեւ * վէմն եւ հողն լցաւ արեամբ, եւ տարան ի բանդն. եւ յամենայն գիշեր լոյս ծագեաց ի բանդին, որչափ էր յարգելմանն ։ * A fol 165 r° b.

Եւ հասեալ տօն սրբոյ Յայտնութեանն Տեառն, գնաց հաւատարիմն Սոփիա առ բանդապանսն, եւ տուեալ գանձս, եհան ի գիշերի զսուրբն Կղեմէս եւ տարեալ յեկեղեցի իւր, ագոյց նմա զզգեստ եպիսկոպոսութեան եւ եմփորոն ի վերայ ուսոյն, տուեալ նմա եւ զսուրբ աւետարանն եւ բուրվառ անոյշ խնկովք ։ Եւ նորա տարածեալ զձեռս իւր գոհացաւ զԱստուծոյ եւ խնդրէր ողորմութիւն յԱստուծոյ վասն

4 արկին ի բանդ եւ պնդեցին] եւ արկանել ի բանդ եւ պնդել B || 13 Տեառն] Քրիստոսի B || 14 բանդապանսն] բանդապետսն B || 17 յԱստուծոյ *om.* B.

rien et ne jetèrent même pas un regard aux plats. Le juge ordonna alors de leur attacher des pierres au cou et de les promener à travers la ville.

Ils furent envoyés pour la deuxième fois à Ancyre, au juge Lucius. On les jeta en prison et on attacha leurs pieds à un tronc. Le lendemain matin, (le juge) manda auprès de lui Agathange seul, et s'efforça par de douces paroles et des promesses de tromper le martyr du Christ, mais voyant que celui-ci ne l'écoutait point, il ordonna de lui passer dans l'oreille de longues broches et de les faire sortir par l'autre oreille. Ensuite on lui trancha la tête, que Sophie, une femme fidèle, recueillit et enterra avec honneur, sous les marches de son oratoire. Saint Clément, ayant appris la mort de saint Agathange, rendit grâces à Dieu.

Quant à saint Clément, on l'attacha à une pierre et on le frappa à tel point que * la pierre et le sol furent inondés de sang. puis on le reconduisit en prison. Toutes les nuits, une clarté brilla dans la prison tant qu'il fut aux arrêts. * A fol. 165 r° b

La fête de la sainte Épiphanie du Seigneur étant arrivée, la fidèle Sophie alla trouver les geôliers, leur donna de l'argent et fit sortir pendant la nuit saint Clément, qu'elle conduisit à son oratoire. Elle lui fit revêtir les vêtements épiscopaux et l'homophorion sur les épaules, lui mit dans les mains l'évangile et un encensoir avec de l'encens suave. (Clément) étendit ses bras pour rendre grâces à Dieu, et demanda pitié à Dieu pour toute la terre et pour tous ceux

ամենայն աշխարհի, եւ վասն այնոցիկ որ առնեն զյիշատակս նորա ։ Եւ փակեցին զդրունսն զի երկնչէին ի յարձակմանէ անօրինացն ։ Եւ կատարեալ զամենայն աստուածային խորհրդածութիւնսն քաջալերէր զհաւատացեալսն հաստատուն կալ ի Տէր, եւ ասէր. Դադարելոց է հալածումն յերկրէ, եւ լոյս աստուածգիտութեան ծագեսցի ։

Եւ մինչդեռ սուրբն Կղեմէս զպարանոցն ի խոնարհ ունէր եւ զաղօթսն մատուցանէր ի վերայ պատուական եւ սուրբ մարմնոյ եւ արեան Քրիստոսի, դիմեցին անօրէնքն յեկեղեցին յանկարծակի. եւ այր մի որ էր իշխան քաղաքին, անուն Աղեկսանդրոս, սրով եհատ զգլուխ սրբոյն Կղեմայ, եւ զսուրբ խորհուրդսն ցրուեաց եւ զսեղանն կործանեաց, եւ զերկուս սարկաւագացն որ ընդ սրբոյն Կղեմայ էին ի սպասաւորութիւն սրբոյ
* A fol. 165 v° a. պատարագին, Քրիստափոր եւ Խարիտոն, եհատ եւ զնոցա գլուխսն ։ Իսկ * մարտիրոսասէր կինն Սոփիա պատեաց մաքուր կտաւովք զմարմին սրբոյն Կղեմայ, եւ սաղմոսիւք եւ օրհնութեամբ հանգուցին ի տեղւոջն որ կոչի Կոյփատոյ. եւ զերկուս սարկաւագունսն մերձ առ նա յայլում տապանի ։

Վկայեաց սուրբն Կղեմէս առ թագաւորօքն Դիոկղետիանոսիւ եւ Մաքսիմիանոսիւ, եւ առ իշխանօքն Դոմետիանոսի, Ագրիպպայ, Կիւրիկոյ, Մաքսիմեայ, Լուկեայ, Աղեկսանդրեայ զամս քսան եւ ութ, յԱնկիւրիա՝ երիցս անգամ, ի Հռոմ, ի Նիկոմիդիա,

1 այնոցիկ] որ յիշեն եւ *add.* B || 2 զի երկնչէին] երկուցեալք B -- անօրինացն] անօրէն կռապաշտիցն B || 3 ի Տէր] ի հաւատսն B || 5 եւ զաղօթսն մատուցանէր *om.* B || 8 զսեղանն] սուրբ *add.* B || 10 մարտիրոսասէր] վկայասէր B || 12 Կոյփատոյ] Կոյփփտոյ B || 13 տապանի] եւ առնէ Տէր անպակաս բժշկութիւնս հիւանդաց եւ ախտացելոց որք գնան հաւատով յուխտ ի տապան սրբոյն Կղեմայ յեկեղեցւոջ սրբոյ խաչին մինչեւ ցայսօր *add.* B.

qui font mémoire de lui. On ferma les portes de crainte d'une attaque des impies. Après avoir accompli tout le mystère divin, il encouragea les fidèles à demeurer fermes dans le Seigneur, et dit : « La persécution prendra fin sur la terre et la lumière de la science de Dieu resplendira. »

Pendant que saint Clément tenait le cou baissé et faisait ses prières sur les précieux et saints corps et sang du Christ, les impies se précipitèrent dans l'oratoire, et un homme, qui était le gouverneur de la ville, nommé Alexandre, trancha de son épée la tête de saint Clément, dispersa les saints mystères, renversa et brisa l'autel, et trancha aussi la tête aux deux diacres Christophe (*Khristaphor*) et Chariton qui assistaient saint Clément dans le service du saint
* A fol. 165 v° a. sacrifice. * Sophie, l'amie des martyrs, enveloppa de linge propre le corps de saint Clément et le fit inhumer avec psalmodies et bénédictions à l'endroit appelé Cryptos (*Koyphatoy*). Elle fit mettre les deux diacres près de lui dans une autre tombe.

Saint Clément subit le martyre au temps des empereurs Dioclétien et Maximien et des gouverneurs Dométianus, Agrippinus (*Agrippay*), Cyricus, Maximien, Lucius, Alexandre pendant vingt-huit ans, trois fois à Ancyre, à

յԱմիսոն, ի Տարսոն ։ Եւ կատարի տօն սրբոյն Կղեմայ հայրապետին եւ Ագաթանգեղոսի եւ երկուց սարկաւագացն՝ Յունուարի ԻԳ ։

Յայսմ աւուր յիշատակ է երանելւոյն Անդրոնիկոսի եւ ամուսնոյն իւրոյ Աթանասիայ ։

Էր երանելին Անդրոնիկոս ի մեծ քաղաքէն Անտիոքայ, երիտասարդ հասակաւ, արուեստիւ ոսկեգործ եւ արծաթավաճառ եւ պարկեշտ եւ ողորմած. եւ կին իւր Աթանասիա նոյնպէս բարի գործովք ։ Եւ ունէին երկու զաւակս. պատանեակ մի երկոտասան ամաց, եւ դուստր մի տասն ամաց ։ Եւ զամենայն շահ վաստակոց իւրեանց յերիս մասունս բաժանէր. * մասն մի կրօնաւորաց եւ մասն մի աղքատաց եւ մասն մի ի պէտս անձին իւրեանց ։ Եւ ամենայն քաղաքացիքն սիրէին զնոսա, վասն զի էին հանդարտք եւ բարի բնութեամբ ։ * A fol. 165 v° b.

Եւ յամենայն կիւրակէի ժողովէին կրօնաւորս եւ կերակրովք ուրախացուցանէին ։ Եւ յամենայն չորեքշաբաթու աւուր երթայր Աթանասիա ի կանանց բաղանիսն եւ լուանայր զաղքատ կանայս, կերակրէր զնոսա եւ յուղարկէր ։ Նոյնպէս եւ Անդրոնիկոս այր նորա յուրբաթու երթայր ի բաղանիս արանց, եւ լուանայր աղքատ արս ։

Եւ ի միում աւուր հիւանդացան երկու զաւակքն իւրեանց. եւ յետ սակաւ աւուրց մեռան երկոքին ի միում աւուր ։ Եւ մտեալ ի մատուռն տանն իւրեանց անկան

1 հայրապետին *om.* B || 2 սարկաւագացն] Քրիստափորի եւ Խարիտոնի *add.* B || 3 երա-նելւոյն *om.* B || 7 երկոտասան ամաց] երկոտասանամեայ B || 10 հանդարտք] խոնարհք եւ հանդարտք B || 13 կերակրէր] եւ կերակրեալ B.

Rome, à Nicomédie, à Amisos (*Amison*), à Tarse. La fête du saint pontife Clément, d'Agathange et des deux diacres a lieu le 23 Janvier.

En ce jour, commémoration du bienheureux Andronicus et de sa femme Athanasia.

Le bienheureux Andronicus était de la grande ville d'Antioche, jeune homme, orfèvre et argentier de sa profession, modeste et charitable. Sa femme Athanasia était également dévouée aux bonnes œuvres. Ils avaient deux enfants, un garçon de douze ans et une fille de dix ans. Ils partageaient en trois parts le produit de leur travail : * une part pour les moines, une autre pour les pauvres, et une troisième pour leurs besoins personnels. Tous leurs concitoyens les aimaient, car c'étaient des gens paisibles et d'un bon naturel. * A fol. 165 v° b.

Tous les dimanches, ils réunissaient les moines et les réjouissaient d'un bon repas. Tous les mercredis, Athanasia se rendait au bain des femmes, lavait les femmes pauvres, leur donnait à manger et les reconduisait. De même son mari Andronicus, le vendredi, allait au bain des hommes et lavait des hommes pauvres.

Un jour, leurs deux enfants tombèrent malades, et, quelques jours après, moururent tous les deux le même jour. Ils allèrent dans la chapelle de leur

առաջի Փրկչին Քրիստոսի եւ ասեն. Մերկ եկաք յորովայնէ մարց մերոց եւ դարձեալ մերկ ելանեմք յերկրէ. դու ետուր եւ դու առեր, որպէս քեզ հաճոյ է՝ նոյնպէս եւ եղեւ. եղիցի անուն քո օրհնեալ յաւիտեան ։ Եւ յարուցեալ թաղեցին զերկոսին զաւակսն իւրեանց ողբովք եւ գոհութեամբ, ի շիրիմս հարց իւրեանց, յեկեղեցւոջ սրբոյն Յուլիանոսի ։

Եւ յետ քառասուն աւուր խորհուրդ արարեալ բաշխեցին զամենայն ինչս իւրեանց աղքատաց, եւ զամենայն ծառայսն ազատեցին ։ Եւ ի գիշերի գաղտ ելին ի քաղաքէն եւ գնացին յԵրուսաղէմ եւ անտի յԱղեքսանդրիա. եւ մտեալ յեկեղեցի սրբոյն Մինասայ
* A fol. 166 r° a. աղաչով խնդրէին յԱստուծոյ զի * յաջողեսցէ նոցա զճանապարհս փրկութեան ։

Եւ լուան զի ի Սկիւթ լերինն բնակեալ էր մեծ եւ առաքինի ճգնաւոր անապատականն Դանիէլ. գնացին առ նա երկիր պագին եւ պատմեցին զամենայն եղեալսն եւ զխորհուրդս իւրեանց ։ Եւ սուրբն Դանիէլ ծերունին ուսոյց նոցա բանս փրկութեան. եւ գրեաց թուղթ եւ յուղարկեաց զԱթանասիա ի Սավեննիսիստացւոց վանս, առ հրեշտակակրօն կուսան կանայս ։ Եւ զԱնդրոնիկոս կալաւ առ ինքն եւ արար կրօնաւոր, եւ ուսոյց նմա զամենայն ճգնողական վարս անապատաւորաց ։ Եւ արարեալ առ նմա

2 ելանեմք] ելանիցեմքB || 3 քո] տեառն B — զերկոսին զաւակսն իւրեանց] զերկոսեանն B || 6 արարեալ] միաբան *add.* B || 12 Դանիէլ *om.* B || 13 Սավեննիսիստացւոց] կուսանաց B.

maison, se prosternèrent devant le Sauveur Christ et Lui dirent : « *Nous sommes sortis nus du sein de nos mères, et nous quitterons la terre également nus; Tu as donné, et Tu as repris; il nous est arrivé comme il T'a plu; que Ton nom soit béni éternellement*[1]. » Ils se levèrent, enterrèrent leurs deux enfants avec des larmes et des actions de grâces, dans le caveau de leurs ancêtres, dans l'église de saint Julien.

Quarante jours après, s'étant consultés, ils distribuèrent tout leur bien aux pauvres et rendirent la liberté à tous leurs serviteurs. La nuit, ils sortirent secrètement de la ville, se rendirent à Jérusalem et de là à Alexandrie, où ils entrèrent dans l'église de saint Ménas et prièrent Dieu avec sanglots de
* A fol. 166 r° a. leur donner le succès * dans la voie du salut.

Ils apprirent qu'à la montagne de Scété (*Skiut*) habitait le grand et vertueux ascète, l'anachorète Daniel. Ils se rendirent auprès de lui, se prosternèrent devant lui, lui racontèrent tout ce qui les concernait, événements et projets. Le saint vieillard Daniel leur donna des conseils de salut, écrivit une lettre et envoya Athanasia au couvent des Tabennésiotes[2] (*Savenisistatziots*) chez des moniales, vierges de conduite angélique. Il garda auprès de lui Andronicus, le fit moine et lui enseigna tous les usages ascétiques des

1. Job, I, 21. — 2. C'est-à-dire probablement « des Pachomiens », car Tabennisi est le berceau du cénobitisme pachomien. Ce nom se trouve dans les actes syriaques, BEDJAN, *Acta Martyrum et Sanctorum*, t. VI, Paris et Leipzig, 1896, p. 411.

Անդրոնիկոս ամս երկոտասան. եւ ապա աղաչեաց զսուրբ ծերունին զի թողցէ նմա գնալ յԵրուսաղէմ, զի երկիր պագցէ ի սուրբ տեղիսն ։ Եւ հրամայեաց նմա երթալ ։

Եւ յորժամ երթայր ընդ Եգիպտոս գերիս աւուրս յանապատի եւ ի բազում խորշակէն տօթացուն եւ նստաւ ի ստուերս փշաբեր ծառոյ վասն սակաւիկ մի հանգչելոյ, եւ ահա կինն իւր Աթանասիա առն զգեստիւք անցանէր. զի եւ նա երթիցէ յԵրուսաղէմ կալ յաղօթս. եւ ըստ հրամանին Աստուծոյ տեսեալ զայրն իւր զԱնդրոնիկոս՝ ծանեաւ եւ տուեալ ողջոյն նստաւ մերձ. բայց Անդրոնիկոս զնա ոչ ծանեաւ, զի նա ի բազում ճգնութենէն յոյժ թարշամեալ էր եւ տկարացեալ, եւ տգեղացեալ գեղ երեսացն եւ որպէս Եթովպացի լեալ ։

Ասէ Անդրոնիկոս. Ո՞ւր երթաս աբեղայ, * եւ զի՞նչ անուն է քո ։ Եւ նա ասէ. Ես երթամ յԵրուսաղէմ վասն աղօթից, եւ է անուն իմ Աթանասիոս ։ Ասէ Անդրոնիկոս. Եւ ես անդ երթալոց եմ, եթէ կամիս ի միասին լռութեամբ երթիցուք ։ Եւ նա ասէ. Որպէս հրամայես լռութեամբ երթիցուք ի միասին ։ Եւ զօրացեալք ի միոս իւրեանց սաղմոսելով երթային, եւ մինն զմիւսոյն ոչ լսէր, եւ ամենեւին ընդ միմեանս ոչ խօսեցան եւ ոչ բան մի ։ Եւ յերիս աւուրս հասին յԵրուսաղէմ, երկիր պագին սուրբ տեղեացն, եւ շրջեցան ի վանորեայսն առ սուրբ հարսն, եւ ապա դարձան յԱղեկսանդրիա ։ * A fol. 166 r° b.

2 երկիրպագցէ] եւ աղօթեսցէ *add.* B || 5 զգեստիւք] զգեստուք B || 13 լռութեամբ *om.* B || 14 սաղմոսելով] առանձինն *add.* B — խօսեցան] խօսէին B || 15 երկիր պագին սուրբ տեղեացն] երկիր պագին եւ աղօթեցին ի սուրբ տեղիսն B || 16 առ] ամենայն *add.* B.

anachorètes. Andronicus vécut auprès de lui douze ans, ensuite il pria le saint vieillard de lui permettre d'aller à Jérusalem pour vénérer les lieux saints. Et celui-ci lui ordonna d'y aller.

Pendant qu'il s'acheminait vers l'Égypte par trois jours de désert sous un hâle violent, étant accablé, il s'assit à l'ombre d'un arbre épineux pour se reposer un peu; or, voilà que sa femme Athanasia, habillée en homme, vint à passer. Elle se rendait aussi à Jérusalem pour y prier, et, par ordre de Dieu, ayant aperçu son mari Andronicus, elle le reconnut, et, lui ayant donné le salut, s'assit près de lui; mais Andronicus ne la reconnut point, car elle était très flétrie et affaiblie par un grand ascétisme, la beauté de son visage s'était enlaidie, et elle était devenue comme une Éthiopienne.

Andronicus lui dit : « Où vas-tu, moine? * Et quel est ton nom? » Elle lui répondit : « Je vais à Jérusalem pour y prier et mon nom est Athanase. » Andronicus lui dit : « Moi aussi je m'y rends; si tu veux, nous voyagerons ensemble en silence. » Elle répondit : « Comme tu l'ordonnes, nous voyagerons ensemble en silence. » Après avoir repris un peu de force, ils partirent en psalmodiant mentalement, l'un n'entendant pas l'autre, et ils ne se parlèrent pas l'un à l'autre, pas même un mot. Trois jours[1] après, ils arrivèrent à Jérusalem, vénérèrent les lieux saints, visitèrent les couvents des saints pères et revinrent à Alexandrie. * A fol. 166 r° b.

1. Il faudrait plutôt « trois mois ».

Եւ ասէ Աթանասիա. Ո՞չ իցես դու աշակերտ մեծի հօրն Դանիէլի որ ի Սկիւթա լերինն: Եւ նա ասէ. Այո՛: Ասէ Աթանասիա. Աղօթք սուրբ ծերոյն այնմիկ յաջողեցին մեզ ի գործս կամաց մերոց. եթէ կամեսցիս՝ բնակեսցուք ի միասին ի խուցս խրճթից: Ասէ Անդրոնիկոս. Նախ երթայց առ վարդապետն իմ, եւ եթէ հրամայէ ինձ՝ գամ եւ բնակիմք ի միասին: Ասէ Աթանասիա. Ես երթայց յՈւթեւտասնեկի վանսն եւ մնացից քեզ: Եւ որոշեցան ի միմեանց:

Եւ երթեալ Անդրոնիկոս առ սուրբ ծերունին, պատմեաց նմա վասն Աթանասիոսի: Ասէ ծերունին. Երթ սիրեա՛ զլռութիւն եւ բնակեաջիր ընդ աբեղային միայնակեցութեամբ, զի նա միայն է եւ դու միայն. եւ ըստ իմում կանոնաց ճգնեցարուք զոր կարգեցի քեզ: Եւ առեալ զաղօթս ծերոյն գնաց յՈւթուտասնէկի վանս առ Աթանասիոս * եւ կացեալ ի միասին երկիւղին Աստուծոյ այլ եւս երկոտասան ամ, եւ ոչ ետ ծանօթս Անդրոնիկոսի, եւ ոչ այլ ումեք պատմեաց զխորհուրդն:

* A fol. 166 v° a.

Եւ յետ երկոտասան ամաց ազդեցութիւն եղեւ ծերունւոյն Դանիէլի, եւ իջեալ ի լեռնէն՝ գնաց ի վանս այց առնել նոցա, եւ յոյժ մխիթարեաց զնոսա փրկական բանիւք. եւ դարձաւ անդրէն: Եւ նախ քան զհասարակել ճանապարհին՝ եհաս նմա Անդրոնիկոս եւ ասէ. Դարձի՛ր հայր, վասն զի հայրն Աթանասիոս հանդերձեալ է առ Քրիստոս երթալ: Եւ դարձան ի միասին եւ գտին զԱթանասիոս ի վերջին շունչն: Եւ տեսեալ

1 Սկիւթա] Սկիւթիա B 2 Այո՛] եւ դարձեալ ասէ. ո՞չ է անուն քո Անդրոնիկոս: Եւ նա ասէ. Այո՛ *add.* B || 11 ամ] ամս B.

Athanasia lui dit : « Ne serais-tu pas le disciple du grand père Daniel, qui habite la montagne de Scété? » Il lui répondit : « Oui. » Athanasia lui dit : « Les prières de ce saint vieillard ont donné le succès à nos desseins, et si tu veux, nous pourrions habiter ensemble dans des cellules en forme de huttes. » Andronicus répondit : « J'irai d'abord auprès de mon supérieur, et s'il me l'ordonne, je viendrai et nous habiterons ensemble. » Athanasia dit : « Et moi je vais au couvent des Dix-huit sources et je t'y attendrai. » Et ils se séparèrent.

Andronicus alla auprès du saint vieillard, lui parla au sujet d'Athanase. Le vieillard dit : « Va et aime le silence, habite avec ce moine d'une vie solitaire, car il est seul et tu es seul, et vous ferez de l'ascétisme selon les règles que je t'ai imposées. » Il se recommanda aux prières du vieillard, se rendit au couvent des Dix-huit sources auprès d'Athanase, * et ils vécurent ensemble dans la crainte de Dieu douze autres années; elle ne se fit pas connaître à Andronicus et ne raconta à personne le secret.

* A fol. 166 v° a.

Douze ans plus tard, le vieillard Daniel eut un pressentiment. Il descendit de la montagne, alla au couvent, les visita et les consola beaucoup par des paroles salutaires, puis revint chez lui. Avant qu'il eût fait la moitié du chemin, Andronicus le rejoignit et lui dit : « Retourne, père, car le père Athanase est sur le point d'aller trouver le Christ. » Ils revinrent ensemble

զԴանիէլ սկսաւ լալ ։ Եւ ասէ Դանիէլ. Փոխանակ խնդալոյ զի փոխելոց ես առ Քրիստոս, լաս ։ Ասէ Աթանասիոս. Ոչ լամ վասն իմ, այլ վասն Անդրոնիկոսի. աղաչեմ զքեզ զի յետ թաղելոյն զիս գտցես ի սնարս իմ թուղթ գրեալ, ընթեռնուցուս զայն առաջի Անդրոնիկոսի ։ Եւ խնդրեաց հաղորդութիւն, ճաշակեաց եւ համբուրեաց զնոսա, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

Եւ յորժամ փոխեցին զերանելին՝ տեսին զի կին մարդ էր, եւ առեալ զքարտէսն ընթերցան եւ ծանեան զի Անդրոնիկոսի ամուսինն էր Աթանասիա ։ Եւ յոյժ երկեան եւ զարհուրեցան ։ Եւ առաքեաց հայրն Դանիէլ եւ ժողովեաց կրօնաւորս եւ աշխարհականս ի թաղումն աղախնոյն Քրիստոսի Աթանասիայ, սպիտակ զգեստիւք եւ ոստովք արմաւենեօք. զի այնպիսի * կարգ էր նոցա ի թաղել զճգնաւոր կրօնաւորս. եւ սաղմոսիւք եւ օրհնութեամբ եդին ի տապանի, եւ ետուն գոհութեամբ փառս Աստուծոյ, որ այնպիսի իմաստութեամբ ժուժկալութիւն ետ տկար բնութեան կանանց ։

* A fol. 166 v° b.

Եւ յետ եօթն աւուր թաղման երանելւոյն, կամեցաւ ծերունին տանել զԱնդրոնիկոս զկնի իւր, եւ նա ոչ կամեցաւ, ասէ. Մեռայց եւ ես ընդ տիկնոջս իմոյ ։ Եւ հրաժարեալ ծերունւոյն գնաց ։ Եւ նախ քան զհասանելն նորա ի սուրբ Մինաս, եհաս նմա կրօնաւոր մի եւ ասէ. Հայրն Անդրոնիկոս ի յետին շնչն հասեալ է ։ Եւ առաքեաց

5 Աստուած] Յունուարի ԻԳ *add.* B || 6 մարդ *om.* B || 9 ի թաղումն] թաղման B.

et trouvèrent Athanase au dernier souffle, qui en apercevant Daniel se mit à pleurer. Daniel lui dit : « Au lieu de te réjouir parce que tu vas trépasser au Christ, tu pleures? » Athanase lui répondit : « Je ne pleure pas pour moi, mais pour Andronicus; Je t'en prie, après m'avoir enterré, tu trouveras à mon chevet un papier écrit, tu le liras en présence d'Andronicus. » Il demanda à communier, communia, les embrassa et rendit son âme à Dieu.

Lorsqu'ils ensevelirent le bienheureux, ils s'aperçurent que c'était une femme. Ils prirent le papier, et l'ayant lu, ils apprirent que c'était Athanasia, la femme d'Andronicus. Ils furent saisis de stupeur et de grande crainte. Le père Daniel manda et rassembla des moines et des laïcs pour l'enterrement de la servante du Christ Athanasia, habillés en blanc et tenant à la main des rameaux de palmiers, — * car telle était leur règle pour l'enterrement des ascètes moines. — ils la mirent au tombeau avec psalmodies et bénédictions, et en rendant grâces, ils glorifièrent Dieu, qui avait donné une si sage endurance à la faible nature de femmes.

* A fol. 166 v° b.

Sept jours après l'enterrement de la bienheureuse, le vieillard voulut ramener avec lui Andronicus, mais il ne voulut pas et dit : « Je mourrai, moi aussi, (ici) auprès de ma femme. » Le vieillard prit congé et partit. Avant qu'il fût arrivé à saint Ménas, un religieux le rejoignit et lui dit : « Le père Andronicus est au dernier souffle. » Daniel envoya quelqu'un à Scété, fit

Դանիէլ ի Սկիւթ, եւ իջոյց զամենայն կրօնաւորսն, եւ գնացին առ Անդրոնիկոս, եւ տեսեալ զնոսա ողջունեաց եւ առաքեաց զհոգին իւր առ Աստուած :

Եւ մարտեան հակառակութեամբ կրօնաւորքն Սկիւթ լերինն ընդ աբեղայսն Ութեւտասնեկի վանաց, զի առցեն զմարմին երանելւոյն Անդրոնիկոսի եւ տարցեն ի լեառն : Եւ նորա ոչ տային առնուլ : Եւ հարցին ծերոյն, եւ նա հրամայեաց թաղել ընդ երանելւոյն Աթանասիայի . եւ այնպէս արարին :

Եւ արարեալ անդ ծերունւոյն ընդ այլ սկիւթացի հարսն զեօթնօրեայ ննջման աւուրս երանելւոյն, եկին ապա ի լեառն իւրեանց Սկիւթ : Եւ գրեցին զպատմութիւն նոցա, եւ միշտ յիշատակեն Արացի ԺԶ եւ Յունուարի ԻԳ :

* B 47 a. [B * Ի սմին աւուր վկայութիւն Կուրտերիոսի քահանային : Էր սա ի Կեսարիա Կապադովկեցւոց ի ժամանակս հալածանաց Դիոկղետիանոսի անօրէն արքային . եւ բազում ճգնութեամբ եւ չարչարանօք նահատակեալ կատարեցաւ վասն անուանն Քրիստոսի :

Յայսմ աւուր պարոն Թորոս որդի արքային Հեթմոյ կատարեցաւ ի պատերազմին ընդդէմ անօրինաց : Սա էր երիտասարդ կտրիճ եւ քաջ՝ փայլեալ աստուածապաշտ կրօնիւք եւ բարի վարուք, որով եւ սիրելի էր ամենեցուն :

Եւ եղեւ յորժամ Փնտուխտար ամիրայն Եգիպտոսի առաքեաց զօր բազում ի Կի-

9 միշտ *om.* B.

descendre tous les moines, et ils se rendirent auprès d'Andronicus, qui, en les apercevant, leur donna le salut et rendit son âme à Dieu.

Les moines de la montagne de Scété se querellèrent avec les religieux du couvent des Dix-huit sources pour la possession du corps d'Andronicus et pour l'emmener à la montagne. Les autres ne les laissaient pas s'en emparer. On consulta le vieillard, et il ordonna de l'enterrer auprès de la bienheureuse Athanasia. Et ils firent ainsi.

Le vieillard demeura là avec les pères de Scété pour accomplir les sept jours de la mort du bienheureux et retournèrent ensuite à leur montagne de Scété. Ils écrivirent leur histoire et les commémorent toujours le 16 Aratz, 23 Janvier.

* B p. 47 a. [B * En ce jour, martyre du prêtre Corterius (*Kourteriosi*). Il était de Césarée de Cappadoce au temps des persécutions de l'empereur impie Dioclétien. Après un grand ascétisme, il fut martyrisé dans les tortures pour le nom du Christ.

En ce jour le baron Thoros, fils du roi Héthoum, trouva la mort dans une guerre contre les infidèles. Il était jeune, fort et vaillant, il brilla par sa conduite pieuse et ses bonnes mœurs, et fut aimé de tout le monde.

Lorsque Pendoukhtar[1], l'émir d'Égypte, envoya en Cilicie de nombreuses

1. Bibars Bundûqdarî (1260-1277).

լիկիս, որք յանկարծակի արշաւեալ ի ներքս աւերեցին զբազում տեղիս, եւ կամէին հրով եւ սրով ապականել զամենայն երկիրն, սա ինքն արքայորդին Թորոս ի միասին ընդ եղբօր իւրոյ Լեւոնի եղեալ զանձն ի վերայ ազգին եւ եկեղեցւոյ սրբոյ, ել ընդդէմ թշնամեաց հաւատոյ, եւ արարին կոտորած մեծ ։ Իսկ Լեւոն մատնութեամբ ոմանց իշխանաց Հայոց ձերբակալ եղեւ ։ Եւ Թորոս յետ բազում գործոց քաջութեան ի մահ վիրաւորեալ նահատակեցաւ յանօրինաց Յունուարի ԻԳ ։]

* Արացի ԺԷ եւ Յունուարի ԻԴ ։ Վկայութիւն երից եղբարցն՝ *A fol. 167 rº a.
Պօղոսի, Պաւսերի եւ Թէոդոտոնի ։

Յամս Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի կռապաշտ արքայիցն էին ի քաղաքին Կղէոպատրիայ, Պօղոս եւ Պաւսերիոս եղբարք եւ ի տղայութենէ էին կրօնաւորք ։ Պօղոս էր ամաց երեսուն եւ ութից, եւ Պաւսերիոս ամաց քսան եւ հնգից ։ Եւ դատաւորն Արիանոս կոչեաց կացոյց առաջի իւր եւ դատապարտեաց. եւ հրամայեաց կախել եւ քերթել զմարմինս իւրեանց ։

Էր եղբայր մի այլ կրտսերագոյն որոյ անուն էր Թէոդոտիոն. եւ էր գող եւ աւազակ. եւ լուեալ զեղբարցն երթեալ ի հեռուստ տեսանէր զնոսա ի տանջանս, երկեաւ

8 Թէոդոտոնի] Թէոդոտիոնոսի B || 9 էին] սուրբքս այսոքիկ *add.* B || 10 Կղէոպատրիայ] Կղէոպատրիդայ B || 14 Թէոդոտիոն] Թէոդոտիոն որ միայնակեաց էր եւ ապա *add.* B || 15 զեղբարցն] զչարչարանս եղբարցն էջ ի լեռնէն եւ B.

troupes, qui envahirent subitement l'intérieur du pays, dévastèrent de nombreux endroits, et se proposaient de mettre à feu et à sang tout le pays, lui, Thoros, fils de roi, et avec lui son frère Léon, ils se sacrifièrent pour la nation et la sainte église, allèrent au-devant des ennemis de la foi et en firent un grand massacre. Léon y fut fait prisonnier par la trahison de quelques princes arméniens. Quant à Thoros, après des exploits de bravoure, blessé à mort, il fut martyrisé par les infidèles, le 23 Janvier [1].]

* 17 ARATZ, **24 Janvier**. *A fol. 167 rº a.

Martyre des trois frères Paul, Pausérius et Théodotion.

Aux jours des empereurs idolâtres Dioclétien et Maximien, vivaient, dans la ville de Cléopâtris (*Klĕopatriay*), les frères Paul et Pausérius, moines dès leur enfance. Paul avait trente-huit ans et Pausérius vingt-cinq. Le juge Arianus les fit venir en sa présence et les condamna; il ordonna de les suspendre et de leur déchirer le corps.

Ils avaient un autre frère plus jeune, nommé Théodotion, qui était voleur et brigand. Ayant appris ce qui concernait ses frères, il alla et assista de loin

1. Le P. Tournebize place cette bataille au 24 août 1266, *Revue de l'Orient Chrétien*, IX (1904), p. 232.

եւ դարձաւ յետս, եւ նստէր ի տեղւոջ միում. եւ ասէր ի միտս իւր. Երկու եղբարքս իմ մարտիրոսանան եւ առնուն զպսակն կենաց, երթայց եւ ես եղէց հաղորդ կենացն յաւիտենից :

Եւ երեւեցաւ սատանայ ի կերպարանս ալեւորի եւ ասէ. Ճանաչես զիս թէ ո՛վ իցեմ : Եւ նա ասէ. Ոչ : Եւ ասէ. Ես էի որ օգնէի քեզ յամենայն ժամ յաւազակութիւնն եւ ի գողութիւն, եւ այժմ եկի զի տաց քեզ խրատ զի մի՛ մարտիրոսասցիս եւ կորնչեցի մանկութիւնդ քո, զի տանջանքն խիստ են եւ դու ոչ համբերես, եւ այլ աւելի մեղս գործես : Ասէ Թէոդիտոն. Ես ուխտեցի լինել ծառայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Եւ սատանայ ծուխ լեալ իբրեւ զսիւն՝ շիջաւ եւ անյայտ եղեւ :

* A fol. 167 r° b. Եւ երթեալ Թէոդոտիոն առ եղբարսն իւր, խոստովանեցաւ * մեծաձայն եւ ասէ. Ես քրիստոնեայ եմ եւ եղբայր մարտիրոսացս : Եւ կալեալ զնա տարան առ դատաւորն, եւ բազում ողոքանօք խոստանայր պարգեւս եւ պատիւս, եւ ոչ կարաց դարձուցանել զնա ի կուռսն, այլ կալեալ զդատաւորն ընկէց յաթոռոյն, եւ գլորեաց ը՛դ երեքտասան աստիճանսն ի վայր, եւ զաթոռն կործանեաց :

Եւ ընթացեալ զօրականացն կանգնեցին զնա եւ զաթոռն : Եւ կապեցին զԹէոդոտիոն եւ հրացուցին շամփուրս երկայնս երիս, զմինն ի կողսն հարին եւ զմինն ի թիկունսն եւ զմիւսն յորովայնն : Եւ նա աղօթեաց առ Աստուած եւ տեսանէր մերձ իւր

1 նստէր] նստաւ B. || 3 յաւիտենից... անյայտ եղեւ] որ ի մանկութենէ ուխտեալ եմ լինել ծառայ Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի B || 17 աղօթեաց] աղօթէր B.

à leurs tortures; mais, pris de peur, il s'en retourna et, assis quelque part, il se dit en lui-même : « Mes deux frères se font martyrs et obtiendront la couronne de vie; j'irai, moi aussi, et j'aurai part à la vie éternelle. »

Mais le démon lui apparut sous la forme d'un vieillard et lui dit : « Reconnais tu qui je suis? » Il lui répondit : « Non. » L'autre lui dit : « C'est moi qui de tout temps t'ai aidé dans le brigandage et le vol, et maintenant je suis venu pour te conseiller de ne pas aller au martyre et ne pas perdre ta jeunesse; car les tortures sont douloureuses : tu ne supporteras pas, et tu commettras un péché de plus. » Théodotion (*Ṭēoditon*) lui répondit : « J'ai fait le vœu d'être le serviteur de mon Seigneur Jésus-Christ. » Le démon se transforma en une colonne de fumée, qui se dissipa et devint invisible.

* A fol. 167 r° b. Théodotion alla trouver ses frères, confessa à * haute voix et dit : « Je suis chrétien et le frère de ces martyrs. » On le saisit et on le conduisit au juge qui, avec beaucoup de douceur, lui promit des présents et des honneurs, mais ne parvint pas à le convertir aux idoles; par contre, ayant saisi le juge, (Théodotion) le jeta à bas de son siège, le fit rouler des treize marches sur le sol, et renversa le siège.

Les soldats accoururent, le redressèrent, lui et son siège, lièrent Théodotion et firent rougir trois longues broches qu'ils enfoncèrent, l'une dans les côtes, l'autre dans le dos et la troisième dans le ventre. Il pria Dieu et

Հրեշտակ որ ի ձեռին իւրում ունէր պսակ ։ Եւ տարեալ դահճացն հրամանաւ դատաւորին հատին զգլուխ նորա ։

Եւ զՊօղոս եւ զՊաւսերիոն կապեալ ընկեցին ի ծովն. եւ այնպէս կատարեցան աւանդեալ զհոգիս իւրեանց առ Աստուած Յունուարի ԻԴ ։

Յայսմ աւուր սուրբ վկայն Քրիստոսի Դանաքտոս ընթերցող եկեղեցւոյն, ի քաղաքին Աւղոնի, որ է յարեւմուտս մերձ ի Բուլղարս, ուսուցանէր ի գրոց ժողովրդեանն զբանս աստուածայինս, եւ զբազումս դարձուցանէր ի Քրիստոս ։ Եւ կռապաշտքն զորս գտանէին ի հաւատացելոցն չարաչար տանջանօք սպանանէին ։ Եւ սուրբն Դանաքտոս առեալ զգիրս եւ զամենայն անօթս եկեղեցւոյն փախեաւ եւ թաքեաւ ։ Եւ յորժամ գտին զնա անօրէնքն՝ յափշտակեցին զանօթս *սրբութեանն եւ զնա ստիպէին զոհել *A fol. 167 v° a.
կռոցն. եւ յորժամ ոչ կարացին հաւանեցուցանել՝ սպանին զնա սրով եւ ընկեցին ի ծովն, եւ ալիք ծովուն հանին զնա ի ցամաք ։ Եւ Փիլիպպոս քահանայն թաղեաց զնա պատուով ի քարեղէն տապանի. եւ առժամայն բուսաւ ծառ ձիթենի մերձ ի տապանն, եւ է մինչեւ ցայսօր ։

3 կապեալ] կապեցին B — ծովն] գետն B — կատարեցան աւանդեալ] աւանդեցին B || 6 որ է յարեւմուտս *om.* B || 7 Քրիստոս] Քրիստոսի հաւատս B || 8 Դանաքտոս] յայնմ հալածանաց ժամանակին *add.* B || 13 եւ առժամայն ... ցայսօր] եւ առնէ բազում բժշկութիւնս B.

aperçut auprès de lui un ange tenant à la main une couronne. Les bourreaux, sur l'ordre du juge, l'emmenèrent et lui tranchèrent la tête.

Quant à Paul et Pausérius (*Pauserion*), les ayant liés, on les jeta à la mer. C'est ainsi qu'ils moururent, rendant leur âme à Dieu, le 24 Janvier.

En ce jour le saint martyr du Christ Danax (*Danachtos*), lecteur de l'église, dans la ville de Valona (*Aulon*), qui se trouve en occident, près de chez les Bulgares, enseignait au peuple les paroles divines des écritures et en convertissait beaucoup au Christ. Les idolâtres mettaient à mort dans de cruelles tortures ceux qu'ils trouvaient d'entre les fidèles. Saint Danax prit les livres et les vases de l'église, s'enfuit et se cacha. Les impies, l'ayant retrouvé, lui enlevèrent les vases sacrés* et le pressaient d'immoler aux idoles, A fol. 167 v° a.
mais ne pouvant le persuader, ils le tuèrent par le glaive et le jetèrent à la mer. Les vagues de la mer le déposèrent sur le rivage. Le prêtre Philippe l'inhuma avec honneur dans un tombeau de pierre, et aussitôt, près du tombeau poussa un olivier, qui existe encore aujourd'hui

Արացի ԺԸ եւ Յունուարի ԻԵ : Տօն սրբոյն Գրիգորի աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի :

Աստուածահաճոյ եւ մեծ վարդապետն Գրիգորիոս էր յերկրէն երկրորդ Կապադովկիացւոց, ի քաղաքէն Անձիանձու. եւ զի մայրն իւր արու զաւակ ոչ ունէր, խնդրէր յԱստուծոյ արտասուօք տալ նմա : Եւ յանուրջս տեսանէ զպատկեր որդւոյն զոր հանդերձեալ էր ծնանել : Եւ յորժամ եղեւ մանուկն՝ նուիրեաց զնա մայրն իւր Աստուծոյ : Եւ աճեցեալ մանկանն եղեւ ուսումնասէր յոյժ, եւ գնացեալ ի Կեսարիա յուսումն, եւ անտի ի Պաղեստին, եւ ապա յԱղեքսանդրիա, եւ անտի գնաց յիմաստութեանց մայրն յԱթէնս :

Եղեւ գնալ եւ Բասիլիոսի ի Բիւզանդիոյ յԱթէնս, եւ բնակեցան ի միասին հացակիցք միմեանց, եւ ուսան զամենայն հանճարս իմաստասիրութեան արտաքին գրոց, ուսան եւ զաստուածաշունչ գիրս պատուիրանաց. եղեն եւ ժուժկալք ի ճգնութիւնս, որ եւ սքանչելատեսք եղեն եւ պարծանալից բնակչաց երկրին : Եւ Բասիլիոս դարձաւ ի տուն իւր : Եւ մնաց Գրիգորիոս յԱթէնս, եւ բռնադատէին զնա լինել աթոռակալ
*A fol. 167 v° b. * քաղաքին այնմիկ, զոր յանձն ոչ առ :

1 տօն ... եպիսկոպոսի] Վարք եւ պատմութիւն սրբոյ եւ երիցս երանեալ հօրն մերոյ համաշխարհալոյս վարդապետին աստուածաբանին Գրիգորի Անձիանձու եպիսկոպոսի B.

18 ARATZ, 25 Janvier.

Fête de saint Grégoire le théologien, évêque de Nazianze (*Antziantzou*).

Le grand docteur Grégoire (*Grigorios*), agréable à Dieu, était du pays de la seconde Cappadoce, de la ville de Nazianze (*Antziantzou*)[1]. Comme sa mère n'avait pas d'enfant mâle, elle priait Dieu avec larmes de lui en donner. Or, elle vit dans un songe l'image du fils qu'elle devait mettre au monde. Lorsque l'enfant fut venu, sa mère l'offrit à Dieu. L'enfant en grandissant devint très attaché au savoir; il se rendit pour étudier à Césarée, de là en Palestine, ensuite à Alexandrie et de là à la mère de toute sagesse, à Athènes.

Il arriva que Basile (*Basiliosi*), lui aussi, se rendit de Byzance à Athènes, et ils logèrent ensemble et prirent leur nourriture en commun; ils apprirent toutes les branches de la philosophie profane, étudièrent également les livres des préceptes inspirés par Dieu, furent persévérants dans l'ascétisme et furent très considérés et estimés des habitants du pays. Basile retourna chez
*A fol. 167 v° b. lui. Grégoire resta à Athènes et on le pressa de tenir une chaire[2] * en la ville, ce qu'il n'accepta point.

1. Il faudrait plutôt Arianzos, mais la leçon est défendable, le rédacteur arménien ayant pu se borner volontairement à mentionner la ville dont dépendait Arianzos. — 2. Le terme arménien աթոռակալ désigne habituellement le successeur au trône épiscopal, et l'on pourrait être tenté d'entendre « coadjuteur avec future succession »

Եւ յորժամ եղեւ երեսուն ամաց՝ գնաց յերկիրն իւր եւ մկրտեցաւ. եւ ուխտ եդ անձին իւրում ամենեւին ոչ երդնուլ եւ առանձինն եւ միայնակ կեալ ։ Եւ զցայգ եւ զցերեկ ընթեռնոյր զաստուածաշունչ գիրս, եւ զՔրիստոս յայտնապէս տեսանէր ի տեսլեանն ։

Ձեռնադրի ի հօրէն իւրմէ քահանայ եւ գնաց առ Բասիլիոս, եւ իմաստասիրեցին ի միասին ճառս ։

Եւ եղեւ ի վախճանել Կեսարիոսի եղբօր իւրոյ, գրեաց հայրն իւր զի երթիցէ առ նա, քանզի յոյժ ծերացեալ էր, զի իննսուն ամաց էր ։ Եւ դարձաւ Գրիգորիոս առ հայրն իւր, եւ եղեւ հոգաբարձու եկեղեցւոյն ։

Իսկ Բասիլիոս նստի յաթոռ եպիսկոպոսութեանն Կեսարու, եւ ձեռնադրէ զԳրիգորիոս աստուածաբանն եպիսկոպոս Սասիմայ ։ Եւ նա վասն խռովութեան լինելոյ տեղւոյն եւ ժողովրդեանն անխաղաղ վիճմանն՝ ոչ յօժարեցաւ բնակել ի Սասիմա, գնաց ի տուն իւր ։ Ապա բռնադատեցին զնա հայրն իւր եւ Բասիլիոս եւ նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն Անձիաձու ։

Եւ յորժամ թագաւորեաց ուրացողն Յուլիանոս, հրամայեաց զի քրիստոնէից որդիք ոչ ուսանիցին զհանճարս եւ զփիլիսոփայութիւնս արտաքին գրոց ։ Յայնժամ Գրիգոր աստուածաբանն գրեաց ճառս յանդիմանութեան առ Յուլիանոս, եւ անդէտ բարբանջ-

1 յերկիրն] ի գաւառն B. || 5 քահանայ] եւ լինի նմա ձեռնատու յամենայն *add.* B.

Lorsqu'il eut atteint ses trente ans, il retourna dans son pays, se fit baptiser, et fit vœu de ne jamais jurer et de vivre seul en solitaire. Jour et nuit, il lisait les écritures inspirées de Dieu et vit le Christ manifestement dans une vision.

Il fut ordonné prêtre par son père, et alla trouver Basile avec lequel ils composèrent ensemble des homélies.

A la mort de son frère Césaire (*Kesariosi*), son père lui écrivit de revenir auprès de lui, car il avait beaucoup vieilli, ayant quatre-vingt-dix ans. Grégoire revint auprès de son père et fut procureur de l'église.

Quant à Basile, il occupa le siège épiscopal de Césarée, et sacra Grégoire le théologien évêque de Sasime. Celui-ci, en raison de troubles survenus dans la localité et d'une contestation de la turbulente population, ne consentit point à demeurer à Sasime et revint à sa maison. Son père et Basile le forcèrent ensuite à monter sur le siège épiscopal de Nazianze.

Lorsque régna l'apostat Julien, il décréta que les fils des chrétiens ne pourraient apprendre les humanités et la philosophie profanes. C'est alors que Grégoire le théologien écrivit les discours de réfutation contre Julien, où il démontre que les sciences profanes ne sont que vains bavardages,

de l'évêque local, mais il s'agit d'après la vie grecque d'une chaire de sophistique, et cela s'accorde avec le sens étymologique du mot en question, cf. *P. G.*, XXXV, col. 257.

մունս զարտաքին ուսմունսն եցոյց, եւ որպէս զառասպելս խոտան համարել, եւ թէ
A fol. 168 r° a. *չիցեն պէտք քրիստոնէից ուսանել ։ Եւ գրեաց գիրս Իռոյիկանս, եւ ամբրիկունս, երրականս եւ չորրորդատիպս եւ ուսուցանէր զորդիս քրիստոնէից ։

Եւ տեսեալ Յուլիանոս զոր արար Գրիգորիոս յամօթ եղեւ, եւ թոյլ ետ դարձեալ քրիստոնէից ուսանել զարտաքին ատորգութեան հանճարս, քանզի վեհագոյնք էին Գրիգորի հանճարագրութիւնքն քան զՊղատոնին եւ զԱրիստոտէլին եւ զՀոմերոսին ։

Եւ յետ մահուան հօրն իւրոյ Գրիգորի եւ մօրն իւրոյ Նունոյ եւ եղբօրն Կեսարոսի եւ քեռն իւրոյ Գորգոնիոյ, պատուեաց զնոսա ներբողական ճառիւք ։ Եւ գնաց ի Սելեւկիա ի կուսանաց վանսն սրբուհւոյն Թեկղի նախավկային. եւ անդ դադարեաց կացեալ լռութեամբ աւուրս բազումս ։

Եւ յորժամ դարձաւ ի Նանձիանձոն՝ ոչ կամեցաւ կալ եւ ոչ հոգալ զեպիսկոպոսարանն, այլ հոգալ զաղքատս՝ գործակից լինել մեծին Բարսղէոսի եպիսկոպոսապետին ։ Եւ շինեաց տաճար ի հանգիստ աղքատաց, եւ գրեաց զաղքատասիրութեան ճառն ։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եղեւ բազմանալ բռնութիւն արիանոսացն, եւ հրամանաւ սրբոյն Բարսղէոսի գնաց ի Կոստանդինուպօլիս, եւ իջաւանեցաւ ի մատուռն սրբոյն Անաստասիայ, եւ ջանայր արիաբար ընդդէմ հոգեմարտ հերձուածոյն եւ այլ հերետիկոսացն, եւ էր նոցա համախոհ եւ օգնական Վաղէս թագաւորն որ նստաւ յետ

2 ամբրիկունս] ամբիկունս B || 4 Գրիգորիոս] ընթերցեալ զպատճէն ճարտասանութեանն Գրիգորի *add.* B || 12 լինել] լեալ B.

dignes d'être considérés comme des légendes méprisables, et que les chrétiens
* A fol. 168 r° a. * n'ont nullement besoin de les apprendre. Il écrivit les livres des Héroïques (*Iroyikans*), Iambiques (*Ambrikouns*), Distiques et Tétrastiques, et il enseigna les fils des chrétiens.

Julien, ayant vu ce qu'avait fait Grégoire, fut honteux et permit de nouveau aux chrétiens d'étudier les raisonnements de la philosophie profane, car les exposés philosophiques de Grégoire étaient de beaucoup supérieurs à ceux de Platon, d'Aristotèle et d'Homère.

A la mort de son père Grégoire, de sa mère Nonna (*Nounoy*), de son frère Césaire (*Kesarosi*) et de sa sœur Gorgonea (*Gorgonioy*), il les honora d'oraisons funèbres. Il se rendit à Séleucie au couvent de vierges de sainte Thècle, la protomartyre, et y demeura en gardant le silence de nombreux jours.

Lorsqu'il retourna à Nazianze (*Nantzianson*), il ne voulut point y rester, ni gérer l'évêché, mais il soigna les pauvres et devint le collaborateur du grand Basile, le métropolitain. Il fit construire un grand hospice pour la commodité des pauvres, et écrivit une homélie sur l'amour de la pauvreté.

En ces jours-là les Ariens augmentèrent leur tyrannie et, sur l'ordre de saint Basile, il se rendit à Constantinople, se fixa à la chapelle de la Sainte-Anastasis, combattit vaillamment les hérétiques pneumatomaques et d'autres hérétiques, qui avaient pour partisan et soutien l'empereur Valens (*Vales*),

Յուլիանոսի ։ * Եւ աստուածաբանական բանիւք վարդապետութեամբ ուսուցանէր ժողովրդեանն զուղղափառ հաւատս, եւ արմատախիլ առնէր զհերձուածողացն զնոր բարբանջմունսն ։ * A fol. 168 r° b.

Իսկ Ապողինարոս անմիտ Ասորին նոր խռն եւ դառն հերձուած տնկեաց յեկեղեցին, եթէ Քրիստոս ոչ էառ իմանալի հոգի ի Կուսէն. եւ այլ եւս հայհոյութեան բանիւք զբազումս պատրեաց, եւ յարոյց ի վերայ սրբոյն Գրիգորի աստուածաբանի պատերազմ եւ քարկոծ արարին զնա ։

Հանդիպեցաւ ի քաղաքին Պետրոս, որ յետ սրբոյն Աթանասի նստաւ յաթոռն Աղեկսանդրի. եւ ժողովեցան առ նա ամենայն ուղղափառք եւ արարին քննութիւն, եւ աստուածային ընտրութեամբն նստուցին զաստուածաբանն Գրիգորիոս յաթոռն Կոստանդինուպօլսոյ, հրամանաւ Թէոդոսի մեծի արքային եւ վարդապետեաց զժողովուրդն ուղղափառութեամբ ամս երկոտասան ։

Եւ ոմն իմաստասէր Աղեկսանդրացի որոյ անուն էր Մաքսիմոս կեղծաւորութեամբ ի կերպարանս ճգնաւորի լեալ մատեաւ առ աստուածաբանն Գրիգորիոս, եւ եղեւ նորին կենակից ի միում սենեկի եւ սեղանի ։ Եւ ցանկացեալ Կոստանդինուպօլսի աթոռոյն եգիտ օգնական իւրեան երէց մի յեկեղեցւոյն, եւ դարձուցին ի խորհուրդս

7 եւ քարկոծ արարին] ի քարկոծել B.

qui succéda à Julien. * Il instruisit la population dans la foi orthodoxe par sa doctrine en des discours théologiques, et s'efforça de déraciner les nouveaux radotages des hérétiques. * A fol. 168 r° b.

Mais Apollinaire le stupide Syrien suscita une nouvelle et cruelle hérésie dans l'église en prétendant que le Christ n'avait point pris une âme intelligente de la Vierge, et il égara beaucoup (de chrétiens) par ses paroles de blasphème; il entreprit une lutte contre saint Grégoire le théologien et le fit lapider.

Sur ces faits, arriva dans la ville Pierre, qui avait occupé le siège d'Alexandrie après saint Athanase, et tous les orthodoxes s'assemblèrent auprès de lui, pour examiner (la situation), et élurent, par élection divine, Grégoire le théologien au siège de Constantinople, par ordre du grand empereur Théodose. Il y instruisit la population en toute orthodoxie pendant douze années[1].

Un philosophe alexandrin, nommé Maxime, prenant hypocritement des attitudes d'ascète, se présenta au théologien Grégoire et se fit son compagnon de vie, de chambre et de table. Et comme il convoitait le siège de Constantinople, il trouva comme complice un prêtre de l'église, et tous les deux

1. Donnée évidemment fausse, si on l'entend du patriarcat de Grégoire, qui ne dura que très peu de temps; il s'agit sans doute du séjour total à Constantinople, et ce chiffre est celui de la vie grecque, *P. G.*, XXXV, col. 301.

եւ ի կամս իւրեանց զՊետրոս զԱղեկսանդրու հայրապետն, այն որ նստոյց զԳրիգորիոս յաթոռն, խոստանալով նմա գանձս բազումս :

Եւ նա առաքեաց մետրապօլիտս եւ եպիսկոպոսունս զի իջուսցեն զԳրիգորիոս
* A fol. 168 v° a. յաթոռոյն եւ նստուսցեն զՄաքսիմոս. * եւ երթեալք փութանակի կատարել զգործն : Եւ եղեւ խռովութիւն մեծ եւ աղմուկ ի քաղաքին ընդ միմեանս, սիրելիք եւ թշնամիք, եւ հանին զՄաքսիմոս յեկեղեցւոյն : Եւ Աղեկսանդրացիքն տարան զնա ի տուն փողահարի միոյ եւ ձեռնադրեցին զնա անդ : Եւ գնացին առ թագաւորն Թէոդոս ի Թեսաղոնիկէ, եւ աղաչեցին զնա զի տացէ զաթոռն Կոստանդինուպօլսի ի Մաքսիմոս՝ : Եւ նորա լուեալ բարկութեամբ հրամայեաց հանել զնոսա յերեսաց իւրոց, եւ դարձան տրտում եւ ամօթալից յԱղեկսանդրիա :

Եւ խորհեցաւ սուրբն Գրիգորիոս թողուլ զաթոռն եւ գնալ ի տուն իւր, եւ ժողովուրդն արգելին եւ ոչ ետուն թոյլ :

Դարձաւ եւ թագաւորն ի Թեսաղոնիկոյ, եւ ազատեաց զեկեղեցիսն ի հերձուածողացն : Եւ առեալ զԳրիգորիոս գնաց յեկեղեցին : Եւ ամպ մի անցեալ ի ներքոյ արեգականն եղեւ ցերեկն գիշեր, եւ սկսան խնդալ եւ ուրախանալ հերձուածողացն դասքն եթէ. Ոչ հաճեցաւ Աստուած զարտաքսելն մեր յեկեղեցւոյն : Եւ յորժամ մտին ի խորանն թագաւորն եւ աստուածաբանն՝ ցրուեցաւ ամպն եւ ծագեաց լոյս պայծառ.

4 նստուսցեն] ձեռնադրեսցեն B || 7 անդ] եպիսկոպոս *add.* B || 15 ուրախանալ] ուրախ լինել B || 16 յեկեղեցւոյն] յեկեղեցեացն B.

attirèrent à leur dessein et à leur volonté Pierre, le patriarche d'Alexandrie, celui qui avait mis Grégoire sur le siège (de Constantinople), lui promettant de grandes richesses.

Celui-ci envoya des métropolitains (*metrapolits*) et des évêques pour déposer
* A fol. 168 v° a. Grégoire du siège et y mettre Maxime; * ils s'empressèrent de s'y rendre pour accomplir cette action. Il y eut un grand trouble et du bruit dans la ville entre les partisans et les ennemis, et on expulsa Maxime de l'église. Les Alexandrins le conduisirent dans la maison d'un joueur de flûte et l'y sacrèrent. Ensuite ils se rendirent auprès de l'empereur Théodose à Thessalonique, et le prièrent de donner le siège de Constantinople à Maxime. Entendant cela, (l'empereur) irrité ordonna de les faire sortir de sa présence, et ils revinrent à Alexandrie tristes et confus.

Saint Grégoire songea à quitter le siège et à rentrer dans sa maison, mais la population s'y opposa et le maintint.

L'empereur, à son retour de Thessalonique, débarrassa les églises des hérétiques. Il prit avec lui Grégoire et se rendit à l'église. Un nuage qui passait sous le soleil fit du jour la nuit, ce qui remplit de joie et de plaisir toutes les classes des hérétiques, qui dirent : « Il n'a pas plu à Dieu que nous soyons expulsés de l'église. » Lorsque l'empereur et le Théologien pénétrèrent dans le chœur, le nuage se dissipa et une lumière vive jaillit ; les héré-

եւ եղեն ամօթալից հերձուածողքն : Եւ նստուցին զԳրիգորիոս յաթոռն, Մելիտոս Անտիոքայ պատրիարգն եւ հարիւր եւ յիսուն եպիսկոպոսունքն որք ժողովեցան յերկրորդ սիւնհոդոսն :

Յետոյ եկին եւ Եգիպտոսի եպիսկոպոսունքն եւ Աղեքսանդրու պատրիարգն դժկամակ * լեալ եթէ առանց մեր կամաց նստուցէք զԳրիգորիոս յաթոռն : Եւ եղեւ *A fol. 168 v° b. խռովութիւն ի մէջ հարիւր եւ յիսուն սիւնհոդոսին, ոչ եթէ ատէին զԳրիգորիոս կամ անարժան համարէին, այլ մեղադրէին եթէ. Ընդէ՞ր ոչ անսացէք գալստեան մերոյ :

Ասէ ցնոսա Գրիգորիոս. Եթէ վասն իմ է խռովութիւնդ, ես ոչ եմ լաւ քան զՅովնան, ընկեցէք զիս ի ծով եւ դադարեսցէ մրրիկդ ի ձէնջ : Եւ հրաժարեաց կամաւ ի թագաւորէն եւ յամենայն ժողովոյն եւ ողջունեալ զնոսա ել ի քաղաքէն եւ գնաց ի Կապադովկիա յերկիր իւր, եւ դադարեաց ի գեօղ մի որ կոչի Արիանզոն : Եւ ժողովն ձեռնադրեցին յաթոռ Կոստանդինուպօլսի զՆեքտարիոս զՏարսոնացին :

Եւ յորժամ սուրբն Բասիլիոս հանդերձեալ էր բարի մահուամբ ննջել ի Քրիստոս՝ գնաց Գրիգորիոս աստուածաբանն առ նա ի Կեսարիա եւ գրեաց ի թաղումն նորա ներբողական ճառս, եւ դարձաւ անդրէն յԱրիանզոն :

Այս երանելի աստուածաբան վարդապետս Գրիգորիոս զերկոտասան ամն զոր

1 նստուցին զԳրիգորիոս յաթոռն *om.* B.

tiques furent couverts de honte. Mélèce (*Melitos*), patriarche d'Antioche, et les cent cinquante évêques convoqués pour le deuxième concile installèrent Grégoire sur le siège.

Les évêques d'Égypte et le patriarche d'Alexandrie arrivèrent ensuite mécontents * de ce que Grégoire avait été installé sur le siège sans leur *A fol. 168 v° b. consentement. Il y eut un désaccord parmi les cent cinquante (membres) du synode, non pas qu'ils haïssent Grégoire ou qu'ils le jugeassent indigne, mais ils l'incriminaient en disant : « Pourquoi n'avez-vous pas attendu notre arrivée ? »

Grégoire leur dit : « S'il y a une contestation à cause de moi, je ne suis pas meilleur que Jonas, *jetez-moi à la mer, et la tempête s'éloignera de vous*[1]. » Et il donna volontairement sa démission à l'empereur et au concile entier, les salua, quitta la ville et se rendit dans son pays en Cappadoce; il habita un village nommé Arianzos (*Arianzon*). Le concile sacra Nectaire de Tarse au siège de Constantinople.

Lorsque saint Basile fut sur le point de reposer dans le Christ d'une bonne mort, Grégoire le théologien se rendit auprès de lui à Césarée, et y écrivit pour ses funérailles une oraison funèbre; il retourna ensuite à Arianzos.

Ce bienheureux docteur théologien Grégoire, durant les douze années

1. Jon. I. 12.

արար ի Բիւզանդիա՝ մաքրեաց զքաղաքն յամենայն հերձուածողացն եւ ի մոլորութենէ Արիոսի եւ Ապողինարի եւ Նաւատիոսի ։ Նստոյց յաթոռ եպիսկոպոսութեանն Անձիանձու՝ զԵւլալիոս, եւ ինքն յԱրիանզոն գաղթեաց ։ Եւ աստուածահաճոյ վարուք
*A fol. 169 r° a. կացեալ խաղաղութեամբ հանգեաւ ի Յունուարի ԻԵ ։ Եւ փոխեցաւ * յանանցնական եւ յանվախճան յուրախութիւնն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր ։

Արացի ԺԹ եւ Յունուարի ԻԶ ։ Վարք երանելոյն Քսենոփոնի եւ զուգակցին իւրոյ Մարիամու եւ երկու որդւոցն Արկադեայ եւ Յովհաննու ։

Երանելին Քսենոփոն էր ի Կոստանդինուպօլսէ մեծատուն իշխան, բարեպաշտ, ողորմած եւ երկիւղած յԱստուծոյ . նոյնպէս եւ ամուսինն իւր Մարիամ ։ Ունէին եւ երկու որդիս զԱրկադէոս եւ զՅովհաննէս, եւ ուսուցանէին զնոսա լինել իբրեւ զինքեանս ։ Առաքեցին զնոսա ի Բիւրիտոն քաղաքն յուսանել զդպրութիւն գրոց ։

Եւ մինչդեռ նաւէին՝ եղեւ մրրիկ մեծ ի ծովուն, եւ զիրկս արկեալ միմեանց ողբային ուժգին, եւ աղաչէին զԱստուած ։ Հերձաւ նաւն եւ ամենեքեան ընկղմեցան ի ծովն, բայց ոչ կորեան՝ բուռն հարեալ իւրաքանչիւր ոք ի տախտակս նաւին . եւ զամենեսեան

4 հանգեաւ] Արաց ԺԸ եւ *add.* B ¦ 5 ի Քրիստոս ... մեր *om.* B || 7 Արկադեայ] Արկադիոսի B || 8 ի Կոստանդինուպօլսէ] ի Կոստանդնպօլիս B || 13 զԱստուած] փրկել ի փորձութենէն *add.* B.

qu'il passa à Byzance, avait purgé la ville de tous les hérétiques et de l'erreur d'Arius, d'Apollinaire, de Novat[1] (*Navatiosi*). Il fit monter sur le siège épiscopal de Nazianze Eulalius, et se retira à Arianzos. Il y vécut d'une vie
*A fol. 169 r° a. agréable à Dieu et reposa en paix le 25 Janvier. Il trépassa * dans la joie immortelle et sans fin, dans le Christ Jésus, Notre-Seigneur.

19 ARATZ, **26 Janvier**.

Vie du bienheureux Xénophon, de sa femme Marie (*Mariamou*) et de leurs deux fils Arcadius et Jean.

Le bienheureux Xénophon était de Constantinople, prince riche, pieux, charitable et craignant Dieu; de même était sa femme Marie. Ils avaient deux fils, Arcadius et Jean, auxquels ils apprenaient à être comme eux. Ils les envoyèrent à la ville de Beyrouth (*Biuriton*) pour y apprendre les lettres.

Tandis qu'ils naviguaient, une forte tempête se leva sur la mer. Ils se jetèrent dans les bras l'un de l'autre, poussèrent des hauts cris et prièrent Dieu. Le navire se brisa et tous tombèrent à la mer, mais ils ne périrent pas.

1. Grégoire a effectivement écrit contre Novat et ses partisans, cf. par ex. *P. G.*, XXXVI. col. 356 sq. Noter que le rédacteur arménien suit fidèlement la vocalisation grecque Ναυάτος.

որք էին ի նաւ անդր ապրեցոյց Աստուած : Յովհաննէս ել ի Մալփիտա, եւ Արկադիոս՝ ի Տետափիւրգեա : Իսկ Յովհաննէս գտեալ վանս մտեալ ղաղարեաց անդ լեալ կրօնաւոր, եւ աղաչէր զԱստուած զի ծանուսցէ նմա զԱրկադէոս զեղբայր իւր : Եւ երեւեցաւ յերազի զի փրկեցաւ ի ծովէն եւ եղեւ կրօնաւոր :

Իսկ Արկադէոս ելեալ ի ցամաք գնաց յԵրուսաղէմ, եւ երկրպագեաց * սուրբ տեղեացն : Հանդիպեցաւ սուրբ ծերունոյ միում կրօնաւորի, եւ նա յառաջագոյն ասաց Արկադիոսի եթէ· Եղբայր քո եւ ծառայքն որք էին ի նաւին կենդանի են, եւ են կրօնաւորք : Եւ գնաց Արկադիոս զկնի նորա եւ եղեւ կրօնաւոր : *A fol. 169 rº b.

Իսկ երանելին Քսենոփոն ոչինչ գիտէր զորդւոցն. եւ առաքեաց թղթով ծառայ մի ի Բիւրիտոն զի տեսցէ զնոսա թէ ո՞րպէս կան. եւ յորժամ գնաց ոչ եգիտ : Հանդիպեցաւ միումն ի ծառայակցաց իւրոց՝ որ էր ի նաւին ընդ տեառն որդւոցն, եւ էր կրօնաւոր լեալ եւ տեղեկանայր թէ. Ո՞ւր իցեն տեարքն մեր : Եւ նա ասէ եթէ. Ի ծովուն ընկղմեցան եւ ես միայն ապրեցայ, եւ կրօնաւոր լինել եւ ղաղարել ի տեղւոջս քան դառնալ առ տէր մեր եւ լինել չար հրեշտակ լաւ համարեցայ :

Եւ դարձաւ ծառայն եւ պատմեաց տերանց իւրոց զկորուստ զաւակաց իւրեանց : Եւ նոցա լուեալ ըստ Յոբայ գոհութեամբ ասացին. Տէր ետ՝ եւ Տէր առ, որպէս

5 երկրպագեաց] երկիր եպագ B || 7 էին] ընդ քեզ *add.* B || 14 համարեցայ] վարկայ B.

car chacun se cramponna aux débris du navire et tous ceux qui se trouvaient dans le navire furent sauvés par Dieu. Jean atterrit à Malphita[1] et Arcadius à Tétrapurgia (*Tetaphiurgea*). Jean trouva un couvent où il se réfugia et se fit religieux; il priait Dieu de le renseigner sur son frère Arcadius. Et il lui fut révélé en songe qu'il avait été sauvé de la mer et était devenu religieux.

Quant à Arcadius, après avoir touché le rivage, il se rendit à Jérusalem et vénéra les * lieux saints. Il y rencontra un saint vieillard religieux, et celui-ci prédit à Arcadius : « Ton frère et les domestiques qui se trouvaient dans le navire sont sauvés et se sont faits religieux. » Arcadius le suivit et se fit religieux. *A fol. 169 rº b.

Quant au bienheureux Xénophon, il ne savait rien de ses fils; il envoya un domestique chargé d'une lettre à Beyrouth pour les voir et avoir de leurs nouvelles. Lorsque celui-ci arriva, il ne les trouva point. Il rencontra un de ses compagnons de service qui s'était trouvé sur le navire avec les fils de son maître et qui s'était fait religieux. Il lui demanda : « Où sont nos maîtres? » Il lui répondit : « Ils se sont noyés dans la mer, et je suis le seul survivant; je me suis fait religieux et j'ai préféré habiter en cet endroit, plutôt que de retourner chez notre maître et d'être un mauvais ange. »

Le domestique revint et raconta à ses maîtres la perte de leurs enfants. Lorsqu'ils l'entendirent, ils dirent comme Job en rendant grâces : « *Le Sei-*

1. Μαλφεφιθάν et Τετραπυργία dans Métaphraste. *P. G.*, CXIV, col. 1024.

Տեառն համոյ թուեցաւ՝ նոյնպէս եւ եղեւ ։ Եւ կացեալ յաղօթս երկոքեանն տեսանէին զմի տեսիլ. զՅովհաննէս ակնակապ ոսկի պսակաւ, եւ զԱրկադէոս աստեղալից պայծառ պսակաւ ։ Եւ ասէ Քսենոփոն ցՄարիամ. Մի տրտմիր, զի որդեակքն մեր առ Աստուած կենդանի են ։

Եւ վաճառեցին զտունս իւրեանց, եւ զամենայն ինչսն բաշխեցին աղքատաց, եւ
* A fol. 169 v° a. գնացին յԵրուսաղէմ ։ Եւ հանդիպեցան ծառայի միում որ էր զկնի * որդւոց իւրեանց ի ծովուն, եւ էր կրօնաւոր ։ Հարցանէին թէ. Որպէս որդիքն մեր մեռան ։ Եւ պատմեաց նոցա որպէս եղեւն ։ Եւ թողեալ զնա գնացին ի Յորդանան ։

Եւ դէպ եղեւ նոցա հանդիպել սուրբ ծերունւոյն որ զԱրկադէոսն ընկալաւ զի երթայր ի սուրբ Գողգոթա ։ Ասէ ծերունին. Ով տէր Քսենոփոն եւ տիկին Մարիամ, մի տրտմիք քանզի զորդիս ձեր եւ զծառայսն որ ի ծովուն էին՝ փրկեաց Աստուած ի մահուանէ եւ ծառայեն Աստուծոյ ։ Նստարո՛ւք առ իս եւ ցուցանէ Աստուած զորդիսն ձեր ։ Եւ մինչդեռ խօսէին՝ անցանէր Յովհաննէս եւ կալեալ զնա ծերոյն նստոյց եւ ոչ ինչ ասաց ։ Եւ ի նմին ժամու եկն Արկադէոս, եւ ամենեւին զմիմեանս ոչ ծանեան ։

Եւ ասէ ծերունին ցՅովհաննէս. Պատմեա՛ մեզ վասն քո զամենայն եղեալսն առ քեզ ։ Եւ նա սկսաւ ասել զանուանս հօրն եւ մօրն, եւ թէ որպէս առաքեցան ի Բիւրիտոն եւ ընկղմեցան ի ծովն ։

1 տեսանէին] տեսին B || 16 հօրն եւ մօրն] զհօրն եւ զմօրն B.

gneur a donné et le Seigneur a repris, il nous est arrivé ce qu'il a plu au Seigneur. » Ils se mirent à prier tous les deux et ils eurent la même vision : Jean avec une couronne d'or enrichie de pierres précieuses et Arcadius avec une couronne étincelante remplie d'étoiles. Xénophon dit à Marie : « Ne t'afflige pas, car nos enfants sont vivants en Dieu. »

Ils vendirent leur maison et tous leurs biens, distribuèrent le montant aux pauvres et se rendirent à Jérusalem. Ils y rencontrèrent un des domestiques
* A fol. 169 v° a. qui avait été avec * leurs fils sur mer et qui était devenu religieux. Ils lui demandèrent : « Comment sont morts nos enfants? » Il leur raconta le fait. L'ayant quitté, ils se rendirent au Jourdain.

Il leur arriva de rencontrer le saint vieillard qui avait reçu chez lui Arcadius, tandis qu'il se rendait au saint Golgotha. Le vieillard leur dit : « O seigneur Xénophon et dame Marie, ne vous affligez point, car vos fils et les domestiques qui se trouvaient en mer, ont été sauvés de la mort par Dieu et ils servent Dieu. Restez chez moi et Dieu vous montrera vos fils. » Pendant qu'ils causaient ensemble, Jean vint à passer; le vieillard l'arrêta, le fit asseoir et ne dit rien. Au même instant vint Arcadius, et ils ne se reconnurent aucunement les uns les autres.

Le vieillard dit à Jean : « Raconte-nous tout ce qui est arrivé. » Il se mit à dire le nom de son père et de sa mère, comment ils furent envoyés à Beyrouth et firent naufrage en mer.

Եւ յարուցեալ Արկադիոս ասէ. Սա է եղբայրն իմ Յովհաննէս ։ Եւ զիրար արկեալ լային ։ Եւ ասէ ծերունին. Ահա որդիք ձեր, տեսէք եւ ուրախ լերուք ։ Եւ առժամայն արար զհայրն եւ զմայրն կրօնաւորս. զՄարիամ կարգեաց ի կանանց վանս, եւ զՔսենոփոն ի լեառն առ անապատաւորս ։ Եւ ինքն առեալ զեղբարսն զերկոսին գնաց յանապատ, եւ բարի ճգնութեամբ հանգեան ի Քրիստոս ։ Եւ կատարի տօն սոցա Յունուարի ԻԶ ։

* Յայսմ աւուր կատարեցան երեք եղբարքն երկուորեակք ի միում ժամու, ի միում արգանդէ ծնեալք, Սպեւսիպոս, Եղասիպոս, Մելասիպոս ։ Նոյնպէս կատարեցաւ սրով եւ հանին իւրեանց Նէոնիլլայ վասն անուանն Քրիստոսի ։ *A fol. 169 v° b.

Զեղբարքս զայսոսիկ հանին իւրեանց Նէոնիլլայ դարձոյց ի քրիստոնէութիւն. ե առժամայն զկուռսն կործանեցին եւ զզոհս նոցա շանց կերակուր ընկեցին եւ համարձակութեամբ քարոզեցին զՔրիստոս ։ Իսկ տեարք իւրեանց կռապաշտք էին, Պաղմատոս եւ Երմոգինէս եւ Կոդրատոս իմացեալ զայն՝ կախեցին զնոսա զփայտէ եւ քերեցին զմարմինս նոցա, եւ ապա ընկեցին ի հուր եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս ։

5 սոցա] Արացի ԺԹ եւ *add.* B || 7 կատարեցան] հրով *add.* B || 11 Զեղբարքս զայսոսիկ] Երեք եղբարքս այսոքիկ էին ձիավարժ ծառայք հեթանոս տերանց, եւ ինքեանք եւս կռապաշտք էին, բայց B || 13 կռապաշտք էին *om.* B || 14 քերեցին] քերչօք *add.* B.

Arcadius se leva et dit : « C'est mon frère Jean. » Ils se jetèrent dans les bras et pleurèrent. Le vieillard dit : « Voici vos fils, regardez-les et réjouissez-vous. » Et aussitôt il fit religieux le père et la mère, fit entrer Marie dans un couvent de femmes et Xénophon chez les anachorètes de la montagne. Il prit les deux frères avec lui et s'en alla au désert. Ils reposèrent dans le Christ après un bon ascétisme. Leur fête a lieu le 26 Janvier.

* En ce jour furent martyrisés, à la même heure, les trois frères jumeaux, nés des mêmes entrailles, Spensippus, Élasippus, Mélasippus. De même fut martyrisée par le glaive leur tante Néonilla pour le nom du Christ. *A fol. 169 v° b.

Ces frères ayant été convertis au christianisme par leur tante Néonilla, ils renversèrent aussitôt les idoles, jetèrent en pâture aux chiens les offrandes qui leur étaient destinées et prêchèrent avec hardiesse le Christ. Leurs maîtres Palmatus, Hermogène et Quadratus (*Kodratos*), qui étaient des idolâtres, l'ayant appris, les firent suspendre à un arbre, firent déchirer leurs chairs, et ensuite les firent jeter dans les flammes. C'est ainsi qu'ils moururent pour le Christ.

Եւ զՆէոնիլլայ սրով հատին զգլուխն ։ Եւ կին մի այլ որոյ անուն էր Յունիլա, եւ դպիր մի Տուրվան, վասն զի հաւատացին ի Քրիստոս՝ հատին զգլուխս նոցա ։

* B p. 52 b. [B* Ի սմին աւուր յիշատակ ահաւոր շարժին որ եղեւ վասն սպառնալեաց ի մարդասիրութենէն Աստուծոյ՝ ի ժամանակս Թէոդոսու Փոքու, որդւոյ Արկադիոսի, Յունուարի ԻԶ, յաւուր կիւրակէի, յերրորդ ժամու, յորում եւ անկան պարիսպք քաղաքին թագաւորական, եւ բազում ապարանք կործանեցան . եւ եկաց շարժն մինչեւ յելատեղն ամիսս երեք . որպէս զի թագաւորն եւ ամենայն քաղաքն մեծ արտասուօք աղաղակէին ի բոլոր սրտէ զՏէր ողորմեալն ասելով, խնայեա Տէր եւ մի՛ կորուսաներ, դողացուցեր զերկիր վասն մեղաց մերոց, օրհնեալ զքեզ բարերար եւ մարդասէր Տէր ։]

Արացի Ի եւ Յունուարի ԻԷ ։ Վերադարձումն պատուական մարմնոյն տեառն Յովհաննու հայրապետին Ոսկեբերանի ։

Յորժամ աքսորեցին զՅովհաննէս, եւ տանէին զնա անխնայաբար եւ անողորմ աշխատութեամբ ընդ դժուարին ճանապարհ, յաւուրս ձմերային սառնամանեաց ի

1 Յունիլա] Յինիլա B || 2 Տուրվան] ընդ նոսա նահատակեցին *add.* B.

On trancha la tête à Néonilla, en même temps qu'on trancha la tête à une autre femme nommée Younilla (*Younila*), et à un notaire nommé Tourbon (*Tourvan*), parce qu'ils avaient cru au Christ.

* B p. 52 b. [B * En ce jour, commémoration du terrible tremblement de terre qui fut un avertissement de la providence divine, au temps de Théodose le Jeune, fils d'Arcadius, le 26 Janvier, un jour de dimanche, à la troisième heure. Les fortifications de la ville impériale s'écroulèrent et de nombreux palais furent détruits. Le tremblement dura jusqu'au lever stellaire [1], pendant trois mois, au point que l'empereur et toute la ville implorèrent avec larmes et de tout cœur, disant : « Seigneur, aie pitié! épargne-(nous), Seigneur! ne (nous) perds pas! Tu as fait trembler la terre à cause de nos péchés, bénédiction à toi, Seigneur bienfaisant, philanthrope. »]

20 ARATZ, 27 Janvier.

Retour du précieux corps du seigneur Jean Chrysostome, le patriarche.

Lorsqu'on eut exilé Jean et tandis qu'on le conduisait sans ménagement et avec une fatigue impitoyable par des routes difficiles, dans la saison des

1. Le mot ելատեղ ne se trouve pas dans le *Thesaurus* de Venise, 1836 : le sens précis de l'expression nous échappe; *Syn. Cp.* col. 425, n'a pas d'expression correspondante.

Կուկսոն Հայոց, * հասին ի Կոմանիս գեօղն, եմուտ յեկեղեցին յորում էին նշխարք * A fol. 170 r° a.
սրբոյ վկային Բասիլիսկոսի, աղօթեաց եւ գոհացաւ զԱստուծոյ :

Եւ երեւեցաւ յանուրջս սուրբ վկայն Ոսկեբերանին եւ ասէ. Զօրացիր եղբայր իմ Յովհաննէս, վաղիւն ի միասին լինիցիմք առաջի Քրիստոսի : Երեւեցաւ եւ սպասաւորին սրբոյ նշխարացն եւ ասէ. Պատրաստեա տեղի մեծ ճգնաւորիդ Յովհաննու՝ զի գալոց է առ իս :

Եւ յարուցեալ Յովհաննէս զգեցաւ սպիտակ պատմուճան քահանայութեան, եւ մատոյց զանարիւն պատարագն Քրիստոսի, եւ հաղորդեցաւ ի պատուական մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ, եւ ասաց զսովորական բանս իւր. Փառք քեզ, Տէր, յաղագս ամենայնի : Եւ ողջունեալ զամենեսեան նստաւ յեկեղեցւոջն յաթոռ, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց : Եւ թաղեցին մերձ ի տապանն Բասիլիսկոսի :

Եւ զչարախօսն Ոսկեբերանին չարաչար մահուամբ սատակեաց Աստուած : Ոմանց նեխեցան բերանքն եւ որդնալից լեալ լեզուացն կորեան : Եւ ոմանց ի խելաց թափեալք եւ այլ ընդ այլ խօսելով՝ մեռան : Այլք ի պէս պէս անբժշկելի ախտս եւ յանշարժելի ցաւս անկեալ սատակեցան ի սպառ :

Իսկ Թէոփիլոս Աղեքսանդրու պատրիարգն բազում աւուրս յոգեվարի լեալ՝ հոգին ոչ ելանէր, եւ աղաղակէր չարաչար վշտօք եւ ասէր. * Տեսանեմ զտէրն իմ Յովհաննէս * A fol. 170 r° b.

gelées d'hiver, à la ville de Cucuse d'Arménie,* on s'arrêta au village de Comana (*Komanis*). (Jean) entra dans l'église où se trouvaient les restes du saint martyr Basiliscus, pria et rendit grâces à Dieu. * A fol. 170 r° a.

Le saint martyr apparut dans un songe à Chrysostome et lui dit : « Prends courage, mon frère Jean, nous serons demain ensemble en présence du Christ. » Il apparut également au desservant des saintes reliques et lui dit : « Prépare une place au grand ascète Jean, car il doit venir auprès de moi. »

Jean se leva, revêtit des ornements sacerdotaux blancs, offrit le sacrifice non sanglant du Christ et communia aux précieux corps et sang du Fils de Dieu; il dit ses paroles habituelles : « Gloire à toi, Seigneur, pour toutes choses. » Il donna le salut à tous, s'assit sur le siège dans l'église et rendit son âme à Dieu entre les mains des anges. On l'inhuma près de la tombe de Basiliscus.

Dieu fit mourir d'une mort cruelle tous les calomniateurs de Chrysostome. A certains la bouche se putréfia et ils perdirent la langue remplie de vers. D'autres furent privés de raison et moururent, proférant des paroles incohérentes. D'autres disparurent pour toujours dans des infirmités incurables et des douleurs qui les condamnaient à l'immobilité.

Quant à Théophile, le patriarche d'Alexandrie, après être resté plusieurs jours à l'agonie, comme son âme ne le quittait point, il criait en proie à de cruelles douleurs, et disait : « * J'aperçois mon seigneur Jean, qui empêche * A fol. 170 r° b.

զի արգելու զոգիս իմ չելանելոյ, եւ չտայ թոյլ երթալ առ Աստուած, քանզի բազում համարձակութիւն ունի առ Քրիստոս ։ Եւ այնպէս խոստովանելով զոր մեղաւ առ Յովհաննէս աւանդեաց զհոգին ։

Եւ զերեսուն եւ զերիս ամս Եւդոքսիա թագուհւոյն տապանն երերէր, որ զՈսկեբերանն աքսորեաց ։ Եւ առաքեաց որդի իւր Փոքր Թէոդոս թագաւորն ի Կոմանիս զի բերցեն զմարմին սուրբ հայրապետին, որ եւ ըստ հոգւոյ զաւակ էր, քանզի ի մկրտութենէն կնքահայր էր նորա ։ Եւ երթեալ հնարս ոչ գտին հանել ի տապանէն, քանզի եւ սուրբն ոչ կամեցաւ ։ Ապա գրեաց Թէոդոս հրովարտակս ձեռամբ իւրով արտասուօք եւ բազում աղօթանօք, եւ պատուիրեաց զի կարդասցեն ի վերայ գերեզմանին որպէս առ կենդանի ։ Եւ յորժամ տարան եւ ընթերցան՝ առժամայն թոյլ ետ սուրբն եւ բացաւ տապանն, եւ գտին զՈսկեբերանն ամբողջ, զի մազ մի ի գլխոյ նորա ոչ էր պակասեալ, եւ ոչ մարմինն թարշամեալ, եւ ոչ երեսքն այլագունեալ, այլ որպէս կենդանի ի քուն գտին ։ Եւ եդին ի փայտեայ տապանի, եւ պաշտամամբ եւ մոմեղինօք եւ խնկօք տարան Կոստանդինուպօլիս յայնկոյս ծովուն ։

Եւ առաքեաց թագաւորն երկոտասան նաւս ի պատիւ սուրբ հայրապետին ․ եւ զնաւն յորում էր տապանն տարաւ ծովն մինչեւ յայգի այրոյն, որով թշնամութիւն եղեւ Եւդոքսեայ ընդ Յովհաննու եւ անտի գնաց * ի նաւահանգիստն Սոփիաս, յեկեղեցի սուրբ առաքելոյն Թովմայ ։ Եւ գնաց թագաւորն ընդդէմ ամենայն իշխանօքն եւ քաղաքա- (* A fol. 170 v° a.)

la sortie de mon âme, et ne me permet point d'aller auprès de Dieu, car il a une grande liberté auprès du Christ. » C'est en avouant ainsi le tort qu'il avait commis envers Jean qu'il rendit l'âme.

Pendant trente-trois ans le tombeau de l'impératrice Eudoxie, qui avait exilé Chrysostome, remua. Son fils, l'empereur Théodose le Jeune, envoya à Comana pour rapporter le corps du saint patriarche, car il était son fils spirituel, (Chrysostome) ayant été son parrain au baptême. Étant allés, (ses envoyés) ne trouvèrent pas le moyen de le retirer de la tombe, parce que le saint ne voulait pas. Alors Théodose écrivit de sa propre main un édit, avec larmes et beaucoup de supplications, ordonnant de le lire sur le tombeau comme s'il était adressé à un vivant. Lorsque (l'édit) fut apporté et lu, aussitôt le saint donna son consentement, le tombeau s'ouvrit et on retrouva Chrysostome intact, car pas un cheveu de sa tête n'était tombé, ni son corps fané, ni son visage altéré, on le trouva comme un vivant endormi. On le mit dans un cercueil de bois, et on le transporta avec offices, cierges et encens à Constantinople, au delà de la mer.

L'empereur envoya douze navires en honneur du saint patriarche. Or le navire dans lequel se trouvait le cercueil fut porté par la mer jusqu'à la vigne de la veuve, qui fut la cause de la brouille entre Eudoxie et Jean. De là * (le navire) se dirigea au port de Sophie (*Sophias*), à l'église du saint apôtre Thomas. L'empereur se rendit au-devant avec tous ses princes et les habitants (* A fol. 170 v° a.)

ցեօքն, մոմեղինօք եւ խնկօք ։ Եւ տեսեալ զմարմինն Յովհաննու ամբողջ որպէս ի քուն՝ պաշի հարեալ փառս ետուն Աստուծոյ ։ Բարձին անտի զտապանն եւ տարան յեկեղեցի սրբուհւոյն Երինեայ, յորում էր պատրիարգարանն Ոսկեբերանին, եւ նստուցին յաթոռն իւր ի վերայ աստիճանաց բեմին ։

Եւ եղեւ մեծ սքանչելիք յաւուր յայնմիկ, զի մարմինն առանց հոգւոյ կանգնեցաւ ի վերայ պատուանդանի աթոռոյն եւ աջովն իւրով տեառնագրեաց զժողովուրդն, եւ ասէ մեծաւ բարբառով. Խաղաղութիւնն ամենեցուն ։ Եւ ժողովուրդն ասացին. Եւ ընդ հոգւոյն քում ։ Եւ ինքն առանց ուրուք ձեռն տալոյ նստաւ յաթոռն ։ Եւ ապա միաբանեցան ամենայն եպիսկոպոսունքն եւ ժողովուրդքն որ հերձան ի միմեանց վասն անիրաւ անկման եւ աքսորանաց Ոսկեբերանին ։

Եւ անտի առեալ տարան յեկեղեցի սրբոց առաքելոցն յորում էր տապանն Եւդոքսեայ թագուհւոյն, եւ նոյնժամայն դադարեաց յերերմանէն ։ Եւ հանգուցին զկենդանի մարմինն սուրբ հայրապետին Յովհաննու Ոսկեբերանին ի ներքսագոյն խորանի ի ձախակողմն բեմին ։

Եւ ապա թագաւորն եւ սուրբն Պրոկղոս պատրիարգն, որ եւ աշակերտ էր Ոսկեբերանին, եւ այլ եպիսկոպոսունք եւ ճգնաւոր կրօնաւորք, * միաբան աղաչեցին *A fol. 170 v° b.
զԱստուած զի երեւեցուցէ նոցա թէ յորում փառս եւ ի հանգիստ իցէ աշխարհապատում եւ տիեզերալոյս վարդապետն այն ։

Եւ երեւեցաւ Պրոկղոսի եւ միւս այլ եւս ճգնաւորի միում որում անուն էր Մարկոս,

de la ville, avec cierges et encens. Lorsqu'ils virent le corps de Jean intact, comme endormi, ils en furent effrayés et glorifièrent Dieu. On transporta le cercueil de là à l'église de sainte Irène, où se trouvait le patriarcat de Chrysostome, et on le fit asseoir sur son trône, en haut des marches de l'estrade [1].

Ce jour-là eut lieu un grand miracle, car le corps sans âme se dressa sur le marchepied du trône, de sa main droite fit le signe de la croix sur l'assistance et dit à haute voix : « Paix à tous. » L'assistance répondit : « Et avec ton esprit. » Et de lui-même, sans l'aide de personne, il se rassit sur son trône. Alors tous les évêques et la population, qui s'étaient divisés à cause de l'injuste déposition et de l'exil de Chrysostome, se réconcilièrent.

De là on le transporta à l'église des saints apôtres où se trouvait le tombeau de l'impératrice Eudoxie, qui cessa aussitôt de trembler. On déposa le corps vivant du saint patriarche Jean Chrysostome à l'intérieur de la chapelle, à gauche du chœur.

Ensuite l'empereur et le saint patriarche Proclus, qui était disciple de Chrysostome, et les autres évêques et les religieux ascètes * prièrent ensemble *A fol. 170 v° b.
Dieu pour qu'Il leur révélât dans quelle gloire et quel repos se trouvait ce docteur dont toute la terre parlait et qui avait illuminé l'univers.

Proclus, et un autre ascète dont le nom était Marc, eurent une vision :

1. Bemin = βῆμα, ici l'estrade sur laquelle se trouve le trône.

Եւ տեսին լուսաւոր տաճար մեծ եւ զարմանալի, յորում էին ամենայն հայրապետք փառօք նստեալք յաթոռս հանգստեան, եւ Եպիփան Կիպրոսի արքեպիսկոպոսն : Իսկ զՅովհաննէս զոր փափաքէին՝ ոչ տեսին, եւ յոյժ տրտմեցան : Եւ այր մի լուսաւոր հարցանէր եթէ. Զո՞վ խնդրէք : Եւ նոքա ասեն. Զտէրն մեր զՅովհաննէս : Ասէ լուսաւոր այրն. զՄկրտիչն խնդրէք եթէ զաւետարանիչն : Ասէ Եպիփան. զՅովհաննէս կամին տեսանել զԿոստանդնուպօլսոյ պատրիարգն : Ասէ այրն : ԶՅովհաննէս խնդրէք զապաշխարութեանն, զնա ոչ ոք կարող է ի մարդկանէ տեսանել քանզի ընդ սերովբէս եւ ընդ քերովբէս առաջի աթոռոյն կայ հանապազ :

Նոյնպէս եւ ի Կոմանիս՝ յորժամ հանգեաւ Ոսկեբերանն՝ ետես եպիսկոպոսն զնոյն տեսիլս : Եւ այլք ոմանք ճգնաւորք եւ երկիւղածք՝ տեսին զՈսկեբերանն ընդ Մկրտչին եւ ընդ աւետարանչին երանաւոր եպիսկոպոս :

Հանգուցին զպատուական մարմին նորա յեկեղեցւոջ սրբոց առաքելոցն՝ Արացի Ի եւ Յունուարի ԻԷ :

* B p. 13 b. [B * Վերադարձումն պատուական մարմնոյ սուրբ հայրապետին մերոյ տեառն Յովհաննու Ոսկեբերանի :

Յորժամ զսուրբն Յովհաննէս տանէին յաքսորս՝ անխնայաբար եւ անողորմ աշխատութեամբ, ընդ դժուարին ճանապարհս տանէին յաւուրս ձմերային սառնամանեաց ի Կուկիսոն Հայոց. եւ իսկոյն սքանչելիք երեւեալ յԱստուծոյ ի քաղաքին, հուր երեւեալ

ils virent un grand temple lumineux et magnifique, dans lequel se trouvaient tous les patriarches assis dans la gloire sur des trônes spacieux, et l'archevêque de Chypre Épiphane. Mais ils n'aperçurent point Jean, qu'ils cherchaient, et en furent très attristés. Un homme lumineux vint leur demander : « Qui cherchez-vous? » Ils répondirent : « Notre seigneur Jean. » L'homme lumineux leur dit : « C'est le Baptiste que vous cherchez ou l'Évangéliste? » Épiphane dit : « Ils veulent voir Jean le patriarche de Constantinople. » L'homme dit : « Vous demandez Jean (docteur) de la pénitence; personne d'entre les hommes ne peut le voir, car il est journellement devant le trône avec les séraphins et les chérubins. »

A Comana, aussi, lorsque mourut Chrysostome, l'évêque avait eu la même vision. D'autres ascètes et des personnes pieuses virent Chrysostome, le bienheureux évêque, en compagnie du Baptiste et de (Jean) l'Évangéliste.

On déposa son précieux corps dans l'église des saints apôtres le 20 Aratz, le 27 Janvier.

B p. 13 b. [B * Retour du précieux corps de notre saint patriarche, le seigneur Jean Chrysostome.

Pendant qu'on conduisait saint Jean en exil, sans ménagement et avec une fatigue impitoyable par des routes difficiles, dans la saison des gelées d'hiver, à Cucuse d'Arménie, il se produisit des prodiges de Dieu en la ville (de Constantinople); des flammes apparurent au-dessus du trône où le

ի վերայ աթոռոյն յորում նստէր երանելին եւ վարդապետէր զբանն կենաց. եւ հուրն ցոլացեալ խորանաձեւ ի վերայ երթեւեկացն՝ եւ զտուն սինկլիտոսի այրեաց, բայց մարդոյ եւ ոչինչ մեղաւ :

* Այլ եւ կարկուտ եղեւ ի քաղաքին սաստիկ յոյժ որք եւ ահիւ ըմբռնեալք ամենեքեան՝ եւս առաւել թագուհին վրէժխնդրութիւն անկման առն Աստուծոյ համարեալ, որ եւ յերկեղէն վախճանէր յետ երից աւուրց : Եւ Քաղկեդոնի չեպիսկոպոսն որ նախատէր զերանելին Յովհան ի ժողովոյն Թէոփիլեանց, չարամահ եղեւ. այս նշանք եղեն յանկմանն Յովհաննու : * B p. 53 a.

Եւ իբրեւ տարան զերանելին ի Կոկիսոն Հայոց քաղաք, նա լուսաւոր վարդապետութեամբն աղբիւրաբար բղխէր զճառս աստուածահրաշս եւ հաւաքէր ի գիրս, եւ զբազումս աշակերտէր : Զոր լուեալ չարակամացն նորա չարակնեցին եւ տան փոխել զնա յԱրաբիոն. ուր առաւել յորդեաց զվտակս հոսմանն՝ արբուցանելով զմանալը հոգիս աստուածասիրաց անձանց. եւ համբաւն դարձեալ հնչակէր յատելիս նորա. վասն որոյ կամեցան զնա յանբնակ կղզի տանել եւ ոչ ժամանեցին ըստ մարգարէութեան սրբոյն Եպիփանու եթէ, ոչ ժամանեսցես յերրորդ աքսորանս քո :

Եւ պատահեն ի գեօղ մի Կոմանիս անուն օթեվանել հիւանդացաւ, եւ մտեալ յեկեղեցին յորում էին նշխարք սուրբ վկային Բասիլիսկոսի աղօթեաց եւ գոհացաւ

bienheureux s'asseyait pour enseigner la parole de vie; ces flammes se répandirent en forme de voûte au-dessus des passants, et mirent le feu à la maison du sénat (σύγκλητος), mais ne fit du mal à personne.

* Ensuite une grêle très violente s'abattit sur la ville, et tous étaient saisis de frayeur, en particulier l'impératrice, qui crut que c'était une vengeance de la chute de l'homme de Dieu, et mourut de frayeur trois jours plus tard. L'indigne évêque de Chalcédoine, qui avait insulté le bienheureux Jean au concile [1] de Théophile, mourut d'une mort atroce. Ces signes prodigieux eurent lieu à la chute de Jean. * B p. 53 a.

Lorsqu'on eut conduit le bienheureux à la ville de Cucuse (*Kokison*) d'Arménie, il y prononça des homélies divines d'une doctrine lumineuse, qui jaillissaient comme d'une source abondante; il en forma des livres; il forma beaucoup de disciples. Ce qu'ayant appris, ses ennemis le jalousèrent et le firent transférer à Pityonte (*Arabion*), où il multiplia les ruisseaux d'éloquence, abreuvant les âmes spirituelles des amis de Dieu, et sa renommée parvint de nouveau à ses adversaires; c'est pourquoi ils résolurent de le faire transférer dans une île déserte, mais ils n'y arrivèrent point, conformément à la prophétie de saint Épiphane : « Tu ne parviendras point à ton troisième exil. »

Ils arrivèrent à un village nommé Comana pour y passer la nuit. (Chrysostome) tomba malade; il entra dans l'église où se trouvaient les restes du

1. Il s'agit du conciliabule du Chêne.

զՄատուածոյ. եւ երեւեալ նմա սուրբ վկայն յանուրջս, ասէ. Ո՜վ երանելիդ Յովհան լուսաւոր վարդապետութեամբ քո զազգս որդւոց մարդկան լուսաւորեցեր, եւ ամբարեցեր քեզ գանձս յերկինս որ կան եւ մնան, արդ եկ եւ հանգիր ընդ մեզ ։ Եւ ասէ ցընկեր իւր Լուկիանոս մարտիրոս եւ քահանայ. Պատրաստեա՛ տեղի տեառն Յովհաննու զի ի վաղիւն գայ առ մեզ ։

* B p. 53 b.

Եւ յարուցեալ Յովհաննէս զգեցաւ սպիտակ պատմուճանս քահանայութեան եւ կօշիկս եւ մատոյց զանարիւն պատարագն Քրիստոսի, եւ հաղորդեցաւ ի պատուական եւ սուրբ մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ, եւ ասաց* զսովորական բանս իւր. Փառք քեզ Աստուած յաղագս ամենայնի ։ Եւ ողջունեալ զամենեսեան՝ նստաւ յեկեղեցւոյն յաթոռ, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց. եւ թաղեցին զնա առ սրբոցն ։

Եւ փոխանորդեն զաթոռ նորա յայլմէ յայլ մինչեւ ցերանելին Պրոկղ ։

Եւ առաքեաց Փոքր Թէոդոս թագաւորն ի Կոմանիս զի բերցեն զմարմին սուրբ հայրապետին, որ ըստ հոգւոյ զաւակ էր Յովհաննու. քանզի ի մկրտութենէն կնքահայր էր նորա ։ Եւ գնացին ի տապան սրբոյն եւ գտին զՈսկեբերանն ամբողջ, զի եւ մազ մի ի գլխոյ նորա ոչ էր պակասեալ, եւ ոչ մարմինն թարշամեալ, եւ ոչ երեսքն այլագունեալ, այլ որպէս կենդանի ի քուն գոլին ։ Եղին ի փայտեայ տապանի, եւ պաշտամամբք եւ մոմեղինօք տարան ի Կոստանդինուպօլիս յայնկոյս ծովուն ։

saint martyr Basiliscus, pria et rendit grâces à Dieu. Le saint martyr lui apparut dans un rêve et lui dit : « Oh bienheureux Jean, tu as illuminé par ta doctrine lumineuse les nations des fils des hommes et tu t'es amassé au ciel des trésors qui t'y attendent, viens donc et repose-toi avec nous. » Et il dit à son compagnon le martyr et prêtre Lucien : « Prépare une place au seigneur Jean, car demain il vient auprès de nous. »

* B p. 53 b.

Jean se leva, revêtit des vêtements sacerdotaux blancs, mit ses chaussures et offrit le sacrifice non sanglant du Christ, communia aux précieux corps et sang du Fils de Dieu et répéta * ses paroles habituelles : « Gloire à toi, Dieu, pour toutes choses. » Il donna le salut à tous, s'assit sur le trône de l'église et rendit son âme à Dieu entre les mains des anges. On l'inhuma près des saints.

Divers (patriarches) lui succédèrent sur le trône (de Constantinople) jusqu'au bienheureux Proclus.

L'empereur Théodose le Jeune envoya à Comana pour en rapporter le corps du saint patriarche ; il était fils spirituel de Jean, car celui-ci avait été son parrain au baptême. (Les envoyés) se rendirent donc au tombeau du saint et trouvèrent Chrysostome intact, car pas un cheveu de sa tête ne manquait, son corps n'était pas flétri, son visage n'était pas altéré, ils le trouvèrent comme un vivant dans le sommeil. Ils le mirent dans un cercueil de bois et le transférèrent avec offices et cierges à Constantinople au delà de la mer.

Եւ առաքեաց թագաւորն երկոտասան նաւս ի պատիւ սուրբ հայրապետին ։ Եւ եկին ի նաւահանգիստն Սոփիա՝ ի սրբոյն Թովմայի առաքելոյ եկեղեցին. եւ գնաց թագաւորն ընդ առաջ ամենայն իշխանօքն եւ քաղաքացեօքն մոմեղէնօք եւ խնկովք. եւ տեսեալ զմարմինն Յովհաննու ամբողջ եւ որպէս ի քուն, զահի հարեալք փառս ետուն Աստուծոյ ։ Բարձին անտի զմարմինն եւ տարան յեկեղեցի սրբոյն Եռինեայ, յորում Ոսկեբերանին պատրիարքարանն էր, եւ նստուցին յաթոռ ի վերայ աստիճանաց բեմին ։ Եւ ապա միաբանեցան ամենայն եպիսկոպոսունքն եւ ժողովուրդքն՝ որք հերձեալ էին ի միմեանց վասն անիրաւ անկմանն եւ աքսորանաց Ոսկեբերանին ։

Եւ անտի առեալ տարան յեկեղեցի սուրբ առաքելոցն, յորում էր տապանն Եւդոքսիա թագուհւոյն. եւ հանգուցին զկենդանի մարմինն սուրբ հայրապետին ի ներքս ի խորանի անդ ի ձախակողմն բեմին. եւ սկսան կատարել զխորհրդածութիւն սուրբ պատարագին, * ուր եղեն մեծամեծ սքանչելիք, եւ լինին անպակաս մինչեւ ցայսօր ի փառս ամենասուրբ Երրորդութեան. որում վայելէ փառք եւ իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ։ * B p. 54 a.

Յայսմ աւուր վկայութիւն Անանիայ քահանային եւ Պետրոսի բանդապանի եւ եօթն այլոց զինուորաց, որք չարչարեցան ի Փիւնիկէ ի ժամանակս Դիոկղետիանոսի եւ Մաքսիմոսի դատաւորին. եւ ամենեքեան ի ծով ընկեցան, եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս ։]

L'empereur envoya douze navires au-devant en honneur du saint patriarche Ils arrivèrent au port de Sophie, à l'église du saint apôtre Thomas. L'empereur se rendit au-devant avec tous les princes et les habitants avec cierges et encens. Lorsqu'ils virent le corps de Jean intact et comme endormi, ils en furent effrayés et glorifièrent Dieu. On enleva le corps de là et on le transporta à l'église de sainte Irène, où se trouvait le patriarcat de Chrysostome; on le fit asseoir sur le trône, en haut des marches de l'estrade. Alors tous les évêques et la population, qui s'étaient divisés à cause de l'injuste déposition et de l'exil de Chrysostome, se réconcilièrent.

De là on le transporta à l'église des saints apôtres où se trouvait le tombeau de l'impératrice Eudoxie. On déposa le corps vivant du saint patriarche à l'intérieur de la chapelle, à gauche du chœur. On commença la célébration du mystère du saint sacrifice, * où eurent lieu de grands miracles. Il s'en opéra sans cesse jusqu'aujourd'hui pour la gloire de la très sainte Trinité, à laquelle appartient la gloire, la puissance et l'honneur maintenant et toujours et dans les siècles. * B p. 54 a.

En ce jour, martyre du prêtre Ananie, du geôlier Pierre et de sept autres soldats qui furent torturés en Phénicie, aux jours de Dioclétien et du juge Maxime, puis furent tous jetés à la mer et moururent ainsi dans le Christ.]

* A fol. 171 r° a. Արացի ԻԱ եւ Յունուարի ԻԸ ։ Վարք Եփրեմի խորին Ասորոյ վարդապետին ։

Սուրբն Եփրեմ սքանչելի արդիւնաքան եւ տիեզերալոյս վարդապետն, ազգաւ ասորի էր, յԱմիթ քաղաքէ ։ Եւ հայրն քուրմ էր կռոց ։ Եւ յաւուր միում զոհս մատուցանէր կռոցն վասն Եփրեմի, եւ դեւն խօսեցաւ ի կռոց անտի եւ ասէ․ Զաղաչանս որ վասն Եփրեմի որդւոյ քո է՝ ես ոչ ընդունիմ, զի նա հալածիչ մեր լինելոց է․ այլ թէ կամիս հաճել զմեզ երթ հալածեա զնա ի տանէ քումմէ ։ Եւ հայրն նորա եհան զնա ի տանէ իւրմէ ։ Եւ նա ուրախ եղեւ յոյժ, եւ գնաց ի Մծբին քաղաք առ մեծն Յակոբ եպիսկոպոս քաղաքին ։ Եւ նա ուրախութեամբ ընկալեալ զնա՝ մկրտեաց եւ արար կրօնաւոր ։ Եւ կեայր սքանչելի վարուք, սրբութեամբ, պահօք եւ աղօթիւք․ եւ նախանձէին ընդ նա ժառանգաւորք եկեղեցւոյն ։

Եւ մի ոմն ի սարկաւագացն Եփրեմ անուն շնացաւ ընդ դուստր մեծատան միում եւ յղացոյց զնա, եւ եդ բանս ի բերան աղջկանն զրպարտել զսուրբն Եփրեմ ։ Եւ յորժամ գիտաց հայր աղջկանն խոշտանգէր զդուստրն թէ․ Ով յղացոյց զքեզ ։ Եւ նա ասէ ըստ խրատուն թէ․ Եփրեմ ճգնաւորն ։ Եւ եկեալ հայրն պատմեաց եպիսկոպոսին
* A fol. 171 r° b. Յակոբայ․ եւ նորա կոչեալ հարցանէր․ եւ սուրբն *եփրեմ անկաւ յոտս նորա լալով

1 Վարք ... վարդապետին] Վարք սուրբ եւ մեծ ճգնաւոր հօրն մերոյ եւ հոգելից վարդապետին Եփրեմի խորին Ասորոյ B || 2 Սուրբ ... վարդապետն] Սուրբն եւ սքանչելին Եփրեմ B || 3-6 Եւ յաւուր ... եղեւ յոյժ] Եւ տեսեալ զմնոտի պաշտամունս կռապաշտից՝ յարեցաւ ի քրիստոնեայս եւ թողեալ զտուն հօր իւրոյ B || 11-p. 107, l. 9 Եւ մի ոմն ... ետուն Աստուծոյ *om.* B.

* A fol. 171 r° a.

* 21 ARATZ, 28 Janvier.

Vie d'Éphrem le sublime docteur syrien.

Saint Éphrem l'admirable, l'éloquent docteur qui illumina l'univers, était syrien de nation, de la ville d'Amid. Son père était prêtre des idoles. Un jour qu'il offrait des sacrifices aux idoles pour Éphrem, le démon parla par la bouche des idoles et dit : « Les prières que tu fais pour ton fils Éphrem, je ne les accepte pas, car il doit devenir notre persécuteur. Mais si tu veux nous être agréable, va et expulse-le de chez toi. » Son père le chassa de sa maison. Il (Éphrem) en fut très content, se rendit à la ville de Nisibe auprès du grand Jacques, l'évêque de la ville, qui l'accueillit avec joie, le baptisa et le fit moine. Il mena une vie admirable de sainteté, de jeûnes et de prières; et les clercs de l'église l'enviaient.

Un des diacres, nommé Éphrem, eut des relations avec la fille d'un homme riche et la rendit enceinte, il plaça des paroles dans la bouche de la jeune fille pour qu'elle accusât saint Éphrem. Lorsque le père de la jeune fille fut informé, il battit sa fille en disant : « Qui t'a rendue enceinte. » Elle lui dit, selon ce qui lui avait été conseillé : « L'ascète Éphrem. » Le père alla le raconter à l'évêque Jacques, qui, ayant mandé (Éphrem), l'interrogea. Saint Éphrem
* A fol. 171 r° b. * tomba à ses pieds en pleurant et dit : « J'ai péché, rends-moi digne de la

եւ ասէ. Մեղայ, արժանացո՛ զիս ապաշխարութեան։ Եւ իբրեւ ծնաւ աղջիկն զմանուկն, եբեր հայր աղջկանն զմանուկն եւ ետ ցերանելին Եփրեմ եւ ասէ. Առ զորդիդ քո զոր չարեօք սերմանեցեր։ Եւ առեալ սրբոյն արբուցանէր նմա կաթն խաշանց։

Եւ յաւուր միում ժողովուրդ բազում էր յեկեղեցւոջն, ել նա յամբիոն եկեղեցւոյն եւ բարձրացուցեալ զմանուկն, ասաց բարձր ձայնիւ ցտղայն. Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ասա՛ թէ ո՞վ է հայր քո։ Ասէ մանուկն. Եփրեմ է հայրն իմ, ոչ որ բարձեալ ունի զիս՝ այլ սարկաւագապետն Եփրեմ։ Եւ լուեալ զայս փառս ետուն Աստուծոյ։

Եւ գնաց սուրբն յՈւռհայ, եւ անդ բնակէր եւ սրբէր զժողովուրդն յամենայն հերձուածոց, եւ էր ի լերինն. եւ միայնակեաց մի տեսանէր ի տեսլեան զի բարունակ մի բուսաւ ի բերան նորա եւ եբեր պտուղ յոյժ, եւ ի նմանէ ուտէին թռչունք, եւ նա առաւել եւս պտղաբերէր։

Եւ սկսաւ գրել մեկնութիւնս հին եւ նոր Կտակարանացն, եւ ճառս զղջման եւ

11 էր] բնակէր B — լերինն] առանձնական կենօք մեծ ճգնութեամբ *add.* B — մի] ոմն առաքինի B || 12 բերան] լեզուի B || 14 Եւ սկսաւ գրել ... Յունուարի ԻԸ] Եւ այս ի նշանակ առատապարգեւ գիտութեան նորա որով կերակրեաց զհոգիս մարդկան։ Տեսանէ եւ այլ ոմն յանապատաւոր կրօնաւորացն յանուրջս՝ այր մի ահաւոր եւ ունէր ի ձեռին իւրում տումար քարտէս եւ ասէր. Ո՞վ է կարող առնուլ զտումարս եւ պահել։ Եւ եղեւ ձայն առ նա եւ ասէ. Ոչ ոք բայց միայն ծառայն իմ Եփրեմ։ Եւ առժամայն էարկ զտումարն ի բերանն Եփրեմի, եւ նա եկեր. եւ բղխեաց ի բերանոյ նորա իբրեւ զգետ շնորհք Հոգւոյն սրբոյ։ Տեսանէ ի տեսլեան զսուրբն Բասիլիոս իբրեւ սիւն լուսոյ, եւ իջեալ ի լեռնէն գնաց ի Կեսարիա, եւ ձեռնադրեցաւ ի նմանէ սարկաւագ։ Եւ դարձաւ ի լեառն եւ սկսաւ գրել զգիրս զղջման եւ ապաշխարութեան եւ զկարգ կրօնաւորութեան B.

pénitence. » Lorsque la jeune fille mit au monde l'enfant, le père de la jeune fille apporta l'enfant et le remit au bienheureux Éphrem et lui dit : « Prends ton fils que tu as engendré par ta mauvaise action. » Le saint le prit et lui donna à boire du lait de brebis.

Un jour qu'il y avait une nombreuse assistance à l'église, il monta sur l'ambon (*ambion*), et, élevant l'enfant, il lui dit à haute voix : « Au nom de Notre-Seigneur Jésus-Christ, dis qui est ton père? » L'enfant répondit : « Mon père est Éphrem, non pas celui qui me tient élevé, mais l'archidiacre Éphrem. » Entendant cela, tous glorifièrent Dieu.

Le saint se rendit à Édesse, y habita et y purgea la population de toutes les hérésies. Il vivait à la montagne. Un anachorète vit en vision qu'une branche avait poussé de sa bouche et portait beaucoup de fruits, les oiseaux venaient en manger, et elle portait toujours plus de fruits.

Il se mit à écrire les commentaires de l'ancien et du nouveau Testament,

ապաշխարութեան, եւ ի տօնս տէրունականս եւ վկայից Աստուծոյ, եւ շարականս բազումս, եւ գիրս կցորդաց եւ աղօթից :

Գնաց յԵգիպտոս եւ շրջեցաւ ընդ միայնակեացս եւ բազում կարգս ուղղեաց նա : Եւ ի ծովուն գազան մի սաստիկ որ կամէր կորուսանել զնաւն սպան աղօթիւք, եւ գայր ի վերայ երեսաց ջրոյն իբրեւ զբլուր մի :

* A fol. 171 v° a. *Ցանկացաւ տեսանել եւ զսուրբն Բասիլիոս զարքեպիսկոպոսն Կեսարիոյ. եւ տեսանէր ի տեսլեան սիւն մի հրեղէն, եւ զգլուխն հասանէր մինչեւ յերկինս : Ասէին նմա. Այսպէս է Բասիլիոս մեծն : Եւ առեալ թարգման գնաց ի Կեսարիա. եւ ի տօնի Աստուածայայտնութեանն գնաց յեկեղեցին, եւ տեսանէր զսուրբն Բասիլիոս զարդարեալ սպիտակ հանդերձիւք, եւ պաշտօնեայքն սպասաւորէին նմա : Եւ ասաց. Ի զուր աշխատեցայ, զիա՞րդ կարէ լինել սա սիւն հրեղէն որ յայսպիսի փառս եւ ի պատիւ է : Եւ սուրբն Բասիլիոս յղեաց առ նա զարկաւագապետն իւր երիցս անգամ, եւ ասէ. Հայր Եփրեմ, եկ մօտ առ մեզ : Եւ նա ասաց. Յետ արձակման պատարագիս ողջունեալ օրհնեսցայց ի քէն : Եւ տեսանէր զի յորժամ վարդապետէր ժողովրդեանն Բարսեղ՝ սուրբ Հոգին խօսէր նովաւ : Եւ տուեալ ողջոյն միմեանց՝ ձեռնադրեաց զԵփրեմ սարկաւագ եւ զթարգման նորա քահանայ :

Եւ գնաց Եփրեմ յՈւռհայ եւ կատարէր մեծամեծ սքանչելիս, եւ սրբէր յամենայն

des homélies de contrition et de pénitence, sur les fêtes du Seigneur et sur les martyrs de Dieu; des hymnes en grand nombre, des recueils d'antiennes et des prières.

Il se rendit en Égypte, visita les anachorètes, et réglementa beaucoup d'ordres. En mer une bête farouche voulait perdre le navire, il la tua par ses prières. La bête monta à la surface de l'eau et forma comme une colline.

* A fol. 171 v° a. * Il désira voir saint Basile (*Basilios*), l'archevêque de Césarée, et vit dans une vision une colonne de feu dont la tête arrivait jusqu'au ciel. On lui dit : « Tel est le grand Basile. » Il prit un interprète avec lui et se rendit à Césarée. Il alla à l'église le jour de l'Épiphanie du Seigneur et vit saint Basile revêtu de parements blancs, et des ministres le servaient. Il se dit : « Je me suis donné de la peine pour rien; comment peut-il être une colonne de feu celui qui est dans tant de faste et honneurs? » Saint Basile lui envoya son archidiacre par trois fois pour lui dire : « Père Éphrem, viens près de nous. » Il répondit : « Après la fin de la messe je te saluerai et recevrai ta bénédiction. » (Éphrem) se rendit compte que lorsque Basile (*Barsegh*) parla aux fidèles, le Saint-Esprit parla par sa bouche. Lorsqu'ils se furent salués, (Basile) ordonna Éphrem diacre et son interprète prêtre.

Éphrem retourna à Édesse et y accomplit de grands prodiges, il purifia

հերձուածոց զեկեղեցիս ։ Եւ հիւանդացեալ ասաց ոչ թաղել զինքն յեկեղեցւոջն, այլ ընդ աղքատս քաղաքին, զի ամենայն ոք, ասէ, նմանաւն իւրով խնդայ ։

Եւ վախճանեցաւ սուրբ վարդապետն եկեղեցւոյ, սքանչելին Եփրեմ, Յունուարի ԻԸ ։

Գրեաց եւ վասն նեռինն ճառս, եւ վասն գալստեանն Քրիստոսի, եւ ահագին * դատաստանին, եւ հատուցման ըստ գործոց մարդկան, եւ վասն ուղղափառ հաւատոյ ։ * A fol. 171 v° b.

Կամեցաւ երանելին տեսանել զքաղաքն Ուռհայ, եւ աղաչեաց զԱստուած զի պատահեսցի ի քաղաքին մարդոյ որ խօսի ի գրոց եւ օգտեսցի հոգւով ։ Եւ յարուցեալ էջ ի լեռնէն եւ գնաց ։ Եւ յորժամ եմուտ ընդ դուռնն քաղաքին՝ հանդիպեցաւ կնոջ միոյ պոռնկի, տրտմեցաւ եւ ասէ. ՛Ով Տէր, անտես արարեր զխնդրուածս իմ, զի պատահեցայ ես մարդոյ՝ որ ոչ կարասցէ օգնել ինձ ։ Եւ պշուցեալք հայէին ընդ միմեանս ։ Ասէ Եփրեմ ցկինն. ՛Ով աղջիկ, ընդէ՞ր նայիս ընդ իս ։ Պատասխանի ետ պոռնիկ կինն եւ ասէ. Ես բարւոք առնեմ զի նայիմ ի քեզ, զի կին եմ եւ յառնէ առեղծայ, քեզ՝ չէ արժան յիս հայել, բայց յերկիր յորմէ առեղծար ։ Եւ զայս լուեալ Եփրեմ զարմացաւ եւ փառաւորեաց զԱստուած ասելով եթէ. Ի տգէտ եւ ի պոռնիկ կնոջէ բանս լուայ եւ օգտեցայ, այժմ ծանեայ Տէր զի ոչ արարեր զխնդրուածս իմ անտես ։

6 երանելին] Եփրեմ *add.* B.

les églises de toutes les hérésies. Lorsqu'il tomba malade, il demanda à ne pas être enterré dans l'église mais avec les pauvres de la ville, car, disait-il, chacun se réjouit de son semblable.

Le saint docteur de l'église, le merveilleux Éphrem, mourut le 28 Janvier.

Il avait écrit aussi des homélies sur l'antéchrist, la venue du Christ, le * jugement terrible, la récompense des hommes selon leurs œuvres, et sur la foi orthodoxe. * A fol. 171 v° b.

Le bienheureux, ayant voulu voir la ville d'Édesse, avait prié Dieu de lui faire faire la rencontre dans la ville de quelqu'un sachant lui parler des écritures, pour qu'il pût en profiter spirituellement. Il se leva, descendit de la montagne et se mit en route. Lorsqu'il pénétra par la porte de la ville, il rencontra une prostituée, s'en attrista et dit : « O Seigneur, tu as dédaigné ma prière, car j'ai rencontré quelqu'un qui ne pourra m'être utile. » Ils se regardèrent étonnés. Éphrem dit à la femme : « O fille, pourquoi me regardes-tu? » La prostituée lui répondit : « Je fais bien de te regarder, car je suis une femme et j'ai été créée de l'homme; mais toi, tu ne dois pas me regarder, moi, mais la terre d'où tu as été créé. » En entendant cela, Éphrem fut saisi d'étonnement et glorifia Dieu en disant : « De cette femme ignorante et prostituée j'ai entendu des paroles utiles et je reconnais maintenant, Seigneur, que tu n'as pas dédaigné ma prière. »

Եւ մտեալ ի քաղաքն իջավանեցաւ ի տուն մի, եւ էր մերձ ի տունն դրացի կին մի այլ պոռնիկ, եւ խոնարհեալ ի պատուհանէն ասէ. Օրհնեա՛ հայր ։ Եւ խոնարհեալ Եփրեմ ի պատուհանէն ետես զկինն եւ ասէ. Աստուած օրհնեսցէ զքեզ ։ Ասէ կինն. Զի՞նչ պիտոյ են քեզ զի յուղարկեցից քեզ կերակուր ։ Ասէ Եփրեմ. Երիս քարինս
* A fol 172 r° a. եւ ..... զի * փակեցից զպատուհանդ ։ Ասէ կինն. Որպէս զի նախ ես խօսեցայ ընդ քեզ՝ մեղադիր լինիս ինձ ։ Ես մտածեալ եմ ընդ քեզ ննջել, եւ դու դատարկ բանիւ խափանել կամիս ։ Ասէ Եփրեմ. Եթէ կամիս ընդ իս ննջել ուր ասացից քեզ եկեսջիր եւ ննջեսցես ընդ իս ։ Եւ ասէ կինն. Ասա՛ ինձ զտեղին եւ ես եկից ։ Եւ ասէ Եփրեմ. Ի մէջ քաղաքիս՝ ի փողոցին ։ Ասէ կինն. Ի մարդկանէ ո՞չ ամաչեմք ։ Ասէ Եփրեմ. Եթէ ի մարդկանէ ամաչեմք, ո՞րչափ մանաւանդ յԱստուծոյ ամաչել եւ երկնչել պարտ է, որ գիտողն է գաղտնեաց մարդկան, եւ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց ։ Եւ զայս լուեալ պոռնիկ կինն զղջացաւ ի գործս իւր եւ իջեալ անկաւ յոտս Եփրեմի եւ լալով աղաչէր. Կեցո՛ զիս ծառայ Քրիստոսի, եւ առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհ փրկութեան ։ Եւ երանելին Եփրեմ սկսաւ բազում վարդապետութեամբ ուսուցանել կնոջն զբանս փրկութեան, եւ եմոյծ զնա ի կանանց վանս, եւ մեծաւ ապաշխարութեամբ ազատեցաւ կինն ի մեղաց իւրոց ։

1-16 Եւ մտեալ ... մեղաց իւրոց] Եւ կացեալ ի քաղաքին աւուրս ինչ՝ բազում վարդապետութեամբ դարձուցանէր զմոլորեալսն յապաշխարութիւն փրկութեան B.

Étant entré dans la ville, il logea dans une maison, et il y avait auprès, dans une maison voisine, une autre prostituée, qui, se penchant à la fenêtre, lui dit : « Bénis-moi, mon père. » Éphrem, se penchant à la fenêtre, aperçut la femme et lui dit : « Que Dieu te bénisse. » La femme lui dit : « De quoi as-tu besoin pour que je t'envoie à manger? » Éphrem répondit : « Trois pierres
* A fol. 172 r° a. * pour murer la fenêtre. » La femme dit : « Parce que j'ai été la première à te parler, tu trouves de quoi me blâmer. Moi, je songe à coucher avec toi, et toi, tu cherches par des propos inutiles à m'en empêcher. » Éphrem lui répondit : « Si tu veux coucher avec moi, je te dirai où il faudra venir et tu coucheras avec moi. » La femme lui répondit : « Dis-moi l'endroit et j'irai. » Éphrem lui répondit : « Au milieu de la ville, dans la rue. » La femme lui dit : « N'aurons-nous pas honte des hommes? » Éphrem répondit : « Si nous avons honte des hommes, combien plus devons-nous en avoir de Dieu et le craindre, Lui qui connaît tous les secrets des hommes et qui récompense chacun selon ses œuvres. » En entendant cela, la prostituée regretta ses actes, descendit et se jeta aux pieds d'Éphrem et le pria en pleurant : « Sauve-moi, serviteur du Christ, et guide-moi dans la voie du salut. » Le bienheureux Éphrem se mit à enseigner à la femme avec beaucoup de doctrine les paroles du salut, la fit entrer dans un couvent de femmes, et la femme trouva la rémission de ses péchés après une grande pénitence.

Եւ Եփրեմ ելեալ ի քաղաքէն գնաց յանապատն ։ Էր Եփրեմ այր երկիւղած Աստուծոյ, երկայնամիտ, հեզ, հանդարտ, խոնարհ, անխարդախ, ճգնատեւակ, զղջական, լռակեաց, որ միայն տեսութիւնն իւր դարձուցանէր զմարդիկ ի զղջումն. միտք իւր ամենեւին ոչ ցրուէին, անդադար յաղօթս * անհանգիստ տքնութեամբ, անչափ պահօք ։ * A fol. 172 r° b. Եւ կարգեաց կարգս եւ սահմանս վանաց, թէ որպէս պարտ է հօր վանացն եւ եղբարցն կալ ի վանսն, եւ այլ բազում յիշատակ եթող յաշխարհի գրով եւ անգիր ։

Եւ յառաջագոյն գիտաց զկատարումն կենաց իւրոց, կոչեաց զամենայն եղբարսն եւ ողջունեալ զնոսա հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ։

Յայսմ աւուր կատարեցան գանիւք եւ հրով, եւ ապա հատին սրով զգլուխս նոցա, ի Տրապիզոն քաղաքի,ս սուրբ վկայքն Վաղերիանոս, Կանդիտոս, Ակիւղաս, Եւգինիոս ի Լիւսիայ եւ յԱգրիկողայոսէ դատաւորացն, առ Դիոկղետիանոսիւ արքայի ։

[B * Յայսմ աւուր յիշատակ սուրբ վկայիցն Քրիստոսի որք ի Տրապիզոնացւոց քաղաքին կատարեցան ։ * B p. 55 a.

Սոքա էին ի ժամանակս Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի թագաւորացն, եւ ի դատաւորութեանն Լիւսիայ եւ Ագրիկողայոսի, յորոց սաստիկ հրաման յամենայն արեւելս տարածեալ լինէր պատիժ պատուհասի ի վերայ ամենայն որոց միանգամ խոստովանին զանունն Քրիստոսի ։

Եւ մատուցեալ ոմանք առ դատաւորն մատնեցին եթէ են վարդապետք քրիստոնէից

6 յաշխարհի] յերկրի B || 8 Քրիստոս] եւ թաղեցաւ յամենայն անապատաւորացն Յունվարի ԻԸ ի փառս Աստուծոյ մերոյ *add.* B.

Éphrem quitta la ville et se rendit au désert. Éphrem était un homme craignant Dieu, longanime, doux, calme, humble, sincère, ascète, faisant pénitence, silencieux, qui par sa seule vue convertissait les hommes au repentir; il n'avait jamais de distraction, il était toujours en prières * sans prendre de répit, dans un jeûne extrême. * A fol. 172 r° b. Il établit des règles et des constitutions pour les couvents, sur les rapports des prieurs et des frères dans les monastères, et il laissa de nombreux souvenirs sur la terre, écrits et non écrits.

Il connut à l'avance la fin de sa vie; il fit venir tous les frères et, les ayant salués, reposa en paix dans le Christ.

En ce jour furent martyrisés par les coups et par le feu, ayant ensuite la tête tranchée, dans la ville de Trébizonde, les saints martyrs Valérien, Candidus, Aquila, Eugène sur l'ordre des juges Lysias et Agricola, sous le règne de l'empereur Dioclétien.

[* En ce jour, commémoration des saints martyrs du Christ qui furent exécutés dans la ville de Trébizonde. * B p. 55 a.

Ils vivaient aux jours des empereurs Dioclétien et Maximin, et des juges Lysias et Agricola dont les ordres sévères répandus dans tout l'Orient commandaient de punir tous ceux qui confessaient le nom du Christ.

Quelques gens se présentèrent au juge et lui dénoncèrent que des docteurs

թաքուցեալք ի լերինն Տրապիզոնտացւոց, եւ առաքեալ դատաւորն կալաւ զնոսա. եւ նոքա խոստովանեցան զՔրիստոս Աստուած, եւ տարան զնոսա ի բանդ կապանօք ։ Եւ

* B p. 55 b. յետ աւուրց կացուցին առաջի, եւ երկար * քննեալ՝ իբրեւ ետես զհաստատութիւն մտաց նոցա ի Քրիստոս, հրամայեաց եւ կապեցին զնոսա զփայտէ, զոտս նոցա պնդեցին ի կոճեղս, եւ քերեալ եղեն կողք նոցա, եւ ի հուր ընկեցան. եւ յետոյ ընկալան զգլխատումն սրոյ վասն անուանն Քրիստոսի ։]

Արացի ԻԲ եւ Յունուարի ԻԹ ։ Վկայութիւն սուրբ Նէոփիտոսի որ թարգմանի նորատունկ ։

Յամս ամբարիշտ թագաւորին Դիոկղետիանոսի, ի քաղաքին Նիկիայ Բիւթանացւոց, էին ամուսինք Թէոդորոս եւ Փլաւրենդիա քրիստոնէայք. եւ էր նոցա զաւակ Նէոփիտոս, որ եղեւ ի տղայութենէ զգաստ ։ Եւ յորժամ եղեւ ինն ամաց՝ ուսաւ գիր եւ խօսք իմաստութեան տուաւ նմա յԱստուծոյ եւ ժողովէր մանկունս որբս ի հեթանոսաց, կերակրէր զնոսա եւ ուսուցանէր զհաւատս քրիստոնէականս ։ Եւ գնայր նոքօք հանդերձ

* A fol. 172 v° a. յարեւելից կոյս դրուն քաղաքին, կանգնէր խաչ եւ կայր նոքօք * յաղօթս, եւ բախէր ձեռօքն զպարիսպն եւ ելանէր կաթն ջրախառն ըմպէին եւ ուրախ լինէին եւ ողջունեալ զնոսա յուղարկէր ։

chrétiens se trouvaient cachés dans la montagne de Trébizonde. Le juge envoya des gens qui les arrêtèrent. Ils confessèrent le Christ Dieu, et on les emmena en prison chargés de fers. Quelques jours après, on les fit compa-

* B p. 55 b. raître; (le juge), après les avoir interrogés * longuement, voyant la fermeté de leur esprit dans le Christ, ordonna de les attacher à un poteau, et leurs pieds à un tronc; on leur laboura les côtes, puis on les jeta dans les flammes, enfin ils eurent la tête tranchée par l'épée pour le nom du Christ.]

22 ARATZ, 29 Janvier.

Martyre de saint Néophyte, nom qui se traduit « nouvelle plante ».

Aux jours de l'empereur impie Dioclétien, dans la ville de Nicée de Bithynie, vivaient les époux chrétiens Théodore et Florentia; et ils avaient un fils, Néophyte, qui fut sage dès son enfance. Lorsqu'il eut neuf ans, il apprit à lire; des paroles de sagesse lui furent accordées par Dieu. Il rassemblait des enfants païens orphelins, les nourrissait, et leur enseignait la foi chrétienne; puis, se rendant avec eux à la porte orientale de la ville, il y plantait

* A fol. 172 v° a. une croix et se mettait en prières * avec eux, puis frappait de ses mains les murs de la ville, qui rendaient du lait mélangé à de l'eau qu'ils buvaient, et après qu'ils s'étaient réjouis, il les saluait et les renvoyait chez eux.

Եւ հրեշտակ Տեառն ի տեսլեան պատմեաց Փլորենտիայ մօր նորա զոր ինչ առնէր Նէոփիտոս : Եւ ի միում աւուր ի թռիչս եկն աղաւնի մի, եւ նստաւ ի վերայ մահճացն Նէոփիտոսի : Ասէ Փլորենտիա . Զո՞ խնդրես : Եւ տարածեալ զթեւսն ասէ աղաւնին մարդկային բարբառով . Առաքեցայ յերկնից զի անարատ պահեցից զանկողինս Նէոփիտոսի : Եւ յահէ տեսլեանն աղաւնոյն կինն որպէս մեռեալ անկաւ . եւ երթեալ Նէոփիտոս աղօթիւք կանգնեաց զնա : Եւ յետ աւուրց ինչ եկեալ աղաւնին ասէ ցՆէոփիտոս . Եկ զկնի իմ. եւ առեալ եհան զնա յՈղոմպիոս լեառն եւ թռուցեալ աղաւնին եմուտ յայր մի, եմուտ եւ Նէոփիտոս զկնի, եւ ետես առիւծ մի ահաւոր յայրին, եւ ասէ . Ել աստի : Եւ առիւծոյն խոնարհեցուցեալ զգլուխն իւր եւ լիզէր զփոշի ոտիցն, եւ ել խաղաղութեամբ : Եւ հրեշտակ Տեառն կերակրէր զՆէոփիտոս յայրին : Եւ տուաւ նմա գիրս յորում գրեալ էր եւ ընթեռնոյր . Սուրբ, սուրբ, սուրբ : Եւ ասէ հրեշտակն . Էջ ի քաղաքն եւ տեսցես զծնողսն քո, եւ զինչս բաշխեսցես աղքատաց, եւ եկ ի տուն քո յերկինս : Եւ այսպէս արարեալ երանելին Նէոփիտոս դարձաւ ի լեառն, եւ էր ամաց հնգետասանից :

* Իսկ Դեկոս դատաւորն զոհէր կռոցն ի Նիկիա քաղաքին : Եւ հրեշտակ Տեառն * A fol. 172 v° b.
յափշտակեաց զՆէոփիտոս ի լեռնէն եւ կացոյց ի քաղաքին ի մէջ ժողովրդեանն, եւ որպէս ի հրեշտակ պշուցեալ հայէին ի նա եւ ասէին . Եկ եւ դու պատանի եւ զոհեա ընդ մեզ : Եւ նորա անգոսնեալ արհամարհեաց զդիւական պաշտամունս նոցա : Եւ

L'ange du Seigneur raconta dans un songe à sa mère Florentia ce que faisait Néophyte. Un jour une colombe dans son vol entra et vint se poser sur le lit de Néophyte. Florentia lui dit : « Qui cherches-tu ? » La colombe, ouvrant ses ailes, répondit en langage humain : « Je suis envoyée du ciel pour conserver pur le lit de Néophyte. » La femme, saisie à la vue de la colombe, tomba à terre comme morte. S'étant approché, Néophyte la releva par ses prières. Quelques jours après, la colombe revint et dit à Néophyte : « Viens avec moi, » et elle le conduisit au mont Olympe (*Olompios*), puis prit son vol et pénétra dans une grotte; Néophyte la suivit et aperçut un lion terrible dans la grotte et lui dit : « Sors d'ici. » Le lion baissa la tête, lécha la poussière de ses pieds et sortit paisiblement. L'ange du Seigneur vint nourrir Néophyte dans la grotte. Il lui fut donné un livre dans lequel se trouvait écrit : « Saint, saint, saint » et il le lut. L'ange lui dit : « Descends à la ville, tu verras tes parents, tu distribueras tes biens aux pauvres; puis, reviens à ta maison au ciel. » Ainsi fit le bienheureux Néophyte; et il retourna à la montagne; il avait alors quinze ans.

* Le juge Dèce faisait immoler des sacrifices aux idoles dans la ville * A fol. 172 v° b.
de Nicée. L'ange du Seigneur ravit Néophyte de * la montagne et le posa dans la ville au milieu de la population, qui le considéra avec stupéfaction comme un ange et lui dit : « Viens, jeune homme, et immole avec nous. » Il blâma avec dédain leurs cérémonies démoniaques. Alors, fort irrités, les

բարկացեալ յոյժ կալան զերանելին եւ տանջեցին արջառաջլօք, եւ ապա կախեցին զփայտէ, եւ հեղին ի վերայ քացախ խառնեալ աղիւ :

Եւ լուեալ Դիոկղետիանոսի արքային՝ հրամայեաց Դեկոսի դատաւորին արկանել զնա ի հրացեալ թոնիր զերիս աւուրս : Եւ յետ երից աւուրց բացին զթոնիրն, եւ ել բոցն եւ այրեաց զսպասաւորսն : Եւ սուրբն ել ամբողջ եւ անարատ : Եւ կապեցին զնա մերկ ի ցից մի, եւ թողին ի նա արջ, եւ ոչ մերձեցաւ ի նա, մանաւանդ երկիր պագանէր : Եւ թողին ի նա առիւծ մի ահաւոր, եւ տեսեալ առիւծուն՝ անկաւ յոտս նորա քծնելով լիզէր զոտսն, եւ որպէս մարդաբար սիրէր : Ծանեաւ զնա Նէոփիտոս եթէ այն առիւծն է զոր յայրէն եհան, օրհնեաց զնա եւ հրամայեաց խաղաղութեամբ երթալ ի լեառն :

Եւ մի ոմն ի դահճացն եհար գեղարդեամբ ի կուրծս սրբոյն, եւ անկեալ յերկիր հեղաւ արիւն նորա յոյժ, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունուարի ԻԹ :
* A fol. 173 r° a. Էր սուրբն Նէոփիտոս ամաց հնգետասանից եւ չորից ամսոց : Եւ երթեալ *ծնողաց առին զմարմինն եւ թաղեցին ի յարկս իւրեանց :

Յայսմ աւուր վերադարձումն է պատուական նշխարաց սրբոյն Իգնատիոսի աստուածազգեաց հայրապետին, զոր ի Հռոմայ բերին աշակերտքն իւր յԱնտիոք :

* B p. 55 b. [B* Վերադարձումն պատուական նշխարացն աստուածազգեցին Իգնատիոսի ի Հռոմէ ի մեծն Անտիոք :

Սուրբ եւ աստուածազգեաց հայրապետն Անտիոքայ Իգնատիոս, զորմէ ասի եթէ

gens saisirent le bienheureux et le frappèrent avec des nerfs de bœuf, puis le suspendirent à un arbre et versèrent sur lui du vinaigre mélangé de sel.

L'ayant appris, l'empereur Dioclétien ordonna au juge Dèce de le jeter dans un four surchauffé et de l'y laisser pendant trois jours. Trois jours après, ayant ouvert le four, des flammes en jaillirent et brûlèrent les desservants. Le saint en sortit intact et sans brûlure. On l'attacha nu à un poteau et on lança contre lui un ours, qui ne l'approcha point mais se prosterna devant lui. On lança contre lui un lion terrible, mais le lion, en l'apercevant, s'accroupit à ses pieds, lui caressa et lui lécha les pieds et se mit à l'aimer comme s'il fût humain. Néophyte reconnut que ce lion était celui qu'il avait fait sortir de la grotte, il le bénit et lui ordonna de s'en aller tranquillement à la montagne.

Un des bourreaux frappa de sa lance la poitrine du saint, qui tomba à terre en perdant beaucoup de sang. Il rendit son âme à Dieu, le 29 Janvier.
* A fol. 173 r° a. Saint Néophyte avait quinze ans et quatre mois. Ses parents * allèrent prendre son corps et l'inhumèrent dans leur maison.

En ce jour, retour des précieux restes de saint Ignace, le patriarche revêtu de Dieu, qui furent transportés de Rome à Antioche par ses disciples.

* B p. 55 b. [* Retour des précieux restes d'Ignace, revêtu de Dieu, de Rome à la grande Antioche.

Le saint patriarche d'Antioche, revêtu de Dieu, Ignace, était l'enfant que

մինչ մանուկն էր ի գիրկս իւր ընկալաւ զնա Քրիստոս, գգուեաց եւ օրհնեաց ։ Սա աշակերտակից եղեւ Պողիկարպոսի, եւ աշակերտ Յովհաննու աստուածաբան աւետարանչին, եւ այնպէս հետեւող եղեւ առաքելոցն սրբոց ։

Այլ եւ երկրորդ եպիսկոպոս գոլով Անտիոքայ յետ Եւոդիոսի. եւ առաքելաշնորհ վարդապետութեամբ լուսաւորեաց զբազումս, դարձուցանելով ի մոլորութենէ կռոց յաստուածգիտութիւն ճշմարտութեան ։

Եւ յորժամ Տրայանոս թագաւորն անցանէր ընդ Անտիոք, քննեալ զնա վասն հաւատոցն Քրիստոսի, արկ ի բանդ. եւ յետոյ առաքեաց զսուրբն կապանօք ի Հռոմ կերակուր գազանաց լինել, եւ նա աղօթելով առ Աստուած կատարեցաւ նահատակութեամբ ի գազանացն ։

Եւ հաւատացելոցն բարձեալ զսուրբ նշխարս նորա եւ տարան յԱնտիոք. եւ բնակիչք քաղաքին ընդ առաջ ելեալ մեծաւ ցնծութեամբ՝ ընկալան եւ հանգուցին անդէն զպատուական սուրբ նշխարս նորա, որ եւ ի նմին աւուր բազում եւ մեծամեծ նշանք սքանչելեաց եղեն ի փառս Աստուծոյ ։ Եւ հաստատեցին սուրբ հարքն ի նմին աւուր տօնել *զյիշատակ նորա մինչեւ ցայսօր՝ փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ * B p. 56 a.
Հոգին յաւիտեան ։

Ի սմին աւուր յիշատակ երանելի հօրն մերոյ Վանականն վարդապետի ։

Սա էր յաշխարհէն Արձախոյ, ի Տաւուշ գաւառէն, ազգաւ հայ ։ Եւ մինչդեռ մանուկ էր՝ ծնողք նորա ընծայեցին զնա Աստուծոյ ։ Եւ սնաւ սրբութեամբ ի վանս Գետկայ

le Christ, dit-on, accueillit dans ses bras, caressa et bénit. Il fut le condisciple de Polycarpe et le disciple de Jean le théologien, l'évangéliste, et ainsi fut-il le successeur des saints apôtres.

Il fut aussi le deuxième évêque d'Antioche après Évodius. Il illumina par sa doctrine apostolique bien des gens en les détournant de l'erreur des idoles à la vraie science de Dieu.

Lorsque l'empereur Trajan vint à passer par Antioche, il l'interrogea sur la foi au Christ, et le fit jeter en prison; ensuite il envoya le saint chargé de fers à Rome pour être jeté en pâture aux fauves, et c'est en priant qu'il mourut en martyr, dévoré par les fauves.

Les fidèles, ayant recueilli ses saints restes, les transportèrent à Antioche, les habitants de la ville allèrent au-devant avec grande joie, reçurent les saints restes, les déposèrent dans la ville, et le même jour beaucoup de grands prodiges eurent lieu pour la gloire de Dieu. Les saints pères décidèrent de fêter ce jour-là * sa commémoration, qui continue jusqu'à nos jours, * B p. 56 a.
en glorifiant le Père, le Fils et le Saint-Esprit éternellement.

En ce jour, commémoration de notre bienheureux père, Vanakan Vardapet (le docteur).

Il était des pays d'Artzakh, dans la province de Tavouš, de race arménienne. Lorsqu'il était encore jeune, ses parents l'offrirent à Dieu. Il fut élevé

առ երէց եղբօր իւրում իւրում որոյ անուն էր Պօղոս : Եւ էր մանուկ ուշիմ՝ ուսումնասէր եւ երկիւղած յԱստուծոյ, եւ ի պատանեկութեան իւրում զկատարելութիւն ծերոց յանձին ունէր :

Եւ մինչ եղեւ քսանամեայ ձեռնադրեցաւ քահանայ, եւ եմուտ յաշակերտութիւն ամենիմաստ վարդապետին Մխիթարայ Գօշի, եւ ուսաւ ի նմանէ զգիտութիւն աստուածային գրոց եւ այլ կենցաղօգուտ իմաստից : Եւ ապա ընկալաւ զհրաման վարդապետութեան քարոզել զբանն կենաց, որով դարձոյց զբազումս ի մեղաց ի զեղջ եւ յապաշխարութիւն, եւ մխիթարեաց զվհատեալ հոգիս :

Ils étaient disciples de Daniel, chorévêque de saint Grégoire l'Illuminateur, thaumaturges qui vivaient en ascètes dans le désert de la province de Dzopk, et ils ne se nourrissaient que d'herbes.

Saint Šalita était de la ville d'Amid, de race syrienne, et vivait dans la

ուր էին բազմութիւնք առիւծուց, եւ ոչ ինչ վնասէին նմա ։ Եւ էր Սաղիտա ծեր յոյժ, եւ ամենայն որ ցանկային զի ի վախճանի իւրում առցեն զսուրբ մարմինն նորա ։ Եւ յաւուր միում անցանէր նա ընդ գետն Կորդուաց եւ յորժամ եհաս ի մէջ գետոյն՝ ծածկեցաւ ի ներքոյ ջրոյն ։ Եւ ժողովեալ բազմութիւն արանց յոյժ ընդ այլ կողմն դարձուցին զջուր գետոյն, եւ ոչ գտին զմարմին նորա, զի այնպէս խնդրեալ էր սուրբն ի Տեառնէ ։

Իսկ սուրբն Եպիփան էր ի Յունաց, եւ բնակէր յԱռիւծ լերինն ի մէջ վայրենի գազանաց, որք էին նորա կենաց կցորդք ։ Եւ գային առ նա ամենայն ցաւագնեալք, եւ նա աղօթիւք բժշկէր զամենեսին ։ Գային առ նա եւ բազումք ի հեթանոսաց, եւ աստուածային բանիւք եւ զօրութեամբ նշանաց դարձուցանէր ի նոցանէ ի հաւատս Քրիստոսի ։

Եւ ժողովեաց զբազում աշակերտս, եւ ուսուցանէր նոցա զկարգ ճգնութեան. եւ ել նոքօք յերկրէն Հայոց գնալ յերկիրն Յունաց. եւ ի ճանապարհին պատահեաց նոցա կին մի, եւ իբրեւ անց կինն՝ կամեցաւ փորձել զաշակերտսն, եւ ասէ. Որպէս գեղեցիկ էր կինն ։ Եւ ասէ մի ոմն ի մանկագոյն աշակերտացն. Տէր, կինն զոր գովեցեր՝
* B 61 b. միականի * էր ։ Եւ ասէ սուրբն Եպիփան. Խորհուրդք չարք գոն ի քեզ, ընդէր բնաւ հայեցար դու ի նա. եւ հալածեաց զնա յիւրմէ ։

Եւ հասեալ յեզր ծովուն մեծի՝ եգիտ անդ կղզի մի անբնակ ի մարդկանէ, եւ դադարեաց ի նմա եւ էին անդ օձք եւ այլ թունաւոր զեռունք բայց ոչ վնասէին սրբոյն ։

montagne des Kourdes, où se trouvaient nombre de lions qui ne lui faisaient aucun mal. Salita était très âgé et tout le monde désirait posséder son saint corps à sa mort. Un jour, il vint à passer le fleuve des Kourdes[1], et lorsqu'il fut arrivé au milieu du fleuve, il fut couvert par les eaux. Un très grand nombre d'hommes se rassemblèrent et détournèrent le cours du fleuve, mais ils ne retrouvèrent point le corps, car le saint l'avait ainsi demandé au Seigneur.

Quant à saint Épiphane (*Epiphan*), il était grec et habitait la montagne du Lion (*Ariudz*), dans l'habitat des bêtes sauvages qui participaient à sa vie. Tous les infirmes venaient à lui et il les guérissait tous par ses prières. Beaucoup de païens aussi venaient à lui, et il en convertissait à la foi du Christ par ses paroles divines et par la puissance de ses miracles.

Il rassembla beaucoup de disciples auxquels il enseigna la vie ascétique; il quitta avec eux le pays d'Arménie pour le pays des Grecs. Or, sur le chemin, une femme les croisa, et lorsqu'elle eut passé, il voulut éprouver ses disciples et leur dit : « Qu'elle était belle, cette femme! » Un des plus jeunes disciples
* B p. 61 b. répondit : « Maître, la femme que tu loues était borgne. » * Saint Épiphane lui dit : « Il y a de mauvaises intentions en toi, pourquoi as-tu regardé la femme? » Et il le chassa d'avec lui.

Arrivé aux bords de la grande mer, il y trouva une île abandonnée des hommes et y habita. Il y avait beaucoup de serpents et d'autres reptiles

1. C'est-à-dire le Tigre.

Եւ կացեալ անդ մշտամնունչ աղօթիւք եւ սքանչելի քաղաքավարութեամբ՝ հանգեաւ ի Քրիստոս ։ Եւ կատարի տօն սրբոց Փետրուարի Բ ։

Յայսմ աւուր վկայութիւն երանելի վկային Զուատ երիցու ։

Սա էր մի ի քահանայից Արտաշատ քաղաքին յաւուրս Տիրանայ Հայոց արքայի. եւ եղեւ յորժամ ամբարիշտ արքայն Պարսից Շապուհ աւերեաց զաշխարհն Հայոց եւ կողոպտեաց զեկեղեցիս, գերի վարեցին եւ զսուրբ երէցն Զուատ, եւ տարեալ ի Պարս՝ կացուցին կապանօք առաջի Շապհոյ ։ Եւ նորա տեսեալ զի էր այր բարձրահասակ եւ փառայլի՝ կամեցաւ դարձուցանել զնա ի կրօնս պարսից եւ պատճառեաց ասելով. Կախարդ ես դու, զի հեր գլխոյդ է սպիտակ եւ մօրուսդ թուխ. եւ ոչ է հնար քեզ ապրելոյ եթէ ոչ ուրասցիս զՔրիստոս, եւ զոհեսցես հրոյ եւ արեւու ։

Եւ սուրբն ասէ. Կախարդութիւն հեռի է ի մէնջ, եւ հեր գլխոյս ըստ կարգի բնութեանս է, զի հեր գլխոյս քսան ամաւ յառաջ է քան զմօրուսս ։ Եւ խոստովանէր զՔրիստոս Աստուած, եւ համարձակ անարգէր զանաստուած մոլորութիւն նոցա ։ Եւ հրամայեաց թագաւորն եւ հատին զգլուխ երանելոյն ։

Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս՝ բարեպաշտ իշխանն պարոնն Թորոս Ռուբէնեան՝ որդի Կոստանդեայ մեծի իշխանի ։]

venimeux, qui ne firent aucun mal au saint. Il y vécut dans d'incessantes prières et une conduite admirable et reposa dans le Christ. La fête de ces saints a lieu le 2 Février.

En ce jour, martyre du bienheureux martyr Zouad, le prêtre.

C'était un des prêtres de la ville d'Artašat aux jours du roi Tiran d'Arménie. Lorsque l'impie roi de Perse, Sapor, dévasta le pays d'Arménie et pilla les églises, on emmena aussi en captivité en Perse le saint prêtre Zouad, et on l'amena chargé de fers devant le roi Sapour. Celui-ci, le voyant homme de grande taille et de belle apparence, voulut le convertir à la religion persane et lui dit comme prétexte : « Tu es sorcier, car tes cheveux sont blancs et ta barbe noire; il te sera impossible d'avoir la vie sauve si tu ne renies pas le Christ, et n'immoles pas au feu et au soleil. »

Le saint répondit : « La magie est bien loin de nous, et les cheveux de ma tête sont dans l'ordre de la nature, car mes cheveux sont de vingt ans plus vieux que ma barbe. » Il confessa le Christ Dieu, et méprisa avec hardiesse leur égarement athée. Le roi ordonna de trancher la tête au bienheureux.

En ce jour reposa dans le Christ le pieux prince, le baron Thoros le Roubénien, fils du grand prince Constant.]

Արացի ԻԷ եւ Փետրուարի Գ ։ Վարք սրբոյն Շաղիտայ եւ
Եպիփանու աշակերտաց մեծին Դանիէլի ։

Սոքա աշակերտք էին մեծին Դանիէլի քորեպիսկոպոսի մեծին Լուսաւորչին Գրիգորի. եւ էին արք նշանագործք եւ բնակէին ճգնութեամբ յանապատի ի Ծոփաց գաւառին ։ Եւ բազում առիւծք շրջէին ընդ սրբոյն Շաղիտայի, եւ միոյ յառիւծուցն ընդ թաթ բազկի նորա մտեալ էր կորոն եղեգան, եւ եկեալ առ սուրբն Շաղիտա ցուցանէր նմա զխոցն. եւ նորա հանեալ զեղէգն՝ եթուք ի խոցն եւ պատեաց թաշկինակաւ զոր ընդ գլուխն ունէր. եւ առժամայն ողջացաւ ։

Եւ էր Շաղիտա ծեր յոյժ եւ ամենայն ոք սպասէր նմա թէ յորժամ մեռցի նա առցեն զսուրբ մարմին նորա ։ Եւ յաւուր միում անցանէր նա ընդ գետն Կորդուաց կօշկօքն ընթանալով ի վերայ ջուրց. եւ յորժամ եհաս ի մէջ գետոյն՝ ծածկեցաւ նա ի ներքոյ ջրոյն ։ Եւ ժողովեալ բազմութիւն արանց յոյժ՝ ընդ այլ կողմ դարձուցին զջուր գետոյն, եւ ոչ գտին զմարմին նորա, զի այնպէս կամեցաւ սուրբն Աստուծոյ ։ Եւ էր սա ասորի ազգաւ ։

* A fol. 176 r° b.

Իսկ սուրբն Եպիփան բնակէր յԱռիւծ լերինն, եւ արջք վայրենիք * եւ ինձք ժողո-

2 մեծին *om.* B || 3 քորեպիսկոպոսի] քորիսկոպոսի B — մեծին] սրբոյն B || 4 գաւառին] խոտաճարակ կենօք *add.* B || 5-8 Եւ բազում առիւծք... ողջացաւ] Սուրբ Շաղիդա էր յԱմիդ քաղաքէ, ազգաւ ասորի, եւ բնակէր ի լերինն Կորդուաց, ուր էին բազմութիւնք առիւծուց, եւ ոչ ինչ վնասէին նմա B || 9 սպասէր նմա թէ յորժամ մեռցի նա] ցանկային զի ի վախճանելն B || 10 կօշկօքն... ջուրց *om.* B || 13 կամեցաւ... ազգաւ] խնդրեալ էր սուրբն ի Տեառնէ B || 15 Եպիփան] էր ի Յունաց *add.* B — եւ արջք... առ նա] ի մէջ վայրենի գազանաց B.

27 ARATZ, **3 Février.**

Vie des saints Šalita et Épiphane, disciples du grand Daniel.

Ils étaient disciples du grand Daniel, chorévêque du grand Illuminateur Grégoire, thaumaturges, qui habitaient en ascètes dans le désert de la province de Dzopk. De nombreux lions circulaient avec saint Šalita. Un de ces lions avait une écharde de roseau piquée dans la plante de sa patte; il vint trouver saint Šalita et lui montra la plaie; celui-ci retira le roseau, cracha dans la plaie, l'enveloppa du mouchoir qu'il portait à la tête et le guérit aussitôt.

Šalita était très âgé et tout le monde attendait sa mort pour posséder son saint corps. Un jour qu'il traversait le fleuve des Kourdes en marchant sur les eaux avec ses chaussures, arrivé au milieu du fleuve, il fut couvert par les eaux. Un grand nombre d'hommes se rassemblèrent et détournèrent le cours du fleuve, mais ils ne retrouvèrent point son corps, car tel avait été le désir du saint de Dieu. Il était de race syrienne.

* A fol. 176 r° b.

Quant à saint Épiphane, il habitait la montagne des lions, * les ours sauvages

վէփն առ նա եւ էին նմա կենաց կցորդք ։ Եւ գային առ նա ամենայն ցաւագնեալք, եւ նա աղօթիւք բժշկէր զամենեսեան ։

Եւ ժողովեաց բազում աշակերտս, եւ ուսուցանէր նոցա զկարս ճգնութեան, եւ ել նա նոքօք յերկրէն Հայոց գնալ յերկիրն Յունաց ։ Եւ ի ճանապարհին պատահեաց նոցա կին մի, եւ իբրեւ անց կինն կամեցաւ փորձել զաշակերտսն իւր եւ ասէ. Որպէս գեղեցիկ էր կինն ։ Եւ ասէ մի ոմն ի մանկագոյն աշակերտացն. Տէր, կինն զոր գովեցեր՝ միականի էր ։ Եւ ասէ սուրբն Եպիփան. Խորհուրդք չար գոն ի քեզ. եւ ընդէ՞ր բնաւ հայեցար դու ի նա. եւ հալածեաց զնա յիւրմէ ։

Եւ հասեալ յեզր ծովուն մեծի՝ եգիտ անդ կղզի մի անբնակ ի մարդկանէ, եւ անդ դադարեաց. եւ էին ի կղզոջն իժք եւ կարիճք եւ այլ թունաւոր սողունք, եւ սատակեցան ամենեքեան ։ Եւ ջուր ոչ գոյր ի կղզոջն, եւ նա աղօթիւք ջուր բղխեցոյց ։ Եւ եկաց ի կղզին եւ բարի վարուք հանգեաւ ի Քրիստոս ։ Եւ կատարի տօն սրբոցս Շաղիտայի եւ Եպիփանու՝ Փետրուարի Գ ։

Յայսմ աւուր ննջումն է Սիմէոնի ծերունւոյն որ ընկալաւ ի գիրկս իւր զՔրիստոս՝ ըստ Յունաց ։ Յիշատակ է եւ մարգարէուհւոյն Աննայի դստերն Փանուէլի՝ ըստ Յունաց ։

[B* Նահատակութիւն սրբոց վկայիցն Ադրիանու եւ Եվուլու ։ * B p. 62 a.

2 զամենեսեան] գային առ նա եւ բազումք ի հեթանոսաց, եւ աստուածային բանիւք եւ զօրութեամբ նշանաց դարձուցանէր ի նոյանէ ի հաւատս Քրիստոսի *add.* B || 9 անդ] ի նմա B || 10 եւ կարիճք *om.* B — սողունք] գեռունք B — եւ սատակեցան . . . Փետրուարի Գ] բայց ոչ վնասէին սրբոյն. եւ կացեալ անդ մշտամռունչ աղօթիւք եւ սքանչելի քաղաքավարութեամբ հանգեաւ ի Քրիստոս. եւ կատարի տօն սրբոց Փետրուարի Բ B.

et les lynx se rassemblaient autour de lui et participaient à sa vie. Tous les infirmes venaient à lui et il les guérissait tous par ses prières.

Il rassembla beaucoup de disciples auxquels il enseignait la vie ascétique; il quitta avec eux le pays d'Arménie pour se rendre dans le pays des Grecs. Or, sur le chemin, une femme les croisa, et lorsqu'elle eut passé, il voulut éprouver ses disciples et leur dit : « Qu'elle était belle, cette femme! » Un des plus jeunes disciples lui répondit : « Maître, la femme que tu loues était borgne. » Saint Épiphane lui répondit : « Il y a de mauvaises intentions en toi, pourquoi l'as-tu regardée? » Et il le chassa d'avec lui.

Arrivé au bord de la grande mer, il y trouva une île abandonnée des hommes, et y habita. Il y avait dans l'île des serpents, des scorpions et d'autres reptiles venimeux; tous crevèrent. Il n'y avait point d'eau dans l'île, il en fit jaillir par ses prières. Il resta dans l'île et reposa dans le Christ après une bonne conduite. La fête des saints Šalita et Épiphane a lieu le 3 Février.

En ce jour, chez les Grecs, dormition du vieillard Siméon qui reçut le Christ dans ses bras. Et aussi, commémoration, chez les Grecs, de la prophétesse Anne, fille dePhanuël.

[B * Martyre des saints martyrs Adrien et Euboule (*Evoulou*). Ces bienheu- * B p. 62 a.

Երանելիք այսոքիկ էին յազգէն Իլկան կոչեցեալ՝ բնակութեամբ ի Վանէաս գեղջէ, եւ փափաքէին խիկ նմանող լինել սրբոց խոստովանող վկայիցն Քրիստոսի ։ Եւ եկեալք ի Կեսարիա Կապադովկեցւոց այցելութիւն առնել բանդելոց քրիստոնէիցն, կալան եւ բերին զնոսա եւ մատնեալ ածին առ Փիրմիլիանոս իշխանն . եւ ի հարցանելն նորա՝ յորժամ համարձակ խոստովանեցան զՔրիստոս, տանջեցին զնոսա եւ հարին սաստիկ զանթս եւ զկողս նոցա մինչեւ շրջեցան մարմինք նոցա, եւ ապա հրով այրեցին զվէրսն ։

Եւ կալեալ ածին զԱդրիանոս առաջի սաստկագոյն առիւծու՝ զի գէշ պատառեսցէ զնա, եւ առիւծն զօրութեամբն Աստուծոյ պատկառեցաւ ի սրբոյն որպէս երբեմն ի Դանիելէ՝ եւ ոչ մերձեցաւ ի նա . եւ ապա սրով հատին զգլուխ նորա ։

Իսկ սուրբն Եւբուլոս բազում տանջանաց համբերեաց, եւ ողոքանացն ոչ լուաւ. ընկեցին զնա նոյն գազանին, եւ հաւասար ընկերին անխնաս ի գազանէն մնացեալ՝ սրով կատարեցաւ ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյն Յիմարայ ։ Սա ինքն նոր վկայուհիս էր ի քաղաքէն Վանայ, հայ ազգաւ, առնակին ըստ կարգի օրինացն ։ Եւ եղեւ ընդ այն

reux étaient de la race de ceux qu'on appelle Ilcans, habitant la Batanée[1] (*Vanēas*); ils aspiraient à devenir semblables aux saints confesseurs martyrs du Christ. Ils vinrent à Césarée de Cappadoce[2] pour visiter les chrétiens détenus dans les prisons; on les arrêta, on les amena et on les dénonça au gouverneur Firmilien, qui les interrogea, mais lorsqu'ils confessèrent avec hardiesse le Christ, on les tortura, on leur frappa vigoureusement les aisselles et les côtes jusqu'à déchirer leurs corps, puis on brûla leurs plaies par le feu.

On amena Adrien et on le jeta devant un terrible lion pour que celui-ci le mît en morceaux; mais le lion, par la puissance de Dieu, respecta le saint, comme il en advint jadis avec Daniel, et ne s'approcha pas de lui. Ensuite on lui trancha la tête par le glaive.

Saint Euboule, après avoir subi beaucoup de tortures, ne cédant pas aux instances (du juge), fut jeté, lui aussi, devant le même fauve, mais fut respecté comme son collègue par la bête. Il fut martyrisé par le glaive.

En ce jour, martyre de sainte Yimar. Cette nouvelle martyre était de la ville de Van, de race arménienne, mariée selon les règles de la loi. A cette

1. *Syn. Cp.* indique la teneur du texte grec qui a servi de base à l'arménien : οὗτοι τὸ γένος εἶλκον ἀπὸ τῆς Βανέας « ceux-ci tiraient leur origine de Banéa ». Le traducteur prenant le verbe εἶλκον pour un nom propre a glosé. Mais ce texte grec est lui-même fautif, car la leçon primitive est donnée par Eusèbe, *Martyrs de Palestine,* XI, 29, éd. GRAPIN, Paris, 1913, p. 288 : ἀπὸ Βαταναίας οὕτω καλουμένης χώρας. *Syn. Cp.* en mettant l'article devant Βανέας témoignait encore à sa manière qu'il y avait un nom de contrée et non un nom de ville. — 2. Il y a erreur du rédacteur arménien, c'est Césarée de Palestine; la ville de Cappadoce lui était évidemment plus connue. On pourrait aussi observer que dans le récit d'Eusèbe il est question de personnages cappadociens au parag. 27, *loc. cit.*, p. 286.

ժամանակս յորժամ ազգն Թաթարաց իշխան եւ առաջնորդ ունելով զԼանկթամուր խան՝ աւերեցին զբազում աշխարհս արեւելից, եկին եւ ի քաղաքն Վան, եւ ազգի ազգի դառնադէտ մահուամբ սպանին զբազումս, ընդ որս եւ զայրն Յիմարայ. եւ * ոմն յայլազգեաց էառ զՅիմար ի տուն իւր, եւ ի մեռանիլ կնոջ իւրոյ՝ արար զնա կին իւր, հաւանելով զի պահեսցէ նա զքրիստոնէութիւն իւր ։ Իսկ այլազգիք յարեան ի վերայ Յիմարայ եւ ստիպէին զնա ուրանալ զՔրիստոս. եւ իբրեւ տեսին թէ ոչ կարեն հաւանեցուցանել, առեալ ածին զնա ի դուռն եկեղեցւոյն եւ ասեն. Ձգեա ի ներքս երեք քար, եւ զերծցիս ի ձեռաց մերոց, ապա թէ ոչ՝ չարաչար տանջանօք սպանանեմք զքեզ ։ Եւ իբրեւ կարի շատ նեղեցին, երկուցեալ ի մահուանէ զոր սպառնային նմա, արար զկամս այլազգեաց. եւ նոքա ծիծաղելով թողին զնա եւ գնացին ։ * B p. 62 b.

Այս գործ քարաձգութեան տանջէր զխիղճ մտաց նորա զամս բազումս. եւ ելեալ գնաց ի Մակու՝ որ ընդ այն ժամանակս ընդ իշխանութեամբ քրիստոնէից էր, եւ անդ համարձակ պաշտէր զՔրիստոս ։ Բայց լուեալ թէ ուր ետ զկարծիս ուրացութեան, անդ պարտի դաւանիլ զՔրիստոս՝ դարձաւ անդրէն ի Վան քաղաք, եւ ստէպ երթայր յեկեղեցին ։

Եւ ի միում աւուր տեսեալ զնա մուղրի մի զի գայր յեկեղեցւոյ, սաստեաց նմա թէ. Ընդէ՞ր երթաս յեկեղեցին ։ Եւ նա ասէ. Քանզի կամիմ ի կառափն իմ ընդունել զքարինսն զոր ձգեցի յեկեղեցի անդր ։ Յայնժամ եհար մուղրին զգլուխ նորա ։ Աղաղակեաց

époque le peuple des Tartars, ayant comme prince et chef Lenk-Timour-khan (*Lanktamour*), dévastèrent nombre de contrées d'orient; ils s'attaquèrent aussi à la ville de Van et mirent à mort par différentes tortures de nombreux habitants, entre autres le mari de Yimar. * Un des infidèles prit Yimar chez lui et, à la mort de sa femme, en fit son épouse en acceptant qu'elle gardât sa foi chrétienne. Mais ces infidèles prirent parti contre Yimar et la pressèrent de renier le Christ, et, voyant qu'ils ne parvenaient point à la persuader, la conduisirent à la porte de l'église et lui dirent : « Jette trois pierres à l'intérieur et tu seras délivrée de nos mains, sans cela nous te tuerons dans des souffrances cruelles. » Devant leur exi gence pressante, craignant la mort dont on la menaçait, elle accomplit la volonté des infidèles, qui se mirent à rire, la quittèrent et s'en allèrent. * B p. 62 b.

Mais ce jet de pierres tortura sa conscience pendant de longues années. Elle se rendit à Makou qui, à cette époque, était sous l'autorité des chrétiens, et y adora le Christ ouvertement. Mais ayant appris qu'elle devait adorer le Christ là où elle avait donné des soupçons de reniement, elle retourna à la ville de Van et se rendit souvent à l'église.

Un jour, un moughri, l'apercevant sortir de l'église, la réprimanda, (en disant) : « Pourquoi vas-tu à l'église? » Elle répondit : « Parce que je veux recevoir sur ma tête les pierres que j'ai jetées ici dans l'église. » Le moughri

Յիմար առ ամբոխն այլազգեաց որք անդր կային եւ ասէ. Եկայք զկնի իմ ի տեղի երեւելի, եւ անդ քարկոծեցէք զիս, զի յայտնի լիցի ամենեցուն թէ վասն սուրբ հաւատոյն Քրիստոսի մեռանիմ ։ Եւ նոցա զրոհ տուեալ զհետ նորա ի տեղին քարկոծ արարին զՅիմար, որ խոստովանելով զՔրիստոս կատարեցաւ յանօրինաց ։

* B p. 63 a. Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս պարոն Ստեփանէ, որդի մեծի * իշխանին Լեւոնի Ռուբինեան ։]

Արացի ԻԸ եւ Փետրուարի Դ ։ Վկայութիւն սրբոցն
Դիոդորի, Կղաւդի եւ Պապիայ ։

* A fol. 176 v° a. Սոքա էին յաւուրս Դեկոսի ամբարիշտ * արքային, ի քաղաքէն Ատալիոյ ։ Եւ կացուցին առաջի դատաւորին Պամփիւլացւոց, եւ խոստովանեցան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյ ։ Եւ յոյժ բռնադատեցին զնոսա, եւ նեղեցին զի ուրասցին զՔրիստոս եւ պաշտեսցեն զկուռսն, եւ ոչ կարացին խախտել զնոսա ի սիրոյն Քրիստոսի, այլ մանաւանդ անարգեցին զդատաւորն, եւ բարկացեալ յոյժ հրամայեաց հատանել զգլուխս նոցա ի Փետրուարի Դ ։ Եւ երթեալ քրիստոնեայքն թաղեցին զպատուական մարմինս նոցա, եւ են պահապան եւ օգնական ամենայն հաւատացելոց ։

7 սրբոցն] սրբոց վկայիցն B || 8 Կղաւդի] Կղաւդիանոսի B || 9 Ատալիոյ] ի Պամփիւլացւոց գաւառէն, եւ էին անսանադարձանք արուեստիւ եւ քրիստոնեայ հաւատով, պաշտելով եւ երկրպագելով Քրիստոսի որպէս ճշմարիտ Աստուծոյ *add.* B || 10 Տեառն մերոյ *om.* B || 13 զդատաւորն] զկուռսն B — բարկացեալ] դատաւորին *add.* B || 14 հատանել] եւ նոյնժամայն հատին B — քրիստոնեայքն] քրիստոնէիցն B.

la frappa à la tête. Yimar cria à la foule des infidèles qui se trouvait là et dit : « Venez avec moi dans un endroit apparent et lapidez-moi là, pour qu'il soit manifeste à tous que je meurs pour la sainte foi du Christ. » Ils la suivirent en foule jusqu'à l'endroit et y lapidèrent Yimar qui, en confessant le Christ, fut martyrisée par les impies.

* B p. 63 a. En ce jour reposa dans le Christ le baron Stéphane, fils du grand * prince Léon le Roubénien.]

28 ARATZ, **4 Février**.

Martyre des saints Diodore, Claudien (*Klaudi*) et Papias.

* A fol. 176 v° a. Ils vivaient aux jours de Dèce * l'empereur impie, dans la ville d'Attalia (*Atalioy*). On les mit en présence du gouverneur de la Pamphylie et ils confessèrent le nom de Notre-Seigneur Jésus-Christ et Dieu. On les pressa beaucoup et on les tourmenta pour qu'ils reniassent le Christ et adorassent les idoles, mais on ne put les ébranler de l'amour envers le Christ ; par contre (les saints) injurièrent le gouverneur, qui, très irrité, ordonna de leur trancher la tête, le 4 Février. Les chrétiens inhumèrent leurs précieux corps, qui sont les gardiens et les aides de tous les fidèles.

[B* Յայսմ աւուր վկայութիւն սուրբ վկային Տարասայ հովուի ։ * B p. 63 a.

Ի թագաւորութեանն Մաքսիմիանոսի, եւ ի Կիլիկեցւոց դատաւորութեանն Մաքսիմոսի յոյժ հռչակէր պաշտօն կռոցն ։ Եւ մինչդեռ Մաքսիմոս դատաւորն ի Պոմպոս քաղաքի էր եւ պարէին պիղծ դիւացն, էր անդ պատկեր մի անուանեալ Ապողոնի ի զուտ ոսկւոյ՝ զոր կոչէին հայր աստուածոց, նմա զոհէին երկրպագութեամբ ։

Եւ մտեալ ոմն երիտասարդ հովիւ ոչխարաց որում անուն էր Տարաս, եւ կամեցաւ նա ցուցանել զինքն արդարեւ *ճշմարիտ քրիստոնեայ. եւ պատճառանօք երկրպագութեան ձեռն արկանէր անպատուել զկուռսն ։ Եւ այնպէս մատուցեալ գաղտ առ պատկերն՝ եհատ զձեռն նորա, եւ ձուլեալ վաճառեաց եւ ետ աղքատաց զգինսն ։ Եւ ընդ առաւօտն ոչ սակաւ խռովութիւն լինէր, եւ տանէին զմեծամեծս քրմացն հարցանել, եւ իբր եւ ոչ գիտէին՝ տանել ետուն զնոսա ի մահ ։ * B p. 63 b.

Իբրեւ ածին զնոսա ի տեղի մահուն, երեւեցաւ նոցա սուրբն Տարաս եւ ասէ. Զի՞ տանիք զարսդ զայդոսիկ ի մահ. զի ես եմ որ հատի զձեռն աստուծոյն ձերոյ, եւ ծախեցի զնա ի դարմանս աղքատաց ։ Եւ յայտնի եղեւ այն առաջի դատաւորին, եւ հրամայեաց ածել զնա ի հրապարակն. եւ տարեալ կացուցին առաջի ։

Մաքսիմոս դատաւորն ասէ. Զի՞նչ է անուն քո ։ Տարաս ասէ. Քրիստոնեայ եմ, եւ ի ծնողաց Տարաս կոչիմ ։ Մաքսիմոս ասէ. Յորմէ՞ գաւառէ ես ։ Տարաս ասէ. Ի

[B * En ce jour, martyre du saint martyr Tarasius (*Tarasay*) le berger. * B p. 63 a.

Sous le règne de Maximin et sous le gouvernement de la Cilicie par Maxime, le culte des idoles était grandement solennisé. Pendant que le juge Maxime se trouvait à la ville de Pompus où l'on dansait devant les immondes démons, il y avait là une statue d'or pur au nom d'Apollon, qu'on appelait le père des dieux, et à qui l'on offrait des sacrifices en l'adorant.

Un jeune homme, gardien de brebis, dont le nom était Tarasius (*Taras*), voulant montrer qu'il était un * vrai chrétien, s'introduisit sous prétexte d'adorer l'idole mais dans l'intention de la déshonorer. Il s'approcha secrètement de la statue, en brisa une main, la fit fondre et en distribua la valeur aux pauvres. Au matin il y eut un grand trouble, on manda les chefs des prêtres des idoles pour les interroger et, comme ils ne purent répondre, on les condamna à mort. * B p. 63 b.

Pendant qu'on les conduisait à l'endroit de l'exécution, saint Tarasius se montra et dit : « Pourquoi conduisez-vous ces hommes à la mort? C'est moi qui ai brisé la main de votre dieu et je l'ai dépensée pour les soins des pauvres. » Le juge en fut averti et il ordonna de le faire venir au tribunal; l'ayant donc amené, on le fit comparaître.

Le juge Maxime lui dit : « Quel est ton nom? » Tarasius répondit : « Je suis chrétien, de ma famille je m'appelle Tarasius. » Maxime lui dit : « De quelle province es-tu? » Tarasius répondit : « De la Cilicie. » Le juge demanda :

Կիլիկեցոցն ։ Դատաւորն ասէ․ Զի՞նչ պէտք ածին զքեզ այսր ա՛յ չարագլուխ ։ Տարաս ասաց․ Հովիւ եմ ոչխարաց եւ պատուեմ զՏեառն իմոյ զպատուիրանս ։

Դատաւորն ասաց․ Եւ ընդէ՞ր կամեցար զայդ առնել ընդ մեծ աստուածն Ապողոն՝ զողանալ զձեռն նորա ։ Տարաս ասաց․ Կամեցայ զիս քրիստոնեայ ամենեցուն ցուցանել, եւ զձեզ յանդիմանել յամպարշտութեանդ ։ Դատաւորն ասաց․ Մատուցեալ զոհեա՛ մեծի աստուծոյն Ապողոնի, զի եւ առաջին յանդգնութիւնն թողցի քեզ ։ Տարաս ասաց․ Ո՞րում աստուծոյ տաս զոհել՝ միաձեռնո՞յն․ ես ամաչեմ ընդ քո որ զնա աստուած անուանես՝ զի ոչ կարաց իւր օգնել ի հատանել ձեռին իւրոյ ։

Եւ դատաւորն բարկացեալ յոյժ եւ զամօթի հարեալ ասէ․ Կախեցէք զդա զփայտէ,
* B p. 64 a. եւ մատերո՛ւք ի կողս դորա ։ Եւ ի փարոցել սրբոյն՝ ամենեւին * ձայն ոչ ետ ։ Եւ սայրասուր մահանօք մատեան խոցոտել զներքինս անդամոց նորա, եւ ստիպէին տանջանօք զսուրբն ի բաց կալ ի Քրիստոսէ․ իսկ վկայն սուրբ աղօթէր առ Քրիստոս, եւ զկռոցն նանրութիւն յանդիմանէր ։

Եւ հրամայեաց դատաւորն եւ բեւեռեցին հողաթափս յոտս սրբոյն, եւ ջղօք հարկանելով ընթացուցանէին առաջի ։ Եւ ասէ ցնա դատաւորն․ Այդ վայելէ քեզ որ արիւն քո իբրեւ զառու հոսի եւ լնու զերկիր ։ Ասէ սուրբն․ Ոչ այնչափ վայելէ քեզ քղամիդդ, որչափ ինձ վայելէ վասն Քրիստոսի իմոյ չարչարիլ ։

« Quelles affaires t'ont amené ici, mauvaise tête? » Tarasius répondit : « Je suis gardien de brebis et j'honore les préceptes de mon Seigneur. »

Le juge dit : « Et comment as-tu songé faire une chose pareille au grand dieu Apollon, de lui dérober la main? » Tarasius répondit : « J'ai voulu me montrer à tous comme chrétien et vous blâmer dans votre impiété. » Le juge dit : « Entre, sacrifie au grand dieu Apollon pour que ton premier coup d'audace te soit pardonné. » Tarasius répondit : « A quel dieu me demandes-tu d'immoler, à celui qui n'a qu'une main? J'ai honte pour toi de ce que tu le nommes dieu, lui qui n'a pu se défendre lorsqu'on lui a enlevé une main. »

Le juge, très irrité et honteux, dit : « Suspendez-le à un arbre et frappez-le
* B p. 64 a. aux flancs. » Le saint dans ses tortures ne poussa * aucun cri. On se mit à lui blesser les parties intimes avec des pointes[1] aiguës en même temps qu'on pressait le saint au milieu des tortures de renoncer au Christ, mais le saint martyr priait le Christ et blâmait l'inanité des idoles.

Le juge ordonna ensuite de clouer des chaussons aux pieds du saint et de le faire courir en le frappant avec des nerfs de bœuf. Le juge lui dit alors : « Voilà ce qu'il te fallait, que ton sang coulât comme un ruisseau et abreuvât la terre. » Le saint répondit : « Ta chlamide de pourpre ne te sied pas aussi bien qu'à moi mes souffrances pour le Christ. »

1. Le mot arménien signifie « fourchette »; mais ce supplice était habituellement appliqué au moyen de roseaux pointus.

Եւ դատաւորն հրամայեաց լուցանել հրատ մեծ՝ եւ անդ այրել զսուրբն ։ Եւ իբրեւ լուցին զհուրն սաստիկ յոյժ՝ եւ արկին զսուրբ վկայն ի ներքս ի մէջ հրոյն, եղեւ որոտումն եւ անձրեւ յոյժ, եւ փախոյց զամենայն հեթանոսս եւ շիջոյց զհուրն ։ Եւ սուրբն ամբարձեալ զաչս իւր առ Աստուած՝ գոհացաւ եւ աղօթելով աւանդեաց զհոգին ի ձեռս հրեշտակաց ։

Իբրեւ եղեւ գիշեր զնշխարս ոսկերաց սրբոյն ժողովեցին եղբարք եւ տարեալ եդին ի տեղի նշանաւոր, եւ կատարի տօն նորա Փետրուարի Դ, եւ է բարեխօս վասն մեր ։

Ի սմին աւուր յիշատակ սուրբ եւ մեծ անապատական ճգնաւորին եւ երեւելի վարդապետին Իսիդորոսի հօր՝ որ կոչի Պիլիսիոտացի, որ էր սա առաջին իսկիթ ։ Եւ սուրբ հօրն Անուփայ վարդապետին Պիմէնի ։]

Արացի ԻԹ եւ Փետրուարի Ե ։ Վկայութիւն սրբուհի
եւ կոյս վկային Քրիստոսի Ագաթեայ ։

Կինս այս էր ի կղզւոյն Սիկիլիոյ, ի քաղաքէն Պանորմոյ, յամս Դեկոսի արքայի. եւ էր տեսլեամբ գեղեցիկ, մեծատուն եւ ազնուական, եւ Քրիստոսի հաւատովն պայծառացեալ ։

11 Վկայութիւն... Ագաթեայ] Վկայութիւն սուրբ եւ բազմաչարչար բարեյաղթ եւ սքանչելագործ կոյս վկային Ագաթեայ, որ փրկէ ի կայծակաց եւ ի հրայրեցութեանց B || 13 Կինս] Վկայուհիս B || 14 էր] չքնաղ եւ *add.* B.

Le juge ordonna d'allumer un grand feu et d'y brûler le saint. Lorsqu'on eut allumé un feu très ardent et qu'on eut jeté le saint martyr au milieu du feu, il se produisit des coups de tonnerre et il plut avec violence, ce qui mit en fuite tous les païens et éteignit le feu. Le saint leva ses yeux à Dieu, rendit grâces et, en priant, rendit son âme entre les mains des anges.

Lorsque la nuit fut venue, les frères recueillirent les restes des ossements du saint et l'inhumèrent dans un endroit célèbre. Sa fête a lieu le 4 Février, et il est notre intercesseur.

En ce même jour, commémoration du saint et grand anachorète, l'ascète et renommé docteur, le père Isidore, surnommé le Pélasiote, qui fut le premier à Scété. Également (commémoration) du saint père Anouph, le maître de Paemen (*Pimēni*).

29 ARATZ, **5 Février.**

Martyre de la sainte vierge et martyre du Christ Agathe.

Cette femme était de l'île de Sicile, de la ville de Palerme (*Panormoy*), aux jours de l'empereur Dèce; elle était belle de figure, riche et de noble famille, remarquable pour sa foi au Christ.

Եւ կալեալ զնա անօրէն զօրականքն տարան ի քաղաքն Կատանիա, յորում էր դատաւորն Կունդիանոս, եւ կացուցին առաջի։ Եւ յառաջ քան զհարցանելն դատաւորին՝ խոստովանեցաւ զքրիստոնէութեան հաւատն իւր։ Եւ յանձնեաց զնա դատաւորն ի կին մի հեթանոս, որոյ անուն էր Ափրոդիսիա, զի խրատով եւ ողոքանօք դարձուսցէ զնա ի Քրիստոսի հաւատոյն։ Իսկ սրբուհի եւ կոյս վկայն Քրիստոսի՝ ոչ լսէր եւ ոչ ունկնդիր լինէր խրատու կնոջն, այլ մանաւանդ արտասուօք խնդրէր յԱստուծոյ
* A fol. 176 v° b. * մարտիրոսանալ։

Եւ դարձեալ կացուցին առաջի դատաւորին, եւ զարմանայր որ այնպիսի իմաստութեամբ խօսէր եւ յանդիմանէր զանաստուած մոլորութիւնն։ Հարին զնա ուժգին եւ սրով հերձին զստինսն եւ արկին ի բանդ։

Եւ ի մէջ գիշերի երեւեցաւ նմա սուրբ առաքեալն Պետրոս ի կերպարանս բժշկի, ունելով ի ձեռին դեղ վիրացն. եւ կայր առաջի նորա պատանի լուսով, եւ եղեւ յամենայն բանդն լոյս, եւ երկեան բանդարկեալքն։ Եւ առաքեալն ստիպէր զնա եւ նեղէր զի բժշկեսցէ զնա։ Եւ նա ասէ. Ես բժիշկ ունիմ զՔրիստոս Փրկիչն իմ, եւ նա բժշկեսցէ զիս առանց դեղոց։ Ասէ առաքեալն. Եւ զիս Նա առաքեաց առ քեզ, եւ աշակերտ եմ նորա եւ առաքեալ։ Արդ՝ ողջ լեր յանուանէ նորա։ Եւ անյայտ եղեւ։ Եւ տեսեալ Ագաթի զանձն իւր եւ զստինսն ողջ, գիտաց զԱստուծոյ այցելութիւնն ի ձեռն առաքելոյն եւ գոհացաւ զԱստուծոյ։

2 Կունդիանոս] Կինդիանոս B || 3 խոստովանեցաւ] խոստովան եղեւ B || 5 ոչ լսէր եւ ոչ ունկնդիր լինէր] եւ ոչ լսելով ունկն եդիր B || 11-18 Եւ ի մէջ գիշերի . . . զԱստուծոյ *om.* B.

Les soldats impies la saisirent et la conduisirent à la ville de Catane où se trouvait le juge Quintianus (*Kountianos*) et la mirent en sa présence. Avant que le juge l'eût interrogée, elle confessa sa foi chrétienne. Le juge la confia à une femme païenne, dont le nom était Aphrodisia, afin qu'elle la détournât de la foi au Christ par ses conseils et ses sollicitations. Mais la sainte vierge et martyre du Christ n'écouta pas les conseils de la femme, et n'y consentit
* A fol. 176 v° b. point; au contraire elle pria Dieu avec des larmes de devenir * martyre.

On la fit comparaître de nouveau devant le juge, qui fut étonné de ce qu'elle parlât avec une telle sagesse et blâmât l'erreur athée. On la frappa brutalement, on lui déchira les seins avec l'épée et on la jeta en prison.

Au milieu de la nuit, le saint apôtre Pierre lui apparut, sous les aspects d'un médecin tenant à la main les médicaments pour ses plaies; il se tenait comme un jeune homme lumineux devant elle, toute la prison fut inondée de lumière et les détenus furent effrayés. L'apôtre insista auprès d'elle et insista pour la guérir. Elle lui dit : « J'ai mon médecin, le Christ, mon sauveur, que me guérira sans médicaments. » L'apôtre lui répondit : « C'est Lui qui m'a envoyé vers toi, je suis son disciple et son apôtre. Voici que je te salue en son nom. » Et il disparut. Agathe, se voyant guérie en son corps et ses seins, reconnut la visite de Dieu par son apôtre et rendit grâces à Dieu.

Եւ յետ աւուրց հանին ի բանդէն եւ քարշեցին մերկ ի վերայ աղացեալ խեցոյ մինչեւ կոտորեցաւ մարմինն, եւ այրեցին հրով զխոցս վիրացն ։ Եւ եղեւ յանկարծակի շարժ մեծ, եւ անկաւ կէս քաղաքին Կատանիսոյ ։ Եւ երկու խորհրդակիցք թագաւորին՝ Սիղուանոս եւ Փալկոնիոս ըմբռնեցան յաւերումն ։ Եւ եղեւ աղմուկ եւ խռովութիւն, եւ դիմեցին ի վերայ դատաւորին, եւ զօրականքն տարան զերանելին Ագաթի ի բանդն ։ * Եւ ի գիշերին յայնմիկ մինչդեռ աղօթէր սրբուհին Ագաթի՝ աւանդեաց զհոգին իւր * A fol. 177 r° a.
առ Աստուած Փետրուարի Ե ։ Եւ մտեալ քրիստոնէիցն հանին ի բանդէն եւ եդին ի տապանի ։

Եւ լուեալ դատաւորին ուրախ եղեւ, զի ժառանգեսցէ զստացուածս սրբուհի եւ կոյս վկային, քանզի մեծատուն էր յոյժ. եւ ելեալ ի քաղաքէն Կատանիսոյ՝ գնայր ի Պանորմայ քաղաքն ի տուն սրբուհւոյն Ագաթեայ. եւ ի ճանապարհին անկաւ երիվարաւն ի գետն Պսիմիթա եւ խեղդեցաւ ։

Ցայսմ աւուր վկայութիւն սրբոցն Ենինեայ, Ռիմայ եւ Պիմայ
որք կատարեցան ի Քրիստոս ։

Սոքա բարբարոսք էին ի խուժադուժ գաւառէն Սկիւթացւոց եւ երթեալ Անդրէի

3 կէս] մեծ մասն ի պարսպէն B || 4 յաւերումն] եւ մեռան *add.* B — խռովութիւն] ի ժողովրդին *add.* B || 6 Ագաթի *om.* B || 7 Փետրուարի Ե] եւ Արաց ԻԹ *add.* B || 7-12 եւ մտեալ ... խեղդեցաւ] Իսկ քրիստոնեայքն իբրեւ լուան՝ եկեալ օծին զմարմինն պատուական իւղով՝ եւ պատեալ եդին ի տապանի, յորմէ նշանք մեծամեծք եղեն, եւ բազումք ի հրէից եւ ի հեթանոսաց տեսեալ զքանչելին հաւատացին ի Քրիստոս B || 13 սրբոցն] սրբոց վկայիցն B || 15 Անդրէի առաքելոյն յերկիրն այն] աշակերտեցան Անդրէի առաքելոյն եւ B.

Plusieurs jours après, on la fit sortir de la prison et on la traîna nue sur du verre pilé jusqu'à ce que son corps fût déchiré, on lui brûla les plaies au feu. Mais il se fit tout à coup un grand tremblement de terre et la moitié de la ville de Catane (*Katanisoy*) s'écroula. Deux des conseillers de l'empereur, Silianus et Falconius, se trouvèrent pris sous les décombres. Il y eut des cris et des troubles : on assaillit le juge. Les soldats conduisirent la bienheureuse Agathe en prison. * Cette nuit-là, pendant qu'elle priait, sainte Agathe rendit son âme à Dieu, le 5 Février. Les chrétiens pénétrèrent dans la prison, l'en sortirent et la mirent au tombeau. A fol. 177 r° a.

Le juge, l'ayant appris, se réjouit de pouvoir hériter des biens de la sainte vierge martyre, car elle était fort riche; il quitta la ville de Catane pour se rendre à Palerme à la maison de sainte Agathe; mais, chemin faisant, il tomba avec son cheval dans le fleuve Simethus (*Psimitha*) et se noya.

En ce jour, martyre des saints Inas (*Enineay*), Rimas et Pinnas (*Pimay*) qui furent martyrisés pour le Christ.

Ils étaient barbares, de la contrée sauvage des Scythes, et lorsque l'apôtre

առաքելոյն յերկիրն յայն՝ հաւատացին սոքա ի Քրիստոս, եւ ի նոյն խուժադուժ մարդկանէն կապեցան ի մէջ գետոյն յաւուրս ձմերայնի, եւ այնպէս նահատակեալ փոխեցան ի Քրիստոս ։

Արացի Լ. եւ Փետրուարի Զ ։ Տօն սուրբ ժողովոյն Եփեսոսի երկերիւր եպիսկոպոսաց ։

Ի ժամանակս Թէոդոսի Փոքու աստուածապսակ թագաւորին Հոռոմոց, Նեստոր եպիսկոպոսն Կոստանդնուպօլսոյ, ոչ խոստովանէր զՄարիամ աստուածածին, եւ ոչ զծնեալն ի նմանէ զՅիսուս Աստուած այլ սոսկ մարդ իբրեւ զմի ոմն ի մարգարէից ։ Զի Մարիամ մարդ էր, ասէ, եւ ի մարդոյ Աստուած ծնանիլ անհնար է ։

* A fol. 177 r° b. Եւ Թէոդոս թագաւորն * հրաման ետ ժողով լինել յԵփեսոս ։ Եւ ժողովեցան երկու հարիւր եպիսկոպոսք. Կեղեստինոս Հռոմայ, Կիւրեղ Աղեքսանդրու, Յոբնաղ Երուսաղեմի, Յովհաննէս Անտիոքայ, Պրոկղ Կոստանդինուպոլսի եւ այլ եւս սուրբ հարք ։ Իսկ մեծն Սահակ Հայոց՝ անպարապ գոլով՝ գրեաց թուղթ միաբանութեան ընդ սուրբ ժողովոյն ։ Եւ քննութիւն արարեալ երկերիւր եպիսկոպոսացն՝ գտին զՆեստոր

1 սոքա *om.* B — եւ ի նոյն ... ի Քրիստոս] եւ եկեալ քարոզէին զՔրիստոս Աստուած՝ եւ դարձուցանէին զբազումս ։ Զոր կալեալ ազգականաց նորա մատնեցին իշխանի խուժադուժ ազգին լուբեանց. եւ նա ետ կապել զնոսա ի մի մի ցից ի մէջ գետոյն յաւուրս սառնամանեաց ձմերայնոյ, ընկղմելով զնոսա ի ջուր մինչեւ ցպարանոցսն. ուր սառուցեալ երանելեացն փոխեցան ի Քրիստոս B. — 5 երկերիւր եպիսկոպոսաց *om.* B || 6 թագաւորին] արքային B || 8 զՅիսուս] Քրիստոս *add.* B || 9 Զի Մարիամ ... անհնար է *om.* B || 10 ժողով լինել] ժողովել B || 11-1 p. 147 Կեղեստինոս ... Մակեդոնի *om.* B.

André se rendit dans ce pays, ils crurent au Christ, et furent attachés par ces mêmes hommes sauvages (et jetés) dans le fleuve aux jours d'hiver, et c'est ainsi qu'ils furent martyrisés et trépassèrent au Christ.

30 ARATZ, 6 Février.

Fête du saint concile d'Éphèse de deux cents évêques.

Aux jours de Théodose le Jeune, l'empereur des Grecs couronné par Dieu, Nestorius (*Nestor*), évêque de Constantinople, ne confessait point Marie mère de Dieu, ni Dieu celui qu'elle mit au monde, Jésus; (il considérait) en effet celui-ci comme un homme ordinaire et l'un quelconque des prophètes, car, disait-il, Marie était (de nature) humaine, et il est impossible que Dieu naisse de l'homme.

* A fol. 177 r° b. L'empereur Théodose * ordonna de convoquer un concile à Éphèse. Deux cents évêques s'y assemblèrent : Célestin de Rome, Cyrille d'Alexandrie, Juvénal de Jérusalem, Jean d'Antioche, Proclus de Constantinople et d'autres saints pères. Quant au grand Sahak d'Arménie, très occupé, il écrivit une lettre d'union avec le saint concile. Les deux cents évêques, après examen,

համախոհ Արիոսի եւ Մակեդոնի ։ Եւ զի ոչ զղջացաւ Նեստոր եւ ոչ միաբանեցաւ ընդ սուրբ ժողովոյն, զի էր նա տգէտ եւ անուսումն, այլ միայն բարձրաձայն եւ բազմախօս, ի լեզուն վստահացեալ կամէր յաղթել ճշմարտութեանն, վասն որոյ նզովեցին զնա սուրբ ժողովն եւ զաղանդակիցսն նորա ։ Եւ Թէոդոս թագաւորն աքսորեաց զնա ի խուժաստան եւ անդ սատակեցաւ չարաչար ։

Եւ կատարի տօն սուրբ ժողովոյն Եփեսոսի Արացի Լ. եւ Փետրուարի Զ ։

Յայսմ աւուր տօն է Նաթանայ մարգարէին ։

Նաթան էր յաւուրս Դաւթի մարգարէի եւ արքայի, խնամածու տան նորա ։ Սա էր որ յանդիմանեաց զԴաւիթ յորժամ մեղաւ ի կինն Ուրիայ ։ Եւ յորժամ ասաց Դաւիթ թէ. Մեղայ Տեառն, ասաց Նաթան թէ. Եւ Տէր անցոյց զքեւ զմեղս քո եւ մի մեռցիս ։

Սա է որ խրատեաց զԲերսաբէէ՝ մայր Սողոմոնի՝ մտանել առ Դաւիթ, եւ յիշեցուցանել նմա զերդումն իւր . եւ ինքն մտեալ առ Դաւիթ՝ առ հրաման ի նմանէ թագաւորեցուցանել զՍողոմոն, եւ տարեալ ի Գեհոն օծին Նաթան մարգարէ եւ * Սադովկ * A fol. 177 v° a.

2-3 զի էր նա ... վասն որոյ *om.* B || 4 զաղանդակիցսն] եւ զհամախոհս *add.* B || 5 չարաչար ... Փետրուարի Զ *om.* B || 7 տօն] յիշատակ B || 10 Նաթան ... տան նորա] Սուրբ մարգարէն Նաթան՝ էր յաւուրս Դաւթայ արքայի . խնամածու տան նորա, ակնածելի յաչս նորա, եւ պատկառելի ամենայն ժողովրդեանն B || 13 ի նմանէ *om.* B.

reconnurent que Nestorius avait la même doctrine qu'Arius et Macédonius. Et comme Nestorius ne manifestait aucun regret et ne s'unissait point au saint concile, — car il était ignorant et illettré, ne sachant que parler haut et beaucoup, comptant plutôt sur sa langue pour vaincre la vérité, — le saint concile l'anathématisa à cause de cela, lui et ses partisans. L'empereur Théodose l'exila en Barbarie et il y mourut d'une mort violente.

La fête du saint concile d'Éphèse a lieu le 30 Aratz, 6 Février.

En ce jour, fête du prophète Nathan.

Nathan vivait aux jours du prophète et roi David; il était l'intendant de sa maison. C'est lui qui blâma David lorsqu'il pécha avec la femme d'Urie. Et lorsque David dit : « J'ai péché contre le Seigneur, » Nathan lui répondit : « Le Seigneur aussi t'a pardonné tes péchés et tu ne mourras pas. »

C'est lui qui conseilla à Bethsabée (*Bersabée*), mère de Salomon, de se rendre auprès de David et de lui rappeler son serment, et lui-même, ayant pénétré auprès de David obtint de lui l'ordre d'introniser Salomon. L'ayant donc conduit au Gihon, le prophète Nathan, le * prêtre Sadok et Banaia (*Bania*) * A fol. 177 v° a.

քահանայ, եւ Բանեա որդի Յովիդեայ, եւ թագաւորեցուցին զՍողոմոն յաթոռն Դաւթի ։ Եւ կացեալ Նաթան խաղաղութեամբ վախճանեցաւ եւ թաղեցաւ ընդ հարսն իւր ։

Յայսմ աւուր վկայութիւն Աբրահամու Արտաւիլի եպիսկոպոսին ։

Զայս երանելի եպիսկոպոսս տարան կապանօք առաջի մոգպետին Ադելփոռայ, եւ հրամայէր նմա երկիր պագանել արեգականն եւ հրոյ եւ զոհս մատուցանել ։

Եւ նորա բացեալ զբերան իւր յերկար բանիւք ի սուրբ գրոց յանդիմանէր զունայն հաւատս Սաբիւռոսի. անարգեաց եւ զմոգպետն Ադելփորա, եւ զունայն օրինադրութիւնն ։ Եւ հրամայեաց հատանել զգլուխ նորա ի քաղաքին Թելոմ ։

Եւ յորժամ տարան ի տեղին, հարցանէր դահիճն. Դառնաս ի հաւատս մեր եթէ մեռանիս ։ Եւ նա ասէ. Ոչ ուրանամ զճշմարտութիւնն, եւ ոչ դառնամ ի պիղծ դաւանութիւնդ ձեր. հաւատամ ի Հայր եւ յՈրդի եւ յամենասուրբ Հոգի, ի միասնական սուրբ Երրորդութիւնն ։ Եւ մինչդեռ խոստովանութիւնն ի բերանն էր՝ հատին զգլուխ նորա Փետրուարի Զ ։

1 Բանեա որդի Յովիդեայ] Բանեայ որդի Յովիադեայ B — Դաւթի] հօր նորա *add.* B || 2 Նաթան *om.* B || 3 Արտաւիլի] Արտաւիլ քաղաքի ի Պարս B || 4 Զայս երանելի] Սա էր ի ժամանակս հալածանաց Շապհոյ Սաբուռիոսի արքայի, եւ հոգեշունչ քարոզութեամբ զբազումս ի Պարսից դարձուցանէր ի հաւատս Քրիստոսի ։ Վասն որոյ կալեալ զերանելի B || 6 զբերան] զշնորհալից բերան *add.* B || 7 օրինադրութիւնն] սահմանադրութիւնն B || 10 զճշմարտութիւնն] զՔրիստոս B || 11 յամենասուրբ] սուրբ B.

fils de Yoyada (*Yovideay*), le sacrèrent et le mirent sur le trône de David. Nathan vécut en paix, mourut et fut enterré auprès de ses ancêtres.

En ce jour, martyre d'Abraham évêque d'Arbèles (*Artavili*).

Ce bienheureux évêque avait été conduit chargé de fers chez le chef des mages Adelphore, qui lui ordonna d'adorer le soleil et le feu, et de leur offrir des sacrifices.

Il ouvrit la bouche, blâma longuement par les saintes écritures la vaine religion de Sapor (*Sabiurosi*), méprisa Adelphore, le chef des mages et les vaines ordonnances. Celui-ci ordonna de lui trancher la tête dans la ville de Thélom[1].

Lorsqu'on l'eut conduit à l'endroit de l'exécution, le bourreau lui demanda : « Veux-tu te convertir à notre religion ou mourir? » Il répondit : « Je ne renie point la vérité et ne me convertis point à votre immonde croyance. Je crois au Père, au Fils et au très Saint-Esprit, à l'unique sainte Trinité. » Il avait encore la confession sur les lèvres lorsqu'on lui trancha la tête, le 6 Février.

1. Tell Naḥia d'après les actes syriaques, BEDJAN, *Acta Martyrum et Sanctorum*, t. IV, Paris et Leipzig, 1894, p. 131.

[B* Ի սմին աւուր յիշատակ սրբոյն Վուկուլիոսի աշակերտի առաքելոցն, որ էր եպիսկոպոս Զմիւռնիոյ : * B p. 65 b.

Սա ի տղայական հասակի մաքուր էր, եւ եղեւ բնակարան սուրբ Հոգւոյն, եւ արժանաւոր նորին շնորհաց. վասն այնորիկ մեծի առաքելոյն եւ աւետարանչին Յովհաննու աստուածաբանի հետեւեալ աշակերտեցաւ : Զոր եւ փորձիւ գտեալ արժանի՝ նոյն ինքն ամենագովելին եւ սիրեցեալն ի Քրիստոսէ սուրբ առաքեալն Յովհաննէս աստուածաբանն՝ սիրեաց յոյժ եւ աշակերտութեամբ եկն ընդ նմա յԵփեսոս եւ յամենայն տեղիս :

Եւ յայնպիսի մեծութիւն ժամանեաց նա՝ մինչ զի ի սուրբ աւետարանչէն ձեռնադրեցաւ եպիսկոպոս եկեղեցւոյն Զմիւռնոյ քաղաքին : Եւ քաղցրուսոյց հովիւն բարի որ յամենասուրբ Հոգւոյն ճառագայթիցն լցեալ զխաւարեալսն լուսաւորեաց, եւ ի բարբարոսամիտ հեթանոսացն ի ճշմարիտ կեանս էած, եւ մեծամեծ նշանօք աճեցոյց զհաւատացեալսն. եւ ինքն կայր առաքինօրէն սրբութեամբ ի պահս եւ յաղօթս եւ յայցելութիւն աղքատաց :

Եւ յառաջագոյն ծանեաւ զի փոխելոց էր յաշխարհէս. եւ ազդեցութեամբն Աստուծոյ՝ ձեռնադրեաց զարժանաւորն Պօղիկարպոս փոխանակ իւր յաթոռ եպիսկոպոսութեան Զմիւռնիոյ. եւ ինքն փոխեցաւ ի կենցաղոյս առ Քրիստոս եւ թաղեցաւ. յորմէ բազում բժշկութիւնք լինին անտի մինչեւ ցայսօր ի փառս Քրիստոսի :

[B * En ce jour, commémoration de saint Boukolos (*Voukouliosi*), disciple des apôtres, qui était évêque de Smyrne. * B p. 65 b.

Pur dès sa première enfance, il devint le réceptacle du Saint-Esprit, et se rendit digne de ses grâces; c'est pourquoi il devint le disciple du grand apôtre et évangéliste Jean le théologien. L'ayant trouvé digne, après épreuves, le saint apôtre Jean, le théologien, digne de tout éloge et le bien-aimé du Christ, l'aima beaucoup, en fit son disciple et parcourut avec lui Éphèse et toutes les contrées.

Il parvint à un tel degré de perfection qu'il fut sacré par le saint évangéliste évêque de la ville de Smyrne. Et le bon pasteur, à la doctrine suave, qui était rempli des rayons du très Saint-Esprit, illumina ceux qui étaient dans les ténèbres, ramena à la vraie vie les païens à l'esprit barbare et augmenta le nombre des fidèles par de grands miracles. Il passa sa vie dans la vertu, la sainteté, les jeûnes, les prières et la visite des pauvres.

Il connut à l'avance quand il devait trépasser de ce monde et, par l'inspiration de Dieu, il sacra le digne Polycarpe pour son successeur sur le siège épiscopal de Smyrne. Il trépassa de cette vie dans le Christ, et fut enterré. De nombreuses guérisons ont lieu sur son tombeau jusqu'à ce jour pour la gloire du Christ.

* B p. 66 b. Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս Լեւոն թագաւոր երկրորդ՝ որդի արքային Հեթմոյ ։

Սա էր բարեպաշտ յոյժ եւ առաքինի, հեզ, երկայնամիտ, պարկեշտ, ժուժկալ, եւ ողորմածութեամբ առաւելեալ քան զամենեսին ։

Շինեաց եւ հիւրանոցս եւ հիւանդանոցս, նորոգեաց զվանորայս եւ հաստատեաց ի նոսա դպրոցս. եւ աստուածահաճոյ վարուք փոխեցաւ առ Աստուած ։]

* B p. 66 b. * En ce jour reposa dans le Christ le roi Léon II, fils du roi Héthoum.

Il fut très pieux et vertueux, doux, patient, modeste, sobre et au-dessus de tous par sa charité.

Il fit construire des hospices et des hôpitaux, réparer les couvents et y établit des écoles. Après une vie agréable à Dieu, il trépassa vers Dieu.]